

ՍՈՒՐԲ ԳՐՁԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Դ  
ՊԵՏՐՈՍ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆ



ՀՐԱՄԱՆԱՒ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



COMMENTARIES ON THE BOOKS OF THE HOLY BIBLE  
IV

ARCHBISHOP PETROS BERDUMYAN

**OPEN SPRING**  
(Commentary on evangelical parables)

ТОЛКОВАНИЯ СВ. ПИСАНИЯ  
IV

**ПРИТОЧНИК ЕВАНГЕЛЬСКИЙ**  
(ТОЛКОВАНИЕ ПРИТЧЕЙ ЕВАНГЕЛЬСКИХ)

ST. ETCHMIADZIN - 2008 – СВ. ЭЧМИАДЗИН

ՍՈՒՐԲ ԳՐՋԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ

ՊԵՏՐՈՍ ԱՌՋԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆ

## ԱՂԲՅՈՒԹ ԲԱՑՅԱԼ

(ավետարանական առակների  
մեկնություն)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածնի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ս. Էջմիածն - 2008

Ց

Թ՝ 23/28  
¶Ծ, 86.37  
ä - 505

*Թարգմանությունը գրաբարից,  
առաջարանը և ծանոթագրությունները՝  
Տիգլան սարկավագ Բաղումյանի  
Խմբագիր՝ Ս. Մրամբուցյան*

**ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍ ԲԵՐԳՈՒՄՅԱՆ**  
Պ - 505 ԱՂԲՅՈՒՆ ԲԱՑՅԱԼ (ավետարանական առակների մեկնություն): - Եջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, 2008.- 352 էջ:

ԺՇ դարի ազգային-Եկեղեցական նշանավոր գործիչներից է Պետրոս առք. Բերդումյանը, որի «Աղբյուն բացեալ» աշխատությունը հայ մատենագրության մեջ պահպանված ավետարանական առակների միակ ամբողջական մեկնությունն է: Յեղինակը դյուրըմբառելի ոճով մեկնում է բոլոր առակները՝ համեմելով դրանք սուրբգրային բազմաթիվ վկայակոչումներով, Ընդհանրական և Յայ Առաքելական Եկեղեցու հոգեկիր հայութից, ծիսամասյաններից մեջբերումներով և ինաստատերների փիլիսոփայական մտքերով: Աշխարհաբար առաջին այս թարգմանությունը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար՝ բավարարելու նրանց հոգևոր քաղցն ու ծարավը:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-87-5  
© Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, 2008 թ.  
© Տիգլան սարկավագ Բաղումյան, 2008 թ.

**ՊԵՏՐՈՍ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ**  
**ԲԵՐԴՈՒՄՅԱՅՆ**  
(Կյանքը և գործումնությունը)

ԺԸ դարի նշանավոր մշակութային և եկեղեցական գործիչներից է Պետրոս արք. Բերդումյանը (Աղամայան-Նախիջևանցի)՝ աստվածաբան, փիլիսոփա, Սուրբ Գրքի հմուտ մեկնիչ, աղբյուրագետ, մանկավարժ, տաղասաց, հասարակական և եկեղեցական մի գործիչ, ով իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց Աստծո կենսատու խոսքի քարոզությանը՝ Ավետարանի անխարդախ կաթը ջամբելով մատադ սերնդին, նրանց մեջ զարթնեցնելով ազգային գիտակցությունն ու հայրենասիրության անպարտելի ոգին: Դարաշրջանի մյուս երևելի գործիչների նման Պետրոս սրբազնն էլ իր գրվածքների միջոցով փորձեց նպաստել «հայոց ընդհանուր վերամոդոգության շարժմանը, ազգի շահերին»՝ դառնալով լայն թափ առաջ վերածննդի այդ շարժման քաջամարտիկներից մեկը<sup>1</sup>: Չնայած բազմաթիվ դժվարություններին և խոչընդոտներին՝ անգամ անելանելի թվացող պահերին նա երբեք իր ձեռքից ցած չդրեց իր զորավոր զենքը՝ գրիչը՝ շարունակելով գրել և ուսուցանել, քարոզել և պայքարել, քանզի հավատում էր խոսքի

1 Շուշանիկ Նազարյան, Ողբի և պթափման բանաստեղծություն, Երևան, 1992, էջ 13, 87:

ուժականությանն ու մեր «փոքր ածուի» հզոր ներուժին: Ժմ դարի անվանի հոգևորական, մատենագիր և մշակութային գործիչ Մսեր մագիստրոս Մսերյանցը, իր ուսումնասիրության մեջ խոսելով Ժմ դարի բանին մաս Եկեղեցականների մասին, Պետրոս սրբազնին այսպես է բնութագրում. «Այր առատամիտ և լուսաւոր իմաստիք, որում ո՞չ ոք գտաւ ցայսօր ի միաբանից Էջմիածնի համեմատ ի համերիս լիարդիւմ մատենագրութեան և վարդապետական շնորհաց»<sup>2</sup>:

Ցավոք, այդքան էլ շատ չեն նրա կյանքի մասին եղած տեղեկությունները, որոնք ցրված են նրա մատենագրական ժառանգության առանձին էջերում, Բերդումյանի գործերի ձեռագիր և տպագիր մատյաններում: Մեծ արժեք ունեն հատկապես հեղինակի գրած այն բանաստեղծություններն ու տաղերը, որոնք երբեմն լույս են սփռում և բացահայտում նրա կյանքի և գործունեության այս կամ այն դրվագը:

Առաջին հեղինակը, ով անդրադարձել է սրբազն հոր կյանքին, գործունեությանն ու մատենագրական վաստակին, Մեսրոպ սրբ. Թաղիայյանն է: Նա 1827 թ. Կալկաթայում իրատարակում է Բերդումյանի «Աստուածանմանութիւն» երկը և «Հանգամանք վարուց հեղինակին» բաժնում որոշ կենսագրական տեղեկություններ հաղորդում հեղինակի մասին<sup>3</sup>:

<sup>2</sup> Մսեր Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, Սոսկվա, 1876, էջ 259:

<sup>3</sup> Պետրոս Նախիչևանցի, Աստուածանմանութիւն, վերստին աշխատութեամբ Մեսրովապայ Դաթեան Թաղիադեանց Կարբեց-

Ժամանակագրական առումով երկրորդ հեղինակը Տ. Դովիաննես եպս. Շահիսարունյանցն է, ով, Պետրոս Բերդումյանի «Ապաշխարան» ժողովածուից քաղելով որոշ աղոթքներ և ավելացնելով նոր երգեր ու այլ գործեր, 1845 թ. Ս. Էջմիածնում տպագրում է «Երգարան աղօթից ի պէտս վաճառականաց եւ ճանապարհորդաց» գիրքը<sup>4</sup>, ուր արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Բերդումյանի մասին: Հատկապես այս գործում են նշվում Վերջինիս առաջժմ չհայտնաբերված «Գործքի» մեկնության, սրբազնի մահվան ճշգրիտ թվականի մասին և բերվում է նրա տապանաքարի արձանագրությունը: Այնուհետև այս հեղինակի մասին որոշ տեղեկություններ են հաղորդում Մսեր Մսերյանցը<sup>5</sup>, Ա. Երիցյանը<sup>6</sup>, Յ. Մամուրյանը<sup>7</sup>, Յայր Արսեն Ղազիկյանը<sup>8</sup>, Արշակ Ալպոյաճյանը<sup>9</sup>,

տյ, Կալկաթա, 1827, Հանգամանք վարուց հեղինակին (առանց էշակպաման):

<sup>4</sup> Տես Երգարան աղօթից ի պէտս վաճառականաց եւ ճանապարհորդաց (=Երգարան), Ս. Էջմիածին, 1845:

<sup>5</sup> Մսեր Մսերեանց, Ըշվ. աշխ., Էջ 4, 9, 259-260:

<sup>6</sup> Ա. Երիցյան, Ամենապես հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք, Ա, Թիֆլիս, 1894, Էջ 77:

<sup>7</sup> Յ. Մամուրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, Կ. Պօլս, 1909, Էջ 88:

<sup>8</sup> Հայլայամ Ծոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կենքի, կազմեց Հ. Արսեն Ղազարոս Ղազիկեան, Բ. Ա, Վենետիկ, 1909-1912, Էջ 337:

<sup>9</sup> Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկութիւններով, համադրուած՝ Արշակ Ալպօնանէ, Գամիրէ, 1952, Էջ 714-716:

Մաղաքիա արք. Օրմանյանը<sup>10</sup>, Յրայյա Աճառյանը<sup>11</sup>, Լեռն<sup>12</sup>, Ա. Առաքելյանը<sup>13</sup>, Գառնիկ Ստեփանյանն<sup>14</sup> ու Արգամ Այվազյանը<sup>15</sup>:

Մեր ժամանակներում Պետրոս Բերդումյանին անդրադարձել է բանասեր Շուշանիկ Նազարյանը<sup>16</sup>: Շեղինակն իր երկու հոդվածներում և մենագրության մեջ համառոտ տալիս է Պետրոս սրբազնի կյանքի և գործունեության նկարագիրը՝ ավելի շատ ուշադրություն դարձնելով վերջինիս չափածո գործերին: Բայց այս թվարկված աշխատությունների մեջ փաստերի համակողմանի քննությամբ և վերլուծությամբ առանձնանում է Գևորգ սրբ. Աջապահյանի (այժմ՝ Միքայել Եպիսկոպոս) ավարտածառը, ուր նա հանադրելով առկա փաստերը՝ տալիս է Բերդումյանի

<sup>10</sup> Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, 1960, Պէ-րութ, էջ 3119, 3140, 3235, նաև Ազգապատում, հ. Գ, Երուսաղէմ, 1927, էջ 3867:

<sup>11</sup> Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 260:

<sup>12</sup> Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 463-464:

<sup>13</sup> Ա. Առաքելյան, Հայ ժողովորդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 3, Երևան, 1975, էջ 315:

<sup>14</sup> Գառնիկ Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. Գ, գիրք 1, Երևան, 1990, էջ 266:

<sup>15</sup> Արգամ Այվազյան, Նախիջևան բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ, Երևան, 1995, էջ 316:

<sup>16</sup> Տես Շուշանիկ Նազարյան, Պետրոս Նախիջևանցին և XVIII դարի վերանորոգվող հայ երգը, ՊԲՀ, № 3, 1981, էջ 128-143, Շուշանիկ Նազարյան, Պետրոս Նախիջևանցու «Աղօթական բանք» պոեմը, ՊԲՀ, № 2, 1982, էջ 89-101: Խնչակս նաև Շուշանիկ Նազարյան, Ողբի..., Երևան, 1992:

կյանքի, գործունեության և մատենագրական վաստակի քիչ թե շատ ամբողջական նկարագիրը<sup>17</sup>: «Եջմիածին» ամսագրում Բերդումյանի մասին Սիբայել սրբազնի տպագրած հոդվածից հետո, մի խումբ ճենարանականներ ձեռնամուխ եղան Բերդումյանի աստվածաբանական մյուս գործերի ուսումնասիրնան գործին ևս: Այսպես՝ Մեծ պահքի քարոզներն առանձնացրել և ավարտաճառի նյութ է դարձրել Յրայր սրկ. Խաչատրյանը<sup>18</sup> (այժմ՝ Տ. Գրիգոր արեդա), Վահե սրկ. Վահունին (այժմ՝ Տ. Գեղարդ արեդա) պատրաստել է Բերդումյանի «Կշիռ արդարութեան» գործի համենատական բնագիրը<sup>19</sup>, իսկ Վարդգես սրկ. Մայիլանը՝ «Յայտնության» նեկնության<sup>20</sup>:

Պետրոս Բերդումյանի ծննդյան ճշգրիտ թվականը մեզ հայտնի չէ, թեև Մ. Թաղիարյանը «Աստուածանմանութիւն» երկում հաղորդում է, որ Վերջինս ծնվել է 1743 թ.: Այնուհետև նաև ավելացնում է, որ Բերդում-

<sup>17</sup> Գևորգ սրկ. Աշապահյան, Պետրոս Բերդումյան, կյանքը, գործը և «Մեկնութիւն Ցոբավ» աշխատությունը, Էջմիածին, 1988 թ., /մեքենագիր/, էջ 1-47: Այս մասին տես նաև Միքայել Վրդ. Աշապահյան, Պետրոս արք. Բերդումյան (կյանք և մատենագրական վաստակ), «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 33-48:

<sup>18</sup> Հրայր սրկ. Խաչատրյան, Պետրոս արքեպս. Բերդումյան, Տարեկան քարոզներ. Մեծ Պահքի շրջան, Ս. Էջմիածին, 2000, /մեքենագիր/:

<sup>19</sup> Վահե սրկ. Վահունի, Պետրոս արքեպս. Բերդումյան-Աղամայեան Նախիջևանցի, «Կշիռ արդարութեան», Ս. Էջմիածին, 2000, /մեքենագիր/:

<sup>20</sup> Վարդգես սրկ. Մայիլան, Պետրոս արքեպս. Բերդումյան-Աղամայեան Նախիջևանցի, Մեկնութիւն Ցայտնութեան Ցովհաննու, Ս. Էջմիածին, 2001, /մեքենագիր/, էջ 26-60:

յանը Եպիսկոպոս է ձեռնադրվել Յակոբ Շամախեցի հայրապետի (1759-1763) կողմից<sup>21</sup>: Բայց ինչպես իրավամբ նշում է Միքայել Վարդապետը. «Հարավոր չէ, որ Բերդումյանը քսան տարեկան հասակում դառնար եպիսկոպոս»<sup>22</sup>, քանի որ Յակոբ Շամախեցին մահացել է 1763 թ.:

Մեզ անհայտ է նաև Բերդումյանի՝ Եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ստանալու ստույգ տարին: Եթե, ըստ Մ. Թաղիայանի, Բերդումյանը Եպիսկոպոսացել է Յակոբ Շամախեցու ձեռքով<sup>23</sup>, ապա Օրմանյան պատրիարքն այս ամենը վերագրում է Սիմեոն Երևանցուն՝ դմելով 1763 թ.<sup>24</sup>: Վահե սրկ. Վահունին էլ կարծում է, որ Բերդումյանն իր Եպիսկոպոսական օծումը ստացել է Ուլկաս Կարնեցի կարողիկոսից<sup>25</sup>: Վերջին կարծիքն ընդունելի չէ, որովհետև Բերդումյանը 1776 թ., ավարտելով «Մեկնութիւն Յոթայ» աշխատությունը, հիշատակարանում իրեն արդեն որպես Եպիսկոպոս է հիշում<sup>26</sup>: Յետևաբար Եվդոկիայում նա արդեն Եպիսկոպոս էր: Ավելի հավանական ենք համարում Օրմանյան պատրիարքի կարծիքը, ով գուցե ձեռքի տակ ուներ փաստն ապացուցող այլ ապացույցներ ևս: Յամադրելով առկա փաստերը՝

<sup>21</sup> Նոյն տեղում:

<sup>22</sup> «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 34:

<sup>23</sup> Աստուածանմանութիւն, Հանգամանք վարուց հեղինակին:

<sup>24</sup> Ազգապատում, Բ, մաս Գ, Պէտութ, 1960, էջ 3140:

<sup>25</sup> Վահե սրկ. Վահունի, Եշվ. աշխ., էջ 8, 13:

<sup>26</sup> ՄՄ ձեռ. № 2718, թ. 233ա:

կարծում ենք, որ Բերդումյանը ծնված պետք է լինի 1720-ական թվականներին: Մինչև 20 տարեկանը նա ապրել է իր ծննդավայր Նախիջևանում՝ կրթություն ստանալով իոր՝ գիտնական-դաստիարակ Բերդում Աղամայանի հոգատար շնչի ներքո.

Յ ո ր պ ա ր Շ ա ց ա յ ց ը ա մ ի ս ա ն ,  
յ ե ռ ա մ բ հ օ ր ի մ ա զ ն ո ւ ա կ ա ն ,  
հ ո շ ե ա լ Բ ե ր դ ո ւ մ Ա զ ա մ ա լ ե ա ն ,  
ա ռ ա տ ի ն ի և Շ ի պ ն ա կ ա ն :

Ո յ ո ՛ չ մ ի ա յ ն հ ա յ ը մ ա ր մ ն ա կ ա ն ,  
ա յ լ ե ծ ն ո զ ի ս կ հ ո Շ ե կ ա ն ,  
հ ր ի ն է ր վ ա ր ո ւ ն ի բ ա ր ո յ ա կ ա ն ,  
մ ա ր պ է ր ի Շ ի ր ս և շ ա ր ա կ ա ն <sup>27</sup>:

Ըստ Մ. Թաղիայյանի՝ Բերդումյանը հորից «աշակերտեցաւ Հայ և Պարսիկ բարբառոց»<sup>28</sup>: Պատաճեկան հասակից իսկ Բերդումյանը խոր սեր է տածում գիտության նկատմամբ. «Արար սա զգիտութիւնսն իւր երկրորդ հոգի, զի որչափ զարգանայր յարբունան ամաց, առաւելոյր և ի նոսին աստուածազարդ պարկեցտութեամբ»<sup>29</sup>: Բացի այս տեղեկություններից, գիտենք, որ Թահմազ Շահի օրոք 1742 թ. տեղի ունեցած բռնությունների պատճառով Բերդումյանը լքում է իր

<sup>27</sup> ՄՍ ձեռ. № 6744,թ. 39թ:

<sup>28</sup> Աստուածանմանութիւն, Հանգամանք վարուց ჩեղինակին:

<sup>29</sup> Նույն տեղում:

ծննդավայրն ու բնակություն հաստատում Կ. Պոլ-սում<sup>30</sup>: «Հայութեաց զրկել լոյժ դժուարին չիք», - գրում է նաև և իբրև ականատես այդ դաժան օրերի՝ արձանագրում ժամանակի տիտուր պատկերը.

Բայց վասն մեղաց մեր զանազան ,  
 ի էաղավեն մեր սեպհական ,  
 բարաբարեցավ փախողական ,  
 ցժայր մասի Եւրոպական :  
  
 •Բանզի թաշհանգունաւորն այն ,  
 Շահըն մասին Ասիական ,  
 էակեաց պերկերն արեւելեան ,  
 պամեն արար փախողական<sup>31</sup> :

Ի դեպ՝ վերոգրյալ բոլոր հեղինակները որպես Բերդումյանի ծննդավայր նշում են Նախիջևանը, բայց միայն Մ. Թաղիայյանն է, որ գրում է, թե վերջինս ծնվել է «ի Բերթիկ աւանի աշխարհին Սիւնեաց, ի քաջակայլ սերնդոցն Աղամալի Բերթումեանց»<sup>32</sup>: Պատմական փաստերը ցույց են տալիս, որ իրականում եղել է Բերդիկ կամ Բերդակ անունով մի գյուղ,

<sup>30</sup> Այս խժդժությունների ժամանակ նաև զոհվում է Խարում Աղամալյանցը, ով հավանաբար Բերդումյանի ազգականներից էր (տես Միքայել Զամշյանց, Հայոց Պատմություն, Բ. Գ, Երևան, 1984, էջ 816):

<sup>31</sup> ՄՄ ձեռ. № 6744, թ. 39թ-40ա: Այս մասին տես նաև նույնի թ. 52ա -52թ:

<sup>32</sup> Աստուածանմանութիւն, Հանգամանք վարուց հեղինակին:

որը ժամանակին մտել է Սյունիք աշխարհի մեջ, և, որ ամենակարևորն է մեր պարագային, Նադիր Շահի ժամանակ այստեղ զինվորական գործողություններ են կատարվել<sup>33</sup>:

Իսկ ինչ վերաբերում է Պետրոս սրբազնի ազգանվանը, ապա, ամենայն հավանականությամբ, նա իր առաջին՝ Բերդումյան ազգանունը վերցրել է հոր՝ Բերդում Աղամայանի (Բարթուղիմեոս) անունից: Այս հարցի պարզաբանմանը լույս է սփռում նաև Մսեր Մսերյանցի հաղորդած այն արժեքավոր տեղեկությունը, թե՝ «Պետրոս եպիսկոպոս Բարթուղիմեան կամ աղամայանօք՝ Բերդումեան»<sup>34</sup>: Իսկ երկրորդ՝ Աղամայան մասն էլ վերցրել է իր պապի՝ Աղամալ Նախիջևանցու անունից<sup>35</sup>: Մեզ է հասել նաև Բերդումյանի մոր անունը: Յեղինակն իր «Տրամաբանութիւն» աշխատության հիշատակարանում, երբ թվարկում է իր ընտանիքի անդամներին, խնդրում է աղոթքով հիշել նաև իր մորը՝ Տանարիսին<sup>36</sup>: Վաստակաշատ այս Եկեղեցականն ունեցել է նաև երկու եղբայր, որոնցից

<sup>33</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, թ. 1, Երևան, 1986, էջ 669:

<sup>34</sup> Մսեր Մսերեանց, նշվ. աշխ., էջ 259: Նաև տես Վահե սրբ. Վահումի, ավարտաճառ, էջ 8-9:

<sup>35</sup> ՄՄ ձեռ. № 2718, թ. 233ա: Պետրոս Բերդումյանի մահագրականի անհայտ հենինակն այն կարծիքն է, որ «գուցէ յանուն պետ Աղամալ բարեպաշտօն առն, որ նու զծախսն արդեանց շինութեան տաճարի սրբություն Մարիամեի» (տես Երգարան, ՄՄ Կաթ. դիվ. թղթ. 6, վավ. 6):

<sup>36</sup> ՄՄ ձեռ. № 6610, թ. 121ա:

մեկը՝ «Պողոսը, «գերահոչակ վաճառական» էր, իսկ մյուսը՝ Սկրտումը՝ «անզուգական քարտուղար»<sup>37</sup>:

Փախչելով իր ծննդավայրից՝ Բերդումյանն ապաստանում է Կ. Պոլսում, ուր, ամենայն հավանականությամբ, աշակերտում է ժամանակի նշանավոր բանաստեղծ և քերական Պաղտասար Դպրին: Յօգուտ այս փաստարկի են խոսում Յ. Մամուրյանի<sup>38</sup>, Օրմանյան պատրիարքի<sup>39</sup>, Ա. Երիցյանի<sup>40</sup> և Ա. Առաքելյանի բերած վկայությունները<sup>41</sup>: Այս շրջանի մասին միայն այն գիտենք, որ նա դեռևս հոգևորական չէր. «...մայսրան զմտանելն իւ ի կրօնս, մինչ էի պամդիտացեալ ի Կոստանդնուպոլիս, ի կոչեցեալն Վայէտէխան»<sup>42</sup>:

Ցավոք, անհայտ է նաև Պետրոս Բերդումյանի՝ կուսակրոնության ուխտ ընդունելու թվականը: Յավանաբար կուսակրոն քահանա է ձեռնադրվել ԺՈ դարի կամ 40-ական թվականների վերջում, կամ էլ 50-ական թվականների սկզբում<sup>43</sup>: Յոզեֆան դառնալուց հետո նա ուղարկվում է Ղրիմի Ս. Օգսեն-

<sup>37</sup> ՄՄ ձեռ. № 6744, էջ 149ա: Բերդումյանի եղբայր Մկրտումից կամ Մկրտչից մեզ հասել են նաև մի շարք արձակ-շափածոն երկեր, որոնք խոսում են նաև Մկրտիչ շնորհալի բանաստեղծի մասին: Այս մասին տես **Յ. Նազարյան**, Ողբի..., էջ 433:

<sup>38</sup> Յ. Մամուրյան, Յշվ., աշխ., էջ 88:

<sup>39</sup> Ազգասպատում, Բ. Գ, էջ 3119:

<sup>40</sup> Ա. Երիցյան, Յշվ. աշխ., էջ 77:

<sup>41</sup> Ա. Առաքելյան, Յշվ., աշխ., էջ 315:

<sup>42</sup> ՄՄ ձեռ. № 10, թ. 1բ:

<sup>43</sup> «Էջմիածին», № Ե-Ը, 1991, էջ 36:

տի վաճքը վաճահոր և առաջնորդի հանգամանքով։ Այնուհետև փոխադրվում է Ս. Էջմիածին և աշակերտում Մինաս աստվածիմաստ վարդապետին<sup>44</sup>՝ խորացնելով իր գիտելիքները «Ձերքին և արտաքին» գիտությունների, այսինքն՝ աստվածաբանության և փիլիսոփայության մեջ<sup>45</sup>։ Եվ որպես պսակ «Վարուցն սրբութեան և աստուածաշնորհ գիտութեանց»՝ Մինաս վարդապետից ստանում է «զաստիճան ճշմարիտ վարդապետութեան»<sup>46</sup>։ Քանի որ իր իսկ վկայության համաձայն նա Ղրիմում արդեն վարդապետ էր<sup>47</sup>, ապա «ճշմարիտ վարդապետության աստիճանը» ոչ այլ ինչ է, եթե ոչ ծայրագույն վարդապետության աստիճանը<sup>48</sup>։ «Իսկ Մինաս վարդապետը ամենայն հավանականությամբ ժամանակաշրջամի այն հոչակավոր դեմքն էր, որ հայտնի էր «կույր» մականվամբ՝ աչքերի տկարության պատճառով», - գրում է Միջայել վարդապետը<sup>49</sup>։ Մսեր Մսերյանցն էլ, խոսելով Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ժամանակ ծաղկում ապրող իմաստուն

<sup>44</sup> Աստուածանմանութիւն, Հանգամանք վարուց հեղինակին։

<sup>45</sup> Նույն տեղում։

<sup>46</sup> Նույն տեղում։ Քանի որ Հայոց Եկեղեցում որևէ վարդապետի ծայրագույն աստիճան կարող է տալ միայն այն եպիսկոպոսը, ով ունեցել է այդ աստիճանը, Մ. Թաղիաբյանի վերոգրյալ տեղեկությունը պետք է հասկանալ, որ թեպետ Մինաս վարդապետն արդեն եպիսկոպոս էր, բայց իր մոռավոր կարողությունների շնորհիվ շարունակում էր «աստվածիմաստ վարդապետ» կոչվել։

<sup>47</sup> ՄՄ Ծնո. № 10, թ. 2բ։

<sup>48</sup> «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 36։

<sup>49</sup> Նույն տեղում։

և բանիմաց հոգևորականների մասին, ի շարս այլոց հիշում է նաև Սինաս Եպիսկոպոս կույրին<sup>50</sup>:

Ապա Յակոբ Շամախեցու կարգադրությամբ որպես նվիրակ մեկնում է Կարին, ուր և, ըստ Մ. Թաղիարյանի, «յատել ի զարդ հանճարով զԱսորի և զԼատին դպրութիւն»<sup>51</sup>: Մեծ գովեստով և պատկառանքով է խոսում Մ. Թաղիարյանը Կարինում Բերդումյանի անցկացրած տարիների մասին. «...իւրով առաքելաշառի քարոզութեամք շահեաց և շինեաց զհոգիս քազմաց ի հաւասու կենդանիս, ո՞չ միայն հրեշտակային պատգամաքերութեամքն յԱստուծոյ ի հողեղէն լսելիս, այլ և ըստ հասարակախնամ տմտեսութեամս հոգալով զկարիս պիտոյից իւրական հօտին»<sup>52</sup>: Սիմեոն Երևանցու գահ բարձրանալու ժամանակ Բերդումյանն արդեն Մ. Էջմիածնում էր, ուր և մանկավարժական լայն գործունեություն է ծավալում՝ «աշակերտելով զմանկուն ի գիտութիւն Աստուածեղէն պատգամաց, և յօրինելով մատեամս ընտիրս և Աստուածաշունչս գերապանձ վարդապետութեամք»<sup>53</sup>: Այս տարիներին Բերդումյանը գրում է մի քանի արժեքավոր աշխատություններ՝ «ի յօգուտ մանկանց Ենեղեցւոյ»: Այսպես՝ 1767 թ. արդեն պատրաստ էր «Աղբիր բացեալ»-ը, 1771 թ. գրում է «Կշիռ արդարութեան», «Քարոզք տարեկան» և «Աստուածանմանութիւն» երկերը: Այս ժա-

<sup>50</sup> Մակ Մակերեանց, ճշվ. աշխ., էջ 4:

<sup>51</sup> Աստուածանմանութիւն, Հանգամանք վարուց հեղինակին:

<sup>52</sup> Նույն տեղում:

<sup>53</sup> Նույն տեղում:

մանակ՝ 1772-1773 թթ., Վարդան աբեղան ընդօրինակում է Բերդումյանի «Մեկնարկի վերլուծութեանցն Արիստոտելի» աշխատությունը<sup>54</sup>: Չնայած իր բազմազբաղ վիճակին՝ Պետրոս սրբազնը 1771 թ. ընդօրինակում է Յովիաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմութիւն»<sup>55</sup> աշխատությունը՝ կրկին ժառանգավորների կարիքները հոգալու համար:

1772 թ. Սիմեոն Կաթողիկոսի հրամանով Պետրոս արք. Բերդումյանն ուղարկվում է Եվդոկիա (Թոքատ) որպես հայրապետական նվիրակ<sup>56</sup>: Նվիրակության այս տարիների մասին մեզ շատ քիչ բան է հայտնի: Յատուկենտ նշխարներ են պահպանվել Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում և Ա. Ալպոյաճյանի աշխատության մեջ<sup>57</sup>: Ինչպես նկատում է Միջայել վարդապետը. «Հստ երևովթին, Բերդումյանը չի փայլել վարչական կարողություններով, որն էլ առիթ է հանդիսացել, որ տարրեր անձնավորություններ չարաշեն նրա դիրքը ու նվիրակի հանգանակը անձնական հարստություն դիզելու և այլնայլ նպատակների համար»<sup>58</sup>:

1776 թ. Եվդոկիայում Բերդումյանն ավարտում

<sup>54</sup> «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 37:

<sup>55</sup> ՄՄ ձեռ. № 3537, թ. 2բ:

<sup>56</sup> Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Ը, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1908, էջ 150:

<sup>57</sup> Նովն տեղում, էջ 149, տես նաև Ա. Ալպոյաճյան, Եշվ. աշխ., էջ 714-715:

<sup>58</sup> «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 38:

է իր «Մեկնութիւն Ցոբայ» աշխատությունը<sup>69</sup>: Եվդոկիայի պատերազմական իրադրությունը ստիպում է Բերդումյանին մի քիչ ոտքը կախ գցել, բայց ի վերջո 1776 թ. հոկտեմբերի 18-ին Պետրոս Վարդապետը հեռանում է այնտեղից և ճանապարհվում Ս. Էջմիածին: Դեկտեմբերին նա արդեն Կարինում էր<sup>70</sup>, իսկ 1777 թ. հունվարի 7-ին ժամանում է Մայր Աթոռ<sup>71</sup>: Սակայն չկարողանալով Մայր Աթոռին վճարել նվիրակված գումարը՝ Սիմեոն Կաթողիկոսը «Ճեռած վեր Էառ, թքանելով ի ճա»<sup>72</sup> և նրան բանտարկում է: Կաթողիկոսը սրանով էլ չի բավարարվում, այլ «ի յերկար ժամանակս քԱնեալ զամենայմ գիրս Առրին»<sup>73</sup>, - նկատում է հայրապետը, - «տեսաք, զի շատ գոն ի ճանա հերձուածք և թիւր միտք»<sup>74</sup>: Կաթողիկոսը նաև 1778 թ. մի ճանակ է գրում Յնդկաստանի նվիրակ Գրիգոր Վարդապետին, որպեսզի այրի վերջինիս քարոզմերն ու մյուս գործերը. «Մի՛ տեսցեալ այլք կամ օրինակեսցեալ, զի ամօթ մեծ է, փշացո՞»<sup>75</sup>: Եվ Պետրոս արք. Բերդումյանը ստիպված է լինում մի մեղայական ճանակ գրել Սիմեոն Երևանցուն. «ի գիրս իմ սխալմամբ և չգիտելով ի քանի

<sup>59</sup> ՄՄ ձեռ. № 1174, թ. 89թ:

<sup>60</sup> Դիւան..., Ը, էջ 604-606:

<sup>61</sup> Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, Սիմեոն Կաթողիկոսի լիշատակարանը, Թիֆլիս, 1913, էջ 7:

<sup>62</sup> Նովն տեղում, էջ 249:

<sup>63</sup> Նովն տեղում:

<sup>64</sup> Դիւան..., ԺԱ, էջ 240:

<sup>65</sup> Նովն տեղում, էջ 240:

տեղիս զթիր բանս էի գրեալ, և մինչ սրբազանին զայն ձկատեալ խրատորէա մեղադրութեամբ ծանոց ինձ, ես ևս զամենայն զիրս իմ յինէն յօրինեալ յանձնեցի սրբազան վեհին Տեառն իմոյ առ ի յուղել զայն և պայմանեցի, զի յայսմետէ զգուշացեալ յայսպիսեաց սխալմանց, զոր ինչ և զրիցեն և ցուցամիցեն Տեառն իմոյ սրբազան վեհին առ ի տեսանել, զի մի՛ ևս վերստին սխալեալ յցեմ»<sup>66</sup>: Բանտարկության տարիների մասին հետևյալն է հաղորդում Մ. Թաղիաղյանը. «Տարաւ այսմ ամենայնի համրերատար ժուժկալութեամբ»<sup>67</sup>: Հենց այս մթի ու խավարի մեջ էլ 1777 թ. Պետրոս սրբազանը գրում է «Մեկնութիւն Ծննդոց» աշխատությունը<sup>68</sup>:

Բայց մինչ այս՝ 1776 թ., մահացել էր սրբազան հոր Երբայրը՝ իր ողջ ունեցվածքը կտակելով նրան: Քանի որ Բերդումյանը բանտարկված էր, ուստի Սիմեոն Երևանցին 1776 թ. մայիսի 25-ին գրած նամակով խնդրում է Կ. Պոլսի պատրիարք Զաքարիա Կաղզվանեցուն, որ Վերջինս հարթի բոլոր առաջացած խնդիրները<sup>69</sup>: Սակայն Բերդումյանի հարազատները նամակ են գրում նրան, թե՝ «Միջն դու ո՛չ եկեսցես, բան ինչ ո՛չ ելամ»<sup>70</sup>: Յաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ կաթողիկոսն ազատում է Բերդումյանին, իսկ Վերջինս էլ գրով հաստատում է, որ գործերը Վեր-

<sup>66</sup> Նովն տեղում, էջ 250:

<sup>67</sup> Աստուածանմանութիւն, Հանգամանք վարուց հեղինակին:

<sup>68</sup> Նովն տեղում:

<sup>69</sup> Դիւան..., ԺԱ, էջ 249:

<sup>70</sup> Նովն տեղում:

ջացնելուց հետո անպայման կվերադառնա Մայր Աթոռ, հակառակ դեպքում, ինչպես ինքն է նշում, «լուծեալ եղէց յեպիսկոպոսական կարգէս»<sup>71</sup>:

1778 թ. ապրիլի 11-ին Բերդումյանը Ստեփանոս վարդապետի հետ մեկնում է Կ. Պոլիս<sup>72</sup>: Դժբախտաբար մեզ անհայտ են կտակի հետ կապված մյուս դեպքերը: Գիտենք, որ Բերդումյանը, հակառակ կաթողիկոսին տված իր խոստման, չի վերադառնում Ս. Էջմիածին, այլ Զաքարիա պատրիարքի կողմից նշանակվում է Թոքատի առաջնորդ<sup>73</sup>: Արդյո՞ք Բերդումյանն անցել է իր նոր պաշտոնին կամ ինչպե՞ս է այս քայլն ընդունել Սիմեոն կաթողիկոսը, մեզ հայտնի չէ:

1780 թ. հուլիսին վախճանվում է Սիմեոն Երևանցին և Լուսավորչի գահին է բազմում Ղուկաս Կարմեցին (1780-1799)` հանգուցյալ կաթողիկոսի սիրեցյալ աշակերտը: Նորաօծ կաթողիկոսը 1780 թ. օգոստոսին նամակ է գրում Բերդումյանին՝ հորդորելով նրան վերադառնալ Մայր Աթոռ և «համբուրել զգերեզման հոգելոյս տեառն Սիմեօնի սրբազն կաթուղիկոսին և զերծանիլ ի մեղադրութեանց նորին»<sup>74</sup>: Անսալով կաթողիկոսի նամակին՝ Բերդումյանը 1782 թ. նոյեմբերի 3-ին վերադառնում է Մայր Աթոռ, գնում հոգելոյս կաթողիկոսի գերեզմանի մոտ, ուր «ասաց զՀայր սուրբ

<sup>71</sup> Նովն տեղում, էջ 250:

<sup>72</sup> Դիւան..., ԺԱ, էջ 251:

<sup>73</sup> Դիւան հայոց պատմութեան, նոր շաբթ, հ, Ա, 1780-1785, աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 263:

<sup>74</sup> Նովն տեղում:

*և արձակեցաւ»<sup>75</sup>: Այս ամենից հետո Պետրոս սրբագանը վերականգնվում է միաբանության շարքերում:*

Առկա փաստերը ցույց են տալիս, որ Բերդումյանի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսի միջև լուրջ տարածայնություններ են եղել, որոնց սրման պատճառով կաթողիկոսը հրամայել է անգամ այրել նրա գործերը:

Քաջածանոթ լինելով Բերդումյանի մատենագրական ողջ ժառանգությանը՝ պիտի նշենք, որ նա իր գրվածքներում բազմաթիվ հղումներ է կատարում Լատին Եկեղեցու հայրերին և զանազան օտար հեղինակների, որոնց մեջ զգացվում է նրանցից ազդված լինելը: Տարիներ առաջ մեր ավարտածախ ընթացքում արդեն առիթ ենք ունեցել անդրադառնալու սրբազն հոր՝ Ծննդոց գրքի մեկնության մեջ առկա վարդապետական մի սխալին և մեր Եկեղեցու հայրերի, վարդապետների աշխատությունների միջոցով ցույց տվել Յայոց Եկեղեցու տեսակետն այդ հարցում<sup>76</sup>:

Ընդհանրապես Լատին Եկեղեցու աստվածաբան հայրերի այս ազդեցությունը բնորոշ է ինչպես Բերդումյանին, այնպես էլ ժամանակաշրջանի մյուս

<sup>75</sup> Դիլան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, Էջ 457:

<sup>76</sup> Տե՛ս Տիգրան սարկավագ Բաղումյան (=ՏՄԲ), Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյան-Սղամալյան Նախիջևանցի, Մելքոնթիւն Ծննդոց (ուսումնավիրություն և բնագիր), Ս. Էջմիածին, 2002 /մեթենագիր/, Էջ 66-68, Տիգրան սարկավագ Բաղումյան, Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյանի «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության աղբյուրները, «Էջմիածին», 2005, Բ-Գ, Էջ 73-74:

հեղինակներին: Յատկապես ժը դարում կրկին լայն թափ է առնում թարգմանական գրականությունը: Յովհաննես Կոլոտ պատրիարքի (1678-1741), հետազյում Յակոբ Նայսան պատրիարքի (1706-1764) նախաձեռնությամբ օտար հեղինակներից թարգմանվում են բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ նաև աստվածաբանական: Այս ժամանակ են ի հայտ գալիս բազմաթիվ թարգմանիչներ՝ Գևորգ Միւլայիմ, Դուկաս Խարբերդցի, Գևորգ Դպիր Պալատցի և ուրիշներ, ովքեր թարգմանություններ են կատարում լատին հեղինակներից: Բերդումյանն էլ, բնականաբար, շատ լավ ծանոթ էր այդ թարգմանություններին, որոնցից բազմաթիվ մեջբերումներ է կատարում իր աշխատություններում: Յայ աստվածաբանական մտքի համակարգվածության բացակայության պատճառով Բերդումյանն իր մտավոր կարողությունների չափով փորձել է օտարների նման համակարգել շատ աստվածաբանական խնդիրներ, որոնց պատճառով էլ բազմիցս սայթաքել և գայթել է՝ թյուր մտքեր արտահայտելով:

Սակայն չենք բացառում, որ Բերդումյան-Սիմեոն կաթողիկոս հակամարտության պատճառներից կարող էին լինել նաև նրանց միջև առկա անձնական սրված հարաբերությունները: Այս ամենից բացի, Բերդումյանն իր աշխատություններում բազմիցս անողոք կերպով քննադատում է իր ժամանակի եկե-

ղեցականների հորի բարքերը և խոսում հոգևորականի ճշմարիտ կերպարի մասին<sup>77</sup>: Այս քննադատությունը պիտի շարժեր շատ Եկեղեցականների զայրությը, որոնք էլ, նախանձից և իրենց անձնական շահից մղված, պիտի դատափետեին և քննադատեին նրան: Ուստի Բերդումյանի կյանքն ուսումնասիրելիս պետք է անպայման հաշվի առնել վերոգրյալ բոլոր նկատառումները՝ ամբողջականության մեջ հասկանալու համար նրա կենսագրության այս կամ այն դրվագը:

1783 թ. ապրիլի 4-ի հայրապետական կոնդակով Բերդումյանը նշանակվում է Կարինի առաջնորդ<sup>78</sup>: Առաջնորդական տարիների մասին քիչ բան է հայտնի: Գիտենք, որ մեկ տարի անց կաթողիկոսն ընդունել էր վերջինիս հրաժարականը և հրավիրել Սայր Աթոռ, քանզի տեղացիները բողոքել էին «վասն զրազումս անարժանս ի քահանալս ձեռնադրելոյն և այլոց անվայել իրաց»<sup>79</sup>: Դժվար է հավատալ այս մեղադրանքներին, որովհետև կրքերի հանդարտումից հետո 1785 թ. Բերդումյանին կրկին վստահվում է Կարինի առաջնորդությունը<sup>80</sup>:

Պետրոս առք. Բերդումյանի կյանքի վերջին տարիների մասին մեզ որևէ բան հայտնի չէ: Եկեղեցու այս «քաջ հովիվը» 1787 թ. կնքում է իր մահկանա-

<sup>77</sup> Տե՛ս ՏՄԲ, Էջ 74-76, Մսեր Մսերեանց, Ըշվ. աշխ., Էջ 259:

<sup>78</sup> Դիւան հայոց պատմութեան, նոր շարք, հ. Ա, Էջ 359:

<sup>79</sup> Նույն տեղում, Էջ 463:

<sup>80</sup> Նույն տեղում, Էջ 500:

ցուն և թաղվում Մայր Աթոռի միաբանական գերեզմանատանը<sup>81</sup>: Նրա տապանաքարն ունի հետևյալ արձանագրությունը.

•Քաջաշխիքի սոյն դամբէարան ,  
•Նի յինչեան պայր պատուական ,  
•Պէտքուայս պայմանէ Աղամալէան ,  
•Աղիս կողուան յոյժ քիքնական ,  
• որոյ քաշան Ես իշխանէան ,  
• Եւ Առաջ Պաւան լըալմանէան ,  
• այժմայս կէնացու առեալ պալանէան ,  
• ճէպեաց ի կէանս անանցական ,  
• ՀՈՒՄԼԶ (1787) Բարեկան (Հայոց) :



<sup>81</sup> Տես Երգարան, նաև ՄՄ կթղ. դիւան, թղթ. 6, վավ. 6: Շահիսաթունյանցի գրած առաջարանն ու Բերդումյանի մահագրականի արխիվային փաստաթուղթի իրենց բովանդակությամբ գրեթե բառ առ բառ համապատասխանում են իրար: Կարծում ենք, որ փաստաթուղթի հեղինակը նույն ինքը Տ. Հովհաննես եպս: Շահիսաթունյանցի է: Թեև վերջինս իր տպագրած գրքում տվել է Բերդումյանի ճշգրիտ մահվան թվականն ու տապանաքարի արձանագրությունը, բայց Շոշանիկ Նազարյանը, Միհրան Մինասյանը, որպես մահվան տարեթիվ, միսալմամբ նշում են 1784 թ. (տես ՊԲՀ, № 3, 1981, էջ 130, Միհրան Մինասեան, Հայերէն նորապատ ճեռագիր մը («Քարոզգիրք» Պետրոս Արք. Աղամալեան-Բերդումյան նախիշեանցիի), տես «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, թ տարի, 1997-2001, Անթիւմաս-Լիքանան, 2001, էջ 295: Բացի այս, հմնու. «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 40-41:

## **ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

Բազմարույն այս եկեղեցականը հարուստ գրական ժառանգություն է թողել: Միայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում կան ավելի քան 170 գրչագիր օրինակներ, որոնք ներառում են Պետրոս սրբազանի այս կամ այն գործը:

Բազմաժամն է նրա մատենագրական ժառանգությունը՝ սուրբգրային մեկնություններ, աստվածաբանական-փիլիսոփայական երկեր, քարոզներ, տրամաբանական, բարոյախրատական, թարգմանական և այլ գործեր: Նրա բեղուն գրչին են պատկանում նաև շուրջ 300 մեծ ու փոքր ծավալի բանաստեղծություններ, քնարական և պատմաքնարական խոշոր պոեմներ, երկտողյաններ, աղոթքներ, քայլակներ, ասույթներ և այլն:

Նրա մատենագրական վաստակը բաժանվում է 5 հիմնական ժանրի:

### **Ա. ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **1. «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԾԱՆԴՈՒ»**

Պետրոս սրբազանի հեղինակած այս մեկնությունը մեզ հասել է 2 ձեռագիր ընդօրինակությամբ

(ՍՄ ձեռ. № 2718, թ. 2ա-74բ և Երուսաղեմի Ս. Յակոբյանց մատենադարանի ձեռ. № 253, էջ 1-161): Աշխատության մեջ մեկնված է Ծննդոց գրքի մեջ մասը՝ համեմված աստվածաշնչյան մեջբերումներով, Եկեղեցու հայրերի և զանազան հեղինակների վկայություններով: Ցավոք, մեկնությունը մեզ թերի վիճակում է հասել: Մեկնիչ սրբազանը մեկնել է ընդուամենը Ա-ԽԱ գլուխները (Վերջին գլուխ մեկնված է ընդամենը Երկու համար՝ ԽԱ 1, 14), իսկ մնացած մասը ծեռագրի գրիչը վերցրել է Կուռնելիոսի համանուն մեկնության համառոտ խմբագրությունից<sup>1</sup>:

## 2. «Մեկնութիւն Յոբայ»

Յայ մեկնաբանական գրականության մեջ սա երրորդ ամբողջական մեկնությունն է Վանական վարդապետի (†1251) և ս. Գրիգոր Տաթևացու (†1409) համանուն մեկնություններից հետո: Բերդումյանի մյուս մեկնությունների նման սա էլ ծավալով շատ մեծ է: Յեղինակը Յորի մեկնությունը սկսել է Եվդոկիայում Նվիրակության տարիներին՝ այն ավարտին հասցնելով 1776 թ.<sup>2</sup>: Մեկնված է Յորի ամբողջ գիրքը՝ առաջին համարից մինչև ԽԲ 17 համարը: Այն բաժանումներ չունի: Յուրաքանչյուր գլուխ մեկնված է տող առ տող, իսկ երբեմն էլ՝ բառ առ բառ, կրկնություններից խուսափելու համար մեկնիչը բաց է բո-

<sup>1</sup> Այս մեկնության մասին տես ՏՄԲ, էջ 22-57, «Էջմիածին», 2005, Բ -Գ, էջ 69-89:

<sup>2</sup> ՄՄ ձեռ. № 1174, թ. 89բ:

ղել իրար նման տողերը: Աղբյուրների օգտագործման մեջ կրկին ակնհայտ են դառնում հեղինակի հանրագիտարանային գիտելիքները: Արժեքավոր այս երկի բնագիրն ինքնագրի հիման վրա (ՄՄ ձեռ. № 1174, թ. 6ա-89թ) պատրաստել է Գևորգ սրկ. Աշապահյանը՝ ներկայացնելով այն որպես ավարտաճառ Գևորգյան Շոգենոր ճեմարանում<sup>3</sup>:

### 3. «Մեկնութիւն Երգ Երգոցի»

Մեկնությունը հայտնաբերել և ուսումնասիրել է S. Միքայել ծ. Վոդ. Աշապահյանը, ըստ որի՝ այն գրվել է 1771 թ. Ս. Էջմիածնում: Գործն ավարտում չէ. մեկնաված է ընդամենը չորս համար (Ա 4, Գ 8, Դ 11-12): Բնագիրն արևելահայերեն թարգմանությամբ հանդերձ իրատարակվել է «Գանձասար» աստվածաբանական հանդեսում<sup>4</sup>:

### 4. «Աղբիր բացեալ»

Բերդումյանի ամենահայտնի երկն է: Աշխատությունը բաղկացած է 30 գլուխներից, ուր հեղինակը մեկնաբանում է տարբեր Ավետարաններում տեղ գտած առակները:

<sup>3</sup> Այս մեկնության մասին ավելի մանրամասն տես Գևորգ սրկ. Աշապահյան, Եշվ. աշխ.: Նշեմք, որ Մաշտոցան Մատենադարանում կա այս երկի մեկ այլ ընդօրինակություն ևս (ՄՄ ձեռ. № 2718, թ. 91թ - 233ա):

<sup>4</sup> Տե՛ս «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Բ. Բ, Երևան, 1992, էջ 222-252, ինչպես նաև «Էջմիածին», № Է-Բ, 1991, էջ 42:

### **5. «Մեկնութիւն Զորից Աւետարանչաց»**

Այս գործի մասին առաջին անգամ խոսում է Միհրան Միհրանյանը «Դասկ» հայագիտական տարեգրքում տպագրած իր հոդվածում<sup>5</sup>: Դժբախտաբար, մեզ չհաջողվեց պարզել հեղինակի օգտագործած աղբյուրը: Պրատումները Մաշտոցյան Մատենադարանում ցույց տվեցին, որ նմանատիպ գործ Պետրոս Բերդումյանի անունով հայտնի չէ որևէ ձեռագրացուցակում: Բացառված չէ, որ հեղինակն օգտագործել է որևէ մասնավոր գրապահոցում պահվող մեզ առայժմ անհայտ ձեռագիր: Սակայն ավելի հավանական ենք համարում, որ այստեղ խոսքը Բերդումյանի «Աղբիւր բացեալ» աշխատության մասին է, որը ձեռագրական հավաքածուներում գուցե հանդիպում է նաև այսպիսի վերտառությամբ:

### **6. «Մեկնութիւն Գործոց Առաքելոց»**

Այս աշխատությունը դասվում է Բերդումյանի կորած երկերի շարքը: Միակ հիշատակությունն անում է Բերդումյանի մահագրականի անհայտ հեղինակը<sup>6</sup>, ով ի շարս այլ գործերի նշում է նաև այս մեկնության մասին:

### **7. «Մեկնութիւն թղթոյն Պողոսի առ Եփեսացիս»**

Մեկնությունը մեզ հասել է ինքնագիր մեկ օրինա-

<sup>5</sup> Միհրան Միհնասեան, Ծ2վ. աշխ., Էջ 295:

<sup>6</sup> ՄՄ կթղ. դիվան, թղթ. 6, վավ. 6, Երգարան:

կով, որը Երուսաղեմի Ս. Յակոբյանց մատենադարանի № 1116 ձեռագիրն է: Մեծածավալ այս գործը տպագրության է արժանացել 1850 թ. Երուսաղեմում<sup>7</sup>, և նրա առաջարանում աշխատասիրողը դրվատանքով է խոսում Պետրոս սրբազնի և նրա գործերի մասին՝ գրելով. «...յայիտենական արդարն յիշատակաց կոթողը և աճսուս վկացը, յորս փայլէ հրաշալի իմն յեղանակաւ՝ հանձար իր խորաքնին, աճսոգիւտ վարուց պայծառութիւն, և յաւէտ յափշտակութիւն մտացն և ոգոյ առ աստուածային»<sup>8</sup>, իսկ գործում կարելի է տեսնել սրբազն իոր «զարմանաւոր նորամոռութիւն և խորախորհուրդ հանձար հեղինակիս շուրջ զաստուածարանական խնդրովք»<sup>9</sup>:

#### 8. «Մեկնութիւն Յայտնութեան Յովիաննու»

«Յայտնության» գրքի այս մեկնությունն առավելապես խմբագիր մեկնություն է, ուր ի մի են բերված «Յայտնության» գրքի նախորդ մեկնությունները: Միայն Մաշտոցյան Մատենադարանում պահվում են այս երկի 5 ձեռագիր ընդօրինակություններ: Այն հրատարակվել է Կալկաթայում 1846 թ.<sup>10</sup>: Երկի հա-

<sup>7</sup> Տես Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս, յօրինեալ ի բազմարդին Պետրոս Արքեպիսկոպոսէ Աղամալեան Բերդումեանց, յԵրուսաղէմ, 1850:

<sup>8</sup> Նովն տեղում:

<sup>9</sup> Նովն տեղում:

<sup>10</sup> Տես Մեկնութիւն Յայտնութեան Ս. Յովիաննու առաքելոյ, համառուեալ ի զանազան մեկնչաց ի Պետրոսէ Նախջուանցւոյ Աղամալեան Բերդումեանց, Կալկաթա, 1846:

մենատական բնագիրը պատրաստել է Վարդգես սրկ. Մայիսանը՝ տպագիրը համեմատելով ՍՍ երկու ձեռագրերի հետ<sup>11</sup>:

## Բ. ԱՍՏՎԱԾՄԱՅԱՆԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՐԿԵՐ

### 1. «Աստուածանմանութիւն»

Երկիատոր աստվածաբանական այս երկը հեղինակը գրել է 1769 թ. Ս. Էջմիածնում՝ «ի վայելումն մանկանց եկեղեցւոյ»<sup>12</sup>: Առաջին հատորը բաղկացած է 15 գլուխներից, ուր քննվում են Աստծո ստորոգելիները, ճանաչման միջոցներն ու հնարավորությունները, Արարշի և մարդու նմանություններն ու տարրերությունները: Իսկ երկրորդ հատորում, որ բաղկացած է 7 գլխից, քննվում են Ս. Երրորդության առանձնաւորական հատկությունները<sup>13</sup>: Ս. Թաղիայանը Հաղպատում ընդօրինակում է «մեծանուն մատենագիր, առուրն պարենի կարօտ»<sup>14</sup> Պետրոս Բերդումյանի «Աս-

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս **Վարդգես սրկ. Մայիսան**, Եշվ. աշխ., Էջ 26-60:

<sup>12</sup> ՍՍ ձեռ. № 140, թ. 1ա: Գրության թիվը պարզվում է երկի վերջում հեղինակի կողմից գրված հիշատակարանից (տե՛ս Աստուածանմանութիւն, Էջ 254):

<sup>13</sup> Տե՛ս «Էջմիածին», № Է-Ը, 1991, Էջ 43:

<sup>14</sup> **Մեսրոպ Թաղիայան**, Ուղեգրություններ, Բողվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, Էջ 308: Գրի տպագրության մասին հետևյալն է գրում տպագրիչը. «Երևեցուցի որեք-որեք ի ծանօթաբանութեան իմում ի գիրս «Աստուածանմանութեան»

տուածանմանութիւն» երկը՝ հրատարակելով այն 1827թ. Կալվարայում. «Զոր ընդունել աղաչեմ, - դիմում է նա ընթերցողին, - իբր հայելի և առաջնորդ ձերոց, զարդարել զձեզ առաքինավար գործովք բարութեան...»<sup>15</sup>: Միայն Մաշտոցի անվան Մատենադարանում պահպում են 20-ից ավել ձեռագրեր, որոնք պարունակում են այս գործը:

### 2. «Կշիռ արդարութեան»

Պետրոս սրբազնի աստվածաբանական երկերից է՝ ամփոփված 11 գլուխներում: Գրվել է Ս. Էջմիածնում նրա ուսուցչության տարիներին: Զանազան հարցեր են քննարկվում այս փոքրածավալ երկում: Խոսվում է արդարության, ողորմության, գքության, նախասահմանության, նախախնամության, օրենքի, խղճի և այլնի մասին: Բնագիրը Մաշտոցյան Մատենադարանի 7 ձեռագրերի համեմատությամբ պատրաստել է Վահե սրկ. Վահունին<sup>16</sup>:

### 3. «Տրամաբանութիւն»

Ժամանակին որպես դասագիրք նախատեսված այս գործը մեզ հասել է ընդամենը մեկ ընդօրինակումով<sup>17</sup>:

Երանելոյն Պետրոսի Բերթումեցոյ, զոր և բազում վշտօք տպագրեցի ի նորակերտ տպարանի եպիսկոպոսական նեմարնին, արդեամբք բարեպաշտօն մերազանցն ի Հնդիկս (նույն տեղում, Էջ 408):

<sup>15</sup> Աստուածանմանութիւն (նախազեկուցումն):

<sup>16</sup> Տես Վահե սրկ. Վահունի, ավարտանառ, Էջ 29-42:

<sup>17</sup> ՄՄ ձեռ. № 6610,թ. 66ա-121ա:

#### **4. «ՄԵԿԱՌՈՒԹԻՒՆ ՎԵՐԼՈՒՑՈՒԹԵԱՆցն ԱՐԺԱՍՈՒՑԷԼԻ»**

Այս աշխատությունն էլ գրվել է որպես դասագիրք Ս. Եջմիածնի ժառանգաւորների համար: Ինչպես ժամանակին նկատել է հայր Միքայելը. «Սա Բիմք է տալիս ենթադրելու, որ ԺԸ դարում ևս հայ հոգևորականության աստվածաբանական կրթության գործում զգալի դեր էին խաղում արիստոտելյան գաղափարները»<sup>18</sup>: Մեզ հասել է երկու ձեռագիր ընդօրինակումներով<sup>19</sup>:

#### **5. «Ի ԱԿԱՏՄԱՅԷՆ ԱՐԺԱՍՈՒՑԷԼԻ....»**

Այս երկը նույնպես Բերդումյանի հեղինակած փիլիսոփայական երկերից է: Առաջին անգամ այս աշխատության մասին նշում է բանասեր Շուշանիկ Նազարյանը՝ առանց մատնանշելու իր օգտագործած աղբյուրը<sup>20</sup>: Մյուս բոլոր հետազոտողները, ովքեր գրաղվել են Բերդումյանի մատենագրական վաստակով, կամ այս անունով գործ չեն գտել ձեռագրացուցակներում, կամ ընդհանրապես չեն ներառել այն նրա ժառանգության մեջ, կամ էլ լավագույն դեպքում հղել են Շուշանիկ Նազարյանին: Երբ պատրաստում էինք Բերդումյանի Ծննդոց գրքի մեկնության բնագիրը, առիթ ունեցանք կրկին աչքի անցկացնելու առկա բոլոր ձեռագրացուցակները: Եվ ուսումնասիրության ընթացքում նկատեցինք, որ Մաշտոցյան Մատենա-

<sup>18</sup> «Եջմիածն», № Ե-Ը, 1991, էջ 44:

<sup>19</sup> ՄՄ ձեռ. № 1826, թ. 298ա-320ա, ՄՄ ձեռ. № 2220, թ. 17ա-54թ:

<sup>20</sup> ՊԲՀ, 1981, էջ 130:

դարանի № 2220 (թ. 78ա-83բ) ձեռագիրը պարունակում է սրբազն հոր այս աշխատանքը, որի լուսանցքում կարմիրով գրված է. «Ի Բերդումեան հանգուցեալ Պետրոս վարդապետէն» (թ. 78ա): Մեր կարծիքով՝ Բերդումյանը «Ի Ակատմաճեան Արիստոտէլի» փիլիսոփայական աշխատությունը գրել է 1780-1787 թթ. ընթացքում:

#### Գ. ՔԱՐՈՉՆԵՐ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐ

##### 1. «Քարոզք տարեկան»

Բերդումյան մեկնիչի, աստվածաբանի և փիլիսոփայի կողքին վեր է հառնում նաև Բերդումյան քառողիքը, երբ ծանոթանում ես նրա մատենագրական ժառանգության ոչ պակաս կարևոր մասին՝ քարոզներին, որոնք արտասանվել են նրա կողմից զանազան եկեղեցական տոների առթիվ: Նրա քարոզների ժողովածուն կազմված է երկու հատորից, որոնք պարունակում են մոտ 50 քարոզ: Մաշտոցյան Մատենադարանում կան 30-ից ավել ձեռագրեր: Քարոզները գրվել են 1771 թ. Ս. Էջմիածնում ժառանգավորների համար<sup>21</sup>: Այս ժողովածուի մեջ է, որ կասկածելի մտքեր է տեսել Սիմեոն Երևանցի կաթողիկոսն ու հրամայել Գրիգոր վարդապետին դրանք հրո ճարակ դարձնել<sup>22</sup>:

<sup>21</sup> «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 44:

<sup>22</sup> ԴՀՊ, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, էջ 240:

## 2. Աղոթքներ

Բերդումյանը գրել է նաև աղոթքներ, որոնք հաճախ կցված են «Ապաշխարան» ժողովածուին իբրև երկրորդ հատոր<sup>23</sup>: Դրանք հրատարակել է Տ. Յովհաննես Եպս. Շահիսարունյանցը<sup>24</sup>: Հրատարակչի հաղորդմամբ՝ այս աղոթքները հատկապես վաճառականների, ճանապարհորդների և նրանց համար են, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն կարողանում մասնակցել եկեղեցում կատարվող հասարակաց աղոթքին<sup>25</sup>:

## Դ. ԶԱՓԱԾՈ ԵՐԿԵՐ

### 1. «Ապաշխարան»

Այս ժողովածուն Բերդումյանը կազմել է «ի խմելոյ հօր և եղոր»<sup>26</sup>, ուր ամփոփված են նրա լավագույն կրոնական բանաստեղծությունները: Շուշանիկ Նազարյանի բնորոշմամբ՝ «Յոթ տարբեր մասերից, շուրջ 120 գլուխմերից, ավելի քան 10.000 տողից, հարյուրավոր ինքնատիպ, բազմառ արձակ և չափածո, հանգավոր և անհանգ (շարքերով միմյանց հետ կապակցված) երգերից (աղոթք, աղերս, ողբ, շարականակերպ տաղ և

<sup>23</sup> «Էջմիածին», № Է-Ը, 1991, էջ 46-47:

<sup>24</sup> Տես Երգարան:

<sup>25</sup> Տես Երգարան, (Բան առ չերմեռանդ աղօթաւորս):

<sup>26</sup> ՄՄ ձեռ. № 10, թ. 6ա:

այլն) բաղկացած մի ստեղծագործություն է այն»<sup>27</sup>:

### 2. «Յիսոս Փեսայ»

Մեծածավալ մի պոեմ է՝ Երգ Երգոցի շնչով և ազդեցությամբ հորինված: Մաշտոցյան Մատենադարանի 7 ձեռագրեր ունեն այս գործը<sup>28</sup>:

### 3. Տաղեր

Պետրոս արք. Բերդումյանը բազմաթիվ տաղերի հեղինակ է, որոնք ցրված են շուրջ 30 ձեռագիր մատյաններում<sup>29</sup>: Բովանդակային և թեմատիկ առումներով դրանք շատ բազմազան են: Դանդիպում են Ս. Երրորդությանը, Տիրամորը, զանազան սուրբերին, Եկեղեցիներին նվիրված տաղեր: Տաղերի մի մասն առանձնանում է նաև իր բարոյախրատական և խոհափիլխոփայական բովանդակությամբ: Բերդումյանի տաղերի համար կարևոր աղբյուր են ծառայել Ս. Գիրքը, իայ մատենագրությունն ու հայոց պատմությունը:

<sup>27</sup> Ավելի մանրամասն տես ՊԲՀ, № 2, 1982, էջ 89-99, նաև ՊԲՀ, № 3, 1981, էջ 131-143:

<sup>28</sup> Տես Մկրտիչ քին. Երանյան, Պետրոս Բերդումյան (հոգևորականը, գործիչը, «Յիսոս փեսայ» և «Ողբ» պոեմները), Ս. Էշմիածին, 1990, /մեքենագիր/, էջ 1 - Ծ:

<sup>29</sup> Տես Ալվանդ սրբ. Զարգարյան, Պետրոս Բերդումյանի տաղերը, Ս. Էշմիածին, 1990 /մեքենագիր/, էջ 1 – ԽԹ:

## Ե. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԵՐ

### «Ասցուածք իմաստնոց»

Անտիկ և քրիստոնյա փիլիսոփաների և մտածողների առավել հայտնի ասույթների, թևավոր խոսքերի և զրույցների ժողովածու է միջնադարյան «Վկայութիւնը» և «Բանք իմաստնոց» ժողովածուների նման<sup>30</sup>: Ինչպես կարդում ենք ՄՄ № 6610 ձեռագրում, «Ասցուածք իմաստափրաց՝ թարգմանեալ ի լատին լեզուէ, իսկ այժմ սրբագրեալ ի Պետրոսէ վարդապետէ Նախշնամեցոյ Աղամալեամ»<sup>31</sup>: Պահպանվել է մեկ ձեռագիր ընդօրինակումով<sup>32</sup>:

Առայժմ մեզ հայտնի աղբյուրների հիման վրա այսքանով աճբողջանում է Եկեղեցու այս ժրածան մշակի մատենագրական վաստակը:

<sup>30</sup> Այս ժողովածուների մասին տես Բանք իմաստափրաց, աշխատափրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի, Երևան, 2001, էջ 3-14, Ալեքսանդր Չուղացի, Վկայութիւնը ի այսու քարոզութեանց, աշխատափրութեամբ Հակոբ Քյոսեյանի, աշխարհաբար թարգմանությունը՝ S. Բագրատ արեդա Գալստյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998, էջ 5-11:

<sup>31</sup> ՄՄ ձեռ. № 6610, թ. 121ա:

<sup>32</sup> Նույն տեղում, թ. 121ա-128ա: Բերդումզանի մատենագրական վաստակին անդրադարձ նեղինակները, իբրև այս գործի մեկ այլ ընդօրինակություն, նշում են նաև ՄՄ ձեռ. № 3281: Աչքի անցկացնելով վերոգրալ ձեռագիրը՝ պարզեցինք, որ չնայած ձեռագրի՝ իմաստափրների ասացվածքներ պարունակող մասը (թ. 88թ-89թ) հաջորդում է Բերդումզանի «Աղբիր բացնայ»-ին, սակայն այն չի պատկանում Բերդումզանի գրչին, քանզի բովանդակությամբ տարբեր գործ է:

## **ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆԻ «ԱՂԲՅՈՒՐ ԲԱՑՅԱԼ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Մեր Տերը՝ Յիսուս Քրիստոսը, իր երկրային առաքելության ընթացքում աստվածային ճշմարտությունները զանազան ձևերով քարոզեց և ուսուցանեց մարդկանց՝ ցույց տալով «արքայական ճանապարհը», որ տանում է դեպի երկնքի արքայություն, դեպի հավիտենական կյանք։ Ազդու քարոզների, զարմանալի իրաշքների և բժշկումների միջոցով Աստվածորդին շատերի սրտերն ու հոգիներն իրեն դարձրեց՝ անձնական օրինակով ցույց տալով ճշմարիտ կենսակերպ։ Յիսուսի վարդապետության ինքնատիպ դրսնորումներից են նաև ավետարանական առակները, որոնց նյութը Տերը վերցրել էր առօրյա կյանքից և պարզ մարդկային հարաբերություններից։ Առակներում Քրիստոսը խոսում էր Աստծո արքայության, մարդասիրության, ապաշխարության, ներողամտության, դիմացինին հարգելու և սիրելու, աստվածային շնորհները ճիշտ օգտագործելու, աղոթքի զորության և աղամորդու փրկությանն անհրաժեշտ այլ բաների մասին։ Անշուշտ, առակավոր խոսքն Ավետարանում շատ զորավոր է, քանզի Քրիստոսն առակի օրինակի միջոցով տվյալ միտքը կամ գաղափարն ավելի պատկերավոր և մատչելի էր դարձնում մարդկանց,

որն ավելի ամուր էր դրոշմվում նրանց մտքում և հիշողության մեջ: Նա շատ հաճախ էր առակներով խոսում հավաքված բազմության առաջ և երբեմն էլ մեկնում դրանք՝ բացահայտելով առակների ծածկյալ բովանդակությունը, պարզելով դրանց ներիմաստն ու նշանակությունը: Երբ առաքյալները մոտեցան Տիրոջը և հարցրին, թե ինչու է Նա առակներով խոսում, Յիսուսը նրանց պատասխանեց. «Քանի որ ձեզ է տրված իմանալ երկնքի արքայության խորհուրդները, իսկ մրանց տրված չէ. որովհետև ով ունի, մրան պիտի տրվի և պիտի ավելացվի, իսկ ով չունի, մրանից պիտի վերցվի ունեցածն էլ: Նրանց հետ առակներով եւ խոսում այն պատճառով, որ նայում են և չեն տեսնում, լսում են և չեն իմանում ու չեն հասկանում» (Մատթ. ԺԳ 11-13): Ուստի շատ կարևոր է հասկանալ ավետարանական առակների խորհուրդն ու պատգամը, որոնց մեկնությանն է նվիրված Պետրոս սրբազնի «Աղթիւր բացեալ» աշխատությունը: Այն հեղինակի ամենատարածված և բազմից ընդորինակված գործն է, որի ակնբախ վկայություններից են Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող 30-ից ավել ձեռագրերն ու նրանց գրության աշխարհագրական տարածվածությունը: Սիրված լինելու շնորհիվ Ս. Էջմիածնի Ս. Սինորի որոշմամբ Բերդումյանի այս երկասիրությունը տպագրության է արժանացել երկիցս՝ 1845<sup>1</sup>

<sup>1</sup> Տես Աղթիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի Եպիսկոպոսի Բերդումյան Սղամալեանց, Ս. Էջմիածնի, 1845:

և 1857<sup>2</sup> թթ.: Պետրոս արք. Բերդումյանն ավետարանական առաջնորդի այս մեկնությունը գոել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օշականցի գրագիր Երեմիա աբեղայի խնդրանքով։ ՄՍ № 2 ձեռագիր մատյանի գրչի հիշատակարանում այս մասին կարդում ենք.  
«Արդ, ես ամենանուաստ և անարժան ծառայ և սպասաւոր բանի Տեառն, Երեմիա անարդիւն եպիսկոպոս, որ եմ ի գաւառէս Այրարատեան, ի յՕշական գեղջէ, որ յԱրագածոտն մահանգի, և յետին միաբան և գրագիր Աստուածահիշի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, յոլովիք ըղձիք ցանկացող եղեալ ի բազում ժամանակս լիով մնելութեան բոլորից առակաց սրբոյ Աւետարանին, բազմօք աղերսանօք հնացեցի ի գերիմաստ և ի բանիքուն իմաստոյն Պետրոս բարեարդիւն եպիսկոպոսէն և աստուածարանութեան վարդապետէն Նախիջևանեցոյ, որ էր միաբան Քրիստոսակերտ մեծի Աթոռոյս Էջմիածնի, որպէս զի արասցէ զմնելութիւնս հոգեկեցոյց և կենասոու առակաւոր բանից փրկագործ Աւետարանի Տեառն մերոյ և Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի, ի լցումն բազմաժամանակեալ ըղձից իմոց և ի զովացումն պասքելոյ հոգուոյ»<sup>3</sup>: Երեմիա սրբազնը նաև գովեստով է խոսում Բերդումյանի աշխատության մասին:  
«Լուսաւոր և հոգեզուարճ բանիք, դիւրին ոճիւ, քաղցր՝ առ ի լընթեռնով և ախործ՝ առ ի լսել, և ցանկալի յոյժ՝ առնոլ ի միտ, զորոյ տեսողն յիրահ և վայելողն զո-

<sup>2</sup> Տե՛ս Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի եպիսկոպոսի Բերթումնան Աղամալեանց, Ս. Էջմիածին, 1857:

<sup>3</sup> Տե՛ս ՄՍ ձեռ. № 2, թ. 91ա:

*ոինքաղցրութիւն՝ անդր քան զասացեալս գովութեանց  
մեծաց առնէ արժանի», - արձանագրում է նա<sup>4</sup>: Պետրոս սրբազնն իր այս երկասիրությունն ավարտել է շուրջ 1767 թ.:*

Յայ իրականության մեջ սա միակ ամբողջական աշխատանքն է, ուր ի մի են բերված ավետարանական բոլոր առակները, որոնք սրբազն հայրը մեկնել է իրեն հատուկ ոճով՝ համեմելով սուրբգրային բազմաթիվ վկայակոչումներով, Ընդհանրական և Յայ Առաքելական Եկեղեցու հոգեեկիր հայրերից, ծիսամատյաններից մեջբերումներով և իմաստասերների փիլիսոփայական մտքերով: Բերդումյանի մյուս գործերի նման այս աշխատանքն էլ է գրվել ժառանգավորների ուսումնական կարիքները բավարարելու նպատակով, ուստի և առանձնանում է իր բարոյադաստիարակչական բովանդակությամբ:

«Աղբիւր բացեալ»-ի առաջին տպագրի «Ազդ» բաժնում Ս. Էջմիածնի տպարանի վերատեսուչ Տ. Աբել նորընծա Վարդապետ Մխիթարյանցն անդրադառնում է գրքի տպագրության շարժառիթներին, իր շնորհակալությունը հայտնում գրքի մեկենաս բարվեցի Աղա Թովմաս Այվազյանին՝ նշելով, որ առաջին տպագրությունը կատարվել է վեց ձեռագրերի համեմատությամբ<sup>5</sup>:

Աշխատությունը բաղկացած է 30 գլուխներից,

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տես Աղբիւր բացեալ, 1845:

որ սկսվում է հեղինակի առաջաբանով: Այստեղ Բերդումյանը բացատրում է առակների նշանակությունն ու խորհուրդը, անդրադառնում մեկնության շարժառիթներին և նպատակներին, խորհուրդներ տալիս ընթերցողին: Սրբազն հայրը, խոսելով ավետարանական առակների մեկնությանը նվիրված իր աշխատության վերնագրի մասին, գրում է. «Ահա այս աղբյուրները կնքված աղբյուրի նման խրթնությանը լի էին, բայց մենք աստվածաբանների օժանդակությանը և Սուրբ Հոգու լուսավորությանը աշխատեցինք, ըստ մեր կարողության բացեցինք՝ մանուկների համար դյուրըմպելի դարձնելու նպատակով, որպեսզի ոչ ոք քրիստոսի քաղցրաբուխ և ուրախարար աղբյուրներից ծարավ չմնա:»

Այդ պատճառով էլ այս աշխատությունը կոչեցինք ԲԱՑՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ, որպեսզի եթե մեկն ախորժաբար ընպի, պտղաբեր դարձնի իր պարտեզը՝ իր Փեսա Դիսուսի վայելքի համար համարձակորեն հրավիրելով [Խրան]. «Թող իմ եղբորորդի՛ իշմի իր պարտեզը և ուտի իր ծառերի պտուղները» (Եղա Ե 1):

Առաջաբանին հաջորդում է գրի համար գրված Բերդումյանի «Յորդորակ»-ը՝ ձայնագրություն՝ հայրակապով:



## ԱԴԲՑՈՒՐՆԵՐԸ

Պետրոս արք. Բերդումյանի երկասիրություններն աչքի են ընկնում աղբյուրների առատությամբ: Աղբյուրագետ Պետրոս սրբազնը տեղյակ է իր ժամանակի տպագիր գրականությանը, շատ դեպքերում օգտվում է նաև ձեռագիր մատյաններից: Օտար լեզուների իմացությունը նրան հնարավորություն է ընձեռել օգտվելու օտար աղբյուրներից և հեղինակներից: Այս ամենը, անշուշտ, խոսում է Բերդումյան հոգևորականի լայն մտահորիզոնի և աշխարհայացքի մասին:

Նրա մյուս աշխատությունների նման «Աղբիւր բացեալ»-ը նույնպես բացառություն չէ աղբյուրների բազմազանությամբ: Նման աշխատության համար, անկասկած, առաջին աղբյուրն Աստվածաշունչ մատյանն է, որի տարբեր գրքերից հեղինակը բազմաթիվ մեջքերումներ է կատարում՝ հաստատելով և հիմնավորելով իր այս կամ այն դրույթը կամ մտածումը: Դրանով Բերդումյանը հարստացնում է իր մեկնությունն աստվածաշունչ խոսքերով՝ գործին առավել վավերականություն հաղործելով: Հարկ է նշել, որ սուրբգրային հարուստ վկայակոչումները հատուկ են Բերդումյանի բոլոր գործերին, որն էլ ապացուցում է, որ նա իր ժամանակաշրջանի մյուս հեղինակների

նման քաջատեղյակ է Սուրբ Գրքին: Սուրբգրային առատ մեջրերումները ցույց են տալիս նաև, որ այն ժամանակ հոգևոր կրթարաններում բարձր մակարդակի վրա է եղել Սուրբ Գրքի սերտողությունը:

Բերդումյանն ավետարանական առակների մեկնության մեջ սուրբգրային վկայակոչումները բերում է երեք ձևով՝ Առաջնությամբ (ուղղակի), Բամենատական կարգով և ակնարկելով Ս. Գրքի այս կամ այն Բամարը, Բատվածն ու դրվագը: Քանի որ նա իխմնականում օգտագործում է տպագիր գրականություն, երբ նա գրում էր իր աշխատությունը, Աստվածաշնչի երեք հրատարակություն էր կատարվել՝ Ոսկանյան հրատարակությունը<sup>1</sup>, Կ. Պոլսի 1705 թ. տպագիրը<sup>2</sup> (նախորդի արտատպությունը) և 1733 թ. Վենետիկում Մխիթար Սեբաստացու տպագրածը<sup>3</sup>: Վերջին հրատարակության տարբերությունն այն էր Ոսկանյան տպագրից, որ Արքահայրը որոշ հատվածներ մաքրել–սրբագրել էր լատինաբանություններից<sup>4</sup>: Բերդումյանն իր գործերում օգտվում է Արքահոր հրատարակած Աստվածաշնչից և նրա լուսանցքներում եղած տարընթերցումներից: Բայց աստվածաշնչային մեջրերման տե-

<sup>1</sup> Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, ՅԱմստերդամ, 1666:

<sup>2</sup> Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլս, 1705:

<sup>3</sup> Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց, Վէնետիկ, 1733:

<sup>4</sup> Այս մասին տես Հ. Ս. Անապան, Հայկական մատենագիտություն, Բ. Բ., Երևան, 1976, էջ 337-340:

ոյն հայտնաբերելը դժվարանում է, երբ Բերդումյանն  
այն հիշողությամբ է վկայակոչում:

Իր մեկնության մեջ նա հականե հաճվանե հիշա-  
տակում է ս. Յովիան Ոսկեբերանին, ս. Դիոնիսիոս  
Արիսագացուն, ս. Դավիթ Անհաղթին, ս. Գրիգոր Նա-  
րեկացուն, ս. Ներսես Շնորհալուն, Խճմատիոս Սևեռն-  
ցի Վարդապետին, ս. Գրիգոր Տարեկացուն: Նա օգտա-  
գործում է Ե դարի պատմիչներ Փավստոս Բուզանդի  
և Ազարանգեղոսի Երկերը, հիշատակում Արիստոտե-  
լին և Ալբերտ Մեծին, մեջքերումներ կատարում ժա-  
մագրքից և շարակնոցից: Այս հեղինակների գործերի  
հիմն վրա էլ նա շարադրում է իր աշխատությունը,  
որոնց տեղիները ցույց ենք տվել համապատասխան  
տեղերում: Կստահաբար, մեկնության մեջ արտա-  
հայտված շատ մտքեր ու գաղափարներ կարելի է  
հանդիպել այլ հեղինակների գործերում նույնպես,  
քանզի Բերդումյանը փորձել է մատչելի լեզվով բա-  
ցատրել ավետարանական առակները՝ մարդկանց  
չժանրաբեռնելով խրթին մտքերով և զանազան հեղի-  
նակների վկայակոչմամբ: Վերոգրյալ հեղինակներից  
մեջքերումները մեզ հնարավորություն են ընձեռում  
և մեկ անգամ համոզվելու, որ Պետրոս սրբազանն  
իրապես գիտակ է Սուրբ Գրքի այս կամ այն հատվա-  
ծի մեկնությանը և իր մեջքերած հեղինակների գոր-  
ծերին:



## ԿԻՐԱՌԱԾ ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Մեկնաբանությունն աստվածաբանության այն կարևոր ճյուղն է, որ հայտնաբերում, բացահայտում և ցույց է տալիս Սուրբ Գրքի Ծշմարիտ էռթյունը: Ինչպես ընդհանուր քրիստոնեական, այնպես էլ հայ աստվածաբանական մտքի պատմության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի մեկնաբանական գրականությունը, որն անկասկած սերտորեն կապված է ընդհանուր քրիստոնեական համարնույթ գրականության հետ:

Ընդհանրապես գրականությունը և գիտական միտքը հանրության լայն շրջանակների հետ շփում ունենալու պահանջով և առավել ևս հասկանալի դառնալու միտումով միշտ էլ մեկնաբանվելու կարիք են զգացել: Մեկնաբանությունը՝ լինի բանավոր, թե գրավոր, վաղուց անտի գոյություն է ունեցել: Ահա թե ինչպես է բացատրում Հայկազյան բառարանը մեկնել բառը. «Մեկի՛ առնել, ըստ որում պարզ և յայտնի կացուցանել, պարզել զմթութիւն բանից, յայտնաբանել, բացայստել, վերլուծանել, թարգմանել, խելամուտ առնել»<sup>1</sup>: Հատկապես Աստվածաշունչ մատյանի մեկնա-

<sup>1</sup> Նոր բառգիրը հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց լաշակերտութեան մեծին Միհթարաց աբբանոր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիլոմէլեան, Հ. Մկրտչի

բանության բնագավառն այնքան պատասխանատու և կարևոր է համարվել, որ այն վստահվել է միայն բանիմաց և համակողմանի գիտելիքների տեր հոգևորականներին: Ուստի նմանատիպ վարդապետներին հաճախ տվել են մեկնիչ անունը, որի համարժեքն է, որոշ դեպքերում, նաև թարգմանիչ բառը:

Դայաստանյայց Առաքելական Եկեղեցու սուրբ հայրերն Աստվածաշունչ մատյանի թարգմանությունից հետո, ժողովրդի հոգևոր ծարավը հագեցնելու նպատակով, սկսեցին մեկնել այն: Մեր մեկնիչները խուսափեցին մեկնաբանության Անտիռքյան դպրոցին հատուկ պատմաբանասիրական, բառացի կամ տառացի և Ալեքսանդրյան դպրոցի այլաբանական եղանակի պարտադրած ծայրահեղ եղանակներից՝ որդեգրելով միշին ընթացք: Դայ մեկնիչներն Աստվածաշունչ մատյանը մեկնաբանելիս առաջնորդվում էին տվյալ գրքից բխող պահանջներից: Եթե գիրքը պատմական բնույթի էր, ապա նախնոտրելի էր պատմաբանասիրական եղանակը, իսկ մարդարենություններն ու ինաստության գրքերը պահանջում էին ավելի շատ այլաբանական մոտեցում<sup>2</sup>:

---

Աւգերեան, Բ. Բ., Վենետիկ, 1837, Էջ 244:

<sup>2</sup> Մեկնաբանական գրականության մասին տես՝ Փայլակ Ս. Աթափյան, Հայ մեկնաբանական գրականության տեսական նախամիմերի շուրջ, «Բանբեր մատենադարանի», № 15, Երևան, 1986, Էջ 60-92, Ս. Գրքի հայերեն մեկնոթյունների մատենագիտություն, պատրաստեցին Եզնիկ Եպի. Պետրոսյան, Արմեն Տեր-Ստեփանյան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2002, Էջ 12-129, «Քրիստոնյա Հայաստան» հանրագի-

Յայ մեկնաբանական գրականության լավագույն ավանդների շարունակողն է Պետրոս արք. Բերդումյանը, ով իր սուլբգրային մեկնություններում կիրառել և օգտագործել է նախորդ լավագույնը: Նա ամենայն պատասխանատվությամբ և երկյուղածությամբ է մոտեցել իր աշխատանքին. չէ<sup>3</sup> որ նրա գրվածքների մեջ մասը գրված է «ի լուսատրութիւն մանկանց Սուրբ Եկեղեցւ», ուստի, իբրև հմուտ Վարժապետ, փորձել է անգամ հրամանակարգային խնդիրները և աստվածաբանական հասկացությունները դյուրըմբռնելի ոճով շարադրել: Նրա համար շատ կարևոր է, որ ընթերցողը գրվածքի միայն արտաքին տարին չնայի, այլ խորամուխս լինի՝ հասկանալու տողատակի տակ թաքնված ներիմաստն ու խորհուրդը, քանզի միայն այդ ժամանակ կարող ենք դառնալ Քրիստոսի աշակերտ: Պետրոս սրբազնն իր «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության մեջ այս մասին գրում է. «Բարոյականապէս Աստուածաշունչն է ծով, ուր ոք թափանցի ի նրբագոյն խորհուրդս նորա, եղանակ թռչուն, այսինքն՝ աշակերտ Քրիստոսի, իսկ որ Ակարագրին միայն ամսալ, թանձրամտութեամբն մնայ ի ծով աշխարհիս ըստ լուղակաց»<sup>3</sup>:

«Աղբիւր բացեալ» աշխատության մեջ Բերդումյանը մեկնության հինգ եղանակ է օգտագործում՝ Ակարագրական, այլաբանական, խորհրդական, բարո-

---

տարան (=ՔՀ), Երևան, 2002, էջ 714-718:

<sup>3</sup> ՍՄ ձեռ. № 2718, էջ 11ա:

յական և հոգեստ: Այս եղանակները միասնաբար հանդիս չեն գալիս: Ստորև բերվող օրինակներով տեսնենք,թե Պետրոս սրբազնն ինչպես է հասկանում մեկնաբանական ամեն մի եղանակը:

**Նկարագրական - Բերդումյանց տալիս է տողի կամ հատվածի պարզ և հստակ բացատրությունն առանց հավելյալ ծավալումների:** Օրինակ՝ մեկնաբանելով Մատթեոսի Ավետարանի ժԳ 45 համարը՝ «Երկնքի արքայությունը Աման է մի Վաճառականի, որ գեղեցիկ մարդարիտներ է փնտրում», նա գրում է. «Նկարագրապես՝ Երկնքի արքայությունը մեր Տեր Քրիստոսն է. «Ես եմ Ծանապարհը, Ծշնարտությունը և Կյամքը» (Հովհ. ԺԴ 6): Կամ մեկնելով Ղուկասի Ավետարանի Անառակ որդու առակի ժԵ 11 համարը՝ «Մի մարդ երկու որդի ուներ», նա գրում է. «Նկարագրապես՝ հասկանալի է խոսքի [իմաստը], որովհետև ով երեխա ժամանակ չի հնազանդվում հորը, այլ անզդությամբ և մանկական վարքով իր կամքն է առաջ տանում, անկասկած մեծ վտանգների է հանդիպում, ուստի Իմաստունն իրավացիորեն ասաց. «Ամհմազանդ որդին կորստյան պիտի մատնվի» (Առակ. ԺԳ 1):

**Այլաբանական - հեղինակը ցույց է տալիս տողի հետևում թաքնված իմաստը, որ մեզ համար տեսանելի չէ:** Բացի սրանից, նա մատնանշում է նաև համեմատության այն եզրը, որը մեզ հնարավորություն է ընձեռում մի առարկան կամ երևույթը փոխարինե-

լու մեկ ուրիշով: Այսպես՝ Բերդումյանը, մեկնելով Մատթեոսի Ավետարանի ժԳ 44 համարը՝ «Երկնքի արքայությունը նման է ագարակի մեջ թաքցված գանձի», արձանագրում է. «Այլաբանորեն՝ «ագարակը» և Ավետարանն է, իսկ նրա միջի գանձը՝ Ինքը Քրիստոսը: Ով կամենում է այս գանձը ձեռք բերել, պետք է նախ սերտմանք գնի Ավետարանը, և այդ ժամանակ կիասկանա, որ Քրիստոսի արյունն է նրա միջի անպական գանձը, որով մարդկությունը գնվեց սատանայի ձեռքից. «Ոչ թե ապականացու արծաթեղենով և ոսկեղենով փրկվեցիր հայրերից տրված ձեր ունայն ըաթացքից, այլ Քրիստոսի՝ ամբիծ և անարատ գառի թամկագին արյամք» (Ա. Պետ. Ա. 18-19): Եվ կամ՝ «Մորթվեցիր և Քո արյամք գնեցիր մեզ Աստծո համար» (Հայտ. Ե 9): Մեկ այլ տեղ, մեկնաբանելով Ղուկասի Ավետարանի ժԵ 4-6 համարը, գրում է. «Այլաբանորեն՝ «քաջ հովիվը» մեր Տեր Յիսուս Քրիստոսն Ինքն է՝ ըստ այնմ. «Ես եմ քաջ հովիվը» (Հով. Ժ 11):

**Խորհրդական** - մեկնաբանական այս եղանակը Բերդումյանը կիրառում է զանազան համեմատություններ անցկացնելու համար: Այսպես՝ մեկնաբանելով Մատթեոսի Ավետարանի ժԳ 47 համարը՝ «Երկնքի արքայությունը նման է ուռկանի», նշում է. «Խորհրդապես՝ [ուռկանը] Քրիստոսի Ավետարանն է, որովհետև որսորդները առաջալներն ու վարդապետներն են: Ուռկանը Սուրբ Ավետարանն է, ծովը՝

այս աշխարհը, ձկները՝ մարդիկ՝ ըստ այնմ. «Արա Ես ուղարկում եմ բազում ձկնորսներ», - ասում է Տերը. դրանք առաջալներն են. դրանից հետո «բազում որսորդներ կուղարկեմ». սրանք վարդապետներն են. «և ճրած կորսան լեռների, բոլոր բլուրների և ժայռների ծերագերի վրա» (Երեմ. ԺԶ 16): Կամ անպտուղ թզենու առակը մեկնելիս Բերդումյանը հետևյալ միտքն է արտահայտում. «Խորհրդապես՝ «քզենին» իրեաներն են, ովքեր բարի գործերի պտուղ չունեն, այլ միայն Մովսիսական օրենքի և իրեական անունների տերև, որ իրենց իրեա են անվանում, բայց չեն, այլ սատանայի գործակիցներ են: Եվ Յիսուսը, [նրանց] բարի գործերի պտուղների քաղցն ունենալով, երբ [դրանք] նրանց վրա չգտավ, արգելեց շնորհի հեղումը, որով թզենու նման չորանում և կրակի համար են պատրաստվում»:

Բարոյական - վերլուծում է տվյալ տողի՝ մարդկային և հասարակական հարաբերությունների մեջ տեղ գտած երևոյթների հետ ունեցած կապը, որը երբեմն պարունակում է նաև այլաբանական տարրեր: Վերոգրյալ նույն առակի մեկնաբանության մեջ Բերդումյանը նշում է. «Բարոյականապես՝ անպտուղ և տերևազարդ թզենին այն քրիստոնյաներն են, ովքեր միայն հավատք ունեն և ոչ թե բարի գործ: Ինչպես որ տերևն է ծառի նշանը, այսպես էլ հավատքը՝ քրիստոնյայի. Քրիստոսը մեծ քաղցով դեպի մեր

հոգիներն է գալիս՝ առաքինի պտուղ գտնելու՝ թե՝ մեր պատանեկության, թե՝ երիտասարդության և թե՝ ծերության ժամանակ։ Յետևաբար հոգ տանենք, որ անպտուղ չլինենք, որպեսզի [Տերը] մեզ էլ թգենու նման չչորացնի։ Կամ մեկ այլ տեղ, մեկնելով Սերմնացանի առակի մի հատվածը, գրում է. «Խսկ բարոյականապես՝ ապառաժը սրտի երկմտությունն է, որով մարդն անհաստատ է դաշնում՝ ըստ այնմ. «Երկմիտ մարդմ իր բոլոր ճանապարհներում անհաստատ է» (Հակ. Ա. 8):

**Հոգևորապես - մեկնաբանում** է այս կամ այն հատվածի հոգևոր իմաստը։ Ամբողջ մեկնության մեջ այս մեկնաբանական մեթոդը Բերդումյանը կիրառում է մեկ անգամ։ Այսպես՝ մեկնաբանելով Մատթեոսի Ավետարանի Ժ 23 համարը՝ գրում է. «Յոգևորապես՝ երկնքի արքայությունն այստեղ երկնավոր Յայրն է, որով է կազմվում արքայությունը. Նա բագավորի նման Յոգու շնորհների քանքարները բաժանում է իր ծառաներին՝ ըստ յուրաքանչյուրի կարողության։ Եվ երբ կամենում է հաշիվները պարզել, ոնանց խոնարհեցնում է, ոնանց՝ պատժում, ոնանց էլ՝ փառավորում, մեծ արդարությամբ, որն այստեղ չենք կարող հասկանալ»։

## **ԱՐԾԱՐԾՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ընդհանրապես յուրաքանչյուր մեկնողական երկունիքի որոշակի նպատակը: Սովորաբար այդ նպատակն է՝

1. բացահայտել և ընթերցողին դյուրըմբռնելի դարձնել տվյալ գրքի խորին հատվածներն ու տալ համապատասխան տեղիի համակողմանի բացատրությունը և վերլուծումը Ս. Գրքի, Եկեղեցու հայրերի գրվածքների, գրավոր և բանավոր Ավանդությունների հիման վրա՝ դիմելով մեկնաբանման զանազան եղանակների.

2. քարոզչություն: Նման երկերն իրենց հիմքում ունենում են նաև դավանաբանական և վարդապետական ուղղվածություն: Գրված լինելով այս կամ այն ժամանակաշրջանում, երբ Եկեղեցին անտեղիտալի պայքար է մղել զանազան հերձվածների, աղանդների, կրօնական շարժումների դեմ, այս մեկնությունները բացահայտում և պարզաբանում են հրամանակարգային շատ սկզբունքներ:

Բերդումյանի «Աղքիւր բացեալ» աշխատությունն աչքի է ընկնում իր ուսուցողական, բարոյադաստիարակչական ուղղվածությամբ և բովանդակությամբ: Շեղինակը հաճախ նաև անդրադարձել է վարդապետական խնդիրների: Այս կամ այն թեմային անդրա-

դառնալը բխել է հենց առակի բովանդակությունից: Օրինակ՝ մեկնության Ի գլխում, երբ նա մեկնաբանում է Դուկասի Ավետարանի ժք 16-21 համարները, անդրադառնում է ազահության վճասներին և հորդորում մտածել ապագայի և մահվան մասին, կամ երբ մեկնաբանում է փարիսեցու և մաքսավորի առակը, խոսում է ընդունելի աղոթքի ձևի մասին: Զանազան հարցերի է անդրադառնում հեղինակն իր մեկնության մեջ. խոսում է հավատքի, սիրո, խոնարհության, աղոթքի, մեղքի, եկեղեցու, ճշմարիտ հոգևորականի կերպարի և այլ կարևոր բաների մասին:

Միով բանիվ՝ սրբազն հոր այս աշխատությունն իր ինքնատիպությամբ հարստացնում է Ավետարանի մասին մեր գիտելիքները, փորձում մեզ ավելի մոտեցնել աստվածային ճշմարտություններին:

Բերդումյանի «Աղբիւր բացեալ» աշխատությունն առաջին անգամ ընթերցողին է ներկայացվում աշխարհաբար թարգմանությամբ, որը կատարել ենք երկի 1857 թ. տպագրից: Դարկ եղած դեպքում այն ծանոթագրել ենք՝ ընթերցողին դյուրընքնելի և հասկանալի դարձնելու համար: Դույս ունենք, որ աշխարհաբար այս թարգմանությունը կօգնի հայ հավատացյալին ավելի մերձենալու Տիրոջը և բավարարելու իր հոգևոր քաղցն ու ծարավը:

*Տիգրան Սարկավագ Քաղումյան*  
**Մայր Ալռո Սուրբ Էջմիածնի միաբան**



## ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱՔԱՆԵ

**Կ**անխաբարբառ և Սուրբ Հոգուց ներշնչված Մատթեոս ավետարանիչը, մի քանի առակներ պատմելուց հետո, բերում է պատճառը՝ ասելով. «Այս ամենը Հիսուսն առակներով ասաց ժողովողին, որպեսզի կատարվի մարգարեի կողմից ասվածը. «Ի՞ն բերանն առակներով կբացեմ և աշխարհի սկզբից ծածկված բաները կբխեցնեմ» (Մատթ. ԺԳ 34-35, Սաղմ. ՀԵ 2):

Արդ, թեպետ մեր Տերն Ավետարանի վայելչությունը և օգտակարությունը բացահայտելու համար [այն] բազում բաների նմանեցրեց, այսինքն՝ թանկարժեք մարգարտի, ծածկված գանձի, ուռկանի, թթիսմորի և այն, բայց մենք Քրիստոսի առակները մասնավորապես մատաղ սերնդին ցանկալի դարձնելու համար ենք խոսում: Բերելով միայն չորս նմանություններ՝ բավարարվենք ներկայացվող խոսքով: Ասում է. «Աշխարհի սկզբից ծածկված բաները պիտի բխեցնեմ»: Ասացինք, որ [Քրիստոսի առակները] չորս բանի են նմանվում: Նախ՝ աղբյուրի, որ ջուր է բխեցնում, երկրորդ՝ արեգակի, որ լույս է տարածում, երրորդ՝ պարտեզի, որ խոտ ու ծառեր

է բուսեցնում, չորրորդ՝ հողի, որ գանձ է տալիս:

Նախ ասեմ, որ Քրիստոսի առակներն աղբյուրի են նման: Որովհետև ինչպես աղբյուրն է երկնքի ցողից և անձրեներից առաջանում, որոնք կուտակվելով և հավաքվելով լեռների և բլուրների շտեմարաններում՝ բխում են ձորերի մեջ, այդպես էլ Քրիստոսի առակները, երկնային խորհուրդներով լցված, այս աշխարհի ձորերի մեջ բխեցին, ուստի ասում է. «Իմ խոսքը թողի իբրև անձրևն ընդունվի, և իմ պատճամներն իշնեն ցողի նման» (ԲՕր. ԼԲ 2):

Երկրորդ՝ որովհետև ինչպես աղբյուրները բխում են երկրի սրտից, ուր թաքնված են, այդպես էլ [Քրիստոսի] առակները դուրս հորդեցին Բանն Աստծո սրտից, ուր աշխարհի սկզբից ծածկված էին ծածուկ խորհրդով և իրենց մեջ պարունակում են մշտնջենավոր հրամանն ու պատվիրանը, ուստի ասվում է, որ իմաստության աղբյուրն Աստծո Խոսքն է բարձունքներում, և Նրա մուտքը մշտնջենավոր պատվիրանն է:

Արդ, այս կենդանի աղբյուրը բարձունքներից թափվեց մեր այս պարտեզի մեջ, որպեսզի ջրի բողբոջը՝ մեր հոգու պտուղը հասունացնելու համար, ուստի երգ երգոցում ասվում է.

«Պարտեզների աղբյուր են և կենդանի շրի ջրհոր, որ հոսում է Լիբանանից» (Երգ Դ 15):

*Մեր միջի ջրհորը ներսից է [ջուր] բխում,  
բայց այս ջրհորը վերևից՝ Լիբանանից է հոսեց-  
նում: Եթե մեկի հոգեսոր պարտեզը Քրիստոսի  
առակավոր աղբյուրներից ցամաքած լինի, թող  
ջուր վերցնի իր պարտեզի ցնծության համար,  
ինչպես մարգարեն է պատվիրում՝ ասելով. «Ու-  
րախության ջուր առեք փրկության աղբյուրներից» (Ես.  
ԺԲ 3), այսինքն՝ մեր Փրկչից, ով ինքն էլ ասում  
էր. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի» (Հովհ.  
Է 37), քանի որ նա է հորդառատ աղբյուրը, «որ  
դուրս եր գալիս երկրից և ոռոգում եր ամբողջ երկիրը»  
(տես ԾԱՇ. Բ 10), հատկապես դրախտը, այսինքն՝  
Քրիստոսի եկեղեցին<sup>1</sup>:*

<sup>1</sup> Պետրոս սրբազնը Յովն կերպ է մեկնաբանում վերոգրյալ սուրբգրավին համարն իր «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության մեջ ևս՝ գրելով. «Այլաբանօրէ՛ գետս այս է Քրիստոս ի դրախտի Եկեղեցոց և բաժմանի ի չորս առաջս, ասինք՛ ի չորս աւետարանիչս: Գետս այս եղանէր ի յանդնդուն ի դրախտն, ալսպէս և Քրիստոս յանդնդապին ծոցոյ Հօր հոսեցաւ յԵկեղեցի». տես ՄՄ ձեռ. № 2718, թ. 14ա: Նոյն աստվածաբանական մտածմանն ենք հանդիպում ս. Ներսէս Շնորհալու եղբայր Գրիգորիս կաթողիկոսի թղթերից մեկում, որ նա նշում է, որ Եկեղեցու սուրբ Վարդապետները դրախտի չորս գետերը համեմատում են չորս ավետարանիչների հետ. տես Թուղթ ընդհանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեսան Ներսիսի Շնորհալոյ, Ս. Էջմիածին, 1865, էջ 369: Հետաքրքրական է, որ Զաքարիա Զագեցի կաթողիկոսը Քրիստոսի մկրտությանը նվիրված իր ճառում չորս ավետարանիչների հետ զուգահեռն է տանում, երբ խոսում է Հորդանան

*Մի՛ զարմացիր, որ այս աղբյուրը փոքր լինելով կարող է Քրիստոսի ամբողջ Եկեղեցին ոռոգել, քանզի թեպետ մարմնավոր աչքերին [ջրի] քանակով փոքր է երեսում, բայց պարունակող նրբին իմաստներով այնքան մեծ է տարողությամբ, որ կգերազանցի անչափ մեծ գետին:* Ուստի նմանվում է Մուրթքեի փոքր աղբյուրին, որ մեծ գետ դարձավ (տես Եսφ. Ժ 6), որովհետեւ որքան խոկում ես, այնքան մեծանում է խորհուրդը, թեպետ մենք համառոտության պատճառով ծաղկաքաղ անելով անցանք: Ուստի իր մասին իմաստունն ասում է. «Ես իբրև շրի ջրմուղ եմ մեծ գետի» (Սիր. ԻԴ 41), և **թե՝** «Նրա խոկումը ծովից առավել ծավալվեց, իսկ զրա խորհուրդը՝ մեծ անդունդից» (Սիր. ԻԴ 39):

*Արդարեւ, Քրիստոսի առակներից յուրաքանչյուրն անդնդախոր ծովի նման է, որի հատակը ոչ ոք չի կարող հասնել բավարար մեկնությամբ: Թեպետ մենք այն աղբյուրը «ծով» կոչեցինք, բայց դառն ծովի նման չէ, այլ անու-*

գետի մասին. «Այսաւը բոլիսեաց մեզ աղբիւր լՇդեմայ վերառեալ նորոգէ զընդհանուր հեթանոս, եւ ուրախացեալ զուարճացաւ անապատս այս մեծ և ծարաի՛ Եկեղեցի հեթանոսաց, եւ Յորդանան տրամադրեալ բաժանեցաւ ի չորս առաջն գետոց աւետաբեր ծաւալմամբ, որ են Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս, ծանուցանել զՔրիստոսի աստուածութիւնն ընդհանուր տիեզերուց» (տես Զաքարիա Կաթողիկոս Զագեցի (855-877). Ծառք. աշխատասիրութեամբ Հ. Պողոս Վրդ. ի Աննեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 58, ս. 500-508):

շահամ աղբյուրի նման՝ քաղցր:

Ահա այս աղբյուրները կնքված աղբյուրի նման խրթնությամբ լի էին, բայց մենք աստվածաբանների օժանդակությամբ և Սուրբ Հոգու լուսավորությամբ աշխատեցինք, ըստ մեր կարողության բացեցինք՝ մանուկների համար դյուրըմպելի դարձնելու նպատակով, որպեսզի ոչ ոք Քրիստոսի քաղցրաբուխ և ուրախարար աղբյուրներից ծարավ չմնա:

Այդ պատճառով էլ այս աշխատությունը կոչեցինք ԲԱՅՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ, որպեսզի եթե մեկն ախորժաբար ըմպի, պտղաբեր դարձնի իր պարտեզը՝ իր Փեսա Հիսուսի վայելքի համար համարձակորեն հրավիրելով [Նրան]. «Թողի իմ եղբորորդին իշնի իր պարտեզը և ուտի իր ծառերի պտուղները» (Երգ Ե 1):

Երկրորդ՝ ասացինք, որ Քրիստոսի առակներն արեգակի ճառագայթների են նմանվում: Որովհետև ինչպես արեգակի ճառագայթները տարածվելով լույս են տալիս բոլոր աստղերին, այդպես էլ Քրիստոսի առակները՝ որպես արևի ճառագայթներ, իմանալի Արեգակից՝ Քրիստոսից հորդելով, փարատելով աղջամդջային խավարը և հայտնելով ճշմարտությունը, նախ լույս են տալիս բոլոր աստղերին, այսինքն՝ աստվածային Սուրբ Գրքի այլաբանական աստղերին,

որոնք կապված են Քրիստոսի հրաշալի տնօրինության հետ։ Աչա այս պատճառով հրեաները չեն հասկանում Աստվածային Գրքի իմաստները, որովհետև չեն հավատում Քրիստոսի տնօրինությանը, և այսպես որքան ընթերցում են Սուրբ Գիրքը, Մովսեսի երեսի նույն վարագույրը մնում է (տե՛ս Բ Կորած. Գ. 15), որովհետև [այն] Քրիստոսով է վերանում։

Նաև մեր խավարած միտքն է լուսավորում, որով հասկանում ենք Քրիստոսի մասին նսեմաբան<sup>2</sup> մարդարեությունները և Նրա տնօրինության՝ աշխարհի սկզբից ծածկված խորհուրդները (տե՛ս Կող. Ա. 26)։ Որովհետև «ազգերից և հավիտյաններից ծածկված խորհուրդը» սրանցով (այսինքն՝ առակներով) միջոցով հայտնվեց, ուստի ասում է. «Իմ բերանն առակներով կրացեմ և աշխարհի սկզբից ծածկված բաները կհայտնեմ»։ Տե՛ս, թե անառակ որդու, սամարացու և կորած ոչխարի մասին առակներն ինչպե՞ս են բացահայտում մեզ համար մեր փրկության զանազան խորհուրդները։ Մեր միտքը հավատի ենթակա առարկաների նկատմամբ զարթնեցնելու համար ավելի գործնական միջոց չկա, ինչպիսին առակներն են, որոնց միջոցով [Տերը] հայտնապես պատմում է արքայության, դժոխքի, հա-

<sup>2</sup> Նսեմաբան – ծածուկ, թաքնված իմաստ ունեցող, մթին, անհասկանալի կերպով արտահայտված։

ըության և այլ բաների մասին, ինչպես կարելի է տեսնել նաև արտի որոմների առակի մեջ։ Այս առակավոր ուսուցման մասին [մարդարեն] ասում է. «Այն օրն Աստված Իր խորհուրդներով պիտի ճառագի երկորի վրա՝ փառավորելու համար Հակոբի մնացորդին» (Ես. Դ.2):

Ում մտքի ճրագը նվազել է, և նրա լույսը՝ պակասել, պետք է այս լույսի ծագմանը ձգտի, որովհետև սրանցով՝ նյութական պատկերների միջոցով լուսավորվելով, Քրիստոսի տնօրինությունների խորհրդական իմաստներին կհասնի, քանզի հենց այն պատճառով Քրիստոսն առակներով խոսեց, որ գոնե զգալի բաների միջոցով մեր միտքն իմանալի [իրողություններին] հասու դարձնի։

Որովհետև, ըստ Արիստոտելի, ոչինչ ենթակա չէ իմացման, եթե նախ չմատուցվի զգայարաններին<sup>3</sup>։ Ուստի ինչպես ասում է աստվածաբանների գլուխ ս. Դիոնիսիոսը. «Մեր միտքն անմիջապես չի կարող հասնել իմանալի տեսությանը, եթե իր ընտանի և բնակից նմանությամբ վեր չելնի»<sup>4</sup>։

<sup>3</sup> Դժվարանում ենք մատնանշել հեղինակի օգտագործած աղբյուրը։

<sup>4</sup> Ըստ Ավանդության ս. Դիոնիսիոս Արեոպագացին (հայ մատենագրության մեջ առավելապես հայտնի է Արիսպագացի տարբերակով) Պողոս առաքյալի աշակերտն (Գործ ԺԷ 34) ու Աթենքի նորահաստատ Եկեղեցու առաջին եպիսկոպոսն է։ Նրանից մեզ հասել են մի քանի աշխատություններ և 10 թղթեր՝

**Ուստի այս առակներով աշխարհի Փրկիչը ցանկացավ օգնել մեր տկարությանը, բայց քանի որ [դրանք] ուամիկ մարդու ուղեղի մեջ դժվարությամբ են մտնում, ուստի պարզաբանելով կամեցանք [մտքով] մանուկներին ասես նրանց ձեռքից բռնելով հասցնել Տիրոջ խորհուրդների լույսին:**

---

Բասեագրված տարբեր մարդկանց: Սակայն այս գործերի ուսումնասիրությունները գիտնականներին բերել են այն հետևողան, որ Եկեղեցական այս հոր անվան տակ թարգված հեղինակն ապահ անուր է լինի Ե դարի վերջում կամ Զ դարի առաջին կետում: Բազմաթիվ հեղինակների են վերագրվել այս երկերը: Ա. Դիոնիսիոսի երկերը հայերեն են թարգմանվել 716-717 թթ. Սուեփանոս Սյունեցու կողմից: Մեծ է եղել հրա երկերի ազդեցությունը միջնադարյան քրիստոնեական աստվածաբանության վրա: Իրբև ձեռնարկներ՝ դրանք օգտագործվել են միջնադարի մեր խոչըն համպարաններում: Իզոր չէ, որ այս գործերի մեկնությունները կամ լուծունացներ են գործ Համամ Արևելցին (Թ դ.), Դավիթ Քոբայրեցին, Հակոբ Վարդապետը (ԺԲ դ.), Վահրամ Շաբունին (ԺԳ դ.), Եսայի Նշեցին (ԺԳ-ԺԴ դդ.), և Գիյոր Տաքեացին (1346-1409), և Հովհան Որոտնեցու աշակերտ Գևորգ Երգնևացին (ԺԴ-ԺԵ դդ.), Աբրահամ Կ. Պոլսեցին († 1733): Դիոնիսիոսի գործերը երկրորդ անգամ լատիներենոց հայերեն է թարգմանել Սև. Կեմացին 1662 թ.: Նրա երկերից բազմաթիվ հատվածներ են վկասաբերված հայ դավանաբանական գրեթե բոլոր աշխատություններում: Այս հեղինակը Պետրոս Բերդումյանի սիրած հայութից է, որից բազմաթիվ վկասություններ է մեշքերել նա գրեթե իր բոլոր աշխատություններում: Եղինակի մասին տես Հակոբ Քիոսեցին, Եկեղեցու հայրեր, Վարդապետներ, (IV-VII դդ.), Երևան, 2007, էջ 222-228: Խմաստային վերոգրալ վկասակրումը քայլված է Բնակնակի «Յաղագ Երկնային քահանակապետութեան» գործից, տես՝ The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by Robert W. Thomson, Lovanii, 1987 (=Dionysius), Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 448, Scriptores Armeniaci, Tomus 17, p. 5:

Երրորդ՝ ասեմ, որ Քրիստոսի առակները պարտեզի են նման: Որովհետև ինչպես պարտեզում են զանազան ծաղիկներ և ծառեր աճում, այդպես էլ մեր Տերն այս իմանալի պարտեզները պատրաստեց, որոնք աշխարհի սկզբից ծածկված զանազան խորհուրդներ են պարունակում: Ով ցանկանում է այս պարտեզը մտնել, թող հոժարությամբ դիմի: Որովհետև թեպետ մի ժամանակ նսեմաբանության դռներով փակված էր, բայց հիմա բացվեց մեկնության բանալիով:

Սակայն մտնելիս [մարդը] պիտի զգուշանա դիմելու գիտության ծառին և հետաքրքրասեր մարդու նման չանտեսի աշխատասիրած վարդապետների ջանքը և դրանով Աղամի նման դատարկ չելնի հոգեսոր եղեմանման պարտեզներից. որովհետև ոչ թե մտացածին խոսքերով համարձակվեցինք մեկնել սա, այլ վսեմախոհ վարդապետների տեսակետներին հետևելով, որպեսզի հոգու ոռւնգերի զմայլման համար, իր օգուտն իմանալով, մեղվածան աշխատանքով քաղի առաքինությունների ծաղիկները, շտապի կենաց ծառի մոտ՝ քաղելու այստեղից Քրիստոսի վարդապետության և խրատի քաղցր պտուղները, որպեսզի գործով կատարելով ուտի, ապրի հավիտյան:

*Մտի՛ր այս պարտեզը, եթե լավ զբոսասեր ես, որովհետև կտեսնես այստեղ, թե ինչպե՛ս է ծաղկել որթատունկ Հիսուսը, ով անմահության հոտն է բուրում, և թե ինչպե՛ս է ծաղկել նոնենի Քրիստոսն այստեղ, որ բարի պտուղն է տալիս, որովհետև սրա մեջ են «բոլոր մրգատու ծառերը» (Երգ Դ 13), այսինքն՝ Նոր Կոտակարանը Հնի Հետ, որոնք տվեց մեզ մեր Մայր սուրբ Եկեղեցին: Եթե, ուրեմն, մտնես սրա մեջ, վայրի խողերի նման կորացած գլխով, գետնանախանձ մոլությամբ, չապականես այն, այլ հավատարիմ պարտիզպանի նման հավաքի՛ր սրա առաքինությունների պտուղները և պահի՛ր քո եղբորորդի Հիսուսի համար. «Որ բերես հազարը Սողոմոնին» (Երգ Ը 11-12), որ վերադարձնում է քեզ երկու հարյուրը՝ իբրև կրկնապատիկ վարձ:*

*Ասեմ նաև չորրորդը: Քրիստոսի առակները գանձով լի հողի են նման: Որովհետև ինչպես հանքանյութով լի հողն է իրենից արծաթ, ոսկի, թանկարժեք քարեր արտահանում, նմանապես և առակներն են արծաթ բխեցնում՝ բարոյական մեկնությամբ, ոսկի՝ այլաբանականով, թանկարժեք քարեր էլ՝ խորհրդապաշտականով: Ուստի առակների միջոցով [Տերը] ասում է. «Աշխարհի սկզբից ծածկված բաները կհայտնեմ» (Սաղմ. ՀՀ 2):*

Ուրեմն՝ եթե լավ մետաղահան ես, հեղաբար կարդալով պարտավոր ես արտահանել այստեղից հավատք՝ այլաբանությամբ, սեր՝ բարոյականությամբ, և հույս՝ վերածականությամբ։ Բայց ինչպես որ մեծ ջանք է թափում նա, ով ցանկանում է երկրի ընդերքից գանձ հանել, այդպես էլ մենք առակների՝ ասես հողի տակ ծածկված աստվածային խորհուրդների գանձերը ծանր աշխատանքով բացատրեցինք աստվածաբանների օգնությամբ, որովհետև «Տիրոջ խոսքերը սուրբ խոսքեր են, ինչպես ընտիր և փորձված արծաթը՝ լոթնապատիկ մաքրված և զտված հողից» (Սաղմ. ԺԱ, 7):

Ուստի այս առակների խորհուրդը, որոնք մի ժամանակ ծածկված գանձ էին, այժմ հայտնված գանձ դարձան, որովհետև սրանց մեջ է Աստծո Որդին՝ Հիսուսը, ում մեջ են ծածկված իմաստության և գիտության բոլոր գանձերը։ Զէ՞ որ «ուր ձեր Հիսուս Գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլի- նեն» (Ղոկ. ԺԲ, 34). իսկ որտե՞ղ է, եթե ոչ այստեղ։

Ուրեմն միայն տեսնելով բավարարվելով, ինչպես դեմքը՝ հայելու մեջ, մի՛ անտեսեք, որովհետև դա մանկաբարը անմիտներին է վայել, որոնք գոհարը սովորական քար համարելով՝ դեն են գցում՝ ըստ այնմ. «Փորձության քարի նման է նրանց վրա, և նա չի դանդաղում այն դեն շարտելու» (Սիր. Զ, 22):

Այսպիսի բաներից զգուշանալով՝ Հիսուսն իր վարդապետությունն առակներով ավանդեց, «որպեսզի իր մարգարիտը խոզերի առաջ չգցի» (Մատթ. 5:6): **Ուստի ասում էր.** «Իսկ արտաքինների համար ամեն ինչ առակներով է, որովհետև նայելով հանդերձ չեն տեսնում» (Մարկ. 4:11-12), այսինքն՝ միայն նյութական բաներն են տեսնում, իսկ իմանալի բաները նրանց հոգը չեն, քանի որ ներքին աչքերու ականջներ չունեն: **Ուստի նախապես [մեր] պատված աստվածաբանն ասում է.** «Խորհրդական կերպով ասված բաները հույժ վայելու են անճառելի և սրբազն օրինակների միջոցով թաքցնել, և շատերի համար անմատչելի գերազարդ իմաստության ճշմարտությունը դարձնել սրբազն և ծածուկ, որովհետև ամեն ոք սուրբ չէ և ամեն ոք չունի գիտություն», ինչպես ասում է տիեզերական վարդապետը<sup>5</sup>:

**Ուստի դուք պետք է այս հայտնված գանձը տեսնելիս աշխատեք ստանալ այն վաստակելով, որպեսզի մեզ էլ մեղադրանքների տակ չգցեք իբրև Քրիստոսի մարգարիտը խոզերի առաջ գցողի:**

**Տե՛ս, թե լողորդներն ինչքա՞ն են նեղություն կրում մարգարիտ գտնելու համար, իսկ ով այս ընդարձակ ծովը մտնի, հեշտությամբ կդանի**

<sup>5</sup> Այս վկայությունը սրբազն հայրը գրեթե բառացի քաղել է և Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս Երկնալին քահանալապետութեան» երկից. տե՛ս Dionysius, p. 5:

**գեղեցիկ մարգարիտ Քրիստոսին:**

Եվ արդ, բավարարվենք այս առակների իմաստը չորս օրինակներով մասամբ ցույց տալով: Մի՛ ծուլացիր, ո՛վ խանդակաթղ հոգեոր խոսքերի, Քրիստոսի առակներին հաճախ դիմել: Որովհետև եթե չնորհի ծարավ ունես, ահա՝ բացված աղբյուր, եթե գիտությամբ խավարած ես, ահա՝ իմաստության ծագած ճառագայթ, եթե սովամահ ես, ահա՝ պտղով լցված պարտեզ, իսկ եթե հոգով աղքատ ես, ահա՝ իմաստության և աստվածպաշտության բացված գանձ: Տե՛ս ուրեմն, թե ինչքա՞ն հոժարությամբ և ինչքա՞ն սիրով ես պարտավոր ընթերցել:

Այս ամենից բացի, պետք է գիտենալ:

Նախ՝ քանի որ Քրիստոսի առակները խորունկ են, շատ տեղերում մեր մտքի ոտքն իսկության հատակներին չհասավ, միայն կարծիքներ հայտնելով լողացինք անցանք, ինչպես որ աստվածաբաններից շատերն են անում: Այդ պատճառով են բազմապատկվում [Սուրբ] Գրքի մեկնությունները. որովհետև մարգարեությունները երբեք ըստ մարդկանց կամքի՝ չեն տրվել, այլ Սուրբ Հոգուց ներշնչվելով՝ Աստծուց են խոսել:

Ուստի դժվար է [առակների] իսկությանը վերահասու լինել: Որովհետև եթե Սողոմոնի

առակները խրժնության պատճառով «անքննելի» կոչվեցին, ապա ինչքա՞ն առավել այս ճշմարիտ Սողոմոնի առակները։ Ուստի եթե Հոր Իմաստության առակների մեջ որոշ տեղեր մեկնությամբ հանդերձ չկարողանաս հասկանալ և տարակուսանք մնա, մեզ նույնպես անբավարար համարելով՝ երկյուղածությամբ շրջանցի՛ր։

Երկրորդ՝ պետք է իմանալ, որ Քրիստոսի առակների շուրջ որոշ տեղերում հերձվածողները վեճեր են հարուցում, բայց մենք նրանց կարծիքները չըերեցինք երեք պատճառով։ Նախ՝ որպեսզի [հավատքով] տկարների միտքը չապականենք, երկրորդ՝ որպեսզի մեր շուրջերը չաղտոտենք. «Ով դիաչի ձյութին, կկեղտոտվի» (Միր. ԺԳ 1), ուստի «թող չհիշատակվեն հրանց անունները՝ ուղափառներիս շուրջերով» (Մաղմ. ԺԵ 4)։ Երրորդ՝ համառոտության համար անտեսեցինք, որովհետև մեր նպատակն առակներն ընդարձակ մեկնելը չէր, այլ միայն իմաստները վեր հանելը, իսկ ճշմարտության բացահայտվելու ժամանակ սուտն ինքնին վերանում է։

Եվ երրորդ<sup>6</sup>՝ այս առակների մեկնության պատճառի մասին պետք է գիտենալ ինքնակամ չստանձնեցինք սա, նաև բոլորովին միտք

<sup>6</sup> Գրաբար բնագրում «չորրորդ»։

չունեինք այս գործը ձեռնարկելու՝ բավարար համարելով այն Վարդապետների մեկնությունները, որոնք մեզանից առաջ են եղել: Բայց մեր Մայր Ամենայն Հայոց մեծ Աթոռ Սուրբ Էջմիածնի օշականցի գրագիր Տ. Երեմիա աբեղան, ով սիրահարվել էր Քրիստոսի առակների գեղեցկությանը, թախանձագին խնդրեց մեզ ի մի հավաքել ավետարանական բոլոր առակները համառոտ բացատրությամբ իր և փափագողների ճանաչողության համար:

Մենք էլ, թեպետ այս գործի կարողությունը չունեինք, բայց որպեսզի քանքարը թաքցրած ծառայի նման չդատապարտվեինք (տե՛ս Մատթ. հԵ 30), ապավինելով չնորհատու մարդասեր Սուրբ Հոգի Աստծուն և աստվածաբանների մեկնությանը, հավաքեցինք բոլոր առակները և համառոտ մեկնությամբ միասին դրեցինք այս գրքի մեջ, ուր եթե պիտանի խոսքեր գտնվեն, Սուրբ Հոգու պարզեն են, իսկ եթե անպետք, մեր տկարությանն այն վերագրեցեք: Ո՞ղջ եղեք:

Զեր Ազնվության պատրաստակամ ծառա՝

Պետրոս Նախիշևանցի  
Աղամալյան



**Յորդորակ  
յառակաւոր բանսն Քրիստոսի**

**Պ**ա՛րտ է մարդոյ գիտել զիմաստ և զհանճար,  
որով յանճար պահու ինքեան գտցէ զճար:  
**Ե**ւ ընդունել զդարձուած բանից իմաստնա-  
բար,  
առ կարող գոլ զգործ ձեռին կշռել արդար:  
**Տ**եղեկանալ խորին բանից և առակաց,  
ի միտ առնուլ զհանճար ծերոց խոհակա-  
նաց:  
**Ր**ամել ի միտս զիմաստ սրբոց կտակարանաց,  
խոկալ այնու զտիւ զգիշեր զօրէնս կենաց:  
**Ո**ւսի՛ր ապա, մանուկ, զառակս Բանին փառաց,  
զոր ի վարժել յիմաստ զհամբակդ արտարդ-  
խեաց:  
**Ս**իրով մատո զունկդ քննել զզարդ առակաց,  
զի մակացու լիցիս բանին տնօրէնութեանց:  
**Ի**մա՛ զսոսին մարդեղութեան դրունք քաղաքին,  
որովք միայն լինի քեզ մուտի խորս նորին:  
  
**Վ**ասն այսորիկ ընթեր եղաք զբանալին,  
զի ի դիմելդ չկացցեն փակ ընդէմ քոյին:  
**Ա**յլ և սոքա են զուտ գոհարք անապական,  
որով պճնի որպէս թագիւ միտ բանական:

**Ր**ամեա՛ ուրեմն ձեռամբ մտաց իքեզ համայն,  
կազմել վարուք պսակ փայլեալ անզուդա-  
կան:  
**Գ**արձեալ սոքա են զարդք երկնից ըստ աստե-  
ղաց,  
որք զարդարեն զԱւետարան Բանին կենաց:  
**Ա**րդ թէ բացցես զսիրտդ նսեմ ներկեալ մեղաց,  
ճառագայթեն զլոյս իմաստից և զշնորհաց:  
**Պ**ատուարն պինդ՝ Աւետարան զոր Տէր կանգ-  
նեաց,  
է ամրացեալ աշտարակօք այս առակաց:  
**Ե**թէ ի մին անկցիս ի յայսց թալպիով թաց,  
աներկեան ես ի չարին մանգղիոնաց:  
**Տ**ո՛ւր փառս Հօր, որ գթութեամբ զայս յաջո-  
ղեաց,  
իսկ և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն՝ Իւր փառակ-  
ցաց:  
**Ի** համարի սուրբ զինուորաց հրեշտակաց,  
հանդերձդասուք վերին զօրաց աւետողաց:



## ԲԱՑՎԱԾ ԱԴՐՅՈՒԹ

«Բայց այս գործությունը պահանջված է առաջին աշխարհամարտի ժամանակաշրջանում՝ առաջարկելու առաջնահարձիք ազգությունների համար»:

(Սահմ. ՇԺԸ 130)



## ԳԼՈՒԽ Ա.

### ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի Փրկիչ մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեղքածորան բերանով հեզաբար հանդիմանում է՝ ասելով. «Ինչո՞ւ եք Ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում, իսկ ինչ ասում եմ, չեք անում» (Ղուկ. Զ 46):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Մեծ նախատինք է մեկին որպես Տեր ընդունել, բայց ինչ որ նա ասում է, չկատարել, ուստի Մաղաքիայի միջոցով գանգատվում է Տերը՝ ասելով. «Եթե Տեր եմ, ո՞ւր է Իմ պատիվը» ևն (Մատ. Ա 6). Տիրոջ պատիվը Նրանից երկնչելու և Նրա պատվիրանը կատարելու մեջ է, բայց, ըստ Պողոսի, կեղծավորները խոսքով հավատում են, սակայն գործերով՝ ուրանում (տե՛ս Տիր. Ա 16). այդպիսիների հավատը մեռած է և ոչ թե կենդանի, ինչպես աստվածային Հակոբոսն է ասում. «Ինչպես մարմինն է առանց հոգու մեռած, ալնալու էլ հավատքը՝ առանց գործերի» (Հակ. Բ 26):

Քանի որ ինչպես նյութն առանց կերպարանքի չի կարող լինել, այնպես էլ հավատքը՝ առանց գործերի: Որովհետև հավատքն իր հետ նաև իր գործն ունի (մանավանդ սիրո), ինչպես հոգին և կերպարանքը. ինչպես որ մեռած մարդը մարդ չէ, այնպես էլ՝ մեռած հավատքը, այդ պատճառով դեերի հավատքին է նման, որն իրական հավատք չէ՝ զրկված լինելով սիրուց: Անգործ հավատքը նման է աներեւույթ և անպատրաստ երկրի, իսկ գործունը՝ բոլոր զարդերով լուսավորվածին ու պատրաստվածին:

Գործուն հավատքն առաքյալի կողմից սահմանվում է որպես հուսացված բաների հաստատումը և ապացույցը, այսինքն՝ ցույց տվողն այն բաների, որոնք չեն երեսում (տե՛ս Երր. ԺԱ. 1). ուստի նման է ընտիր և պայծառ դիտակի, քանզի ինչպես որ վերջինս անտեսանելի և հեռավոր բաներն է ցույց տալիս, այսպես էլ հավատքը, ըստ Նարեկացու, հոգու աչքերից ծածկված աստվածային բաներն է հայտնում և ներկայացնում<sup>1</sup>: Սա է վերին իմաստությունը, որով երկնային բաներն ենք տեսնում, ինչի մասին Սուրբ Հոգու քնարն ասում է. «Դու, Տե՛ր, Քո իմաստությամբ հայտնեցիր ինձ անհայտ և ծածկված

<sup>1</sup> Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան (=ԳՆ), աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985, Բան Ժ, տ. 67-68, էջ 283:

բաները» (Սաղմ. Ծ7), այսինքն՝ Սուրբ Հոգով և հավատքով, ուստի Տերն այս նյութի մասին երկու ընտիր առակներ է ներկայացնում:

Նախ՝ այն նմանեցնում է վառած ճրագի՝ ըստ այսմ. «Մարմնի ճրագը աչքն է» (Մատթ. Զ22), իսկ հոգու ճրագը՝ հավատքը: «Եթե քո աչքը պարզ է». ճրագի պարզությունը ձեթով լի լինելն է, որ հատկապես նշանակում է սերը, ողորմությունը, իմաստությունը և մյուս առաքինությունները. «ապա ամբողջ մարմինդ լուսավոր կլինի», նույնպես և հոգին. այսպիսին էր իմաստուն կույսերի՝ առատ ձեթով լի լապտերը: «Իսկ եթե քո աչքը չար է», այսինքն՝ խավար. խորհրդի համաձայն՝ մեռած հավատքն է նշանակում «ապա ամբողջ մարմինդ խավար կլինի», այսինքն՝ խավարային:

Խորհրդապես նշանակում է ամբողջ հոգին և մեղավորների հավատքը. այսպիսին էր հիմար կույսերի լապտերը (տե՛ս Մատթ. ԻԵ3). որովհետև ինչպես որ ճրագն առանց ձեթի խավար է, այնպես էլ հավատքը՝ առանց գործերի, հետևաբար ըստ ավետարանական խրատի՝ պետք է զգույշ լինենք. գուցե մեր մեջ եղած հավատքի լույսը խավար լինի (Ղոկ. ԺԱ35), այսինքն՝ սիրուց դադարած ու անկերպ:

Այլաբանորեն «Ճրագը» խորհրդանշում է եկեղեցու առաջնորդին. եթե նա իմաստության

և սիրո ձեթով առատ է, ապա նախ ինքը և ապա ամբողջ եկեղեցին են լուսավորվում և պայծառանում, իսկ եթե նրա իմաստության և սիրո ձեթը պակասել է, և դրանով նա չար է դարձել, ապա նախ ինքը և ապա ամբողջ եկեղեցին խափարի մեջ կլինեն. այսպիսին են անգետ հովիվները:

Երկրորդ՝ Տերը գործնական հավատքը նմանեցնում է վեմի, որը հաստատուն է, իսկ առանց գործերինը՝ ավազի, որը դյուրասասան է՝ այսպես ասելով. «Ամեն ոք, ով լսում է Իմ խոսքերը» (Մատթ. ੫: 24), այսինքն՝ հավատում է Իմ խոսքերին, քանզի հավատքը լսելուց է՝ ըստ առաքյալի, իսկ լսելը՝ Քրիստոսի խոսքից (տե՛ս Հոռմ. Ժ 17), «և կատարում է», որով կերպարանք է ստանում հավատքը, «կնմանվի այն իմաստուն մարդուն, ով իր տունը վեմի վրա շինեց». իմաստունին հատուկ է տունը կառուցելիս վեմն ու հիմքը հաստատուն դնել: Ով հավատում է և կատարում, իմաստունի նման է, որովհետեւ իր տան հիմքը վեմի վրա է դնում: Վեմն ինքը Քրիստոսն է, ով իբրև իմաստուն՝ հիմքը դրեց. «Որովհետուն ոչ ոք չի կարող ուրիշ հիմք դնել, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է» (Ա.Կորնթ. Գ. 10:11). Եթե մեկն այս հիմքի վրա շինի, ապա տունը չի շարժվի: Ավետարանական խոսքերը գեղեցիկ հոգեոր

քարեր են, որոնք դրված լինելով հիմնական քարի՝ Քրիստոսի վրա՝ անշարժ են մնում. «Եվ դուք իբրև կենդանի քարեր կառուցվում եք իբրև հոգևոր տաճար» (Ա.Պետ.Բ.5):

**Ով հավատում է և կատարում, նմանվում է Աստծուն, ով իր տան հիմքը հաստատուն էր դնում. «Այն ժամանակ, երբ Նա հաստատուն կերպով երկրի հիմքերն եր դնում» (Առակ.Ը.29), նրա հետ էր անստեղծ իմաստությունը:**

«Առաջնաները թափվեցին»: *Օդային դեերին է ցույց տալիս, ինչպես որ երգ երգոցում է ասվում այս անձրեխ մասին.* «Առաջնաներն անցանգնացին» (Երգ.Բ.11). ցույց է տալիս, որ փորձության սկիզբը դեկից է լինում, բայց ո՛չ առանց Աստծո նախախնամության. այդ պատճառով էլ վերկից տեղացող անձրեխ է նմանեցվում:

Մասնավորապես նշանակում է դեկի՝ դեպի մարմնական գեղ մեղքերը դրդելը, որոնք նա անձրեխ նման մարդու սրտի մեջ է կաթեցնում:

«Գետերը հորդեցին» ևն. գետերի հորդացումն անձրեների պատճառով է. նշանակում է, որ դեկի գալու ժամանակ մեծամեծ փորձություններ են գալիս: «Գետը» բարոյականապես նշանակում է մեղքի ախտի հեղեղը, որը սրտի մեջ առաջանում է դեկի ներգործությունից ու անձրեխց:

**Այլաբանորեն նշանակում է բռնակալների հալածանքները՝ ըստ այսմ. «Ահա ես դրանց վրա հեղում եմ գետի հորդու հզոր ջուրը» (Ես. Հ. 7), այսինքն՝ կռապաշտների արքային, որին [Աստված] իսրայելի վրա շարժեց. սրանք դեմ ներգործության անձրևներով են առատանում:**

«Քամիները փչեցին»: «Քամիներն» աշխարհի հարստությունների ունայն ցանկություններն են, որոնք ինչպես քամի՝ տերեկի նման միշտ շարժում են մարդկանց սիրտը: Բայց առաքինի մարդը չի սասանվում նրանցից, որովհետև իր հոգեոր տան հիմքն անշարժ վեմի վրա է հաստատել, սակայն ըստ ստոյիկների՝ իրեն պատրաստում է և կամենում, որ նաև [անձրև] տեղա:

«Իսկ ով լսում է և չի կատարում, կնմանվի հիմար մարդուն»:

Արդ, ով հավատում է, բայց չի կատարում այն, ինչին հավատում է, իրապես հիմար է. որովհետև հավատում է անշարժ վեմին, սակայն [իր տունը] շինում է ավագի վրա. հավատում է երկնավորին, բայց երկրավորն է գործում: Այսպիսինի հավատքն անձև է և դեերի հավատքի նման: Ի՞նչ օգուտ է մարած ճրագ և խավար աչքեր ունենալը: Եթե այսպիսիների վրա մեղքի ախտի անձրեւ տեղա, ապա տունը,

կավակերտ լինելով, կփլվի. եթե բռնակալների հալածանքների գետերը հարձակվեն, ավազահմն լինելով՝ կկործանվի, եթե հարստության ցանկության ուժգին մրրիկները դան, ապա նրանցից ոտնակոխ կլինի. եթե այս աշխարհի պատրանքը փչի, տեղից կշարժի, և այլևս նրա տեղը չի երևա: Այսպիսիներին է Տերը հանդիմանում՝ ասելով. «Ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում, իսկ ինչ ասում եմ, չեք անում»: Ինչո՞ւ եք հավատում, բայց չեք կատարում այն, ինչին հավատացիք, այսինքն՝ ճշմարտության ճանապարհը ճանաչում եք, բայց սուրբ պատվիրանից հեռանում և սրանով [Տիրոջ] կամքն իմացող ծառայի նման շատ ծեծի ձեզ արժանացնում, քանզի հավատացյալ մեղավորի պատիմն ավելի խիստ է լինելու, քան անհավատինը:

Բայց դու, որ սա ընթերցում ես, հասկացի՛ր, և ինչ որ սովորում ես, գործով կատարի՛ր, որպեսզի չլինի թե դու էլ Տիրոջից հանդիմանվես. «Ինչո՞ւ եք ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում» և՛:





## ԳԼՈՒԽ Բ

### ՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ հաշտության միջնորդն ու Աստծո խաղաղաբար Որդին, հօգուտ մեզ պատվիրում է՝ ասելով. «Եթե քո եղբայրը քո դեմ ոխ ունի, նախ հաշտվի՞ր նրա հետ և ապա եկ քո պատարագը<sup>1</sup> մատուցիր» (Մատթ. Ե 23-24):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հաշտությունը լավ առաքինություն է, որ գժտության պատճառով բաժանվածներին կրկին միավորում և շաղկապում է: Գժտությունը չորս տեսակ կարող է լինել, ինչպես և հաշտությունը. Աստծո, Հրեշտակների, մարդկանց և սեփական անձի հետ, քանի որ երբ մարդը մեղանչում է, իր դեմ է հանում Աստծուն՝ գթառատ Հորը՝ որպես արդար դատավորի, ով, մի կողմ դնելով հայրական գութը, խռովված, հովազի

<sup>1</sup> Պատարագ - զոհ, ընծա, նվեր:

և առյուծի նման, անաչառությամբ ելնում է վրեժիսնդրությամբ դատաստան անելու, ինչպես այն ժամանակ Հուդայի և Եփրեմի տների հանդեպ, ուստի սպառնում է. «Ես Եփրեմի համար խոռվք կլինեմ, իսկ Հուդայի տան համար՝ խալթոց» (Ովս. Ե 12), որից այլ կերպ ազատվելու հնար չկա, եթե ոչ զղջամբ, ընծաներով և աղերսանքներով: Եվ քանի որ բոլորս էլ մեղանչում ենք, որով խոռվեցնում ենք Տիրոջը, հետևաբար այն ահեղ Դատավորի առաջ Հոքի նման պետք է աղաչենք՝ սա [անելով] պատարագների և ընծաների միջոցով (տե՛ս Հոք ԽԲ 8):

Պատարագը երեք տեսակ է. իրական, որ Աստծո Գառի մատուցմամբ է լինում, բանական, որն աղոթքն է, որ հոգու սեղանից կամ սրտի բուրվառից առ Աստված է ելնում, ինչի մասին սաղմոսերգուն ասում է. «Խոնարի հոգին է պատարագն Աստծո» (Սաղմ. Ծ 19), և երրորդ՝ մահացման պատարագը, որն ապաշխարությունն է, որով, ըստ ս. Գրիգորի, [անձը] ճգնավորական վարքով, Աստծո սիրո հրով ողջակիզվելով, Աստծուն է մատուցվում՝ որպես բոլորանվեր կենդանի պատարագ<sup>2</sup>:

<sup>2</sup> Գրեթե բառացի այս վկալակոչումը Բերդումյանը քաղել է ս. Գրիգոր Նարեկացու՝ Աստվածամորը նվիրված Յերբեղից. տե՛ս Ս. Գրիգոր Նարեկացի (=Նարեկացի), Մատեան ողբերգութեան եւ այլ երկաիրութիւնք, Անթիլիաս, 2003, էջ 572:

Այս երեքից որևէ մեկով եթե մեկը մոտենա  
հաշտեցնելուարդար Դատավորին, ապա պետք է  
ոսոխ, չարախոս կամ ոխակալ չունենա, որպես-  
զի չլինի թե ամբաստանելով փոխեն Դատավո-  
րի կարծիքը, որ չնայի մեր ընծային։ Ահա Տերը  
սրան է հարկադրում՝ նախ գնալ հաշտվել եղբոր  
հետ և ապա՝ ընծան մատուցել։

Այս խորհրդով է, որ նախքան Պատարագի  
այն էական խոսքը, որով Ընծան Խորհրդի է  
փոխակերպվում, Եկեղեցին պատվիրում է, որ  
հաշտության ողջույնը միմյանց նվիրենք, որ-  
պեսզի սուրբ Պատարագի՝ առջեռում սպասող  
շնորհներից չզրկվենք միմյանց ամբաստանելով,  
որովհետև եթե միմյանց չներենք, ոչ էլ երկնա-  
վոր Հայրը մեր հանցանքները կների՝ ընդունելով  
մեր ընծան։ [Քրիստոսը] չասաց. «Եթե ոխ ու-  
նենաս», որովհետև ով որ ոխ ունի, կարիք չկա,  
որ հրամանի սպասի, այլ ինքը պետք է շտապի  
հաշտվելու այնպես, ինչպես պարտատերը՝ իր  
պարտքը վճարելու։ Եվ իր խոսքերը մեր մեջ  
ավելի լավ դրոշմելու համար մեր Տերը որպես  
հարկավոր օրինակ ավելացրեց. «Արդարադա՛տ  
եղիր [քո ոսոխի հետ կանխավ]» (Ե 25), այսինքն՝ քո  
ոսոխի հետ արդարությամբ վարվիր։

Ոսոխը ոխ պահողն է։ Այն ժամանակ ենք  
արդարությամբ վարվում, երբ համարում ենք,

որ պարտավոր ենք հաշտվել նրա հետ՝ կա՛մ  
վճարմամբ, կա՛մ խոսքով, կամ էլ մտածելով,  
թե գուցե մենք ենք ոխակալության առիթ  
տվել, կամ պարզապես խոնարհվելով նրա  
առաջ, ինչն արդարության իրականացումն է՝  
ըստ այնմ. «Թո՛վլ տուր, որովհետև այսպես է վայել  
մեզ ամբողջ արդարությունը կատարել» (Մատթ. Գ. 15),  
այսինքն՝ խոնարհությամբ: Իսկ ով ասի, թե նա  
է պարտավոր խոնարհվել, արդարադատ չէ,  
այսինքն՝ իր ոսոիսի հետ միաբան և համախոր-  
հուրդ չէ (հմնտ. Մատթ. Ժ.32):

Բազում են մեղավորների ոսոխները: Նախ՝  
Աստծո Որդին, որ ոմանց ուրանում է Հոր առաջ,  
ոմանց էլ ամբաստանում: Եթե կամենում ես,  
որ նա քեզ համար բարեխոս լինի (ինչպես որ  
եկեղեցու համար է առհասարակ միշտ բարե-  
խոս՝ ըստ այնմ. «Ով Աստծո աջում է և բարեխոս մեզ  
համար» (Հոռմ. Ը.34)), և ըստ Հովհաննեսի՝ Եթե մեկը  
մեղանչի, ապա բարեխոս ունենք Արդարին և Անարա-  
տին» (Ա.Հովհ. Բ. 1), այսինքն՝ երբ զղջա, պարտա-  
վոր ես մեղքերդ զղջալ ու նրա բոլոր պատվի-  
րանները պահել, ապա թե ոչ՝ որպես թշնամի՝  
ով կպահի քո դեմ:

Ուրեմն մտածի՛ր, թե ինչպե՞ս պետք է ար-  
դարադատ լինես, այսինքն՝ հաշտ և միաբան,  
որպեսզի ընծագ մատուցելու ժամանակ [Հիսու-

սը] քեզ երկնավոր Հոր առաջ չամբաստանի:  
Երկրորդ՝ [մեր ոսոխներն են] հրեշտակները՝  
ուրիշների համար. Երբ նրանք իրենց կողմից  
պահպանվողին մեղանից արհամարհված են տես-  
նում, ամբաստանում են երկնավոր Հոր առաջ՝  
ըստ այնմ. «Զգո՞ւշ եղեք, որ այս փոքրիկներից մեկին  
չարհամարհեք, որովհետև նրանց հրեշտակները միշտ  
տեսնում են իմ Հոր երեսը, ով երկնքում է» (Մատթ. ԺՀ  
10): Եվ կամ՝ մեզ համար, ինչպես չարախոսե-  
ցին Բաբելոնի մասին, որի վերակացուներն էին՝  
ասելով. «Բժշկնեցինք Բաբելոնին, բայց նա չբժշկվեց»  
(Երեմ. ԾԱ 9): Քանզի մեր պահպաններն անում  
են այն, ինչ իրենց [պարտականությունն] է, իսկ  
եթեմենք համառում ենք ուչենք հետեւում նրանց  
ազդումներին, այն ժամանակ չարախոսում են  
մեր մասին: Ուստի պարտավոր ենք նրանց հետ  
արդարադատ լինել, որպեսզի նրանք էլ [մեզ հա-  
մար] բարեխոսեն, ինչպես Երուսաղեմի համար՝  
ըստ այնմ. «Մինչև ե՞րբ չես ողորմելու Երուսաղեմին»  
(Զաք. Ա. 12):

Երրորդ՝ ոսոխներ են սուրբերը, ովքեր չա-  
րախոսում են մեղավորիների մասին՝ ըստ այնմ.  
«Մինչև ե՞րբ, Տե՛ր, պիտի չդատես և մեր արյան Վրե-  
ժը չլուծեն երկրի բնակիչներից» (Հայտ. Զ 10): Այսպես  
նաև Մովսեսն է չարախոսում Իսրայելի մասին՝  
ըստ Տիրող խոսքի (տե՛ս Հովհ. Ե 45), ինչպես Ներ-  
սես Մեծն էլ՝ իմաստությունն ատող և տգետ մեր

**ազգին<sup>3</sup>:** Հետևաբար պետք է նրանց (սրբերին) ևս մեր կողմը դարձնենք, որպեսզի Աստված նրանց մեծարելու պատճառով մեզ չդատի:

Չորրորդ՝ ոսոխներ են մեզանից վշտացած եղբայրներն ընդհանրապես: Պարտավոր ենք, ուրեմն, նաև նրանց հետ արդարադատ լինել և ոչ թե թշնամանալ, որպեսզի չամբաստանեն [մեզ]: Որովհետև ինչպես որ մի կայծից կրակն է բորբոքվում, այդպես էլ մեկ չարախոսի պատճառով, ով խոսում է Դատավորի առաջ, սաստիկ զորանում է նրա բարկուժյան հուրը, որից առաջանում է ավելի խիստ դատաստան: Այդ պատճառով իմաստունը զգուշացնում է. «Զուր տեղը մի՛ թշնամացիր մարդու հետ, որպեսզի նա քեզ չարիք չգործի» (Առակ. Գ 30), և այս պատճառով է աստվածային ս. Պողոս առաքյալը հորդորում. «Որքան հնարավոր է, բոլոր մարդկանց հետ խաղաղություն ունեցեք» (Բմնտ. Ա. Թես. Ե 13):

Հինգերորդ՝ ոսոխ է դառնում նաև անտեսված օրենքը, իսկ արդարադատ ենք լինում նրա հետ, երբ այն կատարում ենք:

**Եթե այս հինգին մեր կողմը պահենք, ապա**

<sup>3</sup> Ըստ Ե դարի պատմիչ Փավստոս Բուզանդի՝ Ներսես Մեծ հայրապետը, կանխատեսելով Արշակունյաց ցեղի կործանումը, հանդիմանում է Արշակ Բ թագավորին, ով սպանել էր իր եղբորորդի Գնելին: Տես՝ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանրագորությունները Ստ. Մալխասյանց, Երևան, 1987, Էջ 189, Բմնտ. Զայնարդ շարական (=Ծարական), Վաղարշապատ, 1888, Էջ 61:

գլխավոր ոսոխը, որ սատանան է՝ մեր հիմնական չարախոսը, ում հետ այլ կերպ հնարավոր չէ արդարադատ լինել, դյուքությամբ պարտություն կկրի Դատավորի մոտ՝ ըստ այնմ. «Ընդդիմացե՛ք չարախոսին» (Հակ. Դ 7), և թե՝ «Ընկավ չարախոսողը» (տե՛ս Հազտ. ԺԲ 10), իսկ ս. Պետրոսն ասում է. «Զեր ոսոխը՝ սատանան, առյուծի պես մոնչում է» (Ա. Պետ. Ե 8): Նա չի լոռում, եթե չարախոսելու իրավունք չի գտնում, սուտ բաներ է չարախոսում մեր մասին, ինչպես Հոբի օրինակով է ցույց տրվում (տե՛ս Հոբ. Ա 9), դրա համար էլ արդար դատավորը նրան չի լսում: Որովհետև երբ արդար դատավորն աթոռին նստի, ոչ մի չարագործ չի կարողանա նրա առաջ ապրել (տե՛ս Սուակ. Ի 8), այսինքն՝ դեերի բելիարը (սատանան):

«Նախքան դատավորի մոտ մտնելը, մինչ նրա (ոսոխի) հետ դեռ ճանապարհին ես»: «Ճանապարհները» երեքն են: Նախ՝ Քրիստոսը՝ ըստ այնմ. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (Հովհ. ԺԴ 6): Երկրորդ՝ աստվածային օրենքը՝ ըստ այնմ. «Հաստատուն պահիր իմ ոտքերը քո ճանապարհին» (Սաղմ. ԺԶ 5): Եվ երրորդ՝ այս կյանքը՝ ըստ այնմ. «Երանի նրանց, ովքեր անբիծ ուղի են բռնել և ընթանում են Տիրոջ օրենքով» (Սաղմ. ԺԺԸ 1), և կամ՝ «Երանելի է այն մարդն այս կյանքում, ով ամբարիշտների խորհրդով չի շարժվում և մեղավորների ճանապար-

հին [ոտք չի դնում]» (Սաղմ.Ա.1), ուստի նախքան մեր մեռնելը պարտավոր ենք արդարադատ լինել [այս] հինգ ամբաստանողների հետ. գուցե ոսոխը Դատավորին մատնի: Ովքեր մարմնավոր դատավորների դռներն են գնում, ինչքա՞ն զգուշությամբ են աշխատում, որ որքան հնարավոր է, բոլոր մարդկանց, ովքեր դատավորների դռների մոտ են, իրենց կողմը դարձնեն, որպեսզի այնտեղ չչարախոսեն [իրենց մասին]: Այդպես էլ մենք այստեղ պետք է վարվենք, որպեսզի այնտեղ անպատճառստ չլինենք և Դատավորի կողմից այստեղ [կարգված] ինչ-որ լրտես չմատնի [մեզ] այնտեղ: Այլ այստեղ ենք պարտավոր արդարադատ լինելով հաշիվը տալ և նրանից ազատվել, և դա՝ զղջմամբ և ապաշխարությամբ:

Պատվիրաններ կան, որոնք մեր աչքին աննշան են թվում. գուցե նրանք այնտեղ [մեր] ոսոխը դառնան և մատնեն Դատավորին, ուստի նրանց մասին ևս այստեղ պետք է մտածել:

«Իսկ Դատավորը դահճին [հանձնի]: Այստեղ բազմիցս ենք մատնվում [դատավորին], բայց շատ անգամ պատահում է, որ կա՛մ փաստերի, կա՛մ բարեխոսների, կա՛մ էլ կաշառքի միջոցով շրջում ենք դատավորի սիրտը: Իսկ այնտեղ, մեկ անգամ ամբաստանվելով, անհնար է ազատվել,

քանի որ ո՛չ ոսոխն է ստում, ո՛չ էլ Դատավորը կարող է խաբվել կամ համոզվել։ Այդ պատճառով մատնությունից հետո իսկույն դահճի ձեռքն է տալիս, ուստի ասում է. «Եղբայրը չի փրկում, ոչ էլ մարդը» (Սաղմ. ԽԸ 8): Դեկի ամբաստանությունն ընդունելի չէ, որովհետև բազմիցս ստում է. ոսոխը, որին պարտավոր ենք հաշիվը տալ, հատկապես դեռ չէ, որովհետև նրա հետ անհնար է արդարադատ լինել և հաշտվել, քանզի անհաշտ ոսոխն է, այլ մյուսներն են, որոնց ամբաստանությունն ընդունելի է:

«Դահճները» երկուսն են. առաջինը՝ այստեղ [գտնվող] փորձիչ դևերն են, կամ բռնակալները, կամ այլ արարածներ, ինչպես՝ գագանները, տարերքները և այլն։ Երկրորդը՝ այնտեղ [գտնվողներն] են, որոնց մասին ասում է. «Հոգիներ կան, որոնք վրեժիններության համար ստեղծվեցին։ Վախճանի ժամանակ զրոյություն կհեղին և սրտմտությունը նրա, ով ստեղծեց իրենց կհանդարտեցնեն» (Սիր. ԼԹ 33-34):

«Բանտ կը նկնես»։ Դահճների նման բանտն էլ է կրկնակի. մեկը եկեղեցին է, որը նաև քավարան<sup>4</sup> է կոչվում, որովհետև այնտեղ երկու ձևով են բանտ ընկնում։ Նախ՝ զրկյալների ամբաստա-

<sup>4</sup> Պետք է շշիրթել Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու «քավարանի» վարդապետության մետ։ «Քավարան» եղբն այստեղ նշանակում է մեղքերը քավելու վայր, որն այստեղ Եկեղեցին է։

**Նությամբ Աստծո կողմից նեղությունների մատնվելով՝ ըստ այնմ. «Ձեր կողմից զրկվածն աղաղակում է, և հնձողների բողոքը հասավ Զորությունների Տիրոջ ականջին» (Հակ. Ե4): **Երկրորդ՝ երք կամավորաբար իրենց ապաշխարության են մատնում խոստովանության ատյանում. այս բանտից կարելի է ելնել հատուցումից<sup>5</sup> հետո, և այս նեղության մասին է [խոսում] Դավիթ մարգարեն, երբ աղաչում է Տիրոջը հանել իրեն բանտից (տե՛ս Սաղմ. ԾԽԱ. 8): **Որովհետեւ հանցանքները երկուսն են՝ մեծ և փոքր:** *Փոքրերի համար [Դատավորը] այստեղ է տանջում, որպեսզի փրկվեն՝ ըստ այնմ.* «Անա Ես նրանց մեծամեծ մեղությունների մեջ եմ գցում, որպեսզի ապաշխարեն» (Հաղո. Բ 22): **Իսկ մեծերի մասին ասում է.** «Այս ամենը կնքված պահվում է իմ գանձարանում. վրեժների հատուցման օրը նրանց կհատուցեն» (Բ Օր. ԼԲ 34-35). **գա անելանելի բանտն է, որովհետեւ [մեղավորն այնտեղ]** չի կարող հատուցել, որպեսզի դուրս գա:****

**Նաքարակիտը պարտքի վերջին մասն է:** Թագավորները նույնպես երկու բանտ ունեն. մեկի մեջ փոքր հանցանք գործածներն են ընկնում և դուրս գալիս, իսկ մյուսի մեջ՝ քրեական հանցագործները և ցմահ դուրս չեն գալիս: Եթե ցանկանում ես գիտենալ, թե [մեկը] քո դեմ

<sup>5</sup> Հատուցում-վճարում-այն ապաշխարությունը, «պատիժը», որ նշանակում է խոստովանահարը խոստովանողի մեղքի դիմաց:

ոխ ունի կամ դու՝ ինչոր մեկի դեմ, [թե ոչ],  
քո խղճի՞ն հարցրու, որովհետև նա շատ լավ  
տեղյակ է, թե ում համար է քեզ մեղադրում:  
Հաշտվի՛ր և արդարադա՛տ եղիր խղճիդ հետ  
այնպես, որ չմեղադրի քեզ, և այդ ժամանակ,  
ըստ ավետարանչի, Աստծո մոտ համարձակու-  
թյուն կունենաս (Ա. Հովհ. Գ. 21): Արդ՝ պատգա-  
մավորում ենք հանուն Քրիստոսի. Քրիստոսի  
միջնորդությամբ հաշտվե՛ք Աստծո հետ (հմնտ.  
Բ Կորնթ. Ե 20):





## ԳԼՈՒԽ Գ

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ՉԱՐ ԲԱՆ Է ԽՍՏԱՍՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Երկնային հմաստություն Քրիստոսը, ով մարդուն իր նման ստեղծեց, տեսնելով [նրան] մեղքերով ապականված ու բոլոր արարածներից առավել անարդ դարձած, մեղավոր մարդու մեծ տգեղությունը հայտնելով, ասես վարանելով իր մտքում, ասում է. «Ո՞ւմ նմանեցնեմ այս ցեղին» (Մատթ. ԺԱ 16):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես որ [մարդը], գերազանցելով [մյուս] արարածներին, Արարչին է նման՝ ըստ այնմ. «Ես ասացի, որ աստվածներ եք» (Սաղմ. ԶԱ 6), այդպես էլ մեղքերով բոլոր արարածներից ավելի անարդ վիճակում է հայտնվում: Այդ պատճառով էլ Հոր հմաստությունն արարածներիս մեջ նրան համեմատ ոչ մեկի չի գտնում, ինչ

պատճառով, ասես ճարահատված, [մարդկային ցեղին] վերջում կրկին նույն տեսակին է նմանեցնում. «Նման է նա մանուկների»:

Արդ՝ հրեա ցեղը մանուկների նմանվեց. նախ՝ որովհետև մանուկն իր օգուտը չի գիտակցում. այսպես էլ նրանք [Տիրոջ]՝ իրենց այցելության ժամանակը չհասկացան (Բննու. Ղոկ. ԺԹ 44). «Եթե գիտենավիր գոնենք խաղաղությունը, բայց [այն] ալժմ քեզանից ծածկվեց» (Ղոկ. ԺԹ 42):

Երկրորդ՝ մանուկը միայն տեսանելի բանն է նկատում. այսպես էլ նրանք, Քրիստոսի մեջ [միայն] երևացողը տեսնելով, գայթակղվեցին, և սրանով Տերը նրանց համար գայթակղության քար դարձավ:

Ովքեր նատում են հրապարակներում: Այսինքն՝ քաղաքի ընդարձակ տեղերում, ուր մարդիկ սովորաբար առևտուր են անում: Եվ քանի որ մանուկները, ազատ լինելով այս աշխարհի հոգսերից, միշտ խաղում են, որտեղ էլ պատահի, և երբեմն էլ հրապարակում հավաքված մարդկանց մեջ են խաղեր հորինում, երբ տեսնում են, որ իրենց հասակակիցները եկել են մարդկանց հետ, ովքեր, մանկական հասակից նոր դուրս եկած լինելով և առևտրով զբաղվելով ու օգուտի առհավատչյան նոր կերպով վերցնելով, անուշադրության են մատնում նրանց, խա-

դերի ավարտին դիմում են իրենց ընկերներին, այսինքն՝ կանչում են նրանց և ասում. «Մենք խաղացինք, ինչո՞ւ դուք էլ մեզ հետ չխաղացիք»: «Փողեր հնչեցրինք և ողբեր երգեցինք» (ԺԱ. 17), իսկ դուք ոչ մեկն էլ չցանկացաք: Ինչպես ինձ թվում է, սա է [խոսքի մեկնությունը]:

Իսկ ինչ վերաբերում է այս խոսքի խորհրդաբանական իմաստին, ապա պետք է գիտենալ, որ այդ մանուկները Քրիստոսն ու Հովհաննես [Մկրտիչն] են. «Ահավասիկ խելահաս պիտի դառնա իմ մանուկը» (Ես. ԾԲ. 13). և թե՝ «Հավաքվեցին Քո սուրբ Մանկան վրա» (Գործք Դ. 27): Սրանք նստեցին երուսաղեմի հրապարակներում, որն աշխարհում աստվածային մեծ թատրոնն է: [Նրանք] ամենքի վրա ազդող երկու բարձր հնչող շեփորներ էին, որովհետև «նրանց ձայնն ամբողջ երկրով մեկ տարածվեց և նրանց խոսքը՝ աշխարհի ծագերում» (Սաղմ. ԺԸ. 5):

Մեկը ողբածայն գոչում էր և ասում՝ ապաշխարեցե՛ք, սգազգեստ լինելով լացուկոծի էր հրավիրում՝ ասելով. «Այսուհետև ապաշխարության արժանի պտուղ արեք» (Մատթ. Գ. 8): Հովհաննեսն անապատում ապաշխարության մկրտություն էր քարոզում: Մյուսը երկնային հարսանիքի քաղցրածայն եղանակն էր փողում. «Միթե կարելի՞ բան է, որ հարսանքավորները սուգ պահեն, մինչ Փե-

սան նրանց հետ է» (Մատթ. Թ: 15): *Արանք մանուկներ կոչվեցին, որովհետև մանուկների նման գերծ էին այստեղի ունայն զբաղմունքներից, իսկ նրանք, որոնց սրտերը մեծամեծ զբաղմունքների մեջ էին, այսինքն՝ փառքի, այս կյանքի հաճույքների և ագահությունների մեջ էին խեղդված, չշարժվեցին քաղցրեղանակ և ազդու այս փողից, որովհետև նրանց սրտերը մեղքերով մեռած էին: Մեծ Ալեքսանդրը, երաժշտի կողմից պատերազմական եղանակ լսելով, խրախճանքից մարտի էր գնում, իսկ ուրախ նվագ լսելով՝ վերադառնում սեղանակիցների մոտ<sup>6</sup>:* Բայց խստասիրտները երկուսից ոչ մեկից էլ չշարժվեցին, բազում ախտերը նրանց սրտերն ապառաժի վերածեցին, ուստի համառում էին իրենց կամքի մեջ:

*Երաժիշտը, երբ տեսնում է, որ ողբի [նվագից] չեն ազդվում, ուրախական [մեղեղի] է նվագում. քարոզիչը, երբ տեսնում է, որ դժոխքի [վախից] չեն ազդվում, արքայության մասին է ավետում. դատավորը, երբ չեն հաղթվում աղերսանքից, սպառնալիք է գործածում:* Այս ամենը Քրիստոսը փորձեց, և այլևս չմնաց

<sup>6</sup> Այս հատվածը Պետրոս սրբազանը գրեթե բառացի վերցրել է ս. Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստափութեան» երկի ԺԷ գլուխց. տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիստիկականը, համահավաք քննական բնագրերը և առաջարբանը Ս. Ս. Արեշատյանի, Երևան, 1980, էջ 93:

եղանակ, որ մեծ Շեփորը չնվագեց, բայց չշարժվեցին, որովհետև սրտով համառ ու անթլիատ էին, երկաթե ջիլեր էին նրանց պարանոցները և կենդանի Աստծո հանդեպ ապստամբող խիստ և չար սիրտ ունեին: Սրանք, այսինքն՝ [հրեա] օրենսգետներն ու փարիսեցիները Քրիստոսի և Հովհաննեսի ընկերներ կոչվեցին, քանզի նույն ազգից էին:

«Փող հնչեցրինք ձեզ համար, ինչո՞ւ չպարեցիք»:  
Ո՞վ խստասիրտներ, մի՞թե անորոշ ձայն էր արձակում երկնային փողը, ինչպիսին որ ձերն էր, դրա համար էլ չկամեցաք պատրաստվել այս պարին: Որովհետև եթե յոթ հրեշտակների՝ իրենց շեփորներ փչելու ժամանակ լեռները հրդեհվում էին, աստղերն ընկնում և ծովերը խռովվում բարձր ձայնից, ապա ինչքա՞ն առավել դուք պետք է Մեծ Խորհրդի Հրեշտակի (տե՛ս Ես. Թ. 6) շեփորահարելուց ազդվեիք: Բայց քանի որ ապառաժից էլ ավելի կարծր էիք, էլ ինչ պիտի աներ, որ չարեց, քանի՞ ձեռվ նվագեց ձեզ արթնացնելու համար, բայց չզարթնեցիք ձեր չարությունների մահաբեր քնից. այդ պատճառով Ես՝ Հոր իմաստության նախանձախնդիր Որդիս, հոգովս վկայում եմ, որ Նա անպարտ է և արդար, որովհետև ինչ կախված էր Իրենից, արեց ձեզ համար:

Եկեղեցու հոգևոր շեփորներն առաքյալներն  
են, քարոզիչներն ու զանգակի ձայնը։ Քրիս-  
տոսի հարսները ձայնը լսելիս պարտավոր են  
շտապել եկեղեցի և հրեշտակների հետ հոգևոր  
երգերով պարել։



## ԳԼՈՒԽ Դ

### ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԲ

Երկնային Մշակը բանական այս ագարակը ձեռք բերելուց և խաչի խոփով հերկելուց հետո ցանկացավ նրա մեջ նաև բարի սերմ ցանել. «Ահա սերմնահանը ելավ սերմանելու...» (Մատթ. ԺԳ 4):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

«Սերմնացան» չի ասում, որովհետեւ «սերմնացանը» կարող է նաև նշանակել վարձակալված մշակը, որինը չէ սերմը, իսկ «սերմնահանը» սերմերի հեղինակին է մատնանշում: Սերմնահանը Տերն է, սերմը՝ Աստծո խոսքը և շտեմարանը, որից հանում է սերմը, աստվածային միտքն է՝ խորին և ծածուկ խորհրդով լցված: Իսկ սերմնացանն առաքյալներն ու վարդապետներն են և նրանց շտեմարանները, որից հանում են սերմը, խորհրդապես աստվածաշունչ Ա. Գիրքն է: Ուշադրություն դարձրու.

եթե սերմնացանը չսերմանի, ապա մեր ագա-  
րակն ինքնիրեն բարի պտուղ չի կարող տալ,  
այլ միայն մեղքի փուշ, ինչպես որ նյութական  
ագարակն էլ առանց բարի սերմի մոլախոտներ  
և փուշ է բուսցնում: Ուստի պարզ է, որ ամեն  
բարի արդյունք Աստծո չնորհից է առաջանում,  
թեպետև մեր գործակցությամբ, որովհետև եթե  
մեր անձնիշխան կամքը հնազանդությամբ չլի-  
նի արգավանդ հողի նման, ապա պտուղ չի  
տա:

«Եվ երբ սերմանում էր, սերմի մի մասն ընկավ  
ճանապարհի եզերքին»: Ոչ ոք չի կարող խոսքի  
նշանակությունն ավելի լավ իմանալ, քան նա,  
ով [այն] ասում է. ուստի պետք է ուշադրու-  
թյուն դարձնել Տիրոջ մեկնությանը: Մեր Տերն  
իր այս խոսքն այսպես է մեկնում: «Ամեն ոք, ով  
լսում է արքայության խոսքը և չի հասկանում, չարը  
գալիս է և հափշտակում նրա սրտում սերմանվածը.  
դա այն է, որ ճանապարհի եզերքին սերմանվեց» (ԺԳ  
19): Այստեղից պետք է դաս քաղենք, թե սրտի  
որքան զգուշությամբ և հեղությամբ ենք պար-  
տավոր Աստծո խոսքը մեր մտքի մեջ ընդունել  
և ամփոփել: Որովհետև եթե մեր մտքում խոս-  
քի իմաստը տպավորվի, ապա չարն այլևս չի  
կարող հափշտակել այն, իսկ եթե խոսքի իմաս-  
տը և ուժը չմտնեն մեր մտքի մեջ, այլ միայն

երևակայության մեջ սոսկ հնչումը պատկերվի,  
ապա այդ ժամանակ չարը, որ իշխում է միայն  
երևակայության վրա և ոչ թե մտքի, երևա-  
կայությունը լցնելով բազմատեսակ ունայնու-  
թյուններով, որոնք միշտ պատկերում է մոլո-  
րեցնելու համար, հափշտակում է, այսինքն՝ խոս-  
քի իմաստը եղծում, ինչպես որ սերմը, որ ընկ-  
նում է ճանապարհի եզերքին և անցորդների  
կոխոտմամբ կարծրացած մնում հողի երեսին,  
թռչունների համար կերակուր է դառնում: Ուս-  
տի առաքյալը պատվիրում է. «Հեզությանը ընդու-  
նեցեք ձեր մեջ սերմանված խոսքը, որ կարող է փրկել  
ձեր հոգիները» (Հակ. Ա. 21): Հողի միջինը միտքն է,  
իսկ ճանապարհը՝ երևակայությունը: Արդարեւ,  
եթե կամենում ես, որ խոսքի սերմը քո մեջ մնա  
և ոչ թե դևերին կերակուր դառնա, ապա թե՛  
ընթերցելիս, թե՛ Ավետարանը կամ քարոզները  
լսելիս, հասկացիր սիրով և պահիր հոժարու-  
թյամբ: Այս խորհրդով է Ավետարանի ընթերց-  
ման ժամանակ ասվում «օրթի», այսինքն՝ ուղ-  
ղապես լսեցե՛ք, «պոռախումնե»՝ ուշադրությո՛ւն  
դարձնենք, ինչպես նաև՝ երկյուղածությա՛մբ  
լսեցեք:

Բարոյականապես՝ բղջախոհ մարդն է դևե-  
րի ճանապարհը, որոնք աչքերի և ականջների  
միջով մտնում են նրա սիրու և խոսքը հափշ-

**տակում նրանից:** Արա մասին է ասվում. «Ագու-  
վի պես մենակ ու անօգնական նատեցիր ճանապարհին»  
(Երև. Գ. 2):

**Այստեղից հասկացի՛ր,** թե աստվածային  
խոսքերի մեջ տգիտությունը ինչքան է վնա-  
սում մարդուն, քանզի թեև որոշ իմաստուն  
մարդիկ ևս լսելով անտեսում են, բայց մեծավ  
մասամբ հիմարներն են, որ չեն հասկանում:

«Եվ մի ուրիշ մաս ընկալ ապառաժի վրա» (ԺԳ. 5):

**Հստ Տիրոջ մեկնության՝ ապառաժն անհաս-**  
**տատ մարդն է:** Չասաց՝ «քարոտ տեղերում»,  
որ նաև այն սիրտն է նշանակում, որ մեղքե-  
րի հետ նաև բարեգործության հող ունի, ուր  
երբեմն սերմը գորանալով՝ խոր արմատներ է  
գցում և աճում, այլ՝ «ապառաժի վրա», որով-  
հետև որոշ ագարակներում այնպիսի տեղ է լի-  
նում, ուր հողի տակ ապառաժ քար է թաքնված  
լինում, ուր սերմն ընկնելով՝ քարի ջերմությու-  
նից և ոռոգման խոնավությունից հեշտությամբ  
բացվում և բուսնում է, սակայն արեկի ծագման  
ժամանակ ոչ այնքան ինքը, որքան նրա տակ  
եղած քարը տաքանում է, և նա, հաստատուն  
արմատ չունենալով, չորանում է:

**Իսկ բարոյականապես՝ ապառաժը սրտի**  
**երկմտությունն է,** որով մարդն անհաստատ  
է դառնում՝ ըստ այնմ. «Երկմիտ մարդն իր բոլոր

ճանապարհներում անհաստատ է» (Հակ.Ա.8), **և ծովի նման միշտ տրտմությամբ և թախծությամբ տարութերվում է, ուստի երբ ինչ-որ միսիթարիչ խոսքեր է լսում, խնդությամբ և միամտաբար ընդունում է և ջերմությամբ հետեւում՝ կարծելով, թե ինչպես որ սկզբում խնդությամբ ընդունեց, այդպես էլ միշտ խնդամիտ է մնալու:**

«Բայց արևի ծագման ժամանակը» (ԺԳ.6) նշանակում է փորձությունն ու նեղության տապը, որն Աստված առաջացնում կամ թույլ է տալիս, որ գեր հարուցի: Որովհետեւ ինչպես որ արեգակի ջերմությունն է անհրաժեշտ բույսերի աճման համար, այնպես էլ նեղությունը՝ առաքինությունների աճման, ուստի ասաց՝ «խոսրի համար նեղություն լինելու ժամանակ», իսկ մեկ այլ տեղ՝ «Գալթակդություններ պետք է, որ գան» (Մատթ.ԺԸ.7):

«Զորացավ»: Այսինքն՝ երկմիտը վրդովվեց և ալեկոծվեց, սկսեց հուսահատվել և զղջալ, որովհետեւ չէր մտածում, որ նեղության կհանդիպի: [Այդպիսիները նեղության] գալու ժամանակ արագ գայթակղվում են: Ով լսում է խոսքը, եթե կամենում է պտղաբերել, ապա պետք է նախ ամեն ինչի մասին մտածելով ընդունի [խոսքը], իսկ երկմիտը և անհամբերը հանգամանքների մասին նախօրոք չեն հոգում, ապա թե ոչ՝ չին ընդունի: Երկմիտներից ոմանք, ովքեր

ցանկանում են անհոգ ապրել, ուրախությամբ  
հավատքի են գալիս, բայց երբ այնտեղ նեղու-  
թյուններ են ճաշակում, իսկույն վշտանում, մի  
կողմ են քաշվում և չորանում։ Հրեաներից և  
թուրքերից ոմանք հավատքի են գալիս, բայց  
երբ նեղությունը պատում է նրանց, չորանում  
են։ Ոմանք սիրով և խնդությամբ ուսման մեջ  
են մտնում, և երբ դժվարություն և խրթնու-  
թյուն է հանդիպում, չորանում են, որովհետև  
շատ հող չունեն, այսինքն՝ մտավոր ընդունա-  
կություն՝ խոնարհության և հեզության հետ։

Եվ ուրիշ մի մաս ընկավ փշերի մեջ (ԺԳ 7): **Հստ**  
**Տիրոջ խոսքի՝ փշերն աշխարհի հոգսերն ու**  
**հարստության պատրանքներն են։ Ինչպես որ**  
**փշերը, պատելով բույսի արմատները, ընդդի-  
մանալով տապին և քամուն, խեղդում են բույ-  
սը, այդպես էլ այս աշխարհի հոգսերը, հոգին**  
**պաշարելով [և հեռացնելով] Քրիստոսի սիրո**  
**ջերմությունից, Ա. Հոգու շնորհների քամինե-  
րից զրկելով, ընդդիմանալով խեղդում են ոչ**  
**այնքան խոսքը, որքան հոգին. «Ուկորմերի (այ-  
սինքն՝ հոգու զորությունների) ցեցը մտահոգվող**  
**սիրտն է» (Առակ. ԺԴ 30): **Ուստի Տերը խրատում է.**  
**«Մի՛ մտածեք կերակրի և հագուստի մասին» (Բնմտ.**  
**Մատթ. Զ 28, 31): ասես արգելելով ավելորդ մտա-  
հոգությունը և ո՛չ չափավորը, որ հոգու հան-****

դարտությամբ է լինում։ Իսկ հարստության պատրանքները երկուսն են. նախ՝ [այն պատրանքները, որոնք] խաբում են նրանց, ովքեր աշխատում են հարստություն ձեռք բերել, իսկ ովքեր հարստության են ձգտում, սատանայի փորձությունների մեջ են ընկնում. ահա՝ խաբվածը։ Բացի աշխարհականներից, նմանատիպ ախտավոր եկեղեցականներ էլ կան։ Երկրորդ՝ [հարստության այն պատրանքներն են, որոնք խաբում են] նրանց, ովքեր արդեն ձեռք են բերել [հարստություն], որովհետև իրենց գեղեցկությամբ զգայարաններին են խաբում, որոնք դրանից առավել մեծ հաճույք են ստանում, քան Աստծո խոսքից։ Ուստի երբ լսում են խոսքը, անտեսելով՝ մեծամեծ հոգսերով են վատնում ժամանակը՝ ցանկալի բաները ստանալու համար, որովհետև հոգուց առավել մարմինն են սիրում։ Այսպիսին էր այն պատանին, ով հարստության հետ նաև ավետարանական կատարելությունն էր ցանկանում ունենալ (տե՛ս Մատթ. ԺԹ. 16): Եվ երբ Տերը սա անհնարին ցույց տվեց ունեցվածքի հանդեպ [պատանու] մեծ սիրո պատճառով, նա խոսքը խեղեց, թեպետև տրտմությամբ [սա արեց]։ Թշնամին նենգությամբ խնդրում է ամրոցը՝ խոստանալով խաղաղություն և հանգստություն, բայց երբ ստանում է,

թույն է թափում։ Նմանապես հարստությունն է խաղաղություն և հանգստություն խոստանում, բայց երբ գրավում է [մարդու] սիրտը, անչափ հոգսերով է լցնում, հատկապես վշտերով և մտազքաղությամբ. սա՛ է հարստության պատրանքը։

Դարձյալ՝ բարոյապես՝ փշերը մարդու հատուկ կամքն է, որը բարի բույսը ծածկում է և չի թողնում, որ իր հետ աճի։ Որովհետև ինչպես որ փշերը ծածկում են բույսը և իրենք համարձակ են երեսում, այդպես էլ ախտերով ապականված մեր անձնիշխան կամքն է ըստ իր բաղձանքների ցանկանում գործել, որից խոսքի հրամանը խեղդվում է։

Եվ ուրիշ մի մաս ընկավ պարարտ հողի մեջ (ժԳ 8): Հստ Տիրոջ խոսքի՝ պարարտ հողը նա է, ով լսում է խոսքը և հասկանում։ Ո՞վ է սա։ Նախ՝ իմաստունը՝ ըստ Սոլոմոնի՝ «Խնաստուն ունկադիր է լինում խրատին» (Առակ. ԺԲ 16), երկրորդ՝ հնագանդը, որի պտուղը մեկին հարյուրապատիկ է, երրորդ՝ խոնարհը, որի պտուղը վաթսունապատիկ է։ Մրանց մասին է ասում Պողոս առաքյալը. «Գերում ենք մտքերը Քրիստոսին հնազանդվելու համար» (Բ Կորմ. Ժ 5). Խոնարհների միտքն է հնագանդվում Քրիստոսի խոսքերին, չորրորդ՝ հեղմարդը, որի պտուղը մեկին երեսնապատիկ է՝

**ըստ այնմ.** «Հեզն է երկրի ժառանգը» (հմնտ. Սաղմ. I, Զ 11, Մատթ. Ե 5): **Ինչպես որ հողն է անձրև ընդունում,** այդպես էլ հեղը ոչ միայն բնածին խոսքն է ընդունում, այսինքն՝ բնական օրենքը, այլև կյանքի խոսքի սերմը: Պարարտ հող է այն սիրտը, որը ոչ ախտերի հարձակումից չորացած է, ոչ քարքարոտ է երկմտությամբ և անհամբերությամբ, ոչ էլ փշաբեր՝ բնական ցանկություններով ձգտելով այս աշխարհի ունայնությանը: Այսպիսի սիրտը երեք աստիճան ունի. լավ՝ բնական օրենքով. սա երեսնապատիկն է, ավելի լավ՝ [բնական օրենքին] ավելացած գրավոր օրենքով. սա մեկի դիմաց վաթսունապատիկն է. և լավագույն՝ [սրանց ավելացած] ավետարանական օրենքով. սա էլ հարյուրապատիկն է: Եվ ըստ Շնորհալու՝ օրինավորը երեսնապատիկն է, կուսությունը՝ վաթսունապատիկը, մարտիրոսներն էլ՝ հարյուրապատիկը<sup>7</sup>:

Դարձյալ [օրինակ] նույնից<sup>8</sup>. բարեգործն այստեղ երեսնապատիկն է, դրախտում՝ վաթսունապատիկը. իսկ երկնքում, այսինքն՝ Աստ-

<sup>7</sup> Տես Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթեոսի (=ՄՍԱՄ), արարեալ ի սրբոն Ներսիսէ Շնորհալոց միջ ի համարն 17 մինօերորդ գլխոյն, և անտի աւարտնալ յերանելուն Յօհաննու Երգմկացոյ, որ և կոչվ Շործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 296-297, հմնտ. Գրիգոր Տաթևացի, Զմեան հատոր (=Զմեան), Երուաղէմ, 1998, էջ 383:

<sup>8</sup> Այսինքն և Ներսես Շնորհալոց:

ծու սիրո մեջ՝ հարյուրապատիկ. աշխարհական բարեգործը երեսնապատիկ է, վանականը՝ վաթսունապատիկ, անապատականը՝ հարյուրապատիկ։ Դարձյալ՝ սկսնակներինը երեսնապատիկ է, աճողներինը՝ վաթսունապատիկ, իսկ կատարյալներինը՝ հարյուրապատիկ։

Արդ, այս պարարտ հողը, որ այսպիսի պտուղ է տալիս, առանց փորձանքների չի մնում, քանզի սրա վրա էլ է մեծ ջերմություն տվող արեգակը ծագում և փչում են դեկի ուժգին քամիները, բայց քանի որ իր արմատները խորն է գցել, դիմադրում է փորձություններին և համբերությամբ պտուղ տալիս։

«Ելավ սերմնահանը»։ Այսինքն՝ Բանը ելավ չորից, այս աշխարհի ագարակը եկավ մարդեղությամբ և խոսքի սերմն առանց նայելու առատորեն սերմանեց ոչ միայն հավատացյալների պարարտ հողում, այլ նաև հրեաների ճանապարհին, հեթանոսների ապառաժների վրա և թուրքերի փշերի մեջ։ «Արքալության Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում» (Մատթ. հո 14): *Տե՛ս քո երկնավոր Հոր գութը, որ ծագեցնում է Քրիստոս Արեգակին և Նրա խոսքի անձրևն անաչառապես թափում արդարների և մեղավորների վրա։*

## ԳԼՈՒԽ Ե

### ՄԱՐԴՈՒ ՍԿԶԲԻ ԵՎ ՎԱԽԾԱՆԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի միակ Ուսուցիչ մեր Տեր Հիսուս  
Քրիստոսը, մեր մարդկային բնությունը մո-  
լորված տեսնելով մարդու սկզբի և վախճա-  
նի մասին զանազան կարծիքներով (որովհետե-  
ռմանք, հավատ չընծայելով աստվածային Ա.  
Գրքին, մարդու սկզբի մասին ասում էին, որ  
նորաստեղծ արգավանդ հողից է՝ արեգակի զո-  
րությամբ, իսկ վախճանին նյութականորեն նա-  
յելով՝ կարծում էին, որ ուրիշ կենդանիների  
նման մարդս ոչնչանում է. այսպիսիք էին սա-  
դուկեցիներն ու նրանց հետևորդները, ովքեր  
ասում էին, թե հարություն չկա (տե՛ս Մարկ. ԺԲ 18)),  
ողջամմտ մարդկանց կարծիքները շտկելու, այն-  
պիսիների մոլորությունը հանդիմանելու և հա-  
րության խորհուրդն օրինակի միջոցով ցույց  
տալու համար՝ այս առակը պատմեց.

«Երկնքի արքայությունը նմանվեց մի մարդու, ով  
իր արտի մեջ բարի սերմ սերմանեց» (Մատթ. ԺԳ 24):

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ Քրիստոսն է արդարև երկնքի արքայությունը: Երկնքի արքայությունը Հորը տեսնելու մեջ է՝ ըստ այնմ. «Ով Ինձ տեսավ, Հորը տեսավ» (Հովհ. ԺԴ. 9): Քանզի Քրիստոսին տեսնելը հոգեոր դրախտն է. այս միտքն ունի այստեղ այն խոսքը, որ ավագակին ասաց. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԽԳ. 43): Այսպիսի նկարագրական մեկնությունը ոմանք մերժում են, բայց պետք չէ՝, որովհետեւ ամբողջ խորհուրդը սրա մեջ է:

Խորհրդապես՝ [երկնքի արքայությունը] զինվորյալ Եկեղեցին է: Որովհետև ինչպես երբ ասում ենք պարսից թագավորություն, հասկանում ենք պարսից ազգը, այսպես երբ ասվում է երկնքի արքայություն, հասկացվում է Քրիստոսի Եկեղեցին, որի վրա թագավորում է Քրիստոսը և գժոխքի թագավորությունը չի իշխում՝ ըստ իմաստունի խոսքի (տե՛ս Խման. Ա. 14): Արդ, սրա սկիզբն ու վախճանն է ասվում, թե նման է իր արտի մեջ բարի սերմ ցանողին:

«Եվ երբ մարդիկ քնած էին» (ԺԳ. 25): Այլաբանուրեն՝ [«մարդիկ» բառով] արտի տիրոջը նկատի ունի, այսինքն՝ Քրիստոսին: Նրա մասին այլաբանորեն է ննջել ասվում, որովհետև նա

Ճշմարիտ քուն չունի. այլ նշանակում է՝ թույլ է տալիս թշնամուն, [որ գործի]. «Զարթնի՛ր, ինչո՞ւ ես ննջում, Տե՛ր» (Սաղմ. ԽԴ 23): **Այսպես այն ժամանակ Հիսուսը նավախելի մոտ ննջում էր.** «Եվ մեծ մրրիկ բարձրացավ ծովում: Եվ երբ աղաչեցին, Տերն ասես քնից զարթնեց և ծովին սաստեց» (Հնան. Մարկ. Դ 37-38): «Ննջելը» թույլ տալն էր, «մրրիկը»՝ փորձության գալը, որովհետև եթե [Տերը] չննջի [չարին] թույլ տալով, որոմնացանը երբեք չի համարձակվի գալ:

Բարոյականապես՝ [մարդիկ] թուլամորթ առաջնորդներն են, որոնց Տերը նշանակեց իրենց գերդաստանների վրա: Նրանք, սպասավորներին անտեսելով, ուտում-խմում են, հարցում և մեղքով քուն մտնում, իսկ նրանց արտերում թշնամի որոմնացանն ազատորեն գործում է: Նրանք իբրև այգու պահապան կարգվեցին, բայց իրենց այգին չեն պահպանում:

Դարձյալ՝ բարոյականապես՝ [«մարդիկ»] բառով նկատի է առնված յուրաքանչյուր անձ: Որովհետև մարդու սիրտն արտի նման է՝ Աստծո խոսքի սերմն ընդունող, իսկ միտքը մշակն է: Պետք է արթնությամբ պահպանել ականջների և աչքերի գոները, որպեսզի որոմնացանը մուտք չգործի, ուստի ասում է. «Ամենայն զգուշությանը պահի՛ր քո սիրտը, որովհետև նրանից է բխում

կյանքի աղբյուրը» (Առակ. Դ 23): **Երանության է արժանի ծառան, եթե Տերը գալով՝ նրան արթուն գտնի.** այս երանությունը ժառանգելու համար էր եսային փափազելով ասում. «Ո՞վ կկարգի, ինձ պահպանելու արտի հունձը» (Ես. ԻԸ 4). **թեպետ Քրիստոսը պատերազմող թշնամիների համար թողեցիր ազգի արտը, սակայն [այն] անարգեց:**

«**Զ**Ե՞՞ որ քարի սերմ սերմանեցիր, ուրեմն որտեղի՞ց է որո՞մը» (ԺԳ 27): **Զարմացող ծառաները հրեշտակներն են, որոնք զարմանում են մեղավորների բազմության վրա, ինչպես նաև վարդապետները:** **Մեղավորը մեղք է գործում, բայց չի զարմանում, որովհետև դրա ծանրությունը չգիտեխավարած միտք ունենալու պատճառով:** **Այսպես Միքայելը չհանդուրժեց հայՀոյության դատաստանը.** ո՛չ ինքը հայՀոյեց, ո՛չ էլ դկից լսել ցանկացավ (տե՛ս Հովհանն Ա 9):

«Կամենո՞ւմ ես՝ գնանք քաղենք հանենք այն» (ԺԳ 28): **Եթե Աստված երկայնամիտ չլիներ, այլ հրեշտակներին թույլ տար, մեղավորներին վայրկենապես կոչնչացնեին, որովհետև չէին հանդուրժում:** **Այսպես էլ սուրբերն են զարմանում, երբ Տիրոջ կողմից բարի սերմ ցանելուց հետո տեսնում են դուրս եկած որոմը՝ ըստ այնմ.** «Ինչպես պոռակիկ դարձավ հավատարիմ քաղաք Սիոնը» (Ես. Ա 21): **Տերը չի թողնում [որոմները**

ոչնչացնել], նախ՝ որովհետեւ առաքինիներին կրթելու միջոց են, երկրորդ՝ նրանցից բարիքներ է հանում, երրորդ՝ որոմների արմատը շատ հաստատուն է՝ ըստ այնմ. «Տնկեցիր օրանց, և արմատ գցեցին» (Երև. ԺԲ 2): Իսկ ցորենի արմատները նրանց մեջ բազում են կամ նրանց մոտ են աճում, ուստի եթե [որոմը] արմատախիլ արվի, ցորենին վնաս կհատուցվի: Ինչպես օրինակ՝ եթե թուրքերի թագավորը որոմի նման դուրս նետվի, հարուստ քրիստոնյաներից շատերը, ովքեր նրա հովանու ներքո խաղաղությամբ են ապրում, կվնասվեն:

«Հնձի ժամանակ հնձողներին կասեմ» (ԺԳ 30):  
«Հունձը» երկու տեսակ է: [Առաջինը] առանձնականն է, որը յուրաքանչյուր մարդու մահն է մինչև աշխարհի վախճանը, և սրա համար է [Տերը] հրամայում հավաքել որոմը և առանձնացնել այրելու համար: Տե՛ս, որ ոչ թե ասում է. «Խրձեր կապեցեք և այրեցե՛ք», այլ՝ «[Խրձեր կապեցեք] այրելու համար», որով ցույց է տալիս, որ մեղավորները մինչև աշխարհի վախճանը հրեշտակների կողմից պիտի քաղվեն, հավաքվեն և ըստ մեղքերի յուրաքանչյուր տեսակի՝ խուրձխուրձ կապվեն. հպարտները՝ առանձին, նախանձները՝ առանձին, և այլն: Եվ ոչ թե միանգամից են այրվելու տրվում, այլ պահպում են

մինչև [աշխարհի] վախճանը: [Հնձի] երկրորդ տեսակն ընդհանրականն է, որն այն ժամանակ կլինի, երբ մարդկային ցեղի հունձը հասնի և հրեշտակները մանդաղը նրա արտը գցեն:

«Աշակերտները մոտեցան և ասացին. «Մեկնի՞ր մեզ համար արտի որոմների առակը» (ԺԳ 36): [Քրիստոսի] պատմած առակների մեջ սա ավելի գժվարընմբռնելի էր, և առաքյաները, չկարողանալով ամբողջովին հասկանալ, [Տիրոջից առակի] մեկնությունը խնդրեցին: Խոնարհ և ուսումնասեր աշակերտին է հատուկ տարակուսանքները ուսուցչին հայտնելը: Աշակերտներից ովկամենում է ուսման մեջ առաջադիմել, այսպես պետք է վարվի: Մեկնում է Տերն իր խոսքերը, որոնք մեծամիտներից ծածկում էր առակով և այժմ խոնարհներին է հայտնում:

«Նա, ով սերմանում է բարի սերմը, Մարդու Որդին է» (ԺԳ 37): «Բարի սերմ»-ով ընդհանրապես բոլոր մարդիկ են հասկացվում, ովքեր բնությամբ բարի ստեղծվեցին: [Տերը] սրանով հայտնում է, որ մարդկանց ստեղծման հեղինակն ինքն է:

«Իսկ արտն այս աշխարհն է» (ԺԳ 38): Նախորդ առակում սերմն Աստծո խոսքն էր, իսկ արտը՝ մարդու սիրտը, իսկ այստեղ սերմը մարդիկ են, իսկ արտը՝ այս աշխարհը, ուստի ասում է.

«Բարի սերմը նրանք են, ովքեր արքայության որ-

դիներն են», այսինքն՝ սուրբերը, արդարները և բարեպաշտները: «Իսկ որո՞մը չարի որդիներն են», այսինքն՝ հետեղությամբ: Փոփոխվող բարին կարող է չարից պարտվել՝ ըստ Անհաղթ փիլիսոփայի<sup>9</sup>, և այսպես բարի սերմը չար է դառնում՝ որո՞մն ընդունելով, բայց ոչ թե ըստ բնության, այլ ըստ հոժարության. չարն էլ կարող է բարի դառնալ: Բազմիցս արքայության որդիները դուրս ենելով՝ սատանայի որդիներ են դառնում իսրայելի նման, ով Աստծո անդրանիկ որդին էր և դրանով՝ արքայության որդի, բայց դուրս ենելով կամ որո՞մն ընդունելով՝ չարի որդի դարձավ: Եվ չարի բազում որդիներ, Արևելքից և Արևեմուտքից գալով, Աբրահամի հետ արքայության որդիներ են դառնում: Ուստի որո՞մն այստեղ սատանայի հրապուրանքներն են և ոչ թե չարի սկիզբը սատանան է՝ ըստ Մանիքոսի<sup>10</sup>:

<sup>9</sup> Բերդումյանը բառացի այս մեջբերումը վերցրել է ս. Դավիթ Անհաղթին վերագրվող մեկ գործից. տե՛ս Առաքել Սյունեցի, Ամբողջ չար տաճանքի ենթակա է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1996, էջ 58, 81:

<sup>10</sup> Մանիքոսը կամ Մանիկ Գ դարում Սասանյան Իրանում ծագած մանիքեական կրոնի հիմնադիրն է, ով ծնվել է Հարավային Միջագետքում 216 թ.: Մանիքեականությունը Շերանում էր զանազան գաղափարներ քրիստոնեությունից, զրադաշտականությունից և բուդդականությունից: Մանիկի ուսմունքը դուալիստական բնույթ ուներ, որը ներկայացնում էր երկու նախասկիզբների՝ բարու և չարի, լուսի և խավարի պայքարը: Նա Քրիստոսին չէր ընդունում մարմնով ծնված, այլ առաջոր:

«Թշնամին, որ վարեց այն, սատանան է» (ԺԳ 39):  
Քրիստոսն է վարում և հերկում սիրտը՝ ճշմարտությունն առաջադրելով: Իսկ սատանան այն ժամանակ է վարում, երբ բարի բանի պատրվակի ներքո խոսքով հավանեցնելով՝ մտնում է սրտի արտի մեջ և ապա ըստ իր կամքի չար որոմը ցանում. նա մեր գլխավոր թշնամին է, ուստի պետք է զգուշանանք նրանից:

«Հունձն այս աշխարհի վախճանն է»: Հնդկանցապես նշանակում է այս կյանքի վախճանը:

թվացայ, արհամարհում էր օրենքներն ու մարգարենությունները: Սկրտությունն ընդունում էր միայն յուղով, իսկ հաղորդությունը՝ միայն հացով: Ամուսնությունը պիղծ էր համարում, արգելում էր կենդանական ծագում ունեցող կերակուրներ ուտելն ու գիճի խմելը: Չէր ընդունում հարությունը, քարոզում էր խիստ ճգնակեցություն: Խսկական մանիքեցին չպետք է ունենար սեփականություն, ընտանիք, տուն, պետք է հրաժարվեր աշխարհիկ վայելքներից և այլն: Մանիք իր նամակներում շատ անգամ իրեն անվանել է «Հիսոս Քրիստոսի առաքալ», իրեն նույնացրել Ավետարանի «Միսիթարշի» հետ: Վահրամ Ա պարսից թագավորի հրամանով 278 թ. Օրան մորթազերծ են անում, մորթի մեջ հարդ լցնում կախելով այն քաղաքի դռներից մեկի մոտ: Մանիքեցությունը մեծ ազդեցություն է ունեցել միշնադարյան զանազան աղանդերի վրա, ինչպիսիք են մծոցներությունը, պավլիկանները, թոնդրակեցիները, բոգոմիլները ևն: Մանիքեցության մասին տես Ե. Գ. Տեր-Մինայան, Միշնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, Էջ 91-100, Ընդհանոր ենթեցական պատմութիւն, Բ. Ա. Թիատր Երուանդ, Վարդապետ Տեր-Մինասեանց, Ս. Էջմիածին, 1908, Էջ 186-190, ՔՀ, Էջ 670-672: Բերդումյանը Մանիքից վկայակոչման համար իրեն աղբյուր է գործածել ս. Դավիթ Անհաղթին վերագրված վերոգրայ երկը. տես նոյն տեղում, Էջ 61, 90-91:

*Տիրոջ խոսքից հայտնի է, որ իսկապես այս աշխարհը վերջ ունի ի հեճուկս հին փիլիսոփաների, ովքեր ասում էին, թե այս աշխարհի ծնունդն ու ապականությունը հավիտենական են:*

«Հնձողները հրեշտակներ են»: Ներկայումս «Հնձողները» [հոգևոր] ուսուցիչներն են, ովքեր առաքյալների սակավ մշակների հետ հնձեցին սատանայի արտը և լցրեցին Քրիստոսի կալը՝ ըստ այնմ. «Հունան առատ է, իսկ նշակները՝ սակավ» (Ղոկ. Ժ 2): Իսկ [աշխարհի] վախճանին հրեշտակներն են լինելու հնձողները, ովքեր Քրիստոսի հրամանով մարդկանց արտը գերանդիով են հնձելու. «Ուղարկեց իր գերանդին Նա, ով նատում էր ամպերի վրա, և հնձվեց երկիրը» (Հայո. ԺԴ 16):

«Ինչպես որո՞մն է հավաքվում» (ԺԳ 40), այդպես պիտի հավաքվեն մեղավորները հրեշտակների ձեռքով Քրիստոսի արքայությունից, այսինքն՝ հավատացյալների միջից, ովքեր Քրիստոսի արքայությունն են, որովհետև նրանց մեջ է կամքով թագավորում:

«Բոլոր գայթակղությունները, այսինքն՝ Արանց, ովքեր անօրենություններ են գործում» (ԺԳ 41): Գայթակղություններ են կոչվում, որովհետև գայթակղվեցին խոսքից՝ սայթաքելով Քրիստոս քարի վրա, և որովհետև շատերին գայթակղեցրին՝ չփախենալով այն խոսքից. «Ով այս փոքրիկներից

մեկին գալթակողեցնի...» (Մատթ. ԺՀ 6):

«Կզցեն կրակի հնոցի մեջ» (ԺԳ 42): *Այս խոսքով նախ ցույց է տրվում, որ այն ժամանակ են ընկնելու կրակի մեջ՝ առաջին կապված խրձերի հետ, երկրորդ՝ ցույց է տրվում, որ մահվամբ հնձվողներից հետո նաև հարություն կա, երրորդ՝ թե կան դժոխք և արքայություն:*

«Նրա արքայությունից». ինչպես մեկնեցինք՝ արդարներից և ոչ թե երկնքի արքայությունից, քանի որ այնտեղ որոմները չեն կարող մտնել, որպեսզի մյուս անգամ հավաքվեն: Երանի՛ նրան, ով այստեղ փափագում է այն ժամանակ ցորենի շեղերին խառնվել և ըստ այդ պատրաստում է իրեն, որ այնտեղ բարի սերմերի հետ հավաքվի երկնքի արքայության շտեմարանների մեջ:

«Այնտեղ կլինի լաց և ատամների կրճատում»: *Աչքը, երբ զրկվում է լույսից, թախիծից մաշվում է: Մեղավորների աչքերը զրկվում են Քրիստոսի քաղցր լույսին նայելուց, այդ պատճառով հավիտյան տիրությամբ են նայում: Թեպետ այնտեղ արցունքով չի լինում, որովհետև կերակուր և ըմպելիք չկան, բայց ցրտից ատամների կրծտում է լինում. թեպետ դժոխքում իրական ցուրտ լինում է, ինչպես Աստվածային Գիրքն է հաստատում, այստեղ այլ իմաստով է խոսում:*

«Կգեն կրակի հնոցի մեջ»: Այսինքն՝ կրակի մեջ պիտի լաց լինեն: Բացի ցրտից, ատամների կրծտում լինում է նաև սաստիկ ցավերից, որ պատճառում է կատաղի բոցը մեղավորներին, որով ոչ միայն ատամներն են կրծտեցնում, այլ նաև լեզուն կծոտում. «Հինգերորդ հրեշտակն իր սկավառակից թափեց գազանի գարի վրա, նրա թագավորությունը խավարեց, և [մարդիկ] ցավից իրենց լեզուներն էին կծոտում» (Հայտ. ԺԶ 10): Կրակն այրելիս սևացնում է. դա՛ է խավարեցնելը: Բայց [ատամների կրծտումը] նաև դժոխքում մեղավորների ունեցած բարկությունից է լինում. «Բարկությամբ շարժվելով՝ իր ատամներն ինձ վրա կրծտեցրեց» (Հոր. ԺԶ 10), «Չայրանում էին և իրենց ատամները կրծտում նրա վրա» (Գործք Է 54): Մեղավորները դժոխքում զայրանում են ոչ միայն միմյանց վրա, այլ նաև Աստծո, ուստի հայհոյում են: Մեղքն Աստծուց հեռացումը և արարածներին հարումն է, ինչ պատճառով արդարացիորեն կզրկվեն Աստծուց, ուստի լաց կլինեն և կտանջվեն արարածների կողմից, որով կկրծտեցնեն ատամները: Այս է պատճառը, որ [Տերն] այս երկու ընդհանրական պատիժներն է դնում՝ չնայած այնտեղ պատիժների բազում լինելուն:



## ԳԼՈՒԽ Զ

### ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԽՈԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջինից ավելի գերազանց առակաբան Երկրորդ Սողոմոնը, երբ արքայությունն ընդհանրապես բարի սերմի նմանեցրեց, որպեսզի ոչ ոք չտարակուսի, թե արդյոք ո՞ր սերմին է հատկապես նմանվում այն, այստեղ մանանեխի օրինակն է բերում՝ ճանապարհ հարթելով մեզ համար դեպի մյուս սերմանվածի նմանությունը.

«Երկնքի արքայությունը նման է մանանեխի հատիկի, որ մի մարդ առնելով՝ սերմանեց իր արտի մեջ» (Մատթ. Ժ. 31):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Մանանեխը, որ ժողովրդական լեզվով «հառտալ» է կոչվում, թզի սերմի նման է, որ փոքր է բոլոր սերմերից: Բայց երբ աճում է, բոլոր բան-

ջարներից ավելի է մեծանում, մինչև որ երկնքի  
թռչունները նստում են նրա ճյուղերի վրա:

Այլաբանորեն՝ [մանանեխը] մեր Տեր Հի-  
սուս Քրիստոսն է, ով խոնարհությամբ բոլոր  
մարդկանցից փոքր էր, բայց երբ մարդիկ, այ-  
սինքն՝ Հովսեփին ու Նիկոդեմոսը, վերցրին նրան  
ու թաղելով սերմաննեցին գերեզման արտում,  
հարություն առնելով՝ աճեց և մեծ ծառ դար-  
ձավ, ինչպես Կենաց ծառը՝ դրախտում:

«Եվ մեծ ճյուղեր տվեց»: Նրա ճյուղերը տաս-  
ներկու առաքյալներն էին, ովքեր աշխարհով  
մեկ տարածվեցին, և նախասահմանված հեթա-  
նոս իմաստուն թռչուններից շատերը հավա-  
տալով նրա ճյուղերի վրա թառեցին: Այս ծառը  
հույժ մեծացավ Դանիելի ծառի նման (տե՛ս Դան.  
Դ 7-9). Նրա բարձրությունը հասավ երկինք, իսկ  
լայնությունը երկրի երեսին [տարածվեց], նրա  
ներքեմ մասում գազանները՝ հեթանոսներն են  
բնակվում, իսկ ճյուղերին հրեաների թռչուն-  
ները թառում: Այս ծառի մեծ ճյուղերից մեկը  
սուրբ Պողոսն էր, որի վրա թառեց երկնային  
թռչուն Դիոնիսիոսը<sup>1</sup>:

Խորհրդապես՝ [մանանեխը] Քրիստոսի Եկե-  
ղեցին է, որովհետեւ սա մանանեխի հատիկի  
նման խիստ փոքր էր, բայց երբ այս աշխարհ

<sup>1</sup> Նկատի ունի Պողոս առաքյալի աշակերտ ս. Դիոնիսիոս Արեո-  
պագացուն:

ագարակում Քրիստոսի կողի կրկնակի վտակներով ոռոգվեց, շատ մեծացավ, սուրբ վարդապետների ճյուղերն արձակեց, որոնց վարդապետության հովանու ներքո խոնարհ մարդիկ բնակվեցին, ովքեր թռչունների նման բարձրաթռիչ էին՝ ըստ այնմ. «Թող խոնարհ եղբայրը պարծենա իր բարձրությամբ» (Բմնտ. Հակ. Ա. 9):

Բարոյականապես՝ [մանանեխը] արքայության և Սուրբ Ավետարանի խոկումն է, որը Քրիստոսի արքայության հայելին է: Երբ սա (արքայությունը - թրգմ.) խոկմամբ մարդու սրտի մեջ է ընկնում, սկզբում մանանեխի հատիկի նման փոքր է, բայց երբ ամենօրյա խոկմամբ արմատանում է, զորանում, աճում է հույժ և առաքինությունների մեծ ճյուղեր արձակում, այսինքն՝ կուսության, աղքատության, խոնարհության և հեղության, մինչև գալիս է երկնային թռչուն Քրիստոսը և հաստատվում նրա ճյուղերի վրա. «Ես ո՞ւմ մեջ եմ հանգստանալու, եթե ոչ հեզերի և խոնարհների» (Ես. Կ. 2): Եվ ուր Քրիստոսն է գալիս, գալիս են և ուրիշ թռչուններ. «Հրեշտակների բանակները շրջապատում են Նրանից երկյուղածներին» (Սաղմ. Լ. 8): Ուստի ավետարանական խոսքերը, որոնք արքայության մասին են խոսում, նմանվում են կայծի, որ մանանեխի նման փոքր է, բայց երբ ընկնում է մարդու սրտի անտառի

մեջ, մի խոսքից՝ ասես մի կայծից, բորբոքվում է Քրիստոսի սիրո հուրը և բարոյական մանանելից առաքինության ծառն է բուսնում:

Դարձյալ՝ արքայության խոկումը, որ Քրիստոսի խոսքից է բխում, անձրևների կաթիների է նման, որոնք մանանեխի հատիկից էլ փոքր են, բայց շնորհների մեծամեծ գետերի պատճառ են դառնում, որով ամբողջ Հոգին է ոռոգվում, ուստի առաքյալը հօգուտ մեզ պատվիրում է. «Վերին բաների մասին խորհնեցեք, ուր Քրիստոսը նատած է Աստծո աջ կողմում» (Կոդ. Գ.2): Նման է նաև այն աղբյուրին, որ փոքր էր, բայց Հորդեց և մեծ գետ դարձավ (տե՛ս Եսթ. Ա.10): Իսկ մանանեխի հատկությունների մասին տե՛ս Մատթեոսի ԺԴ 32-ի մեկնության մեջ: Հավատքը կլոր մանանեխի նման շարժում է դեերի լեռները, և աղավնի Հոգին թռչուններ է ընդունում:



## ԳԼՈՒԽ Է

### ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՃՈՂ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր Տերը, Սուրբ Ավետարանի աճող զորությունը, իր մեծ գութն ու ծայրագույն խնամքը մարդկանց ցույց տալ կամենալով, այս առակն ասաց.

«Երկնքի արքայությունը նման է թթվամորի, որ մի կին վերցնելով՝ դրեց երեք չափ ալյուրի մեջ, մինչև որ ամբողջը խմորվեց» (Մատթ. ԺԳ. 33):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Կնոջն է հատուկ թթվամոր հունցելը, այդ պատճառով էլ կնոջ օրինակն է բերում: «Թթվամորը» երեք բան է նշանակում: Նախ՝ մեղքերը՝ թե՛ սկզբնական և թե՛ ներգործական, որոնցով աշխարհն ապականվեց: Սրա մասին Պողոսն ասում է. «Մաքրեցնք, դեռ նետեք Բին խմորը, որպեսզի նոր զանգված լինեք» (Ա. Կորպ. Ե 7): Երկրորդ՝ [նշանակում է] ուսմունքը՝ թե՛ հրեական

և թե՛ սադովկյան<sup>1</sup>, որոնցից պետք է մեծապես զգուշանանք, ինչպես Տերն է ասում. «Զօռ’ուշ եղեք սադուկեցիների և փարիսեցիների խմորից» (Մատթ. 8:26): Երրորդ՝ [թթիսմորը] այն ավետարանական օրենքն է, որի մեջ է ծածկված արքայության խորհուրդը. այստեղ այս միտքն է նկատի առնված: Որովհետև ինչպես որ թթիսմորն է ամբողջ զանգվածն իր նման դարձնում, այնպես էլ Ավետարանն ամբողջ աշխարհը դեպի իրեն շրջեց: Թթիսմորի մեջ երեք բան կա՝ քացախ, աղ, ջուր: Այսպես՝ ավետարանական խորքերը, աստվածային իմաստության աղով համեմվելով, հին Օրենքի և մարդարեների ազդու խորհրդի քացախով և Քրիստոսի գիտության կյանքի ջրով շաղախվելով, դարձան զորեղ խմոր և ամբողջ աշխարհի զորավոր խմորիչ:

«Մի կին վերցնելով»: Այլաբանորեն՝ մեր Տեր Քրիստոսն է, որ «կին» անվանվեց: Նախ՝ որովհետև կինն այնքան գժառատ է իր զավակների նկատմամբ, որ հազվագեպ է մոռացության մատնում [նրանց], և մեր Տիրոջ գութն իր հոգեկոր զավակների հանդեպ այնքան է, որ անհ-

<sup>1</sup> Սադովկյան - այսինքն՝ սադուկեցիների, որոնց աղանդի կամ կուսակցության հիմնադիր է համարվում, ըստ հուդայական կրոնի ավանդության, ոմն Սադովկյան՝ ապրած Գ. Ա. Գոդարում: Սադուկեցիները չեն ընդունում ավանդությունները, չեն հավատում հանդերձայ կանքին, հրեշտակների գոյությանը և մեռելների հարությանը:

**Նար է, որ Նա մոռանա [նրանց].** «Մի՞թե ԿիԱԱ իր զավակիԱ կմոռանա կամ չի՞ գթա իր որովալնի ծնունդ-ներին, բայց նույնիսկ եթե Կինը սա մոռանա, Ես չեմ մոռանա ձեզ, - ասում է Տերը» (Ես. ԽԹ. 15): **Երկրորդ՝ կնոջը հատուկ է ալյուր հունցելն ու հաց թխելն իր զավակներին կերակրելու և եկած հյուրերի համար:** Աքրահամը, երբ Հիսուսն անմարմին եղած ժամանակ եկավ նրանց մոտ, իր կին Սառային ասաց. «Ծտապի՛ր, երեք գրիվ ընտիր ալյո՛ւր հունցիր և Ականակնե՛ր պատրաստիր» (ԾԱՅ. ԺՀ. 6): **Ուստի մեր Տերն էլ՝ իբրև մեկ այլ Սառա, մեզ՝ հյուրերիս,** պատվելու պարտքը վճարելով, աշխարհում խմոր վերցրեց, այսինքն՝ Ավետարանի աստվածային խոսքը, «թաքցրեց երեք գրիվ ալյուրի մեջ», այսինքն՝ իր անձի մեջ, որ կազմված է աստվածությունից, հոգուց և մարմնից, և մեզ համար նկանակներ պատրաստեց. «Առե՛ք, կերե՛ք» (Մատթ. Ի. 26): «Մինչև ամբողջը խմորվեց»: «Հացը, որ ուտում ենք, հաղորդություն չէ՞ Քրիստոսի մարմնին» (ԱԿՈՐԴ. Ժ. 16), **որով խմորվելով ամենքս էլ մի նոր զանգված ենք դառնում, այսինքն՝ Քրիստոսի խորհրդական մարմին:** Այս ամենն աստվածային խոսքն է կատարում. «Առե՛ք, կերե՛ք»: **Տեսա՞ր Ավետարանի զորությունը:**

**Խորհրդապես՝ կնոջ օրինակով եկեղեցին ի նկատի ունի, որ Քրիստոսի խորհրդական**

**Հարսն** է. «Մի կին երևաց երկնքում» (հմնտ. Հայտ. ԺԲ  
1): **Սա,** ավետարանական խոսքի ազդու խմորը  
վերցնելով, թաքցրեց գրիվների մեջ, այսինքն՝  
երեք չափ ալյուրի, աշխարհի երեք մասերում,  
որ են՝ Ասիան, Աֆրիկան և Եվրոպան, որոնք  
լցրեցին Նոյի որդիներն իրենց սերունդներով.  
**Սեմը՝ Աֆրիկան,** որից ծնվեց Քրիստոսը՝ ըստ  
այնմ. «Սա՝ Սեմի» (Ղուկ. Գ. 36), **Հաբեթը՝ Ասիան,**  
ուր նաև հայերն են, ովքեր Նոյից հույս ստա-  
ցան՝ բնակվելու Սեմի տանը (տես ԾԱՅ. Թ. 27), որով  
Քրիստոսի հավատքին հայերի կանչվելն է նշա-  
նակում, Քամն էլ՝ Եվրոպան: Քանի որ այս  
երեքն էին Նոյի որդիները, և [մարդիկ] սրան-  
ցից տարածվեցին աշխարհով մեկ, պարզ է, որ  
ամբողջ աշխարհն Ավետարանով խմորվեց, քա-  
նի որ չորրորդ գրիվն էլ, այն է՝ Ամերիկան, նա  
և սայմ սկսել է խմորվել:

Բարոյականապես՝ [կինը] յուրաքանչյուր  
մարդն է, որ հավատով Քրիստոսի հարսն է.  
«Քեզ կնշանեմ Ինձ հավատով» (ՈՎ. Բ. 20), «Կամենում  
եմ իբրև մի անբիծ կույս ձեզ Քրիստոսին ներկայացնել»  
(Բ Կորաթ. ԺԱ. 2): **Արդ,** ով հավատարիմ է և Քրիս-  
տոսի սիրելի հարսը, պետք է ավետարանական  
խոսքի ազդու և տարածվող խմորը վերցնի և  
երեք գրիվ ալյուրի մեջ թաքցնի, այսինքն՝ հո-  
գու երեք մասերի մեջ, մինչև ամբողջը խմոր-

վի, այսինքն՝ բանականը միշտ վերինը խորհի, ցասմնականը միշտ սրտմտի մեղքերի դեմ, իսկ ցանկականը սիրով միշտ դիմի առ բարին Քրիստոս։ Այսպիսին էր Դավիթը. «Քո խոսքերը սրտումս թաքցրի, որ Քո դեմ չմեղանչեմ» (Սաղմ. ԾԺԸ 11):

Եվ արդ, դո՛ւ, ո՛վ Քրիստոսին նոր հարսնացած, որ ջերմորեն սիրում ես այս խոսքը, լա՛վ հասկացիր այս խոսքի խորհրդական խմորը, որով խմորվելով հոգուդ բոլոր մասերով և սիրով միանալով քո Սիրելուն՝ Հիսուս Փեսայիդ, կլինես մի զանգված։

Դարձյալ «կին» Քրիստոսը, վերցնելով խմորը, այսինքն՝ հացը, թաքցրեց Եկեղեցում՝ բաշխելով առաքյալներին, որոնց հաղորդվելով աշխարհի երեք մասերը խմորվեցին։





## ԳԼՈՒԽ Ը

### ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՇՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աքանչելի խորհրդատու մեր Տեր Հիսուս  
Քրիստոսը, ով մինչև մահ ջանք թափեց մեր  
փրկության համար, [իր] անբավ գթությամբ ի  
սեր մեր շարժվելով, մարդկանց ամբողջ սիրտն  
այս կյանքի սուտ բարիքներով գրավված տես-  
նելով, զանազան հնարքներ և օրինակներ է  
գործադրում, որպեսզի մեզ թերեւ կարողա-  
նա համոզել երկնային ճշմարիտ և անանց բա-  
րիքները հավանելու, դրանով էլ մեր սրտերն  
այստեղից դեպի իրեն ձգելու համար։ Իմաս-  
տուններին հատուկ է ինչ-որ բան ջատագովե-  
լու ժամանակ զանազան փաստեր օգտագործել՝  
հակառակ կողմին համոզելու համար։ Այսպես  
խորամանկ սատանան, ցանկանալով հրապու-  
րել Տիրոջ միտքը, փորձության ժամանակ զա-  
նազան հնարների դիմեց։ Մեր ինամակալն ու  
մեր մանկության հոգեոր Դաստիարակը, կամե-  
նալով, որ մենք փափագենք արքայությունն ու

Ավետարանը, տարբեր առակներ և օրինակներ  
է առաջարկում, որոնցով, ասես տարբեր մրգե-  
րով, մեր մանկական միտքը գերում է՝ երկնա-  
յին ընտիր և անապական գանձը փնտրելու և  
գտնելու, [ուստի] ասում է.

«Երկնքի արքայությունը նման է ագարակի մեջ  
թաքցված գանձի» (Մատթ. ԺԳ. 44):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Արարածներիս ոչ մի այլ ցանկություն այն-  
քան սաստկապես չի տիրում և թագավորում  
մեր սրտում, որքան արծաթի նկատմամբ սե-  
րը, ինչպես որ ժողովողն է ասում. «Արծաթն է  
ամեն ինչ լուծում» (ԺՊ. Ժ19). Դրա համար Տերը՝ մեր  
սրտի ճշմարիտ Քննողը, մեր սիրտը դեպի ար-  
քայության հանդեպ սերը մեծապես շարժելու  
համար [այն] «ագարակի մեջ թաքցված գան-  
ձի» է նմանեցնում: Թե ինչքա՞ն խնդություն  
է պաշարում մարդու սիրտը, եթե իմանում է,  
որ ինչ-որ ագարակում գանձ կա, և թե ինչ-  
պիսի՝ սիրով ու եռանդով է վաճառում իր ողջ  
ունեցվածքը, հայտնի է բոլորին. Ճեռքի տակ  
պատրաստ բավական ունեցվածք չունենա էլ,

աշխատում է այն ագարակը ձեռք բերել: Այդ-  
պես պետք է նաև դո՛ւ անես, եթե իմանաս, թե  
ո՞ր ագարակում է երկնքի արքայության գան-  
ձը. աշխատի՛ր ուրեմն իմանալ, թե որտե՛ղ է:

Այլաբանորեն՝ «ագարակը» Ս. Ավետարանն  
է, իսկ նրա միջի գանձը՝ ինքը Քրիստոսը: Ով  
կամենում է այս գանձը ձեռք բերել, պետք է  
նախ սերտմամբ գնի Ավետարանը, և այդ ժա-  
մանակ կհասկանա, որ Քրիստոսի արյունն է  
նրա միջի անապական գանձը, որով մարդկու-  
թյունը գնվեց սատանայի ձեռքից. «Ոչ թե ապա-  
կանացու արծաթեղենով և ոսկեղենով փրկվեցիք հայ-  
րերից տրված ձեր ունայն ընթացքից, այլ Քրիստոսի՝  
անբիծ և անարատ Գաոհ թանկագին արյամբ» (Ա. Պետ.  
Ա. 18-19): **Եվ կամ՝** «Մորթվեցիր և Քո արյամբ գնեցիր  
մեզ Աստծո համար» (Հայտ. Ե. 9):

**Երկրորդ՝ [պետք է] սերտածը կատարել.**  
սա՝ է Ավետարան ագարակի իսկական գինը,  
որով [մարդն] իսկապես աստվածային գանձն է  
ստանում. «Նա իր արածով երանություն կգտնի» (Հայ.  
Ա. 25), «Ով պահում է իմ պատվիրանները, Ես և իմ Հայ-  
րը նրա մոտ կգանք և կօթևաննենք» (Հովհ. ԺԴ. 23): **Ահա՝**  
**թաքցված գանձը, որի մեջ են իմաստության**  
**և գիտության բոլոր գանձերը թաքցված:** Տես,  
թե ինչքա՞ն հարկավոր է Ավետարանի իմացու-  
թյունը: Վա՛յ նրանց, ովքեր նույնիսկ «Հայր

**մեր»-ը լավ չգիտեն:** Ահա այս ագարակի գինն  
է պահանջվում, որ մարդն ինչ ունի, վաճառի.  
«Գնա վաճառի՞ր քո հարստությունը, տո՞ւր աղքատնե-  
րին և երկնքում գանձեր կունենաս, և արի՛ իմ հետևից»  
(Մարկ. Ժ 21): **Մարդու հարստությունը հատկապես**  
**սեփական կամքն է, [հետեւաբար] հրաժարվի՛ր**  
**քո կամքից և հետևի՛ր Քրիստոսին:**

**Խորհրդապես՝ «ագարակը» եկեղեցին է,**  
**իսկ նրա միջի գանձը՝ աստվածային Ավետա-  
րանը.** «[Մեզ] նասան [Տիրոջ] իմաստությունը, գիտու-  
թյունը և աստվածպաշտությունը» (Ես. 1, 9, 6), **այսինքն՝**  
**Ավետարանը:** **Մրանք են արդար գանձերը:** «Երա-  
նելի է այն մարդը, ով իմաստությունը գտավ» (Առակ. 9,  
13), **այսինքն՝ Ավետարանը:** **Ով այն գտնում է,**  
**նաև գանձ է գտնում:** **Այս ագարակը գնելու**  
**համար պահանջվում է, որ մարդ ուրանա ամ-  
բարշտությունը, աշխարհական ցանկությունը**  
**և հավատքով դիմի Քրիստոսի Ընդհանրական**  
**եկեղեցուն՝ աստվածպաշտությամբ ապրելու**  
**համար:** **Եվ այդ ժամանակ կգտնի եկեղեցում**  
**պահպած ավետարանական գանձը, որը կուրա-  
ցած հրեաներն ու անհավատները չեն կարողա-  
նում գտնել, մինչև չհավատան՝ ըստ Պողոսի**  
(Բնմտ. Բ Կորնթ. Դ 4):

**Բարոյականապես՝ «ագարակը» առաքինի**  
**սիրտն է, որի մեջ է թաքնված արքայության**

**գանձը.** «Աստծո արքայությունը ձեր Աերսում է» (Ղուկ. Ժ. 21): **Ով ցանկանում է այդպիսի ագարակ ունենալ, որպեսզի տեսնի նրա միջի աստվածային գանձը, պետք է վաճառի, ասես տա ախտավոր սերը և վերցնի աստվածայինը, որով հոգին գտվելով կմաքրվի այս կյանքի մրուրից և հայելու նման կպայծառանա, և նրա մեջ կերևարքայության գանձը՝ Աստված. «Երանի՛ նրանց, ովքեր նաքուր են սրտով, որովհետև նրանք Աստծուն կտեսնեն» (Մատթ. Ե 8):**

**Դարձյալ՝ «ագարակը»** Քրիստոսի աղքատությունն է, որի մեջ է գտնվում արքայության գանձը: Եթե մեկը կամենում է գտնել այն, ապա պետք է գնի Քրիստոսի աղքատությունը՝ դառնալով հոգով աղքատ, այսինքն՝ այս կյանքի բոլոր ցանկություններից հրաժարվի, երկրավոր իդերից հեռանա և երկրային բաներից սրտով ասես դատարկ լինի. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 3):

**Երկրային բաներից դատարկ սիրտը երկնքում գանձեր ունի:** Եվ ուր նրա գանձն է՝ Քրիստոսը, այնտեղ էլ նրա սիրտը կլինի: Այդպիսին թագավորելիս էլ է աղքատ լինում, քանի որ միայն Աստծուն է փնտրում և ուրիշ ոչինչ. «Ի՞նձ համար ի՞նչ կա երկնքում, կամ Քեզնից բացի ել ի՞նչ փնտրեմ երկրի վրա, իմ սրտի՛ Աստված,

հավիտյան ինձ բաժի՞ն Աստված» (Սաղմ. ՀԲ 25-26): **Ովակելի ագահ է, թող այդ գանձի՞ն դիմի, որպեսզի թերևս հագենա ցանկության լայն բացված բերանը:** Այս գանձը նախ գերեզմանի ագարակում թաքնվեց, ապա Արարատյան դաշտը լցվեց, այժմ էլ երկնքի ագարակում է՝ վարագույրի հետեւում՝ Աստծո աջում: Ահա գանձի տեղն ասացի. ով կամենում է այն ձեռք բերել, թող աշխարհի հոգսերը վաճառի և ուխտով դիմի Ս. Երուսաղեմ քաղաքն ու Ս. Էջմիածին, որոնց միջոցով է [Հնարավոր] հավատով և սիրով մտնել երկնային Ագարակը:



## ԳԼՈՒԽ Թ

### ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդկանց որդիների մեջ գեղեցիկը՝ Հիսուսը, կամենալով մեզ իր արքայությանը սիրահար դարձնել, այն հայտնի է դարձնում թանկարժեք մարդարտի միջոցով, որն ամեն ոք ցանկանում է:

«Երկնքի արքայությունը նման է մի վաճառականի, որ գեղեցիկ մարդարիտներ է փնտրում» (Մատթ. ԺԳ. 45):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Սրա գերազանցությունը որքան առավել է, այնքան էլ բազում համեմատություններ է պահանջում, որով հնարավոր կլինի պարզաբանել և բացահայտել նրա հատկությունները: Եվ քանի որ Արքայությունն ամենագերազանցն է, ուստի մեր Տերն այն բազում բաների

է նմանեցնում՝ ճանաչեցնելու համար մեզ նրա գանազան առավելությունները, թեպետ արարածներիցս ոչինչ չի կարող իսկապես նմանվել նրան՝ ըստ այնմ. «Ինչ որ աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իրեն սիրողների համար» (Ա.Կորնթ.Բ.9):

**Նկարագրապես՝ երկնքի արքայությունը մեր Տեր Քրիստոսն է.** «Ես եմ Ծանապարհը, Ծշմարտությունը և Կյանքը» (Հովհ. ԺԴ.6): **Սա վաճառական մարդու է նման:** Նախ՝ որովհետև ինչպես վաճառականն է երկրից դուրս գալիս և այլ երկիր գնում, այսպես նաև Տերն է ասում. «Ելա Հորից և եկա աշխարհ» (Հովհ. ԺՁ.28): **Երկրորդ՝ ցանկալի ապրանքն է փնտրում. մեր Տերն էլ գեղեցիկ մարգարիտները փնտրեց:**

**Այլաբանորեն՝ «մարգարիտը» մարդու հոգին է. ինչպես որ նա է երկնքի ցողից գոյանում խեցու մեջ, այդպես էլ մարդու հոգին է,** Աստծուց ստեղծվելով, ցողի նման իջնում մարմնի մեջ. «Հոգին Աստծո մոտ այտի վերադառնա, ով տվել է այն» (ԺՊՂ.ԺԲ.7): **Եվ ինչպես նա է գեղեցիկ, այդպես էլ՝ հոգին, որովհետև ունի Աստծո պատկերը, որից առավել գեղեցիկ ոչինչ չկա:**

«Մի թանկարժեք մարգարիտ գտնելով, (այսինքն՝ մարդու հոգին)՝ վաճառեց ինչ որ ուներ» (Մատթ. ԺԳ.46): **Քրիստոսի ինչքը քաղցր կյանքն է, որ մեզ**

Համար զոհեց, ինչպես նաև անապական անբիծ արյունը, որ մեզ համար առատորեն հեղեց, որպեսզի թանկարժեք Ադամ մարգարիտը գնի, նաև այս աշխարհի ծովից եղած լուսավորյալ մարգարիտ Մարիամին՝ ըստ այնմ. «Ծովալին առատությունից՝ լուսափայլ մարգարիտ»<sup>1</sup>: Սրանով մեր Տերը լողորդի նմանվեց, որովհետև ինչպես լողորդը մարգարտի սիրուց մահն է հանձն առնում, սուզվում ծովի հատակը՝ իր տենչած մարգարիտը գտնելու համար, այսպես մեր Տերը, իր մարգարտի պատկերի սիրուց խաչը հանձն առնելով, չարչարանքների ծովը մտնելով և դժոխքի անդունդները սուզվելով, դուրս հանեց Ադամ մարգարտին՝ սերունդներով հանդերձ:

Այլաբանորեն՝ [նաև] Քրիստոսն է գեղեցիկ մարգարիտը, որ վերևից ցողի նման թափվելով ոստրանման Կույսի արգանդի մեջ՝ այնտեղից ծնվեց մեզ համար իբրև լուսավայլ մարգարիտ՝ ըստ Ներսես Շնորհալու՝ «Մարգարտի

<sup>1</sup> Բառացի մեջբերում է ս. Գրիգոր Նարեկացու՝ Տիրամորը նվիրված ներբողից, տես՝ Նարեկացի, էջ 575: Հավանաբար Աստվածամորը տրված այս մակրիների համար հիմք է ծառայել ս. Եսիփիան Կիարացու՝ Տիրամորը նվիրված գովեստը. տես՝ «Եջմիածին», 1997, Ժ, էջ 59-71: Մարիամ անվան մյուս ստոգաբանությունների մասին տես՝ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ. Գ., Երևան, 1946, էջ 249:

պես ծնունդ Կույսի, Աստված և մարդ՝ մեկ, միասին»<sup>2</sup>:

*Մարգարիտ փնտրող վաճառականներն աստվածապաշտներն են՝ ըստ այնմ. «Աստվածաշտությունը մեծ շահ է» (Ա Տիւ. Զ 6): Այսպիսիներն են, որ վաճառում են ամբողջ ունեցվածքը, այսինքն՝ երկրագոր բաներից ազատվում են Քրիստոս մարգարտին ձեռք բերելու համար, և որպես աշխարհի ցանկություններից մերկացած լողորդներ, մտնելով ավետարանական խոր իմաստների ծովի մեջ, ախտերի ալիքների հետ կովելով, ուժով հանում են անգին Մարգարիտը, ով աստվածությամբ ամբողջովին գեղեցիկ է, մարդկությամբ՝ մեղքերի արատից զերծ, և հավիտենապես՝ մեծագին. «Ամբողջովին գեղեցիկ ես, եղբորորդի՝ իմ, և ոչ մի արատ չկա քո մեջ» (Երգ Դ 7): Իսկ չարերը, աստվածապաշտությունը շահի աղբյուր համարելով, աստվածպաշտության շղարշիներքո, գործադրելով եկեղեցու խորհուրդները և ուրիշ բարեգործություններ, գանձեր են ժողովում, հաճույքներ և պատիվ փնտրում և ասում են. «Օրհնեց Տերը, և հարստացանք»: Սրանով չար վաճառականի են նմանվում, որովհետև անանց երջանկության գեղեցիկ մարգարիտը չեն փնտրում, այլ տգեղ, եղծանելի և կոտրվող խեցեղենը՝ այս ապականացու կյանքում իրենց*

<sup>2</sup> Տես ՏՅ. Ներսեսի Ծնորհալու Հայոց Կաթողիկոսի բանք չափա (Բանք չափա), Վենետիկ, 1928, էջ 89:

երջանկությունը հաստատելով հարստության,  
հաճույքների և անցավոր իշխանության մեջ:

Դարձյալ՝ խորհրդապես՝ երկնքի արքա-  
յությունն է գեղեցիկ մարգարիտը, այսինքն՝  
Աստված: Որովհետեւ եթե արեգակը, որ Աստծո  
ստեղծածն է, այնքան գեղեցիկ է, ապա Տերը,  
ով ստեղծեց այն, մեծ է հիրավի և հույժ գեղե-  
ցիկ: Ուրեմն այս աշխարհի վաճառականները  
թող [աշխարհի] լուսավոր մարգարտի գեղեց-  
կությամբ խարվելով, չվաճառե՛ն իրենց ունեց-  
վածքը հեթանոսներին, այսինքն՝ իրենց միտքը  
չգերեն [այս աշխարհի] պաշտամունքով, այլ  
իրենց սիրտն ու խորհուրդներն ուղղեն դրա  
Արարչի պաշտամունքին և սիրուն՝ գիտակցե-  
լով, որ ով գեղեցկության ձարտարապետն է,  
Նա՛ հաստատեց այն, և Նրա գեղեցկությունն  
այնքան է, որ ով մեկ անգամ արժանանա տես-  
նելու Նրան, այնպես կգրավվի Նրա սիրտը և  
միտքը կգերվի Նրա գեղեցկությամբ, որ իր  
մտքի աչքը հավիտյան այնտեղից չի կարողա-  
նա հեռացնել: Այս մտքով է ասվում. «Ձեր ուրա-  
խությունը ձեզանից ոչ ոք չի խլի» (Հովհ. ԺԶ 22), և թե՝  
«Նրանց հրեշտակները շարունակ տեսնում են իմ Հոր  
երեսը, որ երկնքում է» (Մատթ. ԺՀ 10): **Ուստի ասաց.**  
«Ցո՞ւց տուր մեզ Հորը, և դա բավական է մեզ» (Հովհ. ԺԴ  
8): **Հետեաբար շտապենք այս անգին մարգարի-**

**տը գնել՝ կոխոտելով ինչ որ ոտքերի մոտ է:**

Բարոյականապես՝ գեղեցիկ մարգարիտ է իմաստությունը կամ Ավետարանը՝ ըստ այնմ. «Ավելի պատվական է, քան թաճկարժեք քարերը» (Առակ. Հ. 11, Գ. 15). **Եթե սա ձեռք ենք բերում, հարստանում ենք բոլոր առաքինություններով.** «Եթե մեկն արդարություն սիրի, նրա վաստակներն առաքինություններն են» (Խմաստ. Հ. 7): **Բայց սա ստանալու համար պետք է ամեն հաճույք և ծուլություն վաճառենք.** «Դի՛ր քո ոտքը նրա ոտնակապերի մեջ և քո պարանոցը՝ նրա շղթաների մեջ» (Սիր. Զ. 25):

Նմանապես գեղեցիկ մարգարիտ է ճշմարիտ բարեկամը, ում ձեռք բերելու համար ունեցվածքը ոչ միայն չպետք է խնայենք, այլև ամբողջը տանք՝ ըստ այնմ. «Ծախսի՛ր արծաթդ քո բարեկամի վրա» (Սիր. Իթ. 13): **Որքա՛ն երանի ճշմարիտ [բարեկամին] գտնողին:**



## ԳԼՈՒԽ Ժ

### ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ՝ ԱՄԵՆ ԻՆՉ ԳՐԱՎՈՂ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր Տերը, ցանկանալով ցույց տալ մեզ արքայության կամ Ավետարանի՝ ամեն ինչի վրա տարածվող զորությունը, ասում է.

«Երկնքի արքայությունը նման է ուռկանի» (Մատթ. ԺԳ 47):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ երկնքի արքայության խոկումն է նման ուռկանի: Ինչպես որ ուռկանն է անզերծանելի ձեռվ պաշարում այն, ինչ բռնում է, այդպես էլ արքայության խոկումն է այնպես գրավում մարդու սիրտը, ուր ընկնում է, որ անհնարին է լինում, որ սիրտը նրանից խուսափի: Քանի որ երբ ճշմարիտն է ներկայացվում մտքին և բարին՝ կամքին, երկնքի ար-

քայությունն անունով և իրապես ընդհանուր բարին լինելով, որանով մեր միտքը պաշարում է, կամքն էլ իր հավանությունը տալիս։ Անհնար է այդ բարին ինքնակամորեն թողնել, եթե ոչ՝ վրիպմամբ, որովհետև եթե կեղծ բարին կարողանում է ուռկանի նման մարդու սիրտը գրավել, ինչպիսին է, [օրինակ], կնոջ ցանկությունը, որ հափշտակում է անգգամների սիրտն ուռկանի նման, ինչպես Սողոմոնն է ասում. «... Կնոջով հանդերձ, ով թակարդ է, և նրա սիրտը՝ ուռկան» (ժող. է: 27), ապա ինչքա՞ն առավել իսկական բարին, որի ցանկության ուռկանն ամբողջ աշխարհը գեղի իրեն գրավեց, քանզի գրեթե բոլոր ազգերը գիմում են Աստծո արքայությանը՝ ջատագովելով այն։

Խորհրդապես՝ [ուռկանը] Քրիստոսի Ավետարանն է, որովհետև որսորդներն առաքյալներն ու վարդապետներն են։ Ուռկանը Սուրբ Ավետարանն է, ծովը՝ այս աշխարհը, ձկները՝ մարդիկ՝ ըստ այնմ. «Ահա Ես ուղարկում եմ բազում ձկնորսներ», - ասում է Տերը. դրանք առաքյալներն են. դրանից հետո «բազում որսորդներ կուղարկեմ». սրանք վարդապետներն են. «և նրանց կորսան լեռների, բոլոր բլուրների և ժայռների ծերպերի վոյա» (Երեմ. Ժ. 16): Այսպես Պետրոս առաքյալը, ավետարանական ուռկանը մեկ անգամ այս աշխարհի ծո-

վը գցելով, երեք հազար ձկներ մահից կյանք փոխադրեց (տե՛ս Գործք Բ 41), որը խորհրդանշելով էր, որ Տիրոջ հրամանով ուռկանը ծովը գցելով, հարյուր հիսուներեք մեծ ձկները հանեց (տե՛ս Հովհ. ԻԱ 11): ցույց տալով, որ երեք հիսուններից, այսինքն՝ այս աշխարհի երեք մասերից, ի վասս երեքանձնյա էության, մարդիկ պիտի որսան կյանքի համար, ինչ պատճառով Տերն ասաց. «Սրանից հետո մարդիկ եք որսալու կյանքի համար» (տե՛ս Ղուկ. Ե 10):

«Որ ամեն տեսակ բան է հավաքել»: Երբ ուռկանը նետվում է ծովը, ոչ միայն ձկներ, այլ նաև զանազան գեռուններ է բռնում, այսպես էլ Ավետարանը ոչ միայն հրեաներին, այլ նաև հեթանոսներին բռնեց, ինչը Պետրոսի տեսիլքի մեջ ցույց տրվեց, որում հրամայվեց մորթել և ուտել (տե՛ս Գործք Ժ 13):

«Լավերը հավաքեցին ամանների մեջ» (ԺԳ 48): «Լավերը» ընտրյալ սրբերն են, «ամանը»՝ երկնքի արքայությունը կամ երկինքը: Զինվորյալ Եկեղեցում շատերն են բռնված կամ կանչված, իսկ որպես Հաղթանակած [Եկեղեցու] համար քչերն են ընտրվում, որովհետև ցորենը քիչ է հարդի համեմատությամբ:

«Այդպես կլինի աշխարհի վախճանին» (ԺԳ 49): Ցույց է տալիս, որ բարիների և չարերի կա-

*տարյալ զատորոշումը վախճանին է լինելու.  
այստեղ մենք պետք է մեծ երկյուղ ունենանք,  
գուցե խոտան գտնվենք, որովհետև քչերն են  
ընտրյալներ. ուստի պետք է ջանանք բարի  
գործերով մեր կոչումն ու ընտրությունը հաս-  
տառուն պահել:*

«Այնտեղ կլինի լաց և ատամների կրծտում» (ԺԳ.50):  
*Արա մասին տե՛ս Արտի որոմների առակի մեջ:*



## ԳԼՈՒԽ ԺԱ

### ԹԵ ՈՐՔԱՆ ՀԱՐԿԱՎՈՐ Է ՆԵՐԵԼ ԵՂԲՈՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ

Ոչ ոք չի կարող Աստծո արքայությունը ժառանգել առանց Նրա ողորմության, իսկ Աստծո գերազույն ողորմությունը գտնելու համար, որով արքայությանն ենք արժանանում, պետք է դրան նախընթաց ողորմությանն արժանանք, որ արեգակի նման մեր կյանքի առավոտից մինչև մահվան երեկոն անընդհատ ծագում է մեզ վրա՝ ըստ այնմ. «Ամեն նոր առավոտի հետ մեծանում է Քո ողորմությունը, Տե՛ր» (Ողբ. Գ 23): Արդ, այսպիսի ողորմության կարժանանանք, եթե մենք էլ, ըստ մեր կարողության, մեր եղբայրներին ողորմենք, որ երկու ձեռվ է լինում: Նախ՝ եղբոր կամ քրոջ կարիքները հոգալով, թե՛ հոգեոր, ինչպիսին են տղետներին ուսուցանելը, մեղավորներին խրատելը և այլն, և թե՛ մարմնավոր, ինչպիսին են քաղցածներին կերակրելը, մերկերին հազցնելը և այլն: Երկրորդ՝ պարտքերը թողնելով՝ թե՛ հոգեոր, ինչպիսին են բամբասանքներն ու զրպարտությունները և

այլն, և թե՛ մարմնավոր, ինչպիսին են զրկանքները, վնասները և այլն: Առաջինի, այսինքն՝ կարիքները հոգալու կարողություն բոլորը չունեն, իսկ երկրորդի, այսինքն՝ հանցանքները սրտանց ներելու կարողություն բոլորն էլ ունեն, և սա խիստ հարկավոր է: Առանց սրա անհնար է Աստծո վերջնական ողորմությունը գտնել, ինչ պատճառով մեր ներողամիտ Փրկիչն իրեն հետևողներին զգուշացնելու համար այս առակն ասաց.

«Ուստի երկնքի արքայությունը նմանվեց մի թագավորի, ով կամեցավ իր ծառաների հետ իր հաշիվները պարզել» (Մատթ. ԺՀ 23):

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Համեմատելով՝ [ասենք, որ] շատ տեղերում թագավորները վաճառականներ ունեն, ինչպես որ Եվրոպայում է, ովքեր իրենց արքունական գանձերից տալիս են ծառաներին՝ շահեցնելու համար, իսկ հաշիվը պարզելիս, եթե [ծառան] վատնած է լինում, ամենայն արդարությամբ հրամայում են վաճառել նրան, կնոջն ու որդիներին և այլն, որովհետեւ նրանց միջոցով է արքունական գանձի վատնումը լինում: Եվ քանի որ արքունական գանձ վատնելը թեթև

բան չէ, [դրա հաշիվը] խստորեն է պահանջվում. նաև քաղաքացիական օրենքն էր հնում հրամայում չքավոր պարտապանների որդիներին ստրկացնել. «Պարտատերը եկել է, որ իմ երկու որդիներին որպես ծառա տանի իր մոտ» (Դ Թագ. Դ 1): Արդ, գթառատ թագավորի հաշիվները պարզելու ժամանակ ինչ որ պատահեց տասը հազար քանքար պարտք ունեցող պարտապանին, նույնը հոգեկորապես պատահելու է չար մեղավորին երկնավոր թագավորի քննության ժամանակ, եթե [թագավորը] նրա անգթության օրինակով շարժվի:

Հոգեկորապես՝ երկնքի արքայությունն այստեղ երկնավոր Հայրն է, որով է կազմվում արքայությունը. Նա թագավորի նման Հոգու շնորհների քանքարները բաժանում է իր ծառաներին՝ ըստ յուրաքանչյուրի կարողության: Եվ երբ կամենում է հաշիվները պարզել, ոմանց խոնարհեցնում է, ոմանց՝ պատժում, ոմանց էլ՝ փառավորում, մեծ արդարությամբ, որն այստեղ չենք կարող հասկանալ:

«Տասը հազար քանքարի մի պարտապան բերվեց»: Տասը հազար քանքարը աստվածային շնորհներն են. միայն մեկ մեղքի պատճառով մարդ պարտապան է դառնում տասը հազար քանքարի, այսինքն՝ Աստծո շնորհներին և պարգե-

ներին, ինչպիսին են ստեղծումը, նորոգումը և լուսավորումը, որոնք ավելին են, քան աշխարհի բոլոր գանձերը:

Դարձյալ՝ տասը հազար քանքարն Աստծո պատիվն է, որովհետեւ մարդ մեղանչելով՝ Աստծուն է արհամարհում, որով անթիվ քանքարների պարտապան է դառնում, քանի որ մեղանչում է Անհունի դեմ. «Օրենքը խախտելով՝ Աստծուն է անարգում» (Հոդ. Բ 23). իմ ծառան անարդեց ինձ, որը քրեական հանցանք է:

Դարձյալ՝ մարդ մեղանչելով՝ Քրիստոսի երախտիքն է արհամարհում, որով բյուրավոր քանքարների է պարտապան դառնում. «Աստծո Որդուն ոտնահարում են» (Երր. Ժ 29):

«Եվ քանի որ նա վճարելու բան չուներ, նրա տերը հրամայեց վաճառել նրան» (Ժ 25): *Մեղքն այնպես է մարդու բարի արդյունքները կողոպտում,* որ բոլորովին դատարկ և չքավոր է թողնում, ինչպես որ անառակ որդու մասին է ասվում, որ չքավոր դարձավ (տե՛ս Ղուկ. Ժ 14): «Բոլոր արդար գործերը, որ նա կատարեց, չեն հիշվի» (Եզեկ. Ժ 24):  
*Եվ այստեղ տերը տեսավ, որ [պարտապանը]* հատուցելու բան չուներ (իսկ մեծ չարիք է, որ [մեկը] վերցնում է և անհամար քանքարների պարտապան դառնում), «հրամայեց վաճառել»:  
*Անակը, երբ Խոսրովի դեմ մեղանչեց, [վերջինս]*

Հրամայեց [նրան] ընտանիքով հանդերձ կոտորել։ Աքարը, երբ մեղանչեց՝ նզովքի տակ ընկնելով, Տերը Հեսուսին հրամայեց նույնն անել<sup>2</sup>։ Միայն նաբաղը մեղանչեց Դավթի նկատմամբ, բայց [Աստված] երդվեց նրա տանից պատին միզող ոչ ոքի չթողնել (տե՛ս Ա. Թագ. ԻԵ 22)։ Այսպես Դաթանը, Աբիրոնը և մյուսներն իրենց տոհմով բնաջնջվեցին (տե՛ս ԹՎ. ԺԶ 32)։ Միայն Դավիթը մեղանչեց, բայց նրա պատճառով շատերը պատժվեցին (տե՛ս Բ. Թագ. ԻԴ 15)։ Աստծո բարկությունը տարածվում է ոչ միայն ամբարիշտների ներկա սերունդների վրա, այլև հաջորդների՝ մինչև չորրորդ սերունդ, իսկ ողորմությունը՝ մինչև հազար (տե՛ս Ելք Լ.Դ 7), ուստի Սուրբ Գիրքն ասում է. «Ամբարիշտների որդիները թերակատար են լինելու» (Ինաստ. Գ. 16), և թե՝ «Որդիներ եք ծնում անեծքի համար, և անգութ հոր պատճառով որդիներն են փնտրվում, որովհետո նրա պատճառով են նախատինք կրում» (Սիր. ԽԱ 12, 10)։ Պատճառն այն է, որ Աստված արդարությամբ է վարվում նրանց որդիների հետ՝ թողնելով ընթանալ ըստ իրենց բնության, ընդհանուր չնորհներով, և քանի որ ապականված բնությունը չի կարող շատ արդյունք տալ, ուս-

<sup>1</sup>Տե՛ս Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբարթարգմանությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդանի, Երևան, 1983, Էջ 33:

<sup>2</sup>Բնագրում «Մովսեսին», որը հավանաբար վրիպակ է. պետք է լինի՝ Հետու. տե՛ս Հետու Է 25:

տի արդարապես է պատժի տակ ընկնում։ Այս խոսքով ճշմարիտ է դառնում այն, որ ասվում է։ «Ով մեղանչում է, առ Էլ կմեռմի» (Եղեկ. ԺՀ 4):

Որովհետև ոչ թե որդին անմեղ է և հոր մեղքերի պատճառով է գատապարտվում, այլ իր մասնավոր մեղքերի, որոնք կամ հորից սովորեց, կամ անձամբ հավելեց հոր մեղքերի վրա։ Բայց ամբարիշտների ծնունդների մեջ պատահում է նախասահմանված մեկը նախատեսված արդյունքներից, ով չնորհով փրկվում է։ Այսպիսին էին մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Կուռնելիոս հարյուրապետը, Հովսեփ Արեմաթացին և ուրիշներ։ Աստված արդարացիորեն է մեղավորներին սատանայի ձեռքը մատնում, որովհետև ոմանց ստեղծմամբ իբրև ծառա ունի, իսկ ոմանց գնել է արյամբ, և նրանք քանքարներ և շնորհներ վատնողներ են։

«Եվ ծառան երկրպագում էր նրան և ասում. «Համբերո՛ղ եղիր իմ հանդեպ, և բոլորը կվճարեմ քեզ» (ԺՀ 26): Մեղավորը պարտքի բոլոր քանքարները կարող է մի կաթիլ արտասուքով վճարել՝ խառնելով Քրիստոսի կողի արյանը. այլ ձևով անհնար է [վճարել], ինչպես որ Մագդաղենացին<sup>3</sup> տասը

<sup>3</sup> Ղուկասի Ավետարանի է 37-50 համարներում ավետարանիշը պատմում է, թե ինչպես է մի մեղավոր կին իր արցունքներով թրջում Տիրոջ ուրերք, համբուրում և լուղով օծում առանց նշելու այդ մեղավոր կնոշ անունը։ Ինչպես տեսնում ենք, Բերդումյանն իր աշխատության մեջ տախս է Մարիամ Մագդաղենացու անունը։ Սուրբքային այս հասովածի մեկիշները տարակարծիք են այս հարցում։ Ոմանք պնդում են, որ Ղուկասի հիշատակած

## **Հազար քանքարների պարտքը արցունքներով**

մեղավոր կնճը Մարիամ Մագդաղենացին էր, ոմանք՝ առքաս Ղազարոսի քոյր Մարիամը, ոմանք էլ պարզապես չեն մասնավորեցնում մեղավոր կնօշ ով լինելը: Մաղաքիա արք. Օրմանյանը, բացարձելով ավետարանական այս հատվածը, նշում է, որ պետք է հաստակորեն զանազանել մեղավոր կնօշ կողմից Հիսուսին օծելը Ղազարոսի քոյր Մարիամի կողմից Տիրոջը օծելուց (տես Մատթ. ԻԶ 6-13, Մարկ. ԺԴ 3-9, Հովհ. ԺԲ 3) և անգամ զարմանում, թե ինչպես են հնում մեկնշներն այս երկու դեպքերը շփոթել իրար: Նա նաև հավելում է, որ մեղավոր կնճը Մարիամ Մագդաղենացին չէ, քանզի պատես լատիներն են մեկնաբանում միսամամբ երկու դեպքերն իրար միացնելով. տես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Համապատում, Անթիլիաս, 1983, էջ 143-146, հմմտ. Harper's Bible Commentary, Harper & Row, Publishers, San Francisco, 1988, p. 1024, A. R. C. Leane, A Commentary on the Gospel according to St. Luke, London, 1976, 146-147: Իգնատիոս Սկլետոնցին (ԺԲ-ԺԳ դդ.) Ղոկասի Ավետարանի իր մեկնության մեջ նույնպես ընդգծում է մեղավոր կնօշ և Ղազարոսի քոյր Մարիամի զանազանության մասին, սակայն ոչինչ չի ասու մեղավոր կնօշ անձի մասին, տես Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղոկասու (=ՄՍԱՂ), արարեալ տոքք Վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց Կաթոլիկոսի, Կ. Պոլիս, 1824, էջ 145-147: Մեղավոր կնօշ ով լիմելու մասին որևէ հշում չինչ նաև Սարգիս Կունդին իր Ղոկասի Ավետարանի մեկնության մեջ. տես Մարգիս Կունդ (ԺԲ դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղոկասու, աշխատամիրությամբ Եզրիկ եսիսկոպոս Պետրոսանի, Մայր Աթոռ Սույրք Էջմիածին, 2005, էջ 193: Բայց Բարտեղ Մաշկուրցին (ԺԳ-ԺԴ դդ.) իր Մարկոսի Ավետարանի մեկնության մեջ հաստակորեն նշում է, որ Ղոկասի միշտառակած մեղավոր կնճը հենց Մարիամ Մագդաղենացին է. տես Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի, արարեալ երանելոյն Բարտեղ շնորհալի Վարդապետի Ծնն կրչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն լուսաւոր մտօք և իմաստալի յորդորակօք, հատոր երկրորդ, Կոստանդինոսպոլիս, 1826, էջ 250: Նույն այս տեսակետին ենք հանդիպում նաև Հովհաննես Ծործորեցու Մատթեոսի Ավետարանի մեկնության շարունակության մեջ, տես ՄՍԱՄ, էջ 546-547:

**Հատուցեց և լսեց.** «Քո մեղքերը ներված կլինեն» (տե՛ս Ղուկ. է՛ 48):

«Տերը, գթալով այն ծառալին, արձակեց նրան և պարտքը շնորհեց նրան» (ԺՀ 27): **Այստեղ խոնարի աղոթքների մեծ զորությունն է ցույց տրվում,** քանզի ի՞նչը քանքարապահանջ բարկացած թագավորի սիրտը փոխեց հեղության և գթության, եթե ոչ ծառայի՝ խոնարհ երկրպագությամբ աղերսելը: Եթե կամենում ես դո՛ւ էլ քո պարտքերի շնորհումը ստանալ՝ երկնավոր Արքայի գթությունը շարժելով, խոնարհ ծնրադրությամբ աղո՛թք արա և երկնավոր Հոր անհուն գթությունը մտաքերիր, թե ինչպե՞ս մեղավորի մեկ ապաշխարությամբ այնքան պարտքերի ներում շնորհում. «Քո ողորմությունները, Տե՛ր, նավիտյան պիտի օրինեն» (Սաղմ. ԶՀ 1):

«Եվ ծառան, դուրս գալով, գտավ իր ծառալակից-ներից մեկին, ով իրեն հարյուր դահնեկան էր պարտք» (ԺՀ 28): **Սրանով Տերը ցույց է տալիս, թե որքա՛ն պարտք կարող են ունենալ մարդիկ միմյանց հանդեպ այն պարտքի հետ համեմատած, որ կարող են ունենալ Աստծո հանդեպ. սա այնպես է, ինչպես հարյուր դահեկանը տասը հազար քանքարի համեմատությամբ:** Տե՛ս դու այստեղ մարդուս փոքրոգությունը և Աստծո մեծասրտությունը: Նա մեկ անգամ աղաչելու դիմաց

տասը հազար քանքարի պարտք է շնորհում,  
իսկ կան որոշ խստամիրտներ, ում եթե նույ-  
նիսկ տասը հազար անգամ աղաչեն, մեկ դահե-  
կան իսկ չեն շնորհում: Այդպիսին է քանքարը  
կորցրած այս չար ծառան. այնքան հիմար է, որ  
մինչև անգամ չմտածեց. «Քանի որ սա իմ ծա-  
ռայակիցն է, ապա տերն ինչպիսի խնամք որ իմ  
նկատմամբ ցույց տվեց, նմանատիպ խնամք ու-  
նի սրա նկատմամբ. գուցե իմ արարքների մա-  
սին լսելով՝ տերը տրտմի կամ զայրանա»: Քա-  
նի դեռ սա ծանր պարտքերի տակ էր, ոխը նիր-  
հած էր, բայց երբ [պարտքից] ազատվեց, [ոխը]  
բորբոքվեց, մինչև որ իր ծառայակցին մատնեց  
դահճին և բանտ գցեց: Այսպիսին են որոշ չար  
աշխարհականներ կամ եկեղեցականներ, ովքեր  
քանի դեռ ծանր պարտքերի տակ են, այսինքն՝  
սովորական մարդկանցից մեկն են, երբ ոման-  
ցից վնաս են ստանում, օձի նման թույնի պես  
այն իրենց իժանման սրտերում են պահում, և  
երբ [ինչ-որ] պատվի են հասնում, այն ժամա-  
նակ սկսում են իրենց հանդեպ մեղանչածնե-  
րին խեղդել, նեղել, աքսորել, դահճին մատնել  
և բանտ գցել: Այսպիսիների մասին է ասվում.  
«Հիշի՛ր Բարձրյալի դատաստանը և անտեսի՛ր մերձա-  
վորի տգիտությունը» (Սիր. ԻԸ 9):

**Անոխակալները նման են աղավնիների,**

որոնք լեղի չունեն: Այսպիսին էր Տերը, որ բամբասանքի ենթարկվելով և չարչարվելով՝ ուս չէր պահում և խաչի վրա ասում էր. «Հա՛յր, Անրի՛ր Յրանց» (Ղուկ. հ 9. 34): Շատերն են [ոխակալներին] ամբաստանում՝ հրեշտակները և ծառայակիցները, և գթած Տերը լսում է նրանց ամբաստանությունները:

«Ծառայակիցները, տեսնելով եղածը, պատմեցին տիրոջը» (ԺԸ 31): Բարեպաշտները, երբ տեսնում են, որ ոխակալները և անիրավները խեղդում են իրենց պարտապաններին, հիրավի խիստ տրտումում են՝ ըստ այնմ. «Մաշվում էի նայելով անդուրմներին, քանզի Քո պատվիրանները չպահեցին» (Սաղմ. ԾԺԸ 158): Նաև ամբաստանում են, ինչպես երկում է Եղիայի, Երեմիայի, Դավթի և մյուսների օրինակներից. Նրանցից ոմանք ամբաստանում են մեղավորներին, ոմանք էլ՝ անիծում, նաև սուրբերն են երկնքում ամբաստանում:

«Այն ժամանակ նրա տերը կանչեց նրան և ասաց. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ» (ԺԸ 32): Թեպետ բոլոր մեղավորները չար են, ըստ սուրբ Դիոնիսիոսի, բայց «չար» անունը խստասիրտներին ավելի է պատշաճում, որովհետև բարու հատկությունն է իրեն մյուսներին հաղորդակից դարձնելը<sup>4</sup>,

<sup>4</sup> Հմմտ. Dionysius, p. 153-154:

որը սիրով և գթասրտությամբ է լինում: Իսկ ով չի ներում իր եղբորը, ո՞չ գութ ունի, ո՞չ էլ սեր, և այսպես «բարի» անունից զրկվում է և չարի կերպարանքն առնում:

«Ամբողջ պարտքը քեզ շնորհեցի»: Այստեղից երկու բան ենք սովորում. նախ՝ ով աղաչում է Տիրոջը, [Վերջինս] նրա բոլոր պարտքերը ներում է. երկրորդ՝ եթե մեկն աղաչում է մեզ, մենք էլ ենք պարտավոր նրա բոլոր պարտքերը թողնել, ուստի ասում է. «Իսկ պետք չէ՞ր, որ դու ել քո ծառայակցին գթալիր, ինչպես ես քեզ գթացի» (ԺՀ 33):

Եթե դատաստանն արդարությամբ է լինում, հակառակորդը կամ պարտապանը չեն կարող խույս տալ, ուստի [տերը] չար ծառային հարցրեց, բայց [նա] չկարողացավ պատասխանել, որովհետև ճշմարտությունը բռնադատում է համառողների անհավան միտքը: Քանզի ինչպես աչքը չի կարող լույսը խավար կոչել, այսպես ոչ էլ միտքը՝ ճշմարիտը՝ սուտ: Այդ պատճառով էլ հերձվածողները միայն արտաքուստ են մարտնչում ճշմարտության դեմ:

«Եվ նրա տերը բարկանալով՝ նրան հանձնեց դահիճներին, մինչև պարտքը հատուցեր» (ԺՀ 34): Աստված մեր աղաչելու դեպքում ներում է մեր մեղքերը, սակայն եղբոր մեղքերը մեր ներելու

պայմանով։ Իսկ եթե մենք չենք ներում, մերն էլ չեն ներվում։ Ինչպես որ Նինվեի կործանման հարցն [Աստված նինվեացիների] ապաշխարությամբ պայմանավորեց, և երբ ապաշխարեցին, [Նինվեն] չկործանեց (տե՛ս Հովհ. Գ 10)։ Այս պատճառով էլ վախճանին [մեր] չներված պարտքը պահանջելու է՝ մատնելով [մեզ] դահիճ դևերին, մինչև հատուցենք։ Սակայն ո՞վ կարող է տասը հազար քանքար վճարել, [որը չանելու պատճառով] հավիտյան պիտի տանջվի։ Մեր Տերը «Հայր մեր»-ի մեջ սովորեցրեց. «Թող մեզ մեր պարտքերը, ինչպես մենք ենք թողնում մեր պարտապաններին» (Մատթ. Զ 12)՝ ցույց տալով, որ առանց եղբօրը ներելու անհնար է ներում գտնել, ուստի [առակը] եղրափակում է՝ [ասելով]։ «Նույնը պիտի անի ձեզ իմ Հայրը, եթե ձեզանից յուրաքանչյուրը սրտանց չների իր եղբոր հանցանքնեռը» (ԺՀ 35):



## ԳԼՈՒԽ ԺԲ

### ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՐՈՊԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՍԻՐՈՎ, ՔԱՆ ՏԱՐԵԿԱՆՆ ԱՌԱՆՑ ՍԻՐՈ

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը ցույց տալու համար, թե որքա՞ն արդյունավետ է Տիրոջ փառքի համար սիրով աշխատելը, այս առակն ասաց.

«Որովհետև երկնքի արքայությունը նման է մի տանուտերի, ով առավոտյան ելավ իր այգու համար մշակներ վարձելու» (Մատթ. հ 1):

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ այս տանուտերը, ինչպես խոսքի ընթացքն է ցույց տալիս, շատ գիտած էր, առատաճեռն, ինչպես նաև՝ հոգատար։ Հոգատար էր, որովհետև առավոտից մինչև մոտ տասնմեկերորդ ժամը<sup>1</sup> ծույլի նման տանը չմնաց,

<sup>1</sup> Հիսոս Քրիստոսի ժամանակ հրեաների մոտ օրը բաժանվում էր 12 մասի՝ սկսելով արևածագից մինչև արևամուտ։ Սա նկատի ունենալով է Տերն ասում. «Ցերեկը տասներկու ժամ չունի»

այլ անընդհատ ելավ մշակների որոնելու, որպեսզի իր գործն առաջ տանի: Այսպես պետք է վարվեն բոլոր գործարարներն իրենց գործն առաջ տանելու համար: Գթած էր, որովհետև տասնմեկերրորդ ժամին հրապարակում անգործ ընկածներին գթածաբար հանդիմանում էր և այդի ուղարկում. այս ձեռվ հանդիմանելը գթության գործ է: Նաև առատաձեռն էր, որովհետև այն երեկոյան մշակներին առատաձեռնորեն վարձատրեց, որի չնորհիվ արժանի գարձավ նմանվելու երկնային Տանուտիրոջը: Վա՛յ խստասիրտ և զրկող տանուտերերին, որոնք վշտացնում են իրենց աշխատողներին՝ կա՛մ վարձն ուշացնելով, կա՛մ էլ ամբողջը չտալով:

Խորհրդապես՝ Արքայությունը բովանդակող Երկնքի Արքան է: «Նման է մի տանուտերի, որ առավոտյան ելավ [իր ալգոր համար մշակներ] վարձելու»:

Այսինքն՝ Աստված, տանուտիրոջ նման, աշ-

(Հովհ. ԺԱ, 9): Այն ժամանակ ժամերի բաժանումն ասորվա հստակությունը չուներ, քանզի մեկ ժամը 60 րոպե չէր: Տարվա եղանակի հետ կապված՝ այն փոփոխական էր: Օրը բաժանվում էր 3 մասի՝ առավոտ, կեսօր և երեկո, որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր մասերի: Ավետարանում հիշատակված ժամերն այսօրվա հասկացությամբ հետևյան են.

1. Երրորդ ժամը առավոտյան ժամը շուրջ 9-6 էր,
2. Վեցերորդ ժամը՝ շուրջ 12-ը,
3. ինըերորդ ժամը՝ ցերեկվա շուրջ 3-ը,
4. տասներկուերորդ երեկոյան շուրջ 6-ը:

Ուստի աս առակում հիշատակված տասնմեկերրորդ ժամը մերօրյա շուրջ ժամը 5-6 է:

իսարհի սկզբի առավոտյան, երբ եղեմը տնկեց,  
այնտեղ բերեց մշակ Աղամին: Առավոտից  
մինչև երրորդ ժամը Աղամից մինչև նոյն է,  
երրորդից վեցը՝ նոյից Աքրահամ, վեցից ինը՝  
Աքրահամից մինչև Մովսես, իննից տասնմեկե-  
րորդը՝ Մովսեսից մինչև Քրիստոս, տասնմեկից  
տասներկուսը՝ Քրիստոսից մինչև [աշխարհի]  
վախճանը: Արդ, ստեղծումից մինչև վախճան  
իբրև մեկ օր է դնում, որովհետև Տիրոջ աշ-  
քում հազար տարին իբրև մեկ օր է (տե՛ս Բ. Պետ. Գ.  
8)՝ ըստ այնմ. «Հազար տարին Տիրոջ աշքում երեկվա  
օրվա պես է, որ անցավ» (Սաղմ. Զթ 4): **Բայց որպես-**  
**զի օրը մեծ չհամարեն, դրանից էլ փոքր մաս է**  
**դնում՝ «ինչպես գիշերվա մեկ պահ»** (Սաղմ. Զթ 4): **Տե՛ս**  
**այստեղ մարդու հանդեպ Աստծո անչափ ողոր-**  
**մությունն ու սերը, որ այս աշխարհի սկզբից**  
**մինչև վերջը մեծ նախախնամությամբ կանչում**  
**է անհավատության ծուլության մեջ ընկածնե-**  
**րին եկեղեցու և աշխարհի այգին՝ Տիրոջ գործը**  
**կատարելու, որպեսզի իրեն տեսնելու դահեկա-**  
**նին արժանանան:** Ուստի իրավամբ ասաց Ժո-  
ղովողը. «Բոլորի վրա թագավորն է, ով տիրում է մշակ-  
վող հողի վրա» (Ժող. Ե 8): **Այսպես էլ Տերը, ցույց**  
**տալու համար Հոր անչափ գթությունը, ասում**  
**է. «Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ես ևս գործում եմ»**  
(Հովհ. Ե 17): **Երանի՛ նրանց, ովքեր մտել են ոչ թե**

*Տիրոջ այգին, այլ ջերմեռանդորեն աշխատում  
են նրա մեջ:*

«Եվ շուրջ տասնմեկերորդ ժամին ելնելով՝ ու-  
րիշների գտավ, որ պարապ կանգնել էին, և ասաց.  
«Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»:  
Պատախանեցին. «[Մեզ] ոչ ոք չվարձեց» (հ 6): Քա-  
նի որ Մովսիսական Օրենքը կատարյալը բնավ  
չգործեց և նրա միջոցով բարձրագույն հույսը  
չմատուցվեց, ուստի Քրիստոսի գալստյան մոտ  
[Հրեաների] ուղերն ու ձեռքերը թուլացան՝  
ըստ Եսայու (տե՛ս Ես. ԼԵ 3), այդ պատճառով էլ  
ասես պարապ կանգնել էին հրապարակներում:  
Որովհետև հուսալքությունը նեղում է մար-  
դուն և բոլոր գործերից հեռու վանում: Տանու-  
տերն արդարացիորեն հարցրեց պարապ մնալու  
պատճառը՝ ասելով. «Ինչո՞ւ եք այստեղ ամբողջ  
օրը պարապ կանգնել»: Քանի որ իրենց առաջ  
բնական և գրավոր օրենքի այգին ունեին, ուր  
Աստված բազմիցս հրավիրել էր [նրանց], բայց  
նրանք ծուլության պատճառով բանի տեղ չէին  
դրել, ամոթից ասացին. «Մեզ ոչ ոք չվարձեց»:

Համեմատելու համար [ասենք, որ] շատ ան-  
գամ է լինում, որ ակամայից մշակներից ոմանք  
պարապ են մնում, որովհետև ոչ ոքից չեն վարձ-  
վել: Իսկ խորհրդի համաձայն՝ [սա] մշակների  
մեղքն է, որովհետև ո՛չ հեթանոսները, ո՛չ հրեա-

**ները, ո՞չ էլ մահմեղականները չեն կարող իրենց չար լինելն արդարացնել՝ [ասելով]. «Մեզ ոչ ոք չկարձեց»: **Որովհետև [Աստված] հեթանոսներին բնական օրենքով է ընդունում.** «Հեթանոսները, որոնք օրենք չունեն, բնությամբ են օրենքի [գործերը] կատարում» (Հռոմ. Բ 14), **հրեաներին՝ գրավոր օրենքով.** «Ով այն կատարի, կապոի նրանով» (Գաղ. Գ 12), **այսինքն՝ տասնաբանյա և ոչ թե ծիսական օրենքով,** իսկ բոլորին ավետարանական օրենքով, որի առաջ կույր մահմեղականները նույնպես, հրեաների նման, այսակիր հագարացու<sup>2</sup> սաղրանքով, իրենց աչքերը փակեցին, որպեսզի Քրիստոսի փառավոր Ավետարանի լուսավոր գիտությունը չծագի նրանց վրա: **Ուստի տասնմեկերորդ ժամին, որը ցույց է տալիս Քրիստոսի ժամանակը, արդարացիորեն հանդիմանեց նրանց՝ ասելով.** «Փնջո՞ւ եք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»: **Թեպետ մեղքերի պատճառներ են բերում, բայց ո՞չ արդարացի, որովհետև «Աստված կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարիտ գիտությանը հասնեն» (Ա. Տիմ. Բ 4):****

«Երբ երեկո եղավ, այգու տերն իր գործավարին ասաց. «Կանչի՛ր մշակներին և տո՛ւր [նրանց] վարձը՝ սկսած վերջիններից» (Ի 8): **Այստեղ առաքինիներին երկու անգամ է վարձ տալիս. նախ՝ այս-**

<sup>2</sup> Նկատի ունի իսլամի հիմնադիր Մուհամմեդին, ով հագարացի էր (=արաբ):

տեղ՝ գործավարների միջոցով, այսինքն՝ վերակացու հրեշտակների, որովհետեւ, ըստ սուլրը Դիոնիսիոսի, հրեշտակների միջնորդությամբ է Աստված մեզ վրա իր շնորհի լույսը հեղում<sup>3</sup>: Այս դեպքում «դահեկանը» շնորհն է, որ բոլորի համար ընդհանուր է, բայց [Աստված] առավել արժանավորների վրա ավելի շատ շնորհ է հեղում, քան [պակաս] արժանավորների: Առաքինիներից ոմանք, երբ տեսնում են, որ կարճ ժամանակամիջոցում անտոհմիկները և հիմարները մեծամեծ շնորհներով են փայլում, գայթակղվում են և մտածում, թե դա ընդդեմ արդարության է. այդ պատճառով էլ շատ զարմանում են, իրենց մտքում խոռվիում և ասում Աստծուն.

«Դրանք՝ այդ վերջինները, մեկ ժամ գործեցին, իսկ դու դրանց մեզ հավասար արեցիր, որ տարանք օրվա ծանրությունը և տոթը» (հ 12), այսինքն՝ Քո բոլոր օրենքները կատարեցինք՝ կրելով օրվա չարիքները և սատանայի փորձանքների տապը: Բայց Աստված, որ դիտի տասնմեկերրդ ժամին այդի եկածների ջերմագույն սիրո մասին, ըստ այնմ էլ շնորհներն է արդարացիորեն բաշխում, և մի կողմ դնելով նրանց անարժանությունը՝ երեք փաստեր է բերում, որով արդարացնում է

<sup>3</sup> Տե՛ս Dionysius, p. 15:

**Իրեն:** Նախ՝ ասում է. «ԶԷ՞ որ մեկ դամեկանի համար սակարկեցիր Ինձ հետ» (ի 13), երկրորդ՝ «Միթե իրավունք չունեմ Իմ ունեցածի հետ վարվելու այնպես, ինչպես կամենում եմ» (ի 14), երրորդ՝ «Կամ թե՝ նախանձո՞ւմ ես, որ Ես առատաձեռն եմ» (ի 15), այսինքն՝ միթե պե՞տք է, որ դու Իմ առատաձեռնության պատճառով բորբոքվես կամ Իմ առատաձեռնության պատճառով քո մտքի աչքով չարանաս։ Այսպիսի փաստերով [Տերը] հաղթեց դատողներին և նրանց բերանները փակեց։ Սա նկատի ունենալո՞վ առաքյալն ասաց. «Աստված այս աշխարհի հիմարներին ընտրեց, որպեսզի Աստծո առաջ ոչ մի մարմին չպարծեա» (Ա.Կորճ. Ա. 27, 29), **և թե՝** «Ո՞վ է, որ կարող է մեղադրել Աստծո ընտրյալներին» (Հոռմ. Հ. 33), այսինքն՝ անարժան համարել։ Իսկ մարդարեն ասում է. «Որպեսզի արդար լինես Քո խոպերում, և հայթող՝ Քո դատաստանի մեջ» (Սաղմ. Ծ. 6): Այս խոսքով Տերը զգուշացնում է մեզ, որ աշխարհում անպատշաճ բան տեսնելիս իսկույն չսկսենք Աստծուն դատել՝ տրտնջալով և անզգամություն ցուցաբերելով Աստծո հանգեա՝ Նրա արդարությունն ուրանալով։ Որովհետեւ Աստծո արդարությունը խոր անդունդ է, որին մեր միտքը չի կարող հասնել։ Հետևաբար պետք է մեր միտքն Աստծո խոսքերով չզբաղեցնենք և ինչ անկարգություն, որ լինում է աշխարհում,

**արդար համարենք՝ ըստ իմաստունի խրատի՝**  
«Եթե երկոյի վրա աղքատների դեմ զրպարտություն,  
իրավունքի ոտնահարում և անարդարություն տես-  
նես, չզարմանաս այդ բաների վրա, որովհետև բարձր  
սրանց վրա է՝ [ավելի] բարձր կա. իսկ բարձրի վրա  
բոլորի թագավորն է, ով տիրում է մշակվող հողի վրա:  
Բայց դու վստահելի եղիր ամենքի կողմից՝ [զերծ մնա-  
լով] այդ ծանր հափշտակումներից» (ժող. Ե 7-8): **Ուզում**  
**է ասել,** որ եթե ինչ-որ բան քեզ անարդար է  
թվում, մի՛ զարմացիր, որովհետև քո [միտքը]  
գերազանցող իմաստությամբ է [գործվում] ար-  
դարությունը: Իսկ եթե անմտորեն հանդգնես  
դատել, շատ կմոլորվես՝ ըստ այնմ. «Որովհետև  
մեծ և անպատճելի են քո գործերը, Տե՛ր, ուստիս անխո-  
հեմ մարդիկ մոլորվեցին» (իմաստ. ԺԷ 1):

**Երկրորդ՝ [Աստված առաքինիներին վարձ**  
**է տալիս նաև]** հանդերձյալ կյանքում, և այն  
ժամանակ «դահեկանը» Աստծո երանական տե-  
սությունը կլինի, որ սրբերին է տրվելու: Բայց  
սուրբերը տեսնում են ըստ սիրո հատկության,  
որով միտքը փայլում է, ինչպես նրանք, ովքեր  
պայծառ աչքեր ունեն, առավել են տեսնում ծո-  
վի մակերեսույթը, քան ճպռակալած [աչք ունե-  
ցողները]: Այն ժամանակ թեպետ սուրբերը որոշ  
բաների պատճառով մտքով հափշտակվում են,  
բայց կրկին հաստատվում են՝ մտածելով Տիրոջ

արդարության և ողորմության մասին: Երկու վարձի մասին խոսեց Տերը. «Ով ի՞մ հետևից գա, պատեղ հարյուրապատիկը կատանա, իսկ այնտեղ հավիտենական կյանքը կժառանգի» (Մատթ. ԺԹ 29):

Իսկ թե ինչու նախ հրամայեց տալ վերջիններին, պատճառն այն է, որ նախ՝ «վերջինները» քրիստոնյաներին են խորհրդանշում, ովքեր այն պատճառով ասացին, որ մեկ ժամ են աշխատել, որ Քրիստոսի լուծը քաղցր է, և բեռը՝ թեթև (Մատթ. ԺԱ 30): Իսկ «առաջինները» հրեաներն են, ովքեր Օրենքի լծի ծանրությունը վերցնելով՝ քրիստոնյաների աստիճանին չկարողացան համել: Երկրորդ՝ Քրիստոսի արդյունավորմամբ և չնորհներով՝ քրիստոնյաների մեկ ժամվա գործն ավելին է, քան հրեաների մեկ օրվա աշխատանքը: Երրորդ՝ որովհետև նրանք ավելի ջերմ սիրով աշխատեցին, քան առաջինները, ուստի Աստծո աչքում առավել քաղցր դարձան, որ առավել ուշադրություն է դարձնում գործի [կատարման] կերպին, քան [բուն] գործին: Որովհետև ոչ թե նա է գովաբանվում, ով [պարզապես] աշխատում է, այլ ով լավ է աշխատում: Այս մասին Ալբերտն ասում է. «Մակրայները բայերի իշխաններն են, ուր արդյունաշատ կյանք կա»<sup>4</sup>:

<sup>4</sup> Ալբերտ Մեծը (1193-1280) լատին աստվածաբանության նշանավոր դեմքերից է: Նա Դոմինիկյան միաբանության անդամ

**Այստեղ նաև մեկ այլ խորհուրդ կա. որով-  
հետեւ առավոտյան եկածներն Աստծո առաջ հա-  
մարձակություն ունեն, ուստի նրանց համար  
վարձ սահմանվեց, ծեր տարիքում եկածների հա-  
մար [վարձ] չսահմանվեց, նրանց հույսը միայն  
Աստծո ողորմությունն է: Ուստի չպետք է նա-  
խապես տալու պատճառով վերջինների վարձն  
ուշացնել: Մանկության առավոտյան դառնալն  
է արդյունավոր, որովհետեւ ամենքի հետ, ինչ-  
պես օրինակ բոլոր ավազակների հետ, այնպես  
չի պատճառմ, ինչպես աջակողմյան ավազակի  
հետ (տե՛ս Ղուկ. ԻԳ. 43):**

**Բարոյականապես՝ մարդու կյանքն ինչպես  
մեկ օր է: Առավոտը մանկությունն է, երրորդ**

Էր, Թովմա Աքվինացու ուսուցիչը: Թողել է բազմաթիվ աշխա-  
տովյուններ, որոնք 21 հատորով հրատարակվել են դեռ ԺԷ:  
Դարրում: Հայերեն թարգմանությամբ հայտնի են Յու «Յաղագն  
գաղտնեաց կանանց», «Գիրք գաղտնեաց յաղագն բնութեան  
խոտից, ականց և կենդանեաց», «Իրախտ հոգիու...» և «Համա-  
ոսու հաւաքուն աստուածաբանական ճշմարտութեան աշ-  
խատովյունները: Ալբերտ Մեծը երանելի է հոչակվել 1622 թ.,  
սրբացվել և պաշտոնական Եկեղեցու Վարդապետ հոչակվել  
1931 թ. Հռոմի Պիոս ՓՍ պապի կողմից: Ամեն տարի Հռոմեական  
Կաթոլիկ Եկեղեցին նրա միշտառակը նշում է նոյեմբերի 15-ին:

Նրա մասին տեսն Հ. Ս. Անապան, Հայկական մատենագիտու-  
թյուն, Բ. Ա. Երևան, 1959, էջ 389, և Տ. Ա. Արևատյան, Կ истории  
философских школ средневековой Армении, Е., 1980, стр. 21:

Բերդումյանն այս բառացի վկայությունը քաղել է Ալբերտ Մեծի  
«Համառոտոթիւն աստուածաբանութեան» աշխատովյունից.  
տե՛ս «Համառոտոթիւն աստուածաբանութեան երանելոցն  
Մեծին Ալբերտի» (=Համառոտոթիւն), Վեհետիկ, 1715, էջ, 307:

ժամը՝ պատանեկությունը, վեցերորդը՝ երիտասարդությունը, իններորդը՝ միջին տարիքը, իսկ տասնմեկերորդը՝ ծերությունը։ Գթած Հայրը, ըստ իր արդար իրավունքի, ոմանց մանկության ժամանակ է կանչում, ոմանց՝ պատանեկության, ոմանց՝ երիտասարդության, ոմանց՝ միջին տարիքում, ոմանց էլ՝ ծեր, որի պատճառն անհայտ է մեզ։

Դարձյալ՝ իր մեծ գթության պատճառով է մանկության ժամանակ կանչում։ Երբ համառում են, [կանչում է] պատանեկության ժամանակ, և այսպես մինչև խոր ծերություն ձեռքից բաց չի թողնում՝ ըստ այնմ. «Մանկությունից» մինչև ծերություն Ես եմ, և մինչև խոր ծերություն ել հասնեք, Ես եմ և չեմ թողնելու ձեզ, - ասում է Տերը» (Ես. ԽԶ.3-4): **Վերևում ասացինք, որ «գահեկանը», այսինքն՝ վարձը, Աստծո երանական տեսությունն է, քանզի սուրբերի վարձն Աստված է՝ ըստ այնմ. «Ես քեզ հովանավոր կլինեմ, և քո վարձը չափազանց շատ կլինի» (Ծանդ. ԺԵ.1):**

«Այսպես վերջիններն առաջին պիտի լինեն, իսկ առաջինները՝ վերջին» (Ի.16): **Խորհրդապես՝ հրեաներն էին առաջինները, իսկ հեթանոսները՝ վերջինները, որոնք հետո հրեաների համեմատ առաջին դարձան։**

**Բարոյականապես՝ ոմանք մանկության ժա-**

մանակ բարի գործեր սկսելով՝ լինում են առաջիններ, բայց ծուլանալով [դրանք] ավարտին հասցնել՝ վերջիններ են դառնում, իսկ ուրիշներ ծերության ժամանակ սկսելով՝ վերջիններ են լինում, սակայն մեծ սիրով ու հավատարմությամբ Տիրոջը ծառայելով՝ առաջիններ են դառնում:

Դարձյալ՝ սուրբերի մեջ ոմանք նախապես են ընծայված, բայց չափավոր արդյունքներով, իսկ ոմանք՝ հետագայում [են ընծայվում], բայց գերազանց արդյունքներով. վերջիններս փառքով առաջին են դառնում, իսկ առաջինները՝ վերջին. այստեղ այս միտքն է նկատի առնված: Բայց ոմանք տրտնջացողներ են համարում մեղավորներին և ասում են, թե այդ պատճառով [տանուտերն] ասաց. «Կամ թե՝ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ»: Իսկ «դահեկան» են համարում մարմնավոր բարիքները, իբրև թե առաջին կանչվածները, Տիրոջը ծառայելիս անհավատարմորեն աշխատելով, մարմնավոր բարիքները վերցնելով՝ մերժվեցին, այդ պատճառով էլ Փրկիչն ասաց. «Յատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված»: Բայց մեզ հարմար թվաց այնպես, ինչպես մեկնեցինք:



## ԳԼՈՒԽ ԺԿ

### [ԱՅՆ ՄԱՍԻՆ], ՈՐ ԱՍՏՎԱՇ ԲՈԼՈՐ ՀԱՍՏԱԿՆԵՐԻՑ ՊՏՈՒԴ Է ՊԱՀԱՆՁՈՒՄ

«Եվ տեսնելով մի թզենի ճանապարհի վրա՝ եկավ դեպի այն և նրա վրա պտուղ չգտավ, այլ միայն տերեւ։ Եվ ասաց նրան. «Այսուհետ հավիտյան քեզանից պտուղ թող չլինի» (Մատթ. հԱ 19):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Պիտի ասես, թե թզենին միայն իրեն հարմար ժամանակին է պտուղ տալիս, ի՞նչ արդարությամբ անեծքի տակ ընկավ։ Պատասխանեմ. երկու պատճառով. նախ՝ քանի որ Արարիչն էր նրա մոտ գնում, նա պարտավոր էր պտուղ տալ, չնայած որ ժամանակը չէր։ Ինչպես Տիբերիայի ծովը, երբ տեսավ, որ Արարիչն իջավ իր վրա, իր բնությանը հակառակ՝ բարձրացրեց նրան։ Իսկ [թզենին] քանի որ [սա] չարեց, արդարապես անեծք ընդունեց։ Երկրորդ՝ ինչպես տա-

նուտերն իշխանություն ունի իր այգուց կտրելու ինչ որ կամենում է, այդպես էլ Քրիստոսը, ով աշխարհիս տերն է, իշխանաբար կամեցավ և թզենին չորացրեց, և [այստեղ] անարդարացի բան չկա:

Խորհրդապես՝ «թզենին» հրեաներն են, ովքեր բարի գործերի պտուղ չունեն, այլ միայն Մովսիսական օրենքի և հրեական անունների տերեւ, որ իրենց հրեա են անվանում, բայց չեն, այլ սատանայի գործակիցներ են: Եվ Հիսուսը, [նրանց] բարի գործերի պտուղների քաղցն ունենալով, երբ [դրանք] նրանց վրա չգտավ, արդելեց շնորհի հեղումը, որով թզենու նման չուրանում և կրակի համար են պատրաստվում: Ոչ հեթանոսներն են կարող պատճառաբանել, թե՝ քրիստոնյաներ չենք, ուստի պտղի ժամանակը չէ, ոչ էլ հրեաները, որովհետև յուրաքանչյուր հասակից պտուղ է պահանջվում:

Բարոյականապես՝ անպտուղ և տերեւազարդ թզենին այն քրիստոնյաներն են, ովքեր միայն հավատք ունեն և ոչ թե բարի գործ: Ինչպես որ տերեւն է ծառի նշանը, այսպես էլ հավատքը՝ քրիստոնյայի. Քրիստոսը մեծ քաղցով դեպի մեր հոգիներն է գալիս՝ առաքինի պտուղ գտնելու՝ թե՛ մեր պատանեկության, թե՛ երիտասարդության և թե՛ ծերության ժամանակ: Հետեւաբար

հո՛գ տանենք, որ անպտուղ չլինենք, որպեսզի  
[Տերը] մեզ էլ թգենու նման չչորացնի: Այդ-  
պիսի անպտուղ քրիստոնյաները ողջի անունն  
ունեն, բայց հոգով մեռած են: Բազմաթիվ կրո-  
նավորներ կան, ովքեր արտաքին զգեստներով  
տերևազարդ են, բայց եթե Տնկողը մոտենա  
փնտրածը գտնելու, ապա բարի գործերից դա-  
տարկ գտնի: Քրիստոսը թգենին չորացնելիս  
այսպես էր կամենում ասել. բոլոր անպտուղ  
մարդիկ պիտի չորանան, ինչպես որ Հրեշտա-  
կը քարը ծովը գցելիս ասաց. «Այսպես Բաբելոնը  
դժոխքի մեջ պիտի ընկղմվի» (Հայտ. ԺՀ 21):





## ԳԼՈՒԽ ԺԴ

**[ԱՅՆ ՄԱՍԻՆ], ՈՐ ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ  
ՄԱՐԴԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ՈՒՆԻ**

*Մեր Տերը, իսրայելի այգու մշակների անհավատարմությունը հանդիմանելով, այս առակն ասաց.*

«Մի այլ առակ լսեք. մի տանուտեր կար, որ այգի տնկեց, աբն ցանկապատեց, նրա մեջ հնձան փորեց, աշտարակ շինեց, տվեց մշակներին ու գնաց օտար երկիր: Երբ [պտղի] ժամանակը մոտեցավ... իսկ մշակները ծառաներին բռնելով... և հետո նրանց մոտ ուղարկեց իր որդուն: Մշակներն ասացին՝ սա է ժառանգը» (Մատթ. հԱ, 33-38)

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

*Այս երգը, որ Հիսուսն այժմ երգում է իր այգու մասին, կանխավ եսային է երգել՝ ըստ այնմ. «Իմ սիրելիի ալզու համար երգեմ նրա սիրեցյալի երգը» (Ես. Ե 1): «Սիրելի այգին» իսրայելն է, «սիր-*

*ըեցյալի երգը» Հիսուսի երգն է, ով սիրելի Փեսան է:*

Այլաբանորեն՝ «այգին» իսրայելն է, «այգին տնկող տանուտերը»՝ Աստված, որ [իսրայելացիներին] Եգիպտոսից հանեց և Ավետյաց երկրում տնկեց՝ ըստ այնմ. «Ազգին Եգիպտոսից հանեցիր և Բրանց տնկեցիր, Բեթանոսներին վնադեցիր» (Սաղմ. ՀԹ 9):

Այս այգու մշակներն օրենսգետներն ու փարիսեցիներն են, որոնք Մովսեսի աթոռին նստեցին: Հայր Աստված այգին նրանց հանձնեց, Մովսեսի միջոցով՝ ղետացիներին որպես ժողովարանի<sup>1</sup> քահանաներ նշանակեց, որն Օրենքի ցանկապատով պատեց, նրա մեջ հնձան փորեց, այսինքն՝ զոհասեղանը, ուր գառ էին զոհաբերում, և աշտարակ չինեց, որ փառքի քերովեներն էին, որոնք ասես աշտարակից միշտ հսկում էին: Պտղի ժամանակ նրանց մոտ ուղարկեց ծառաներին, այսինքն՝ մարգարեներին: Նրանք այգու մեջ Տիրոջը վայել բարի գործերի պտուղ էին փնտրում, բայց քանի որ մշակները չար էին, նրանց չհավանեցին, որովհետև նրանց քարոզությունը մշակների անառակ վարքի դեմ էր, դրա համար բռնելով՝ որին տանջեցին, որին սպանեցին և որին քարկոծեցին, ինչպես որ մար-

<sup>1</sup> Պիտի լիներ՝ «Վկալության խորանի», որը Սոլոմոնի օրոք փոխարինվեց տաճարով:

գարեների՝ տարբեր տեսակ մահերով վախճանն է ցույց տալիս: Ամենավերջում իր Որդուն ուղարկեց և ասաց. «Թերևս իմ ալս որդուց ամաչեն», այսինքն՝ թերեւս իմ Որդու խոսքերին անսան, Նրա մեծ հրաշքներից ազդվելով՝ հավատան և իրենց իբրև մշակներ ճանաչելով՝ հնազանդության պտուղ տան: Բայց ամբարիշտ մշակներն այգու Տիրոջ Որդուն սպանելով՝ խորհում էին սեփականացնել [ունեցվածքը]: Դրա համար, երբ Քրիստոսի գործերն ու մեծամեծ հրաշքները տեսան, հասկացան, որ «Նա՛ է ժառանգը». Նա՛ միայն կարող է իրենց ձեռքից այգին վերցնել, ուստի ասում էին. «Ահավասիկ ամբողջ աշխարհը Նրա հետևից գնաց» (Հովհ. ԺԲ 19). «Եթե Նրան թողնենք այսպես, բոլորն ել կհավատան Նրան, հոռմեացիները կգան, կվերացնեն մեր ազգն ու սրբավայրը» (Հովհ. ԺԱ 48), թեպետև խորամանկությամբ էին այսպես ասում: Ուստի մտածեցին սպանել [Նրան], որպեսզի ժառանգությունն իրենց մնա, այսինքն՝ որպեսզի հավիտյան իշխեն մարդկանց վրա:

«Եվ [Նրան] բռնեցին, այգուց դուրս հանեցին ու սպանեցին» (ԻԱ 39). [այգուց դուրս հանեցին], որպեսզի [մարդկանց] խաթեին, թե իրենք չեն սպանել: Այգուց դուրս հանեցին [նաև] այն պատրվակով, որ ցույց տան, թե [Նա] ժողովրդի մաս չի կազմում և Օրենքի հարազատ որդի

**չէ, այլ մոլորեցնող:** Այս մտքով էին ասում. «Ով խոստովաճի Նրան, կհեռացվի ժողովրդի միջից» (Հովհ. թ. 22):

«Արդ երբ ալգու Տերը գա, այդ մշակներին ի՞նչ կանի. չարերին չարաշար կոչնացնի և ալգին ուրիշներին կտա» (ԻԱ. 41): **Վճիռը նրանց բերանից է պահանջում, որպեսզի ամենևին պատասխան տալու բան չգտնեն:** Այսպես նաև Նաթանն արեց Դավթին, երբ կամենում էր Բերսաբեեի պատճառով հանդիմանել [Նրան]: Եվ Դավթն ինչպես որ դատեց, այնպես էլ դատապարտվեց<sup>2</sup>: Այսպես էլ սրանք ինչպես որ դատեցին [ուրիշներին], այդպես էլ իրենք իրենց դատապարտեցին. սա այն է, որ ասաց. «Ան վեմը, որ շինողներն անարգեցին, նա դարձավ անկյունաքար» (ԻԱ. 42, Սաղմ. ԾԺԷ. 22), և թե՝ «Դրա համար եմ ասում ձեզ, որ կվերցվի ձեզանից արքայությունը և կտրվի այն ազգին, որ պտղաբեր կդարձնի այն» (ԻԱ. 43): **Հրեաները Քրիստոսի հարցումին պատասխանելուց հետո հասկացան, որ [Հիսուսը] իրենց մասին էր ասում, այդ պատճառով էլ ասացին.** «Քա՛վ լիցի» (Ղոկ. հ. 17): **Արդ,**

<sup>2</sup> Դավիթ մարգարեն Ուրիայի կնոշը՝ Բերսաբեեին, տիրանալու համար, նրա ամուսնուն դիտմամբ պատերազմի ուղարկեց, որ վերջինս զոհվեց: Քետացի Ուրիայի զոհվելոց հետո Դավիթն ամուսնացավ նրա կնոշ թես և զավակ ունեցավ, որն էլ Տիրոջ աշքին չար բան երևաց: Ասոված պատժեց Դավիթն և Բերսաբեեից ծնված նրա զավակը հիվանդացավ և մահացավ (տես Բ. Թագ. ԺԱ-ԺԲ):

սա եղավ այն ժամանակ, երբ այդու Տերն Օրենքը տալուց հետո եկավ և ժողովարանի կարգերը հաստատելուց հետո աներեսութացավ, և դրանով ասես թե՝ գնացել էր օտար երկիր: Իսկ երբ զգալապես եկավ այցելեց այդին, ավերող և ոչ թե շինող մշակները, այս Վեմին բռնելով, [Նրան] ավելի անարդ մահով սպանեցին: Բայց [Նա] լուսափայլ հարությամբ անկյունաքար դարձավ, և այդ ժամանակ այդու Տերը եկավ, չար մշակներին չար մարդկանց՝ Տիտոսի և Վեսպիանոսի ձեռքով կոտորեց, իսկ այդին տվեց ուրիշ մշակների, երբ ասաց. «Գնացե՛ք, աշակերտնեցե՛ք բոլոր հեթանոսներին և մկրտե՛ք հրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԽՂ 19):

Խորհրդապես՝ «այդին» Եկեղեցին է, «պարիսպը»՝ Աստված՝ ըստ այնմ. «Ես հրեղեն պարիսպ կլինեմ Արա շուրջ» (Զաք. Բ 5): «Հնձանը» սուրբ Սեղանի վրայի սուրբ Սկիհն է, որտեղ գինին Անմահ Գառի արյունն է դառնում, և «աշտարակը» սուրբ Խաչն է: «Մշակները» առաջնորդներն ու իրենք իրենց արածացնող անհավատարիմ [հովիվներն] են, ինչպես նրանք, ովքեր անարատ վարձը և իրենց իսկ վերին Տեսչությամբ անձերն աքսորներով, տարածամ մահվամբ և վատ համբավով կորցնում են, և այդին տրվում է հավատարիմ մշակներին, որպեսզի

«հազար ճշմարիտ Սողոմոնին բերեն, իսկ երկու հարյուր՝ իրենց» (Երգ Հ 12): **Այգուց դուրս Քրիստոսին սպանելը խորհրդով եղավ.** ինչպես որ անասունների արյունն էին հեղում և նրանց մարմինը բանակատեղիից դուրս այրում, նույնպես և Քրիստոսը, որպեսզի իր թանկագին արյամբ մաքրեր ժողովրդին, բանակատեղիից դուրս չարչարվեց (տե՛ս Եքր. ԺԳ 11): **Ուրեմն եկե՛ք մենք էլ այս աշխարհի հանդեպ սիրուց դուրս գանք Քրիստոսի սիրով՝ հանձն առնելով Քրիստոսի նախատինքը, արհամարհանքն ու չարչարանքը, որով և մենք արժանի կդառնանք մաքրվելու և ազատվելու մեղքերից, մտնելու լույսի առագաստը և վայելելու նրա երանական տեսությունը Հոր և Ամենասուրբ Հոգու հետ անսպառ հավիտենության մեջ. ամեն:**



## ԳԼՈՒԽ ԺԵ

**[ԱՅՆ ՄԱՍԻՆ], ԹԵ ԻՆՉՔԱՌՆ ՉԱՐ ԲԱՆ  
Է ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՀՐԱՎԵՐԸ  
ՄԵՐԺԵԼԸ**

*Մեր Տերը հրեաների և անհավատների վտանգն  
ու անմտությունն այս առակով ցույց տվեց:*

«Երկնքի արքայությունը նմանվեց մի թագավորի,  
որ իր որդու համար հարսանիք արեց» (Մատթ. հԲ 2):

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Երկնքի Արքան, մի թագավորի նման, որի  
արարքների մասին խոսքի ընթացքն է ցույց  
տալու իր Որդու համար հարսանիք արեց: Այս-  
տեղ «Հարսանիքը» Քրիստոսի մարդեղությունն  
է: Որովհետև ինչպես որ հարսանիքի ժամանակ  
է մարմնավոր միավորություն լինում, այս-  
պես էլ մարդեղության ժամանակ կույսի ար-  
դանդում անձառելիորեն եղավ աստվածային  
և մարդկային բնությունների միավորությունը

Բանն Աստծո անձի մեջ<sup>3</sup>: Այստեղից էլ Կույսի արգանդը «Հարսնարան» է կոչվում. այս իմաստով է պսակի խորհուրդը գլխավորապես մարդեղության խորհուրդը ցույց տալիս, ապա Քրիստոսին, ինչպես և Եկեղեցին:

«Եվ ուղարկեց իր ծառաներին՝ հրավիրվածներին հարսանիք հրավիրելու, բայց նրանք չցանկացան գալ» (ԻԲ 3): «Հրավիրվածներն» Աքրահամից մինչև Քրիստոսի գալուստը [եղած անձինք] էին, որ մարդարեների միջոցով, բազմաթիվ օրինակներով, կանչել էին Մեսիայի գալստյան հավատին: Թեպետ նախապես շատ էին փափագում, բայց երբ [Մեսիան] եկավ և ուղարկեց առաքյաներին ու Հովհաննեսին՝ իր գալստյան հավատքին կանչելու, նրանք ամբարշտանալով չցանկացան գալ:

«Դարձյալ ուրիշ ծառաների ուղարկեց և ասաց. «Հրավիրվածներին ասացե՛ք ահա իմ ճաշկերութը պատրաստեցի, իմ զվարակները և պարարտ անասունները մորթված են, և ամեն ինչ պատրաստ է, եկե՛ք հարսանիքի» (ԻԲ 4): **Սա այն է, որ իմաստունը նա-**

<sup>3</sup> Այս արտահայտությունը, թե Քրիստոսի երկու բնությունները միավորվել են Նրա անձի մեջ, բնորոշ է Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբանական բանաձևին, որը մերժվել է Հայ Առաքելական Եկեղեցու հայրերի կողմից իբրև կուրեյան քրիստոսաբանությանը հակասող: Հայ Եկեղեցին Քրիստոսի երկու բնությունների միավորմը դավանում է իբրև մեն՝ աստվածմարդկային բնություն («Մի է բնությին Բամին Աստուծոյ մարմացելոյ»):

**Խապես գուշակել էր.** «Խմաստությունը շիճեց իր տունը և կանգնեցրեց լոթ պուն, մորթեց անասունները» և՛, «և ուղարկեց ծառաներին» (Առակ. Թ 1-2): **Ծառաներին երկու անգամ ուղարկելը հրավիրյալների նկատմամբ ճշմարիտ սերն է ցույց տալիս:** «Ճաշկերույթը» Քրիստոսի Ավետարանն է. «Ոչ միայն հացով է մարդ ապրում, այլ նաև այն ամեն խոսքով, որ Աստծո բերանից է դուրս գալիս» (Մատթ. Դ 4): «Զվարակը» հենց ուխտյալ զվարակ Քրիստոսն ինքն է, իսկ «պարարտ անասունները»՝ Եկեղեցու յոթ խորհուրդները: Թե՛ հրեաների և թե՛ հեթանոսների մոտ ծառաներ է միշտ ուղարկում, բայց մեծ հրավեր Նրա գալստյան ժամանակ եղավ:

«Բայց նրանք, բանի տեղ չդնելով. գնացի՛ մեկն իր ագարակը, մեկն իր առևտրին, ուրիշներ ել բռնեցին նրա ծառաներին, անպատվեցին և սպանեցին» (ԻԲ 5-6): Երբ հրեաները կանչվեցին, նրանց մեծ մասը չհավատաց Նրա գալստյանը. յուրաքանչյուրն իր գործին գնաց, ծերակույտից ոմանք էլ [Նրա] ծառաների խիստ խոսքերը չհանդուրժելով, անպատվեցին, այսինքն՝ թշնամություն արեցին և սպանեցին, ինչպես Հովհաննեսին և Հակոբոսին (տե՛ս Գործք ԺԲ 2): **Սրանք ոչ կամեցան անմտությունը թողնել, ոչ ընտրեցին հասկացողությունը գիտությամբ, ոչ էլ երանության**

**արժանի դարձրին իրենց՝ ըստ այնմ. «Երանելի են նրանք, ովքեր կանչված են Գառան հարսանիքի ընթրին» (Հայտ. ԺԹ 9): Հիմար էին և անմիտ, որովհետև իրենց օգուտը չհասկացան, երբ թագավորական ընթրիքից զրկվեցին, նաև որովհետև չմտածեցին, թե գուցե թագավորը բարկանա և վնասի իրենց: Այսպիսին են այն անմիտները, որոնց բազմիցս խոստովանության և հաղորդության ենք կանչում, բայց չեն գալիս:**

«Իսկ թագավորը, երբ լսեց, բարկացավ և ուղարկեց իր զորքը, բնաջնջեց սպանողներին և նրանց քաղաքներն այրեց» (ԻԲ 7): Երբ Աստված տեսավ, որ հրեաները ոչ միայն չկամեցան Որդու հարսանիքին գալ, այլ նաև ուղարկվածներին սպանեցին, շատ բարկացավ «և իր զորքն ուղարկեց», այսինքն՝ Տիտոսին և Վեսպիանոսին, կոտորեց սպանողներին և հրեաների քաղաքներն այրեց: Այսպես Նաբուքոնոսորը և Կյուրոսն «Աստծո գավազան» կոչվեցին, որովհետև նրանց միջոցով էր [Աստված] վրեժինդրությունը կատարում, նաև «դառն բաժակ», որովհետև նրանց միջոցով էր [Աստված] իր բարկությունը թափում, բայց Աստծո սեփական զորքը հրեշտակներն են: Բարկությունն այստեղ գործերի փոխարեն է գործածվում և ոչ թե կրքի, որը խորթ է Աստծուն:

«Այն ժամանակ իր ծառաներին ասաց. «Մեր հար-սանիքը պատրաստ է, բայց հրավիրվածներն արժանի չեն» (իԲ 8): *Այստեղից իմանում ենք, որ մահմետականներն ու հրեաները, ովքեր դեպի Քրիստոս չեն գալիս, արժանի չեն [ճաշկերույթին մասնակցելու]:*

«Արդ, գնացե՛ք հրապարակները և ում որ գտնեք, կանչե՛ք այս հարսանիքին» (իԲ 9): *Այստեղ հրեաների կործանումն է ցույց տալիս, որ հեթանոսների բարձրացման պատճառ եղավ, իսկ ըստ Պողոսի՝ «Եթե նրանց ամենումը հեթանոսների կանգնման պատճառ դարձավ, ի՞նչ պիտի լինի [նրանց] բարձրացումը, եթե ոչ՝ կենդանություն մեռելներից» (Հռոմ. ԺԱ 15), այսինքն՝ ամբողջ աշխարհի դարձի գալը:* Երանի՛ թե նրանք դարձի գային, որպեսզի ամբողջ աշխարհը հավատքի մեջ առողջանար, որովհետև շատ դժվար է նրա հնագանդության գալը, որի դեմ բոլոր ընտանիքներն ապստամբում են:

«Եվ ծառաները, ճանապարհները ելնելով, հավաքեցին բոլոր նրանց, ում գտան՝ և՛ չարերին, և՛ բարիներին, և հարսանիքը լցվեց հրավիրվածներով» (իԲ 10): *Այն ժամանակ ծառաները ելան ճանապարհները, երբ [Քրիստոսը] ասաց. «Գնացե՛ք, ուրեմն, աշակերտեցե՛ք բոլոր հեթանոսներին» (Մատթ. ԻՂ 19): Առաքելական քարոզությունն ուռկանի նման*

Հավաքեց բոլոր ազգերին Քրիստոսի հավատքի  
հարսանիքի տանը: Բարիները գալիս են հար-  
սանիքին՝ հանդիսավոր և փառավոր դարձնելու  
հարսանիքը և թագավորին, իսկ չարերը, դրա-  
նից շահ չունենալով, որկրամոլության համար  
են գալիս: Այսպես ոմանք Քրիստոսի հավատ-  
քին են գալիս ոչ թե Աստծո Որդուն փառավո-  
րելու համար, այլ իրենց կարիքները հոգալու:  
Այսպիսին են նաև ուխտադիրներից ոմանք, ով-  
քեր կրոնավորական կարգի մեջ մտնում են ոչ  
թե ջերմեռանդությունից մղված, այլ ագահու-  
թյունից:

«Եվ երբ թագավորը մտավ հրավիրվածներին  
նալելու, այնտեղ մի մարդու տեսավ, որ հարսանի-  
քի զգեստ չէր հագել» (ՀԲ 11): Ինչպես թագավորը  
սրտի բերկրանքով մտավ տուն՝ հրավիրվածնե-  
րին զվարճացնելու համար, այսպես էլ երկնա-  
վոր թագավորն է անում, որովհետեւ Նրա աշ-  
քը միշտ գթած է հավատացյալների եկեղեցու  
վրա՝ մխիթարելու համար: «Զգեստը»՝ որպես  
Քրիստոսի հարսանիքի պատիվ, Աստծո սերն  
է: Որովհետեւ ինչպես զգեստն է ծածկում մար-  
մինը, այսպես էլ սերը՝ մեղքերի բազմությու-  
նը: Այս զգեստի մասին է ասվում. «Զգեստնե՛ր  
հագեք, որպեսզի մերկ չշրջեք և ձեր ամոթովքները չե-  
րևան» (Հմմտ. Հայտ. Գ 18, Ժ 15): Եթե մեկն այս զգես-

տը չունի, վայել չէ, որ նա երկնավոր թագավորի հարսանյաց սրահը մտնի: Որովհետև եթե Արտաշես թագավորի պալատը կեղտոտ հագուստներով ոչ ոք չէր մտնում (տե՛ս Եսթ. Ա), ապա ինչքա՞ն առավել Քրիստոսինը: Բայց մի մարդ հանդգնաբար կեղտոտ հագուստով մտավ միայն որկրամոլության պատճառով: Ինչո՞ւ մի մարդ գտնվեց այնքան բազմության մեջ: [Սրանով] ցույց է տրվում, որ առաջին քրիստոնյաների մեջ մեղավորները քիչ էին, կամ էլ մի մարդով բոլոր մեղավորներն են ցույց տրվում:

«Եվ նրան ասաց. «Ընկե՛ր, որ հարսանիքի զգեստ չունեիր, ինչո՞ւ այստեղ մտար»: Եվ նա պապանձվեց» (ԻԲ 11-12): Եթե քաղցր հարցաքննությունից պապանձում է լինում, ապա ի՞նչ կլինի այն ժամանակ, երբ ահավոր բեմի վրա Հզորն ահեղ և սոսկալի ձայնով որոտա:

«Այն ժամանակ ասաց ծառաներին. «Կապե՛ք դրա ձեռքերն ու ոտքերը և հանե՛ք արտաքին խավարը» (ԻԲ 13): Հարսանիքը մեծ մասսամբ ձմռանն է լինում բարիքների առատության պատճառով, երբ դրսում ցուրտը սաստկանում է և ընթրիքը մինչև երեկո երկարում: Խավարը նույնպես շատանում է, ուստի կապվածը երբ դուրս է ընկնում, խավարի պատճառով լաց է լինում, սաստիկ ցրտից ատամները կրծտացնում. կապվածն

ուր ընկնում է, այնտեղ էլ մնում է: Այսպես էլ մեղավորը դժոխք է ընկնում, ուր Աստված չի այցելում, և այնտեղ մնում է հավիտյան. «Ծառն ուր էլ ընկնի, այնտեղ կմնա» (Ժող. ԺԱ.3): Այս առակով ցույց է տրվում, որ այլ է անհավատների դատաստանը, այլ՝ հրավիրվածներին ու չեկածներինը, և այլ այնտեղ կեղտու զգեստներով մարդկանցը: Նաև ցույց է տրվում, որ նրանք, ովքեր եկեղեցին լքում և հավատքն ուրանում են, հարսանիքին անարժանաբար եկածներն են: Իմացի՛ր նաև, որ «հարսանիքը» Քրիստոսի երկրորդ գալուստն է ցույց տալիս. «Հասավ Գառի հարսանիքը, և նրա կիան իրեն պատրաստեց» (Հայտ. ԺԹ.7): Հրավիրվածների տունը Գեթսեմանիի ձորն է, ուր չարերն ու բարիները պիտի կանչվեն: «Անզգեստ մի մարդը» մեղավորների բազմությունն է. «մի մարդ» են կոչվում միասիրտ լինելու պատճառով: Երբ նրանք արտաքսվեն արտաքին խավարը, մնացածները կցնծան հաղթող Գառի հարսանիքին:

«Ծատերն են կանչված», և թե՛ չեկածների համեմատությամբ և թե՛ մեղսազգեստների՝ շատ «քչերն են ընտրյալ» (ԻԲ.14): Դո՛ւ, ուրեմն, աշխատիր մկրտությամբ հագածդ փառքի զգեստ Քրիստոսին մեղքերով չհանել, որպեսզի իսկապես ընտրյալների շարքում լինես:

## ԳԼՈՒԽ ԺԶ

### ՏԻՐՈՁ ՀԱՅՈՐԴ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվ կուղարկի իր հրեշտակներին մեծ շեփորով ու կհավաքի իր ընտրյալներին չորս կողմերից՝ երկնքի ծագերից մինչև մյուս ծագերը (Մատթ. հԴ 31):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հստ ոմանց՝ մեր Տերն իր գալստյան ժամանակ հրամայելու է Գաբրիել հրեշտակապետին իր շեփորը հնչեցնել, որի ձայնն այնքան ուժգին է լինելու, որ հասնելու է դժոխքի անդունդներին և աշխարհի բոլոր կողմերին՝ բոլոր մեռյալներին արթնացնելու համար։ Այս ընդհանրական հարության մասին մարգարեացավ Եսայիհն՝ ասելիս. «Այն օրը մեծ փող կհնչեցնեն, և ցրվածները կհավաքվեն Հուղարի երկրում» (Ես. իՀ 13, ԺԱ 12). Հստ վարդապետների՝ հրեշտակապետի շեփորի ձայնով այս խոսքը պիտի հնչի. «Կանգնե՛ք, մեռյալնե՛ք» և բոլորը պիտի հարություն

**առնեն:** Կասես. «Միայն հրեշտակապետի ձայնով մեռյալներն ինչպես պիտի հարություն առնեն»: Պատասխանեմ. միայն ձայնն է հրեշտակապետինը, իսկ խոսքը՝ Քրիստոսինը: Որովհետև ինչպես Դավթի լեզուն էր Ս. Հոգու արագ գորդ դպրի գրիչը (տե՛ս Սաղմ. ԽԴ 2), որով մարգարեռություններ էր բարբառում, այսպես էլ հրեշտակապետի ձայնն է Քրիստոսի խոսքի գործիքը գառնալու, ուստի առաքյալն էլ է ձայնը հրեշտակապետինը համարում, իսկ շեփորը՝ Աստծունը, երբ ասում է. «Որովհետև ինքը Տերը հրեշտակապետի ձայնով և Աստծո շեփորով իշելու է երկնքից» (Ա.Թես. Դ 15): Ուստի թեպետ շեփորը հրեշտակապետինն է, բայց ձայնը՝ Քրիստոսինը՝ ըստ այնմ. «Կգա ժամանակ, երբ Աստծո Որդու ձայնը կլսեն, և ովքեր լսեն, կիրկվեն» (Հովհ. Ե 25): **Եվ** ինչպես օրինակ, երբ եկեղեցու խորհուրդների էական խոսքերն ենք արտաքերում՝ ասելով. «Ես մկրտում եմ (ամուս) Հոր, Որդու և Ս. Հոգու անունով»<sup>4</sup>, «Առե՛ք, կերե՛ք», և թե՝ «Խմե՛ք

<sup>4</sup> Բերդումյան սրբազնն այստեղ մեջբերում է Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցում գործածվող մկրտության խորհրդի բանաձևը: Հայոց Եկեղեցու մկրտության խորհրդի բանաձևը հետևյալն է. քահանան երախային երեք անգամ ընկրում է ջրի մեջ Ս. Երրորդության անունով՝ ասելով «(մկրտվողի անունը) Աստծո այս ծառան երախային թագավորությունից մկրտության գալով, մկրտվում է Հոր, Որդու և Ս. Հոգու անունով...»: Բանաձևերի տարբերության մասին տես Գրիգոր Տաթևացի (=ԳՏ), Գիրք հարցանց, Երուսաղէմ, 1993, էջ 588, Արշակ Տէր Միքելեան, Հա-

սրանից», ոչ թե մեր խոսքերի գորությամբ են խորհուրդները կատարվում, այլ Քրիստոսի խոսքերի գորությամբ, որոնք ավանդեց: Այսպես էլ երբ հրեշտակապետը շեփորահարում է. «Կանգնե՞ք, մեռյալնե՞ր», ոչ թե նրա խոսքով պիտի կանգնեն, այլ Քրիստոսի խոսքի գորությամբ, որ ով հրամայում է, և այդ խոսքն այնպես է գործելու հարություն տալիս, ինչպես աստվածային խոսքերը սկզբում, որ երբ [Աստված] ասաց. «Թող լույս լինի», «Թող հաստատություն առաջանա», իսկույն եղան (տե՛ս ԾԱՅ. Ա. 3, 6): Հրեշտակներն ընտրյալներին չորս կողմերից են հավաքելու, այսինքն՝ երկնքի և աշխարհի չորս կողմերից, որոնք են արեելքը, արեմուտքը, հյուսիսը և հարավը, որոնցից չորս գլխավոր քամիներն են փչում, իսկ մեղավորներին դեերն են բերելու Քրիստոսի առաջ: Գիտցի՛ր, որ ընտրյալները, հարության պարգևն ունենալով, հրեշտակների հետ արագ ընթանալու են, իսկ մեղավորները դեերի կողմից բարձրացված են բերվելու:




---

լաստանեակց Սուլբ Եկեղեցու Քրիստոնէականը, Երուսաղէմ, 1993, էջ 388, Սեպուհ ծայրագոյն վարդապետ Սարգսեան, Հայոց Եկեղեցւոյ խորհուրդներն ու ծեսերը, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Ա, Երևան, 1992, էջ 71:



## ԳԼՈՒԽ ԺԷ

### ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼՈՒՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այն ժամանակ երկնքի արքայությունը կնմանվի տասը կույսերի, որոնք իրենց լապտերներն առած՝ փեսային և հարսին դիմավորելու ելան» (Մատթ. հԵ 1):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Այսինքն՝ երբ Քրիստոսը երկնքից փայլակի նման ծագելու և դատաստանի գալու լինի, «այն ժամանակ երկնքի արքայությունը» (որ Եկեղեցին է՝ Նրա հավատացյալներն աշխարհի սկզբից մինչև այսօր) «կնմանվի տասը կույսերի, որոնք փեսային դիմավորելու ելան» (Մատթ. հԵ 1): Խոսքի իմաստն այն է, որ ինչպիսի բաներ պատահեցին տասը կույսերի հետ, նույնը պատահելու է այն ժամանակ իմ հավատացյալների հետ: Այստեղ «փեսան» Քրիստոսն է, «Հարսը»՝ սուրբ Աստվածածինը, ով Հարություն առած՝ Փեսայի հետ երկնքում է (թեպետ ընդհանրապես Եկեղեցին էլ է հարս),

«տասը կույսերը» բոլոր հավատացյալներն են, որովհետև կույսեր են անվանվում: Քանի որ կույս աղջիկները ջանում են հոգով և մարմնով անարատ լինել, ուստի առաքյալը հավատացյաներին կույսի է նմանեցնում՝ ասելով. «Ձեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի անբիծ կույս ներկայացնելու համար Քրիստոսին» (Բ Կորագ. ԺԱ 2): **Տասը թիվն այստեղ բազմության փոխարեն է դրվում՝ ըստ այնմ.** «Տասը կին ձեր հացը մի թոնի մեջ կեփեն» (ՂԱՏ. ԻԶ 26), **այսինքն՝ շատ կանայք:** «Մի՞թե ես տասը որդուց լավ չեմ» (ԱԹԱԳ. Ա.8), **այսինքն՝ շատ որդիներից:** Արդ, հավատացյալ կույսերը, որոնք հավատքով նշանվել են Քրիստոսի հետ, այն ժամանակ են իրենց լապտերները վերցնում, երբ մկրտվում են Հոր, Որդու և Ս. Հոգու անունով, և երբ ս. Մյուռոնի յուղով կնքվում են, վառվում և լուսավորվում են նրանց հոգու լապտերները Ս. Հոգու շնորհներով: Ուստի առաքյալը զգուշացնում է. «Մի՛ հանգցրեք Հոգին, որով կնքվեցիք Քրիստության օրվա համար» (Եփես. Դ.30), **այսինքն՝ մկրտության ժամանակ:** Եվ քանի որ այս կյանքը գիշեր է, ուր մեղքի և տղիստության խավարն է թանձրանում, ուստի Քրիստոսին ընդառաջ գնացող օրիորդները պետք է վառված լապտեր ունենան ձեռքերին:

**Մասնավորապես՝ «կույսերը» վարդապետ-**

ներն ու կույսերն են, ովքեր մարմնական կուսություն են ուխտում: Արանք իսկապես ընդառաջ են ելնում նմանատիպ կույս փեսա Քրիստոսին՝ ձեռքերին վերցնելով կուսության լապտերները, որպեսզի գնան Գառի հետեւից, ուր էլ նա գնա (տե՛ս Հազ. ԺԴ 4), որովհետեւ կուսությունը լապտերի նման լուսավոր է դարձնում ենթակային այս մեղսալից կյանքի գիշերում:

«Նրանցից հինգը հիմար էին, իսկ հինգը՝ իմաստուն» (ԻԵ 2): «Հիմարը» այստեղ անխոհեմ [մարդն] է, որովհետեւ անխոհեմ մարդը դեպքի ավարտը չի նկատում, ոչ էլ ապագան է նախապես տեսնում և ոչնչի մասին չմտածելով՝ լավ կարգավորում է իր գործերի շրջանակը. «Ով որ անմիտ է, խավարի միջով է գնում» (Ժող. Բ 14), առաքյալն էլ՝ «Չեն հասկանում այն բաները, որոնց վրա պնդում են» (Ա. Տիմ. Ա 7): Այսպիսին էին հիմարները, որովհետեւ չմտածեցին, թե գուցե փեսան ուշանա և լապտերի ձեթը բավական չլինի, այլ ճրագի ներկա վառվելը տեսնելով՝ կարճամտությամբ բավական համարեցին: Այսպիսին են հիմար հավատացյալներից ոմանք, ովքեր հավատքի վառումը և մանկական բարեգործություններն իրենց փրկության համար բավական համարելով՝ անհոգ են դառնում, ինչպես նաև միայն անունով հպարտացող կուսակրոններից

ոմանք: Իսկ իմաստուն [կույսերով] խոհեմներն են ցույց տրվում, որոնց հատուկ է ապագան նախապես տեսնելը և գործի վախճանը նկատի ունենալը, և դրանով վախճանի շուրջ դեպքերը լավագույնս կարգավորել: Այսպիսիների մասին իմաստունն ասում է. «Իմաստունի աչքը նրա գլխի վրա է» (Ժող. Բ 14), և թե՝ «Մարդու իմաստությունը լուսավորում է նրա դեմքը» (Ժող. Հ 1): *Սա հետեւում է հետեւյալից. ով հոգ է տանում գործի սկզբին, լավ ձևով է կարգավորում դրա միջին մասը և դրանով լուսավորվում է նրա երեսը:* Այսպիսին են այն իմաստուն հավատացյալները, որոնք հավատքի լապտերը վառ պահելու համար անընդհատ բարի գործի յուղն են պատրաստում՝ Փեսայի ուշանալու և մյուս պարագաների մասին մտածելով: Նաև նրանք են, ովքեր արքայության համար իրենց ներքինի դարձրեցին՝ հավատարմորեն պահելով իրենց ջերմեռանդության յուղը:

«Հիմարները լապտերները վեցրեցին, բայց իրենց հետ պահեստի ձեր չվերցրեցին» (ԻԵ 3): Այսպիսիներն ավելի վատն են, քան մըջունները, որոնք նախապես հոգում են ապագայի համար:

«Իսկ իմաստուններն իրենց լապտերների հետ ամաներով ձեր վերցրեցին» (ԻԵ 4): *մտաբերելով այն առածը, թե՝ «Պատրաստվեցի և չխոռվեցի» (Սաղմ.*

ԾԺԸ 60): Հիմարը բավական է համարում [Մկրտության] Ավագանի յուղը, իսկ իմաստունը, դա որպես հիմք ընդունելով, այլ բաներ էլ է պատրաստում, և ասես «Բետնում մնացած բաները մոռացած՝ դեպի առջևում ելածն է նկրտում» (Փիլ. Գ.13):

«Եվ երբ փեսան ուշացավ, բոլորը նիրհեցին և քուն մտան» (ԻԵ 5): «Քուն» այստեղ մահն է կոչում. բոլոր հավատացյալները, հավատքի լավտեր ունենալով, ննջում են մինչև Քրիստոսի գալուստը: Քնի օրինակն է բերում, որովհետև ինչպես մեզ համար է դյուրին քնածին արթնացնել, այդպես էլ Քրիստոսի համար՝ երկար դարեր առաջ մահացածին: Այդ պատճառով էլ Տերը սովորաբար մեռյալներին ննջեցյալի է նմանեցնում. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է» (Հովհ. ԺԱ 11), «Աղջիկը մեռած չէ, այլ ննջում է» (Մատթ. Թ. 24): Բայց ըստ Հովհաննեսի՝ երանի՝ այն մեռելներին, ովքեր բարի գործերի յուղի պատրաստությամբ ննջեցին ի Տեր (տե՛ս Հայտ. ԺԴ 13): Մրանք իրենց մահվան ժամանակ, ըստ իմաստունի, քաղցր քնի մեջ են լինում, ինչպես սաղմոսերգուն է ասում. «Մահվան ժամանակ [Նա] քուն է տալիս իր սիրելիներին» (Մաղմ. ԺԻ Զ): Իսկ անպատրաստները խղճմտանքով են ննջում և հարության ժամանակ արհավիրքներից զարհուրած են զարթնելու:

«Եվ կեսգիշերին ձայն լսվեց՝ ահա փեսան գալիս

Է, նրան դիմավորելո՞ւ ելեք» (հԵ 6): *Որոշ վայրերում փեսան սովոր է հարսի տուն երեկոյան գնալ և հարսին վերցնելով՝ վերադառնալ, որ բազմիցս կեսպիշերին է հանդիպում, որովհետև հապաղել են տալիս փեսային:* Այսպես էլ երկնավոր Փեսան իջավ հարս Մարիամի տուն, որ այս աշխարհն է՝ ըստ այնմ. «Մոռացի՛ր քո ժողովրդին և քո հոր տունը, քանզի թագավորը ցանկացավ» ևն (Սաղմ. ԽԴ 11): *Եվ Հարսին վերցնելով՝ երկինք գնաց, և այնտեղից Հարսին վերցնելով՝ գալու է դատելու համար, ինչը կեսպիշերին է լինելու՝ ըստ վարդապետների, ինչպես ծնունդը և հարությունը:* Այն խոսքը Գաբրիելի շեփորով է լինելու, որը նախ ընդհանրապես մարդկային ցեղին ասելու է. «Կանգնե՛ք, մեռյալնե՛ք», իսկ Քրիստոսին հավատով հարսնացածներին ասելու է. «Ահա Փեսան գալիս է, նրան դիմավորելո՞ւ ելեք»: Այն ժամանակ պատրաստները՝ որպես Փեսայի սիրահարներ, ջերմ սիրով փութով ընդառաջ կելնեն: Այս մտքով է առաքյալն ասում. «Ծեփորը կիչի, և Քրիստոսվ մեռածներն առաջինը հարություն կառնեն» (Ա.Թես. Դ 15): *Մանավանդ վառված լապտերներ ունենալով, այսինքն՝ հարության օժիտը, արագ կգնան Քրիստոսի մոտ:*

«Այն ժամանակ բոլոր կույսերը վեր կացան և իրենց լապտերները կարգի բերեցին» (հԵ 7): *Հարության*

ժամանակ բոլոր հավատացյալները մտածելու են, որ հավատում են Քրիստոսին և Նրա բոլոր տնօրինություններին. սա է լապտերների կարգի բերելը: Եվ որովհետև այստեղ հավատքն աղոտ է ճրագի նման, որն իր լույսը խավար տեղում է տարածում: Իսկ այնտեղ օրը լուսավորվելու է և մեծափայլ արեգակ Քրիստոսն է ծագելու բոլոր հավատացյալների սրտերում, որով պայծառանալու է բոլորի միտքը հավատալիքների շուրջ: Սա է բոլոր կույսերի կողմից իրենց լապտերների կարգի բերելը:

«Հիմարներն իմաստուններին ասացին. «Ձեր այդ յուղից տվեք մեզ, որովհետև ահա մեր լապտերները հանգչում են» (հԵ 8): Հիմարների խղճմտանքը, որն այստեղ անտեսում էին, երբ այն նրանց սիրտը ցավեցնում էր, այն ժամանակ իսկապես վկայելու է, որ բարեգործության յուղ չունեն: Այդ պատճառով էլ նրանց հավատքի լույսը մարելու է և ասես մեռնելու, այսինքն՝ այնտեղ իսկապես հասկանալու են, որ հավատքն առանց գործերի զորություն չունի, ուստի իրենք իրենցից անհույս լինելով՝ ընկերներին են աղաչելու՝ չիմանալով, որ «եղբայրը չի փրկում և ոչ մարդը, ոչ ել ուրիշին է տալիս իր հոգու փրկանքը» (Սաղմ. ԽԸ 8-9): Որովհետև այնտեղ հագիւ է փրկվելու անգամ հույժ արդարը, ուրեմն ինչպե՞ս կկարո-

ղանա օգնել մեղավորին։ Ուստի կպատասխանեն։ «Գուցե թե՛ մեզ և թե՛ ձեզ չբավականացնի. գնացե՛ք վաճառականների մոտ և ձեզ համար գնե՛ք» (հԵ 9): Իրավացիորեն են ասում. քանզի ո՞վ այնտեղ այնքան համարձակություն կունենա, որ նաև մեղավորներին պաշտպանի, որովհետեւ ահավոր բեմի վրա նաև երկնային զորություններն են շարժվում. ո՞վ նրան կաղաչի, որովհետեւ մեկը հազարի տեղ պատասխան չի տալու։ Վաճառականներից գնելն առակի հարմարության համար ասացին՝ մեղադրելու նպատակով, քանզի գիշերնի՞նչ վաճառական, որ նրանք գնեն։ Տերն այն գիշերի մասին ասաց. «Կատ գիշերը, երբ ոչ ոք չի կարող գործել» (Հովհ. Թ՛ 4): Բայց դու, այն սոսկալի գիշերվա մասին խոկալով, այստե՛ղ ուղղիր քո խղճմտանքը և քննի՛ր ինքդ քեզ. գուցե հավատքիդ լույսը, որ քո մեջ է, խավար լինի, այսինքն՝ առանցքարեգործության յուղի։ Այստե՛ղ վաճառական կա, այսինքն՝ աղքատները. ողորմություն տուր և նրանցից բարեգործության յուղը գնիր ու քո լապտերը պատրաստի՛ր, որպեսզի վառված լապտերով ընդառաջ ելնես երկնավոր Փեսային։ Կամավոր ներքինիներից շատերը, այնտեղ գործերի յուղը չունենալով, այստեղ զանազան ախտերի մեջ թափալվելու, անթառամ պսակը թառամեցնելու և չապաշ-

խարելու պատճառով, այնտեղ հանգած լապտերներով են լինելու:

«Եթե նրանք գնացին, փեսան եկավ, և ովքեր պատրաստ էին, նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուրը փակվեց» (ԻԵ 10): Քանի որ հիմար են, չեն մտածում, թե անհնար է այնտեղ ողորմություն գտնել, որովհետև ժամանակն անցել է, այլ մտքով թափառում են այս ու այն կողմ։ Նրանց մասին մարդարեն ասում է. «Ծների պես քաղց կզգան և քաղաքի շուրջ կպտտվեն» (Սաղմ. ԾՂ 15):

Այս խոսքերն այնքան էլ մեկնության կարիք չունեն, այլ միայն ըստ առակի պահանջի են դրված։ Արդ՝ այնտեղ օրիորդների կամ կույսերի երկու դաս է լինելու. մեկը՝ խավարած և այծերի նման սեացած, իսկ մյուսը՝ ոչխարների նման պայծառ և լուսավոր։ Հանգած լապտերներով կույսերը Փեսայի լուսավոր դեմքից հալածվելու են չղջիկների նման, իսկ պատրաստները նրա հետ մտնելու են հարսանիքի երկնային առագաստը, ողորմության դուռը փակվելու է, գթառատ Արարչի գութը վերջանալու է, և [հիմարները] մնալու են դուրսը։ Արտաքին խավարում մնալը դժոխք ընկնելն է, որն «արտաքին խավար» է կոչվում։ Բայց այստեղ շեշտը դրա վրա չի դնում, որովհետև լուսափայլ Փեսային տեսնելուց զրկվելն ավելի ահարկու

է, քան բյուր դժոխքները՝ ըստ Ոսկեբերանի<sup>1</sup>:  
Այդ պատճառով էլ միայն զրկվելն է դնում:

«Հետո եկան մյուս կույսերն ել և ասացին. «Տե՛ր,  
տե՛ր, բա՛ց արա» (իշ 11): Հիմարներին հատուկ է  
ապագայի մասին նախապես չմտածել և իս-  
կույն զղալ, երբ ձեռնարկված գործում նրանց  
կամքին հակառակ ինչ-որ բան է հանդիպում:  
Այսպես պատահեց հիմար կույսերի պարագա-  
յին, երբ տեսան, որ զրկված են փեսայից, լուսա-  
վոր ընկերներից և հարսանիքի ուրախությու-  
նից, սգի և զղման մեջ ընկան՝ ըստ այնմ. «Իրենց  
սրտում զղացին և հոգու անդությունից հառաջում են»  
(իմաստ. ԵՅ): ԵՎ սկսեցին ողորմության դուռը թա-  
կել, բայց ուշացած, որովհետեւ այնտեղ բացված  
է գտնում նա, ով այստեղ թակում է: «ԵՎ ասա-  
ցին. «Տե՛ր, տե՛ր, բա՛ց արա»: Իսկ նա ի՞նչ [պա-  
տասխանեց]՝ «Չեմ ճանաչում ձեզ» (իշ 12): Նա ձեզ  
այս կյանքում կանչում էր, բայց չէիք լսում,  
այդ պատճառով էլ արդարությունը պահան-  
ջում է, որ դուք էլ նրան կանչեք, և նա չլսի  
ձեզ. «Որովհետև կանչում եի, բայց չէիք լսում, երկար  
խոսում եի, բայց չէիք ունկնդրում, կկանչեք ինձ, բայց  
Ես ձեզ չեմ լսի, չարերը կփառտրեն ինձ, բայց չեն գտնի»  
(Առակ. Ա 24, 28): **Դու ա՛յժմ բաց քո ականջները և**

<sup>1</sup> Իմաստային մեջբերում է Ոսկեբերան հայրապետի Մատթեոսի Ավետարանի մեկնության համապատասխան հատվածից. տե՛ս Ցովիաննոց Ոսկեբերանի Կոստանդիանուակովի եպիսկոպո-  
սապետի Աւետարանագիրն Մատթեոս, Վենետիկ, 1826, էջ 79:

լսիր, թե ի՞նչ է Աստված խոսում, որպեսզի նա  
էլ այնտեղ քեզ լսի:

«Նա պատասխան տվեց և ասաց. «Ճշմարիտ,  
ճշմարիտ եմ ասում ձեզ. ձեզ չեմ ճանաչում»: Հիմար  
կույսերի՝ դուռը թակելը դժոխքում մեղավոր-  
ների զղջալն ու Աստծուն մտքով թախանձելն  
է նշանակում: Աստված էլ նրանց ճշմարտու-  
թյունն է ասում. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում  
ձեզ», այսինքն՝ ճշմարիտ եմ ասում ձեզ, թե քա-  
նի որ Աստված եմ, «ձեզ չեմ ճանաչում». [որով-  
հետև] անշո՛ւշտ Աստված նախախնամությամբ  
չի ճանաչում մեղավորներին: Նախ՝ հպարտնե-  
րին. «Բարձրամիտներին հեռվից է ճանաչում» (Սաղմ.  
ԾԼ:6). Երկրորդ՝ նախանձոտներին. «Ով իր եղբորն  
ատում է, Աստծուն չի ճանաչում» (Բմնտ. Ա Հովհ. Դ 20),  
ապա ոչ էլ Աստված՝ նրան, և երրորդ՝ բղջա-  
խոհներին. «Ծնացողն աչքը խավարին է հառում» (Հոր  
ԻԿ:15): Հայտնի է, որ խավարի մեջ դժվար է որևէ  
բան ճանաչել. թեպետ Աստված լույս է և խա-  
վարի գաղտնիքները ճանաչում է, բայց ի՞նչ  
միաբանություն կա լույսի և խավարի միջև:  
Այստեղ, ըստ նկարագրի, եթե կույսերը, որոնք  
այդքան ջանք թափեցին, միայն չունենալով  
սիրո և ուրիշ առաքինությունների յուղը, մնա-  
լու են հարսանիքի առագաստից դուրս, ապա  
ի՞նչ կլինի նրանց վերջը, ովքեր և՛ կուսական

*լապտերը կոտրեցին, և՝ չապաշխարեցին Աստծո փառքի համար:*

«Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք օրն ու ժամը» (ԽԵ 13): *Այս առակի վերջում զգուշացնում է մեզ, որ Հիմար կույսերի նման անպատճաստ չնիրհենք:* Եվ արդարեւ, մեծ զգուշության կարիք ունենք, քանզի մի ծառա կամ ժողովուրդ, եթե գիտի, որ իր տերը կամ հարկավորապես թագավորը գալու են, բայց ժամանակը չգիտի, պետք է ամեն ժամ զգույշ լինի, որպեսզի [տերը] հանկարծակի չգա, [և ինքը] անպատճաստ չլինի, այդ ժամանակ [տերը] պատուհասի պատիժը կբերի նրա վրա՝ ըստ այնմ. «Այդ ծառայի տերը կգա այն օրը, երբ նա չէր սպասում, և այն ժամին, որ նա չէր իմանում, նրան երկու կես կանի» (Ղոկ. ԺԲ 46):

Ուստի, քանի որ չգիտենք մեր մահվան օրը, ոչ էլ Փեսայի գալստյան ժամանակը, ամեն ժամ պատրա՛ստ լինենք, որպեսզի չար ծառայի և հիմար կույսերի դատաստանին չարժանանանք:

#### **ԱՎԱՐՏ ՄԱՍԹԵՈՍՅԱՆ ԱՌԱԿՆԵՐԻ**



## ԳԼՈՒԽ ԺԸ

### ՄԱՐԴԿԱՅԻՆ [ԲՆՈՒԹՅԱՆ] ԱՆԿՄԱՆ ՀԱՐԻՔՆ ՈՒ ՆՐԱ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

«Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իշնում և ավագակների ձեռքն ընկավ, որոնք նրան մերկացրին, վիրավորեցին, կիսամահ թողեցին և գնացին» (Ղոկ. Ժ 30):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես մեր Տերն այս առակը պատմեց օրենսուսույցին, ով փրկության ճանապարհն էր փնտրում: Երբ Աստծո և ընկերոջ նկատմամբ սերը և մյուս պատվիրանները ներկայացրեց, նա ցանկացավ իրեն արդարացնել՝ ասելով. «Իսկ ո՞վ է իմ ընկերը». ասես թե ուզում էր ասել. «Իսկ ո՞վ է ինձ նման օրինապահ»: Բայց Հիսուսը գիտեր, որ թեպետ նա պատվիրանները պահել էր, բայց ընկերների նկատմամբ բավարար չափով սեր և գութ չուներ: Այս պատմությամբ [Տերը] ընկածի աղետն ու սամարացու գութը ցույց տվեց և պատվիրեց հետեւել նրան, ով ողորմություն արեց, և դրանով հասնել փրկության: Սա նաև

**պատանուն կարգադրեց և պատվիրեց, ով էլ  
ասաց. «Այդ բոլորը պահել եմ իմ մանկությունից» (Ղոկ.  
ԺՀ. 21):**

Խորհրդանշաբար մեկ մարդով մեր մարդ-  
կային բնությունն է ցույց տրվում, և սա [Ս.  
Գրքի] բազում տեղերում կարելի է տեսնել,  
ինչպես՝ կորած մեկ դրամը, մոլորված մեկ ոչ-  
խարը և անառակ մեկ որդին, որոնք նույն  
բանն են նշանակում (տես Ղոկ. ԺԵ 4, 13, 18): Բայց  
հատկապես Աղամին է [այդ մարդը] խորհր-  
դանշում: Երուսաղեմը «խաղաղության վայր» է  
թարգմանվում և դիրքով երիքովից բարձր է:  
Դրախտն է նշանակում, որ ամբողջ երկրից էլ  
բարձր է, այդ պատճառով նաև «երկինք» է կոչ-  
վում՝ ըստ այնմ. «Մեղանչեցի երկնքի և քո դեմ» (Ղոկ.  
ԺԵ 18): Նաև խաղաղության տեղն է, այսինքն՝  
Աստծո, որովհետև սկզբում Աստված այնտե՛ղ  
մարդուն երևաց: Դարձյալ՝ ինչպես երուսա-  
ղեմն է [մարդու] վերստին ստեղծման օրքա-  
նը՝ ըստ այնմ. «Սիոնն է մայր կոչվում, որտեղ մար-  
դը ծնվեց» (Սաղմ. ԶԶ 5), այդպես էլ դրախտը՝ մեր  
ստեղծման, որովհետև մեր մայր եվան այնտեղ  
ստեղծվեց, բայց երբ օձի հրապուրանքով խաբ-  
վեց, երուսաղեմից սկսեց իջնել ու ամայացավ:  
Այս միտքն է [շարականագիրը] արտահայտում.  
«Օձի մատուցած պատրանքով ճաշակեց պտղից և

զրկվեց Երուսաղեմ մայրաքաղաքում բնակությունից»<sup>1</sup>,  
այսինքն՝ դրախտում:

Այստեղ երեք դժվարություն է առաջ գալիս.  
նախ՝ քանի որ արտաքսված էր, ինչո՞ւ է աս-  
վում՝ «իջնում էր»՝ ասես կամովին: Սրանով ցույց  
է տրվում, որ մեղավորի պատիժը նրա կամքին  
է հետևում: Ուստի չպետք է Աստծուն մեղադ-  
րել, քանի որ [մարդը] ի՞նքը մեղքը ցանկացավ,  
որին հարկադրաբար արտաքսումը հետևեց, այդ  
պատճառով էլ կամավորապես դրախտից իջակ  
և ոչ թե ակամա: Այսպես գողն ըստ իր կամ-  
քի է կախվելու տարվում: Երկրորդ՝ [մարդը]  
ավագակի կողմից փորձվեց, երբ դրախտում էր.  
ուրեմն ինչո՞ւ է հետո դնում: Պատասխանեմ:  
Դրախտում թեպետ օձը խաբեց նրան, բայց  
չտիրեց, [քանի որ մարդը] Ստեղծողի շնորհի  
և հոգածության ներքո էր: Բայց երբ դրախ-  
տից արտաքսվեց և մանավանդ Աստծո խնամ-  
քից [զրկվեց], այն ժամանակ [մեղքը] տիրեց և  
թագավորեց նրա մեջ՝ ըստ այնմ. «Աստված թողեց  
նրան. հալածենք և հասնենք նրա վրա, քանի որ չկա մե-  
կը, որ փրկի նրան» (Սաղ. Հ 11): Դրա համար [սա-  
տանան] դրախտում օձի կերպարանքն առավ,  
որը խորամանկությունն է խորհրդանշում, իսկ  
դրսում՝ ավագակի, որը բռնության ապացույցն  
է: Երրորդ՝ [խորհրդանշում էլ] մերկացումը,

<sup>1</sup> Ծարական, Էջ 370:

**Քանի որ դրախտում եղավ.** «Նրանց աչքերը բացվեցին և հասկացան, որ մերկ էն» (Մատ. 9:7):

Իսկ թե ինչո՞ւ է ասում, թե [Երուսաղեմից] դուրս «մերկացրին նրան», պատասխանեմ: Իմաստունն ասում է. «Բոլորն էլ, ովքեր նրա շուրջն են, կրկնակի հագուստ են հագել» (Առակ. 1,Ա 21): **Ուստի սրբերը նրա շուրջն են.** «Աստված փառավորված է իր սրբերի խորհուրդներում, մեծ և ահավոր է Նա իր շուրջը եղողմերի համար» (Սաղմ. ԶՀ 8): **Նրանք երկու պատմուճան են հագել. մեկը՝ Աստծո սիրո, իսկ մյուսը՝ ընկերոջ:** Նույն ձեռվ էլ մեր մարդկային բնությունը դրախտում Աստծո սիրո պատմուճանից մերկացավ, իսկ դրսում՝ ընկերոջ: **Որտեղի՞ց են այսքան կռիվներ, արյունահեղություններ, մարդասպանություններ և այլն, եթե ոչ միմյանց նկատմամբ ատելությունից.** «Բնությանը [Աստծո] բարկությանն արժանի որդիներ էինք» (Եփես. Բ 3), **այսինքն՝ ի բնե ատված էինք և միմյանց ատում էինք:**

Երիքովը, որ թարգմանվում է լուսին [կամ] փոփոխում, այս աշխարհն է նշանակում, որ լուսին նման միշտ փոփոխվում է. «Նրա օրոք արդարություն և մեծ խաղաղություն կտիրի, մինչև լուսնի լրումը» (Սաղմ. ՀԱ 7), **այսինքն՝ մինչև աշխարհի վերջը:** **Արդ՝ Աղամ մարդը երուսաղեմ՝ դրախտից այս աշխարհ երիքովն իջնելիս իր սերունդներով**

ընկավ չար ավագակների՝ դեերի ձեռքը, որոնք [նրանց] կիսամահ թողեցին։ Եվ նախ եղայրական սիրո զգեստից մերկացրին, երկրորդ՝ [Աստծո] ձրի պարզեների զգեստներից, երրորդ՝ բնական չնորհների զարդերից, քանի որ բանականը, ցանկականը և ցամականն իրենց սահմանված զորությունը թողեցին և անասունների բարքը վերցրին։ Այս մտքով է [սաղմոսերգուն] ասում. «Մարդը պատիվ ուներ, բայց չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու նմանվեց նրանց» (Սաղմ. ԽԸ, 21): Նաև դրախտում [ավագակները] սկզբնական արդարությունից մերկացրին, իսկ դրսում՝ քաղաքական<sup>2</sup> և մաքրող արդարությունից: «Եվ վիրավորեցին». Հոգին խոցոտեցին. բանական մասը՝ տղիտությամբ, ցամականը՝ բարկությամբ և ցանկականը՝ ախտերով, սրանց վրա էլ բոլոր մեղքերի նետերով նրան սպառնացին, «կիսամահ թողեցին և գնացին»:

Պիտի հարցնես՝ եթե դրախտում է մարդկային բնությունը սկզբնական արդարության և չնորհների հանդեպ մեռած ասվում՝ ըստ այնմ.

<sup>2</sup> Ըստ Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետ ս. Գրիգոր Տաթևացու՝ առաքինությունը բաժանվում է երեք մասի՝ բարյական, տնտեսական և քաղաքական: Ըստ Օրա՝ քաղաքական առաքինությունն այն է, երբ մարդ սիրում է բարին և ատում շարը, մշտապես բարիք է գործում և հանցավորներին ներում. տես Գրիգոր Տաթևացի, Ամառան հասոր, Երուսաղէմ, 1998, էջ 95, հմմտ. Համառօտութիւն, էջ 313:

«Այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» (Ծանդ. Բ 17), ապա ինչո՞ւ է այստեղ «կիսամահ» ասում: Պատասխանեմ: Մարդու կյանքը կրկնակի է՝ հոգեոր և մարմնավոր: Հոգեորը մասսամբ մեռցրին դրախտում, մասսամբ էլ՝ [դրախտից] դուրս, իսկ մարմնավորը կենդանի թողեցին: Եվ ով այսպիսի կյանք ունի, կիսամահ է ասվում: Դարձյալ՝ դրախտում մարդն անմահ էր, իսկ դրսում մարմինը մահկանացու դարձավ, և այսպես մարդը կիսամահ մնաց. սա արեցին ավագակները: Դարձյալ՝ ինչպես զեկի կոտրվելու ժամանակ նավն ասես կիսամեռ է լինում, այդպես էլ, երբ մարդու բանականությունը մեղքերով կուրացրեցին և արարածներին ծառայեցրին, մարդն անասունների նման կիսամահ դարձավ: Իսկ ըստ մեր սուրբ Իգնատիոս Շնորհալի վարդապետի՝ քանի որ [Տերն իր այս առակում] մեկ մարդով ցույց տվեց մեր մարդկային բնությունը<sup>3</sup>, Հայտնի է, որ շա-

<sup>3</sup> Դգնատիոս Սկլեոնցի կամ Շնորհալի մեկնիշի մասին կենսագրական տվյալները քիչ են: Նա իր նախնական կրթությունը ստացել է Քեսումի Կարմիր վաճրում Ստ. Մանոկ եպիսկոպոսի մոտ՝ իրեն աշակերտակից ունենալով Գրիգոր Պահլավոնուն, Ներսես Շնորհալուն և մեկնիշ Սարգիս վարդապետին: Ղուկասի Ավետարանի մեկնությունը նա գրել է Գրիգոր Գ Պահլավոնի կաթողիկոսի (1113-1166) հանճնարարությամբ 1130 թ.: Հեղինակն օգտագործել է և Հովհան Ուկեբերանի Ղուկասի Ավետարանի մեկնության շատ հատվածներ, որոնց հունարեն բնագրերը չեն պահպանվել: Բերդումյանն իր այս աշխատության մեջ բոլոր մեջբերումները կատարել է Դգնատիոսի Ղուկասի Ավետարանի մեկնությունից: Այս մասին տես Գ. Զարքհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն

**տերը տարբեր ժամանակներում Ամենակալի հզոր ձեռքով ազատ մնացին այս նեղությունից՝ բանսարկուի թույներից, և մեզանից երբեք Աստծո շնորհների նշույլը չմարեց, ուստի կիսամահ մնացինք.** «Բայց եթե Զորությունների Տերը մեզ զավակ չթողներ (Կյանքի լույս Քրիստոսին), այդ ժամանակ ամբողջովին մահանալով՝ Սոդոմի Յանակ կլինեինք և Գոմորին կնմանվեինք» (Ես. Ա. 9): «Եվ գնացին». ինչպես ավագակներն են թողնում վիրավորներին, այնպես էլ դեերն են լքում նրանց, ում խոցոտում են:

«Այնպէս պատճեց, որ մի քահանա նույն ճանապարհով էր իշնում և նրան տեսնելով՝ անտեսեց»:

«Քահանան» խորհրդանշում է Ահարոնին նրա սերունդներով: «Նույն ճանապարհով իջնելը», այսինքն՝ երուսաղեմից երիքով, ծնվելով՝ սկզբնական մեղքի մեջ իջնելն է նշանակում: Իսկ անտեսելու պատճառը [հետեւյալն է]. նախ՝ որովհետև վերքերը հոգեւոր էին, իսկ Հին [Ուխտի] քահանաների սպեղանիները՝ մարմնավոր. Օրենքը ոչ մի կատարելության չբերեց, ո՛չ էլ տվեց ազնվական հույսը, որով Աստծուն ենք մոտենում. «Ցույերի արյունը և երինչների [շաղտրված] մոխիրը մաքրում էին պղծվածներին մարմնի

---

(Դ-Ժ դար), Վենետիկ, 1897, էջ 642-643, Նորագր եպս. Պողարեան, Հայ գրողներ Ե-Ժ դար, Երուսաղեմ, 1971, էջ 221: Վերոգրալն իմաստավին մեջբերում է. տես ՄԱՍԱ, էջ 185-187:

մաքրության համար» (Եբր. Թ: 13): **Երկրորդ՝ քանի որ**  
անմարմինն էր նրան խոցել, ուստի մարմնավոր  
մարդը չէր կարող բժշկել: Երրորդ՝ Աստծո դեմ  
մեղանչեց և խոցվեց, ուստի միայն Աստված  
կարող էր նրան բժշկել:

«Նույնպես և մի դետացի նույն տեղով անցնելիս  
անտեսեց»:

Արդ, «**դետացին» Մովսեսն է՝ բոլոր մար-  
դարեներով հանդերձ: Նույն պատճառով նաև  
նրա՞նք անտեսեցին, որովհետև վերքի ուժեղ  
ցավերին զորավոր դեղեր էին պետք. տկար  
մարմին ունենալով՝ չէին կարող ապաքինել:**

«Մի սամարացի, որ նույն ճանապարհով էր գնում,  
տեսնելով նրան՝ գթաց»:

[Տերը] «սամարացի» իրեն է անվանում,  
որով թերեւս նախատում է հանդուգն հրեական  
ցեղին: Նա այն նույն ճանապարհով եկավ, որով  
մարդը գալով՝ [ավազակների ձեռքը] ընկավ:  
Որովհետև ինչպես նա երուսաղեմից իջավ,  
այնպես էլ Սա՝ Վերին երուսաղեմից երիքով՝  
այս աշխարհն իջավ, ինչպես մի հովիվ, որ մո-  
լորքած ոչխարի հետևից է գնում: «Եվ տեսնելով  
նրան՝ գթաց», որովհետև այս կյանքի ճանապար-  
հին կիսամահ ընկած էր՝ չունենալով դարմանիչ,  
և չկար մեկը, որ փրկեր նրան՝ ըստ Եսայու (տե՛ս  
Ես. Ա. 6), դրա համար էլ գթության էր արժանի:  
Դարձյալ՝ այն նույն ճանապարհով եկավ, որով

ամեն մարդ է ծնվում աշխարհ գալիս, թեպետ  
Նա՝ անսերմնաբար: Եվ սա՝ երկու պատճառով.  
Նախ՝ որպեսզի աստվածային չարչարանքներով  
Հատուցի մեր պարտքերը, երկրորդ՝ որպեսզի  
աստվածային արյամբ բժշկի հոգով խոցվածին:  
Եվ սրանք չէին կարող պատահել, եթե [Տերը]  
Հաղորդվեր [մարդկային] մարմնին և արյանը,  
որով էր չարչարանքները կրելու, թեպետ աստ-  
վածային բացարձակ զորությամբ ամեն ինչ  
կարելի է և հնարավոր:

«Եվ մոտենալով՝ կապեց նրա վերքերը, վրան ձեռ  
և գինի ածեց, և դնելով նրան իր գրաստի վրա՝ տա-  
րավ մի իջևան և խնամեց նրան»:

Հնում այս վիրակապն ու ձեթը չկային, այդ  
պատճառով էլ մեր մարդկային բնությունը  
վերքերով թարախակալում էր: Ուստի եսային  
ողբում էր. «Ոտքերից մինչև գլուխ նրա վրա առողջ  
տեղ չկար. վերքերի, այտուցների և շարավոտ խոցե-  
րի վրա դնելու ո՞չ ձեռ, ո՞չ էլ վիրակապ կար» (Ես. Ա. 6):  
Ահա եսային ևս մեր մարդկային բնությունը  
մեկ մարդով է ցույց տալիս: Գոհություն և  
փառք մարդասեր Աստծուն, որովհետև այն-  
պիսի ժամանակի հանդիպեցինք, երբ երկնային  
Բժիշկը վիրավորներիս առատաբար բաշխում է  
աստվածային սպեղանին, թեպետ նեխած վեր-  
քերով որոշ անձինք, այս Բժշկին իրենց մոտ ունե-  
նալով, սպեղանին չեն ինդրում. որովհետև չեն

Ճանաչում իրենց վերքերը։ Այս ձեթի համար էր եսային հառաջում։ Հասկացի՛ր այստեղ Փրկչի քաղցր մարդասիրությունը, ով տեսնելով [վիրավորվածին, ընկածին ևն]՝ իսկույն գթաց և [վերքերը] կապեց։ «Զեթը» Ս. Հոգու շնորհներն են՝ դրոշմված Հին և Նոր [Ուխտերում] զանազան յուղերի մեջ, որոնցով օծում էին թագավորներին, քահանաներին և այլն։ Այս ձեթը մեր բնությունից վերացել էր. «Ի՞ն հոգին թող չմնա նրանց մեջ, որովհետև նրանք մարմնավոր են» (Մամ. Զ. Յայց Քրիստոսի միջոցով առատացավ. «Քանի որ Հոգին դեռևս չկար, որովհետև Հիսուսը դեռևս փառավորված չէր» (Հովհ. Է. 39): «Ի՞ն Հոր խոտումը ձեզ կուղարկեմ» (Ղուկ. Ի. 49), այդ պատճառով էլ Նրա անունը «Թափված յուղ» (տես Երգ Ա. 2) է կոչվում։ Նաև ձեթն ունի բժշկելու զորություն, ուստի բժիշկների կողմից բազում դեղերի մեջ է օգտագործվում։ Իսկ «գինին» Քրիստոսի փրկակական արյունն է, որ Նրա կենսաբեր վերքերից հոսելով՝ բժշկեց մեզ. «Նրա վերքերով բժշկվեցինք» (Ես. ԾԳ. 5): Եկեղեցու մեծ սպեղանիներ են սրանք. որովհետև Հոգու ձեթով բժշկվում ենք սկզբնական վերքից, իսկ արյան գինով՝ ներգործականներից<sup>4</sup>:

<sup>4</sup> «Սկզբնական վերք» ասելով՝ Բերդումյանն ի նկատի ունի աղամական կամ սկզբնական մեղքը, որը մեր նախածնող Ադամի պատվիրանազանցության, անհնազանդության պատճա-

**Քրիստոսի գրաստը սուրբ Խաչն է.** «Զի հեծ-  
Ակնվ բուսաբեր արմատին»<sup>5</sup>: «Իջևանը» Եկեղեցին  
է. այն ժամանակ ենք գրաստի վրա դրվում,  
երբ Ավագանի մեջ ենք մտնում, որ խաչի խոր-  
հուրդն ունի, ուր մասնակից ենք դառնում  
[Քրիստոսի] մահվանը. «Մկրտությամբ թաղվե-  
ցինք Նրա հնատ մահվան մեջ» (Հով. Զ.4) և այնուհետև  
դրվում ենք իջևանում, այսինքն՝ Եկեղեցու որ-  
դիներ ենք դառնում:

«Եվ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս ալմտեղից,  
իշեանատիրոջը երկու դահեկան հանեց տվեց և ասաց.  
«Խնամի՛ր նրան և ինչ ծախսես դրա վրա, իմ մկուս ան-  
գամ գալուն կհատուցեմ քեզ»:

**«Ելնելը»** Քրիստոսի համբարձվելն է նշա-  
նակում, իսկ «իջևանատերը» Եկեղեցու պետն  
է, ում և [Հիսուսը] հանձնում է բուժվածին.  
«Արածեցրո՞ւ իմ գառներին» (Հով. հԱ. 15), նաև համ-  
բառնալիս ասաց. «Մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և  
Ս. Հոգու անունով» (Մատթ. հԸ. 19): **Իսկ այժմ իջևանա-  
տերերը բոլոր քրիստոնյաների հայրապետերն**

ոռվ սերնեսերունդ փոխանցվում է բոլոր մարդկանց: Ցուրա-  
քանչյուր ադամորդի ծնվում է այս մեղքով, և այն մաքրվում է  
միայն Մկրտության խորհրդի միջոցով՝ Սուրբ Հոգու զորու-  
թյամբ: Ներգործական են կոչվում այն մեղքերը, որոնք մարդ  
գործում է Մկրտությունից հետո: Դրանք լինում են Սերելի և  
մահացու: Ներգործական մեղքերից մարդ մաքրվում է Ապաշ-  
խարության խորհրդի միջոցով և հնարավորություն ստանում  
ճաշակելու Տիրոջ մարմինն ու արկունը:

<sup>5</sup> Շարական, էջ 232:

են, ինչպես հայերինը, եթովպացիներինը, ասուրիներինը, դպտիներինը, ֆռանկներինը<sup>6</sup>, Հույներինը և մյուսներինը։ Քանզի զազրելի է ասելը. «Բոլոր ազգերի հայրապետերը մոլորվեցին, և միայն պապը անմոլար մնաց»։ [Սա սխալ է], որովհետև բոլորն էլ առաքյալների կողմից սահմանված հավատքի տասներկու մասերն ունեն<sup>7</sup>։ «Երկու դահճեկանը» Հին և Նոր Կտակա-

<sup>6</sup> Հեղինակը նկատի ունի Հոռմեական Կաթոլիկ Եկեղեցու Բետորդերին։

<sup>7</sup> Բերդումյանն աստեղ նկատի ունի առաքելական հանգանակը, որ Ըերտուութիւնը է հավատոքի 12 կարևոր սկզբունքները։ Ըստ Արևմոյան Եկեղեցու ավանդության՝ այդ հանգանակի հեղինակ-Եերն առաքալներն էին, որոնցից լորաքանչորը բանաձեռնելու հավատոքի սկզբունքներից մեկը Առաքելական հանգանակի հնագույն բացատրությունը տվել է պատմիչ և աստվածաբան Ռուփինոսը († 410) «Առաքյալների հանգանակի մեջնություն» աշխատության մեջ, իսկ կազմության մանրամասները պամանվել են Օգոստինոսին (354-430) Վերագրված ճառերից մեջում՝ «Հանգանակի մասին» վերտառությամբ։ Ըստ Վերջին՝ Տիրոց համբարձումից հետո, երբ աշակերտները միասին էին, Տերն ուղարկեց նրանց Միհթարիշ Սուրբ Հոգուն, որից զորանալով՝ առաքյալներից լորաքանչորն ասաց.

1. Պետրոս՝ «Հավատում եմ ամենակարող մեկ Տեր Աստծուն... երկնքի և երկրի Արարշին»,
2. Անդրեաս՝ «Ա Նրա Որդի Հիսուս Քրիստոսին... մեր միակ Տիրոջը»,
3. Հակոբոսը՝ «Ով Բոհացվեց Սուրբ Հոգուց... ծնվեց Կույս Մարիամից»,
4. Հովհաննեսը՝ «չարչարվեց Պոնտոս Պիղատոսի ժամանակ... իսաչվեց, մեռավ և թաղվեց»,
5. Թովմասը՝ «իշավ դժոխք... երրորդ օրը հարություն առավ մեռնելներից»,
6. Հակոբոսը՝ «համբարձվեց երկինք... նստեց ամենակարող Հոր աջ կողմում»,
7. Փիլիպոսը՝ «գալու է դատելու կենդանիներին և մեռել-

ըաններն են, որոնցով պետք է հայրապետերը,  
ովքեր Քրիստոսի Եկեղեցու իջևանատերերն  
են, կրթեն և դարմանեն Քրիստոսի Եկեղեցին  
Աստծո և ընկերոջ նկատմամբ սիրո մեջ:

Եվ երանի թե հավատարմորեն ծառայեն Եկե-  
ղեցուն, որպեսզի Քրիստոսի Հաջորդ գալստ-  
յան ժամանակ, արեգակի նման, փառքով ան-  
գուգական երևան զավակների մեջ և համար-  
ձակ ասեն. «Ահա ես և ին զավակները» (Ես. Հ. 18): Եվ  
այդ ժամանակ իրենցից [խնամքի] դիմաց ի՞նչ  
կստանան Նրանից, ով ասաց. «Իմ մլուս անզամ  
գալուն կհատուցեմ քեզ»: Իսկ եթե ծուլանան վի-  
րավորվածներին դարմանելու մեջ և արածեցնե-

Աերին»,

8. Բարթողիմեոսը՝ «Բավատում եմ Սուրբ Հոգուն»,
9. Մատթեոսը՝ «Ընդհանրական Սուրբ Եկեղեցուն... սուրբե-  
նի հաղորդությանը»,
10. Սիմոնը՝ «Եղացերի թողությանը»,
11. Թագենոսը՝ «մարմնի հարությանը»,
12. Մատթիան՝ «Բավիստեմական կյանքին»:

Առաքելական այս հանգանակի՝ առաքյաների կողմից  
գրված լինելու փաստը ոչ միանշանակ է մեկնարանվել Բյու-  
զանդական և Արևելյան Եկեղեցիների կողմից: Մասնավորա-  
պես 1438-1435 թթ. ժողովում Եփեսոսի միտրոպոլիտ Մարկոս  
Եվլենիգուսն առարկեց ավանդական մոտեցմանը՝ նշելով, որ  
եթե առաքյաներն այն խմբագրած լինեին, ապա դրա մասին  
հիշատակություն կինեն Գործք Առաքելոցում: Արանց հետո  
Արևմուտքի Եկեղեցիները առաքելական հանգանակը դիտել  
են որպես Բ դարում խմբագրված դավանաբանական մի փաս-  
տաթուղթ՝ նորադարձների հավատն ամրապնդելու համար: Այս  
մասին տես J. N. D. Kelly, Early Christian Creeds, Third edition,  
Longman, 1972, p. 1-6, 368-404, ՔՀ, Երևան, 2002, էջ 571-577:

լիս իրենք պարարտանան, վա՛յ նրանց, որովհետև Քրիստոսի վարձքից կզրկվեն և փոխարենը նախատինք կստանան:

«Արդ, ըստ քեզ, այդ երեքից ո՞րը մերձավորի պես վերաբերվեց նրան, ով ավագակների ձեռքն էր ընկել»:

Հասկացի՛ր, ո՛վ հրեա, որ հանդգնելով՝ Հիսուսին սամարացի ես անվանում և Մովսեսով պարծենում: Հրեա մարդն ավագակների ձեռքն ընկավ, բայց ո՛չ Ահարոն քահանայից, ո՛չ Էլ ղետացի Մովսեսից, ովքեր իր մերձավորներն էին, ողորմություն գտավ, այլ մեր Սամարացուց:

Բարոյականապես՝ Երուսաղեմից Երիքով իջած մարդը նա է, ով արդարությունից դեպի մեղքն է գնում, ինչպիսին են այն խոստովանողներն ու հաղորդվողները, ովքեր նորից իրենց փսխածին են դառնում: Արդարեւ, այդպիսիները կրկին ավագակների՝ դեերի ձեռքն են ընկնում և խոցոտվելով՝ չարաչար մեռնում՝ ըստ այնմ. «Ով արդարությունից դառնում է դեպի մեղքը, Աստված նրա համար նիզակներ է պատրաստել» (Սիր. Ի.Զ. 27): Այսօրինակով Սեմեին զղաց, հրամայվեց, որ Երուսաղեմում մնա, բայց երբ դուրս ելավ, սպանվեց (Գ.Թ.ագ. Բ.36-46): Դարձյալ՝ յուրաքանչյուր կրոնավորի համար Երուսաղեմն իր վանքն է. եթե

այնտեղից դուրս է գալիս առանց հրամանի,  
չար ավագակների՝ դեերի ձեռքն է ընկնում և  
չարաչար վիրավորվում։ Թեպետ քահանայի և  
դետացու նման բազում մերձավորներ են հան-  
դիպում նրան, բայց անտեսում են, իսկ հետո  
Քրիստոս սամարացին է պատահում։





## ԳԼՈՒԽ ԺԹ

[ԱՅՆ ՄԱՍԻՆ], ՈՐ ՀԱՐԱՏԵՎ ԱՂՈԹՔՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ [ՄԱՐԴ]  
ԽՆԴՐՈՒՄ Է

«Եվ ասաց նրանց. Զեզանից ո՞վ է, որ բարեկամ ու-  
նենա, գնա նրա մոտ գիշերը և ասի նրան. Բարեկա՞մ,  
ինձ երեք նկանակ փո՞խ տուր» (Ղոկ. ԺԱ. 5):

## ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների խնդրանքի համաձայն՝ երբ  
աղոթքի ձեւը սովորեցրեց և նրա մեջ պատվի-  
րեց հանապազօրյա հացը և պարտքերի նե-  
րումը խնդրել, այդ ամենը հաստատելու հա-  
մար այս առակն ասաց, որպեսզի բնական այս  
օրինակով քաջալերվեն՝ [մտածելով], որ ինչ  
որ իրենք [աղոթքի մեջ] խնդրեն, անպայման  
կստանան: Ուստի պարզ օրինակ է բերում, այ-  
սինքն՝ մարդկանցից, որպեսզի առավել համոզ-  
վեն այդ խոսքի մեջ: Որովհետև եթե տկար և  
կարիքավոր մարդը թախանձանքից ձանձրա-  
նալու պատճառով տալիս է խնդրածը, ինչպես

և անիրավ դատավորը (տե՛ս Ղուկ. ԺՀ 5), ապա ինչ-քա՞ն առավել երկնավոր Հայրը։ Ուստի վերջում հավելում է. «Իսկ եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարզեցներ տալ» ևն (ԺԱ 13):

Խորհրդապես՝ «բարեկամ» է մեզ համար Հայր Աստված։ Բարեկամը երեք հատկություն ունի. նախ՝ հաղորդակից դարձնել իր բարուն նրան, ում սիրում է. այսպես արեց Աստված արարչագործությամբ՝ հաղորդակից դարձնելով իր բարուն, այսինքն՝ կյանքին և մտքին՝ ըստ այնմ. «Բնությամբ բարին, չհանդուժելով...»<sup>1</sup>։ Երկրորդ՝ նեղության ժամանակ օգնության հասնել. «Աստված այնքան սիրեց այս աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց» (Հովհ. Գ 16)։ Երրորդ՝ խորհրդակից դարձնել. «Հոգին, որ Հայրը կուղարկի, Նա կուտուցանի ձեզ ամեն ինչ» (Հովհ. ԺԴ 26)։ Հստ այս երեք հատկությունների՝ բարեկամ է մեզ համար նաև մեր Տերը. նախ՝ հաղորդակից դարձնելով իր բարուն. «Հայր, ինչ տվեցիր, նրանց տվեցի» (Հովհ. ԺԸ 7)։ Հայրը Նրան երեք բան տվեց՝ աստվածությունը, մարդկային բնությունը և Հոգին։ Առաջին [երկուսը] տվեց մեզ, երբ ասաց. «Առե՛ք, կերե՛ք» (Մատթ. ԻԶ 26), Հոգին էլ փչելով և ուղարկելով. «Առե՛ք Սուլը Հոգին» (Հովհ. Ի 22)։ Երկրորդ՝ օգնելով. «Ավելի մեծ սեր ոչ ոք չու-

<sup>1</sup> Շարական, Էջ 442:

նի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13): **Երկրորդ՝ իրեն խորհրդակից դարձնելով.** «Ոտք Խմ բարեկամներն եք, որովհետո ինչ լսեցի Խմ Հորից, Բայտնեցի ձեզ» (Հովհ. ԺԵ 14-15): **Ինչպիսի ժամանակ էլ աղոթքով գնանք այսպիսի բարեկամի մոտ, պատրաստ է մեր խնդրածը տալ, ուստի Հորդորում է ամեն ժամ աղոթել.** «Պետք է ամեն ժամ աղոթել և չձանձրանալ» (Ղոկ. ԺՀ 1): **Իսկ երկրավոր տերերի դռների մոտ գնացողները շատ անգամ դատարկ են վերադառնում:** Բայց դժվար է, երբ գիշերն են խնդրում, քանզի այդ ժամանակ դռները փակված են, իսկ մանուկները՝ անկողնում, ուստի դժվար է վեր կենալը: **Երանի՛ նրան, ով Հոգեոր նախապատրաստություն և ամեն ժամ զգուշություն ունի,** որպեսզի բարեկամի գալու ժամանակ չամաչի, մանավանդ երբ չգիտենք, թե ե՛րբ է գալու. **արդարեւ՝ «Զգիտես, թե ե՛րբ տանտերը կգա՝ երեկոյա՞ն, կեսօնիշերի՞ն» ԱՆ** (Մարկ. ԺԳ 35): **Ուստի մենք պետք է ապաշխարության արթնությամբ ամեն ժամ պատրաստ լինենք:** Արդ, «կեսգիշերը» երեք բան է նշանակում. նախ՝ մեղավոր երիտասարդների կյանքը, ուր ամենենին բանականության լույսը վերացած է, ինչպես գիշերը՝ արեգակինը. «Իր երիտասարդության ժամանակ մեղավոր մարդու ուղին չգիտեմ» (Առակ. Լ, 18-19): **Երկրորդ՝ իրենց**

կյանքը չար գործերով անցկացրած ծերերն են,  
 որոնց ոչ միայն հոգու, այլ նաև մարմնի աչ-  
 քի լույսն է սպառել, ուստի խարիսափում են  
 ցերեկը, ինչպես կեսպիշերին։ Երբորդ՝ մեղա-  
 վորի հոգեվարքի ժամն է, երբ կյանքի լույսը  
 սկսում է սպառվել։ Այսպիսի մարդկանց մոտ,  
 երբ գալիս է բարեկամը, այսինքն՝ հոգեպահանջ  
 հրեշտակը, որ մարդկային ցեղի բարեկամն է,  
 մահվան և հարության միջնորդը, Բարեկա-  
 մի տունը դատարկ գտնելով, շատ է արտմում  
 և հորդորում զղման։ Սակայն մեր առաջին  
 բարեկամն այնքան քաղցր է, որ եթե մեկը  
 նրան անգամ այդ պահին զղմամբ և հառա-  
 չանքով աղոթի՝ երեք նկանակները խնդրելով  
 կտա։ [Այդ երեք նկանակները] երկու խորհուրդ  
 ունեն։ Նախ՝ Երրորդության՝ ըստ Շնորհալու.  
 «Տո՞ւր ինձ երեք նկանակների փոխարեն դավանությու-  
 նը Երեք Անձերի»<sup>2</sup>։ Երկրորդ՝ սուրբ Պատարագի,  
 ուր երեք նկանակներ կան, այսինքն՝ աստվա-  
 ծությունը, հոգին և մարմինը՝ «Եվ մարմինը Քո  
 երկնային, որով ճանաչեցինք Երեքիդ իբրև Մեկ»<sup>3</sup>։ Այ-  
 սինքն՝ հոգու երեք մասերով պետք է Բարեկամի  
 համար սեղան պատրաստել. որովհետև եթե

<sup>2</sup> Բանք շափաւ, Էջ 98:

<sup>3</sup> Տես Ներսես Օնորհապի, Հիսուս Որդի, Երևան, 1991, Էջ 120:  
 Այսուղի Ծնորհալու «Որով ծանեաք զԵրիստ ի մին» տողը  
 Բերդումանի տպագրում վրիպակաբար ներկայացվել է այս-  
 պես՝ «Որով ծանեաք զԵրիստ դիմին»։

այլ բարիքներ չունենանք, գոնե սրանք պետք է լինեն մեր հոգում, այսինքն՝ Երրորդության դավանությունը և Քրիստոսի մարմնի և արյան կենսաբեր խորհրդի հաղորդությունը։ Այդ ժամանակ [մեր Բարեկամը] թեկուզ մեղադրի և հանդիմանի ուշ դիմածներին, բայց ընդունայն չի արձակի։ «Որովհետև [հոգին] թախանձում է, թե՝ «Իմ բարեկամը ճանապարհից եկավ ինձ մոտ, և ես նրա առաջ դնելու ոչինչ չունեմ», (այսինքն՝ բարեգործության սեղան)։

«Իսկ նա ներսից պատասխան կտա և կասի. «Ինձ նեղություն մի՛ տուր, որովհետև դոները փակված են, և երեխաներս ինձ հետ անկողնում են, չեմ կարող վեր կենալ և [հաց]տալ» (ԺԱ 6:7): Մրանովցույց է տրվում, որ շատ դժվար է նման պահին խնդրանքն ընդունել, և որ Աստված այն ժամանակ հեռու է վանում մեղավորին։ Իսկ սա՝ երեք պատճառով։ Նախ՝ որովհետեւ երբ մեղավորը հասնում է չարիքների խորքը և գալիս է հոգին տալու ժամանակը, Աստծո ողորմության դռները սկսում են փակվել, և այդ ժամանակ, ըստ իր խղճմտանքի դատաստանի, լսում է՝ դռները փակված են։ Երկրորդ՝ քանի դեռ մեղավորը կենդանիէ, Աստված միշտ նրա խղճմտանքի դռան առաջ կանգնած բախում է. «Ես միշտ քո դուան առաջ կանգնած եմ և բախում եմ» (Հաղ. Գ 20): Իսկ երբ համառելով

հասնում է հոգին տալուն, Աստված էլ մտնում է  
իր հանգստյան անկողինը, այսինքն՝ դադարում  
է նրա սիրտը բախելուց: Եվ եթե այդ ժամա-  
նակ ինքը կանչի Նրան, Նա նեղությունը որպես  
պատճառ կբերի՝ «Դօձ նեղություն մի՛ տուր»:

Երկրորդ՝ «Կեսգիշերը»խորհրդանշում է մեղ-  
քի սաստկությունը: Եվ քանի որ մեղավորը հո-  
գին ավանդելիս ասես կեսգիշերին է բախում  
Աստծո ողորմության դուռը, ուստի Աստված  
ուշանում է վեր կենալ և տալ: Այս մտքով է  
ասում. «Հոգնեցրիր Ինձ քո չարիքներով» (Բմնտ. Ես. Է.  
13): Քանզի մեծ ջանք է [պահանջվում] ամբարշ-  
տին արդարացնելու համար: Քանի որ մեղավո-  
րը հաճույքների անկողնուց վեր չի կենում բա-  
ցելու Նրա համար՝ ասելով. «Հանել եմ իմ պատ-  
մուճանը, ինչպես հագնեն այն» (Երգ Ե Յ), ապա տե՛ս,  
թե ինչքա՞ն դժվար է Աստծո համար այնպիսի  
մարդու համար վեր կենալն ու բացելը, մանա-  
վանդ որ «երեխսաներն ել Ինձ հետ քնած են», այ-  
սինքն՝ հրեշտակները և սուրբերը, որոնք հավի  
թերի տակ ձագերի նման Աստծո հանգստյան  
անկողնում են, ինչպես ձագերը՝ հավի թերի  
տակ, և ինչպես Ղազարոսը՝ Աբրահամի գոգում:  
«Անկողինը» միավորությունն է ցույց տալիս.  
առաքինիները և սուրբերը մտքով միախառն-  
վում են Աստծո հետ ընդմիշտ: Ցույց է տրվում

նաև, որ երբ Աստված ննջում է՝ ուշադրություն չդարձնելով, հրեշտակները և սուրբերը [նույնպես] ննջում են Նրա հետ, և մեղավորը որևէ օդնական չի ունենում: Եթե կամենում ես Նրան արթուն պահել, «թող քո ոտքը չսասանվի, որպեսզի քո Պահապանը չննչի» (Սաղմ. ԾԻ 3): Այստեղ մոր օրինակն է բերում, որովհետև ինչպես մայրն է փաղաքում մանկանը և քնում, այնպես էլ Տերը պիտի փաղաքչի նրան, ով փառքի նույն անկողնուն արժանանա:

«Ասում եմ ձեզ, եթե նա բարեկամության համար էլ վեր չկենա և [հաց] տա, նրա թախանձանքի պատճառով վեր կենալով կտա նրան, ինչ որ պետք է» (ԺԱ. 9):

Այս խոսքով Տերը մեծ հույս տվեց մեղափորներին և խրախուսեց հարատեել աղոթքի մեջ: Եթե անգամ ո՛չ բարեկամության, ապա գոնե թախանձանքի պատճառով [մեր] խնդրածը կստանանք՝ այն, ինչ պետք է, որով բարեկամին ուրախ գեմքով կճանապարհենք: Եթե ուշ ժամի այսքան արդյունավոր է, ապա որքան առավել ժամանակինը: Այսպես էլ այրին հաճախակի գնալով և դատավորին թախանձելով՝ դատը շահեց (տե՛ս Ղուկ. ԺՀ. 5): Քանանացի կինն էլ առաջին անգամ խնդրանքը կատարված չտեսնելով՝ անընդհատ աղաղակեց Քրիստոսի հետեւից և ստացավ [ուզածը], այսինքն՝ իր դստեր

**բժշկությունը** (տե՛ս Մատթ. ԺԵ 28-29): **Այստեղ մեր Տերը երեք բան է առաջադրում:** Նախ՝ [խնդրանք մատուցողը] հարկավորը պետք է պահանջի՝ «Ինձ երեք նկանակ փո՞խ տուր», որը և աղոթական խոսքերում պատգամեց՝ «Մեր հանապազօրյա հացը [տող'լր]» (տե՛ս Մատթ. Զ. 11): **Երկրորդ՝ պիտի իրեն խոնարհեցնի՝ «ոչինչ չունեմ» ասելով:** Երրորդ՝ **թախանձելով ստիպի, որովհետև աղքատներն էլ թախանձելով են ստանում:**

Բարոյականապես՝ հրեշտակի գալու ժամանակ հոգին պիտի բախի միտքը՝ աղերսելով, պիտի երեք Անձերի դավանությունը տա, և Հաղորդության երեք նկանակները ստանա, որով հոգին, ինքն իր երեք գորություններով ընդունելով իբրև երեք նկանակներ, որպես բարիքներով լի սեղան կդրվի հրեշտակի առաջ: Իսկ [եթե միտքը] պատասխանի. «Խղճմտանքիս դռները փակված են և դադարած, և մեղքերի մանուկներն անզղջության անկողնում են ինձ հետ, ինձ համար դժվար է մեղքի քնից զարթնելը, որովհետև հանեցի շնորհի պատմուճանը և ոտքերիցս՝ ավետարանական կոչիկները, ինչպես վերստին հագնեմ», ապա եթե [հոգին] ստիպի, [միտքը] կզղա թախանձանքի պատճառով: **Այսպես այրի հոգին թախանձանքներով զղման կբերի [դատավոր մտքին], ինչպես**

ասում է մեր իգնատիոս սուրբ վարդապետը<sup>4</sup>:

## ԳԼՈՒԽ Ի

### ԱԳԱՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր Տերը, տեսնելով ագահների սաստիկ հակումն իրենց հարստության նկատմամբ, իբր թե նրանց կյանքը հարստությունից է կախված, մեզ զգուշացնելու համար այս առակն ասաց.

«Մի մեծահարուստի արտերը տոհմական բերք տվեցին» (այսինքն՝ առատ և բեղմնավոր) (Ղոկ. ԺԲ 16):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Այստեղից պարզ է դառնում, որ Հարստությունն Աստծոց է՝ ըստ այնմ. «Իմ կողմից են հարստանում մեծամեծերը» (Առակ. Ը 16), և թե՝ «Իմն են հարստությունն ու փառք, շատերի ունեցվածքն ու արդարությունը» (Առակ. Ը 18), ուստի դրանով չպետք է հպարտանալ: Հարստությունը տրվում է անձին

<sup>4</sup> Տե՛ս ՄՍԱԴ, Էջ 352-353:

ոչ միայն սփոփանքի և մխիթարության համար, այլ նաև որպեսզի [ինքն] էլ ուրիշներին մխիթարի, բայց անմիտները, չար ձեռվ օդտագործելով [այն], սայթաքում են դրանով, և այն Աստծո արարածների մեջ կուռքի նման է դառնում, անզգամների ոտքերի որոգայթ (տե՛ս հմատ. ԺԴ 11): Ուստի հարստությունը նման է գինու, որ ոմանց զգոն, հեզ և առատաձեռն է դարձնում, իսկ ոմանց՝ հանդուզն, անառակ, բարկացող և այսահար: Այսպես՝ կան մարդիկ, որ ինչքան հարստանում են, այնքան խոնարհեցնում են իրենց՝ բազմապուղ ոստերի նման: Այսպես ասաց Հակոբը. «Եթե Տերն ինձ ուտելու հաց և հագնելու հագուստ տա, Տերն իմ Աստվածը կիհնի» (ԾԱՅ. ԻՇ 20-21): Ուրիշներ էլ կան, որ երբ հարստանում են, ուրանում են Աստծուն, ինչից երկնչում էր Սողոմոնը. «Չլինի թե հարստանամ և ասեմ՝ ո՞վ է Տերը» (Առակ. Լ. 9): Ուստի Տերը Մովսեսի միջոցով ժողովրդին զգուշացնում էր. «Զգուշացի՞ր, գուցե ժառանգես երկիրը և բազմանան քո արջառները... և մոռանաս Տեր Աստծուն» (Բմնտ. Բ Օր. Հ. 13-14):

**Արդ,** այս մեծատունը երախտիքներն ուրացավ՝ ասելով. «Ի՞նչ անեմ, քանի որ քերքս կուտակելու տեղ չկա» (ԺԲ 17): Եթե մեծատունը բարի մեկը լիներ, շտեմարանը քանդելուց նա ավելի դյուրին մեկ ուրիշ հնար կբանեցներ, այսինքն՝ ավե-

լորդը կտար աղքատներին, որոնք երկնային շտեմարաններ են, ուր կուտակվածն անձեռնմխելի է մնում: Թեպետ գովելի է [սեփական անձին] անհրաժեշտ մասից տալը. «Սա իր ամբողջ ունեցվածքը տվեց» (Մարկ. ԺԲ 44), բայց քանի որ նրա ձեռքը փակ էր, ավելորդից էլ չբացվեց վերցնելու և գցելու քաղցյալների սրտի մեջ: Երկրորդ՝ հնարավոր էր գոնե ավելորդն Աստծուն բաժին հանել, թեպետ սերմն էլ, արտերն էլ Նրանն են. «Պատվիր Տիրոջը քո արդար վաստակից» (Առակ. Գ. 9), «Բաժին տուր ոչ միայն յոթին, այլև ութին» (Ժող. ԺԱ 2): Իսկ եթե դեռ ավել բաժին մնա, իմաստունին անսա. «Հացդ ջրին տուր. եթե օրերդ շատ լինեն, կգտնեն այն» (Ժող. ԺԱ 1): Բայց նա սրանցից ոչ մեկի մասին չմտածեց, որովհետև ագահությամբ այնքան էր կապվել ունեցվածքին, որ ամբողջովին մոռացել էր Աստծուն՝ կարծելով, թե կյանքը [հարստության] մեջ է: Ուստի աղքատների մասին հոգ չէր տանում, որովհետև ինքն էլ իր հարստության մեջ էր աղքատ, քանի որ աղքատի նման մտահոգվում էր իր ապրուստի մասին և ասում. «Ի՞նչ պիտի անեն»: Սա առ Աստված հույս չուներ, ոչ էլ հավատում էր, որ Նրանով է ինքը կենդանի, այլ կարծում էր, որ իր կյանքն իր կուտակած հարստության մեջ է, ուստի չէր կշանում կուտակելուց: Այսպիսիների մասին

**Է ասվում.** «Հավատացյալի համար ամբողջ աշխարհը լի է հարստությամբ, բայց անհավատը մեկ լումա իսկ չունի» (Առակ. ԺԷ 4), «Ով արծաթ է սիրում, չի կշտանա նրանից» (Ժող. Ե 9): **Եվ զարմանալի չէ, որովհետեւ ում աչքը միշտ ագահ է,** նա իր թագավորության ժամանակ էլ ոչ միայն ունեցվածքից է աղքատ լինում, այլ նաև իմաստությունից: **Ուստի հիմարությամբ հնար գտնելով՝ ասում է.** «Գիտեմ ինչ պիտի անեմ. կքանդեմ իմ շտեմարանները, ավելի մեծերը կշինեմ, և ինքս ինձ կասեմ» (ԺԲ 18-19):

**Այսքան աշխատանք է հանձն առնում՝** քանդում է շտեմարանները, ավելի մեծերը շինում և իր բերքը կուտակում, երեք պատճառով՝ հանգստանալու, ուտելու և ուրախանալու համար: Սա՛ է բոլոր ազահների նպատակը, որոնք այն հարստությունն են փնտրում, որի հանգիստը մեղքի մեջ է. «Մովսաբը հանգստացավ իր մսուրում» (Քմնտ. Երեմ. ԽԸ 11): **Սեղանը մեղքի մեջ է.** «Վա՛յ նրանց, ովքեր առավոտյան վեր են կենում, ընկնում են օդու հետևից և օրն անցկացնում դրանով, որովհետև գիճին բորբքում է նրանց» (Ես. Ե 11), **այսինքն՝ մեղքերով՝ նրանց հոգին, և թե՝ «Ո՞ւմ համար է վայը. [ո՞չ արդյոք նրանց], ովքեր տարվում են գիճով»** (Առակ. ԻԳ 29-30): **Այսպես նաև նրանց ուրախությունն է մեղքի մեջ.** «Ուրախանում են չարիքներ գործելով» (Առակ. Բ 14), **և թե՝ «Վա՛յ ձեզ, որ ծիծաղում**

եք» (Ղուկ. Զ 25): **Այսպիսին էր նաև անողորմ մեծատունը:** Երանի՛ թե այս ծանր աշխատանքի մի մասը հանձն առնեին անանց հանգստի և ուրախության համար և իրենց հոգու պաշարի համար մի փոքր շտեմարան շինեին: Այս կյանքի նկատմամբ սերը նրա մտքից նաև մահվան հիշատակն էր հանել, ուստի Աստված հիշեցնում է. «Աստված ասաց նրան. «Անմի՛տ, ჩենց այս գիշեր հոգիդ քեզանից պահանջելու են. իսկ ինչ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (ԻԲ 20):

**Անկասկած,** ինչպես նա, ով բոլորովին չի մտածում ապագայի մասին, անմիտ է, որովհետև չի կարող պատշաճորեն նախապատրաստել քայլերը, որոնցով պիտի հասնի դրան, ինչպես եթե նավապետը միայն ճանապարհի երկարությունը տեսնի, իսկ ալեկոծությունը՝ ոչ, միայն կերակուրը պատրաստի, իսկ խարիսխը, որով ալեկոծությունից պիտի պաշտպանվի՝ ոչ: **Այսպիսին** են մրջյունները, որոնք բնական բնագույն թեպետ հոգում են ապագայի մասին, բազում մթերքներ են կուտակում ամռան համար, բայց չեն մտածում հեղեղների մասին, որոնք երբ վարարում են, ոչ միայն նրանց մթերքներն են ողողում, այլև նրանք են խեղդամահ անում: **Այսպիսին էր նաև այս մեծատունը,** որ, մրջյունի նման միայն մարմնավոր աչքեր ունենալով,

ապրուստի մասին միայն հոգաց՝ մոռանալով  
մահվան մասին, որ զրկում է այն ամենից, որի  
համար ջանք թափեց արեգակի ներքո։ Նմա-  
նապես Սիրաքն է խոսում այսպիսի անմիտ  
ագահների մասին՝ ասելով. «Կա մարդ, որ հարս-  
տանում է անխնա կուտակելով, և նրա վարձի բաժինը  
դա է. ասում է, թե՝ «Ինձ համար հանգիստ գտա և այժմ  
իմ բարիքները միայնակ պիտի ուտեմ», սակայն չգիտի,  
որ ժամանակն անցողիկ է, մահը մոտենալու է, և ինքն  
ամեն ինչ թողնելու է ուրիշներին և մեռնելու է» (Սիր.  
ԺԱ 18-20) Սաղմոսերգուն խնդրում է իմանալ իր  
օրերի մասին. «Ցո՞յց տուր ինձ, Տե՛ր, թե երբ է լինելու  
իմ վախճանը», և իմանալով, որ յոթանասուն տա-  
րի է՝ ցնծալով երգում է. «Ահա սահման դրեցիր իմ  
օրերին...» և դրանք ոչինչ համարելով՝ եզրակաց-  
նում է. «Արդարն մարդը շրջում է ինչպես մի ուրվա-  
կան, գանձ կուտակում՝ [չիմանալով], թե ո՞ւ համար է  
կուտակում» (Սաղմ. ՀՀ 5-7): Հնարավոր է, իմաստուն  
[Սողոմոնի] նման, [հարստությունից] բաց աչ-  
քերով անջատվել սրտով՝ նախքան մեռնելը  
հասկանալով, որ կամա թե ակամա թողնելու  
ենք այն, ուստի ասում է. «Սրտովս հրաժարվեցի  
իմ բոլոր վաստակներից, որովհետև թողնելու եմ դրանք  
այն մարդուն, որ ինձանից հետո է գալու» (Ժող. Բ 20, 18):  
Բայց սրտով հրաժարվելուց հետո պարտավոր  
ենք արքայության փառքի հույսով բաշխել աղ-

**Քատներին.** «Բաժանեց և տվեց աղքատներին, նրա արդարությունը կմնա հավիտլանս հավիտնենից, և նրա եղջյուրը բարձր կլինի փառքով» (Մաղ. ԾԺԱ 9): **Այլապես** իր կամքին հակառակ է թողնելու. «ԱՅդրավությամբ դիզված կես օրից պիտի պակասի» (Առակ. ԺԳ 11), ինչը պատահեց այս ագահ մեծատան հետ, ով անգամ մի օր չկարողացավ իր անիրավ ունեցածքից վայելել: **Այսպես** պիտի լինի նաև նրանց հետ, ովքեր «իրենց համար են կուտակում և ոչ թե Աստծո» (ԺԲ 21): **Այստեղից երեսում է,** թե ինչքա՞ն օգտակար է մահվան մասին խոկալը, որովհետև մարդու սիրտը նյութական բաներից հեռու է պահում, ուստի ասվում է. «Որդյա՞ն, նիշի՞ն քո վախճանը և երբեք չես մեղանչի» (Սիր. Է՛ 40):





## ԳԼՈՒԽ ԻԱ

### ԳՈՐԾԻ ՍԿԶԲԻ ՄԱՍԻՆ ՊԵՏՔ Է ՆԱԽԱՊԵՍ ՄՏԱԾԵԼ

«Զեզանից ո՞վ, եթե կամենա աշտարակ շինել,  
նախ նատելով չի հաշվի իր ծախսերը, թե ավարտելու  
համար բավական [դրամ] ունի, որպեսզի, գուցե, երբ  
հիմքը դնի և չկարողանա ավարտել, բոլոր նրանք, որ  
տեսնեն, չսկսեն նրան ծաղրել և ասել, թե՝ «Այս մարդը  
սկսեց կառուցել, բայց չկարողացավ ավարտել» (Ղոկ.  
ԺՌ 28-30):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ հասկանալի է խոսքի իմաս-  
տը, որովհետև ամեն ինչում պետք է գործի  
ավարտի մասին մտածել և ապա այն ձեռնար-  
կել:

Բարոյականապես՝ առաքինության աշտարա-  
կը, որ պահպանում է աշխարհային և դիվական  
հարձակումներից, շատ ծախս է պահանջում,  
բայց ավարտին հասցնելն աղքատությունն է.

*ով սկսում է [առաքինության աշտարակի կառուցումը], պետք է այս աղքատության մասին խորհի:*

Դարձյալ՝ մեծ աշտարակ է Քրիստոսի իրական աշակերտ լինելը, որ առաքինությունների բազում ծախսեր է պահանջում, այսինքն՝ խաչը, անձի ուրացումը և աղքատությունը։ Ով այս մեծ ծախսը կատարելու պատրաստ չէ, թող այդ մեծ աշտարակի հիմքը չգնի, որովհետև ավարտին հասցնելու համար բավարար մեծ միջոցներ չունենալով, այսինքն՝ կատարյալ հնագանդություն, կատարյալ աղքատություն և կուսություն, մեղավոր աշխարհականներից ծաղրանքի կարժանանաց։ Այսպիսին են մերօրյա միայն անունով աշակերտները, որոնք պարծենում են ամբարտավանությամբ ու հարստությամբ և ոչ թե Քրիստոսի ամենագովելի վարքով։ [Այսպիսին] թող բավական համարի աշխարհականության ցածր տան ներքո մնալ, քան թե պատրաստ չլինելով՝ Քրիստոսին աշակերտելու աշտարակը բարձրանալ։ Այս մտքով է ասել Պողոսը. «Իսկ եթե ծուժկալություն չունի, թող ամուսնանա, որովհետև ավելի լավ է ամուսնանալ, քան կրքով այրվել» (Ա Կորնթ. Է 9): Բայց այս խոսքի ամբողջական մեկնությունն ընթերցիր սուրբ Իգնատիոսի մոտ<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես ՄՍԱՂ, էջ 257-259:

## ԳԼՈՒԽ ԻԲ

### ԵՐԿՈՒ ՄԱՐՏՆՉՈՂ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կամ ո՞ր թագավորը, եթե գնա պատերազմելու  
մեկ այլ թագավորի դեմ, նախ չի նստի և խորհի, թե  
տասը հազարով կկարողանա՞ դիմադրել նրան, ով  
[իր վրա] քանի հազարով է գալիս: Ապա թե ոչ՝ մինչ  
սա դեռ հեռու է, պատգամավորություն կուղարկի՝ խա-  
ղաղություն խնդրելու համար» (Ղուկ. ԺԴ. 31-32):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ հասկանալի է խոսքի  
իմաստը, որովհետև մեծ հիմարություն է ձեռք  
բարձրացնել ավելի հզորի վրա:

Այլաբանորեն՝ «թագավոր» է քրիստոնյան.  
«Մեզ քահանաներ և թագավորներ դարձրեց, որով-  
հետև Քրիստոս Թագավորի անդամներն ենք» (Հայտ. Ե  
10). «Բայց դուք ընտիր ցեղ եք, թագավորություն, քահա-  
նայություն» (Ա. Պետ. Բ 9): **Ինչքա՞ն առավել [թագա-  
վոր]** է նա, ով դառնում է Քրիստոսի աշակեր-

**տը:** «Սատանան» էլ է կոչվում «ապստամբթագոր» և «աշխարհի», այսինքն՝ մեղավորների «իշխան»: Ով ցանկանում է Քրիստոսի իրական աշակերտը լինել՝ հրաժարվելով աշխարհից, կանգնում է չարի դեմ, ով նրա վրա գալիս է քսան հազարով, որի տասը դեպի աջ է գլորում, իսկ տասը՝ դեպի ձախ: Ուստի նա էլ պետք է գոնե տասը հազարով սպառազինվի, այսինքն՝ Աստծո տասը պատվիրաններով, և դրան հավելի ավետարանական աղքատությունը, որով ամբողջ ունեցվածքից հրաժարվում է. եթե այդ գենքը հագնի, այն ժամանակ հզորապես կհաղթի չարին: Ուստի սրանով է Տերը եզրափակում առակը՝ ասելով. «Արդ, այսպես էլ՝ ձեզանից ով իր ամբողջ ունեցվածքից չհրաժարվի, չի կարող իմ աշակերտը լինել» (ԺԴ 33): Աղքատությունը մեծ գենք է, որով եթե մեկը կարողանա սպառազինվել, կկարողանա պատերազմել, ապա թե ոչ՝ «պատգամավորություն ուղարկելով», այսինքն՝ իրեն պատրաստ չհամարելով՝ խաղաղությամբ աշխարհականության տանը պիտի նստի, թեպետ աշխարհականներն էլ չարի որոգայթներից ապահովագրված չեն, բայց մեզ<sup>2</sup> հետ համեմատած՝ նրանցն ասես խաղաղություն է:

**Քրիստոսն այս երկու առակները պատմեց,**

<sup>2</sup> «Մեզ» ասելով՝ Բերդումլանն ի նկատի ունի կուսակրոն հոգևորականներին:

որպեսզի ամեն ոք իրեն քննի և ապա՝ պատերազմի դաշտ մտնի, որպեսզի աղի նման անհամանալով՝ դուրս գցվելով ոտնակոյն չլինի՝ ոչ միայն աշխարհիկների կողմից, որոնք պիտի ասեն. «Այս մարդը սկսեց կառուցել, բայց չկարողացավ ավարտել» (ԺԴ 30), այլ նաև չարի քսան հազարների, որով էլ պիտի լինի կրակի մեջ գցված անպիտան մի որթատունկ (տե՛ս Եզեկ. ԺԵ 5): Այստեղից երեսում է, թե ինչքա՞ն մեծ անօրինություն է մեկին սարկավագության կամ աբեղայության ստիպել՝ դնելով մեծ վտանգի մեջ: Նաև սովորում ենք իրենց անձամբ ընծայող մատաղահասներին հեշտությամբ չընդունել հրեշտակական կարգի մեջ, որովհետև նրանք իրենց չեն ճանաչում, ուստի անկասկած, ձեռնադրողներն են այնպիսիների համար պատասխանատու, ինչքան էլ որ վերջիններս աղաչեն [ձեռնադրվել]:

Վերջապես՝ «տասը հազարը» տասը օրենքներն են, իսկ դեկի պարագային քսան հազար է [Տերը] նշում, որովհետև մեկ օրենքի դեմ [դեկը] երկու ձեռով է մարտնչում՝ երկու ծայրերի նման. մեկը՝ ըստ առավելության, մեկն էլ՝ ըստ պակասության<sup>1</sup>: Ուրեմն, յուրաքանչյուր աստիճանի պարագային, ինչպիսին են՝ քահա-

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Մեղայ Աստուծոյ, աշխատասիրությամբ Ս. Ստամբուլյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 43-44:

նայությունը, վարդապետությունը, առաջնորդությունը, եպիսկոպոսությունը և կաթողիկոսությունը, ամեն ոք զգուշորեն պետք է քննի իրեն և ապա՝ [այդ աստիճանը] Տիրոջ շնորհով հանձն առնի և ընդունի:



## ԳԼՈՒԽ ԻԳ

### ՈՉԽԱՐԻ ԵՎ ԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

«Զեզանից ո՞վ է այն մարդը, որ երբ հարյուր ոչ-խար ունենա և նրանցից մեկը կորցնի, արոտավայրում չի՞ թողնի իննառաջննին և չի գնա կորածի հետևից, մինչև որ այն գտնի: Եվ երբ այն գտնի, կդնի այն իր ուսերի վրա ուրախությամբ և կգնա տուն, կկանչի բարեկամներին և հարևաններին և նրանց կասի. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև գտա իմ կորած ոչխարը» (Ղոկ. ԺԵ 4-6):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ դժվար բան է այնպիսի մի հովիվ գտնել, ով չի գնա կորած ոչխարի հետեւից՝ թողնելով չխոտորվածներին:

Այլաբանորեն՝ «քաջ հովիվը» մեր Տեր Հիսուս Քրիստոսն ինքն է՝ ըստ այնմ. «Ես եմ քաջ հովիվը» (Հովհ. Ժ 11): Եվ թե՝ «Իմ սրտի համաձայն մի հովիվ եմ տալու ձեզ» (Եզեկ. Լ Դ 23): «Հարյուր ոչխար-

ները» հրեշտակներն են, «ոչխարներ» են նաև մարդիկ: Ոչխարի օրինակը նրանց անմեղության պատճառով է բերում, որոնց բոլորի հովիվը Տերն է, որովհետև Նրանով հաստատվեց այն ամենը, ինչ երկնքում է և երկրի վրա (տես Կող. Ա. 16): Արդ, Սուրբ Գրքում տասը, Հարյուրը, Հազարը բազմություն են ցույց տալիս, ուստի մերթ տասը թվով է այն անվանում, ինչպես «տասը դրամը», մերթ՝ «Հարյուր ոչխար», մերթ էլ՝ «Հազար Հազարներ»<sup>2</sup> ևն: «Մոլորված մեկը Հարյուրից» մեր մարդկային բնությունն է, որ նրանց հետ համեմատած այնքան փոքր է, ինչպես մեկը հարյուրի համեմատ: Ուստի երկնային քաջ և բարի Հովիվը, սրա մոլորվելու մասին իմանալով, իր չմոլորված հոտը թողեց երկնքի լեռան վրա և իջավ [կորածին] փնտրելու՝ ըստ Դավիթի, ով մեր մարդկային բնության մասին ասում էր. «Մոլորվեցի կորուալ ոչխարի պես. փատրի՛ր Քո ծառային, որովհետև Քո սերն իսպառ չեմ մոռացել» (Սաղմ. օժմ. 176): [Տերը] այցելեց մոլորյալներիս՝ չթողնելով, որ թափառենք դև գազանների հետ կռապաշտության անջրդի վայրերում՝ կյանքի կորստյան համար, և իր խաչելությամբ գտնելով Գողգոթայի լեռան վրա, ինդալով դրեց իր ուսերին և գնալով իր

<sup>2</sup> Նկատի ունի հրեշտակներին. տես Դան. Է 10:

սեփական տունը՝ երկինք, կանչեց իր «բարեկամներ» Հորը և Հոգուն՝ ըստ պատշաճության և «հարեան» հրեշտակներին, և ասաց. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև գտա իմ կորած ոչխար»: Այսպես է ուրախանում Աստված, եթե մեղավոր կամ անհավատ մեկը դարձի է գալիս և ապաշխարում: Այս մտքով նաև այլ [օրինակներ] է բերում՝ այս բաները հաստատելու համար՝ ասելով.

«Կամ՝ ո՞վ է այն կինը, որ երբ տասը դրամ ունենա և մի դրամ կորցնի, ճրագ չի՝ վառի և չի՝ ավլի տունը և անդադար չի՝ փնտրի, մինչև որ գտնի: Եվ երբ գտնի, կկանչի բարեկամներին և հարևաններին ու կասի. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև իմ կորցրած դրամը գտա» (ԺԵ 8:9):

Նկարագրապես՝ արդարեւ ո՞վ է այն տղամարդը կամ կինը, ում ցանկալի դրամը եթե կորչի, մեծ ցավով չի որոնի այն, և երբ գտնի, շատ չի ուրախանա: Ոչ մի այլ բան գտնելն այնքան ընձալի չէ, որքան դրամը. արդարեւ, երբ մարդը թաղված գանձը գտավ, ուրախությունից թաքցրեց (ՄԵՒ Մատթ. ԺԳ 44):

Այլաբանորեն՝ «կին» է անվանում իրեն գիտառատքարերի պատճառով՝ ըստ այնմ. «Ես ցանկալի ու գեղեցիկ մայր եմ»<sup>3</sup>: Կինը երկու ստինք ու-

<sup>3</sup> Աստվածաշնչան մեջբերման աղբյուրը շգտանք:

նի, այսպես էլ՝ Տերը. նախ՝ Ավագանը, երկրորդ՝ սուրբ Արյունը, որով Նրա դուստր Եկեղեցին մաքրվում և սնվում է: Նա, ունենալով տասը դրամ՝ հրեշտակների ինը դասերը և մարդկանց մեկ դասը, դրամի օրինակն է բերում, որովհետև դրամը թագավորի պատկերն ունի՝ ըստ այնմ. «Այս պատկերը կամ գիրն ո՞ւմն է: Նրանք ասացին՝ կալարինը» (Մատթ. հԲ 20:21), այսինքն՝ թագավորինը: Հրեշտակներն ու մարդիկ Աստծո պատկերով են ստեղծված. հրեշտակների մասին Եզեկիելն ասում է. «Այսպես է ասում Տերը՝ դու Իմ նմանության կնիքն ես» (Եզեկ. հԸ 12): Ըստ [մեջբերման] իմաստի՝ Սաղայելի<sup>4</sup> մասին է խոսում, իսկ մարդու դեպքում հասկանալի է խոսքի [իմաստը]:

Դարձյալ՝ «դրամ» բառը շրջվելով դառնում է «մարդ», որին «կին» Հիսուսը կորցրեց: Թեպետք դրամն ինքնաբերաբար է ընկնում քսակից, բայց ասում ենք՝ կորցրեցինք: Այսպես մարդն ինքն իրեն կորսայան մատնեց, բայց ասվում է՝ կինը կորցրեց: Իսկ թե ինչո՞ւ տանը կորավ դրամը, պատճառն այն է, որ կնոջը բնորոշ է լինել տանը, թեպետք որոշ լրբեր սովոր են դրսում շրջել: «Տունը» այս աշխարհն է՝ ըստ այնմ. «Որքա՞ն մեծ է Աստծո տունը» (Բարուք 9:24): Արդ, երբ [Տերը] այսպիսի ցանկալի դրա-

<sup>4</sup> Սատանակին տրված հոմանիշներից մեկն է:

մը կորցրեց, սիրտը չհամբերեց, այլ իսկույն ելավ փնտրելու՝ ասելով. «Ո՞ւր ես, Ադամ» (ԾԱՅ. Գ. 9): Եվ մարմնի ճրագն աստվածության լույսով վառելով՝ չարչարանքների մեծ ջանքով ավելեց այս աշխարհի տանը և դժոխքի աղբի մեջ գտավ միակ պատկերագիր դրամը, որի մասին ասված է. «Մարդուն իր պատկերով ստեղծեց» (ԾԱՅ. Ա. 27), կենսաբեր կողի երկու աղբյուրներով էլ մեղքերի տղմից մաքրեց, «կանչեց բարեկամներին ու հարևաններին» (որոնց մասին [վերևում] խոսվեց), «ուրախացավ նրանց հետ»:

Այս երկու առակներից [Հոգեռոր] հովիվներն ու միջնորդները պետք է սովորեն, թե ինչպիսի՛ ցավով է պետք որոնել Քրիստոսի հոտից մոլորվածին: Նաև վանահայրերն են պարտավոր մեծ զգուշությամբ և սիրով շահել միմյանց և կրոնավորներին, որպեսզի դուրս ենելով չմոլորվեն, որովհետև այնքան հավատարիմ հովիվ չկա, որ մոլորվածի հետեւից գնալով՝ հետ բերի կամ կորցրածը կնոջ նման որոնի: Ուրեմն՝ «Զօդուշ եղեք ձեր հոտի հանդեպ, որի վրա Սուլը Հոգին ձեզ տեսուչներ կարգեց» (Գործք Ի 28):

Դարձյալ՝ «Հարյուր ոչխարի» և «տասը դրամի» ներքո զինվորյալ եկեղեցին պետք է հասկանալ, որի թվից եթե մեկը մեղքերով մոլորվի կամ ընկնի, երկնային Տեսչի հոգատա-

ըությունն այնքան է, որ քաջ հովվի և գթառատ կնոջ նման մոլորվածին և կորածին աներեսույթ չնորհով գտնի՝ ըստ այնմ. «Որոնց ինձ տվեցիր, Յրանցից ոչ մեկին չեմ կորցնելու» (Հովհ. ԺՀ 9): Բայց սա այն ժամանակ է լինում, երբ մոլորվածը համակամ է լինում փնտրողի հետ, ապա թե ոչ՝ պիտի լսի այն, ինչ հրեաների պարագային ասսաց. «Քանի անգամ կամեցա հավաքել ձեզ, ինչպես որ հավա է իր ձագերին հավաքում իր թևերի տակ, բայց չկամեցաք» (Մատթ. ԻԳ 37): **Ուստի արդարացի կլինի, եթե լսեն.** «Արա ձեր տունն ավերակ կթողնվի ձեզ» (Մատթ. ԻԳ 38), ինչպես իրավացիորեն լսեցին: Եվ սա է պատճառը, որ բազում մոլորվածներ և ուրացողներ իսպառ կորսայան են մատնում, որովհետև չեն համաձայնում կանչող Քրիստոսի ամենաքաղցր ձայնին. «Ապաշխարե՛ք, որովհետև նոտեցել է երկնքի արքայությունը» (Մատթ. Դ 17): **Ուրեմն, մենք էլ ապաշխարենք, որպեսզի Աստված և հրեշտակներն ուրախանան մեր փրկության համար՝ ըստ այնմ. «Ուրախություն կլինի մեկ մեղավորի համար, որ ապաշխարում է»** (Ղուկ. ԺԵ 7):



## ԳԼՈՒԽ ԻԴ

### ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒՄԱՍԻՆ

«Մի մարդ երկու որդի ուներ» (Ղոկ. ԺԵ 11):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագրապես՝ հասկանալի է խոսքի [իմաստը], որովհետև ով երեխա ժամանակ չի հնագանդվում հորը, այլ անզղղությամբ և մանկական վարքով իր կամքն է առաջ տանում, անկասկած մեծ վտանգների է հանդիպում, ուստի իմաստունն իրավացիորեն ասաց. «Անհնազանդ որդին կորստյան պիտի մատնվի» (Առակ. ԺԳ 1):

Այլաբանորեն՝ «մարդը» Աստված է. որովհետև ինչպես որ [իրեն] սիրելի մարդկանց է սիրում «աստված» անվանել՝ ըստ այնմ. «Ես ասացի, թե աստվածներ եք» (Սաղմ. ԶԱ 6), այսպես հաճելի է նրա համար իր սիրելիների անունով կոչվել:

Դարձյալ՝ որովհետև իմացականությամբ

**Աստված**, հրեշտակները և մարդիկ ազգականներ են, ուստի [Աստված] իջնում հավասարվում է մեզ՝ ըստ այնմ. «Հենց Նրա զարմից ենք» (Գործք ԺԷ 28):

«Ավագ որդու» ներքո պետք է հրեշտակներին հասկանալ, որովհետև նախ նրանք ստեղծվեցին, ուստի ծեր աստղեր են անվանվում՝ ըստ այնմ. «Երբ աստղերը ծերացան, աստղերի բոլոր հրեշտակները մեծաձայն օրինեցին ինձ, իմ բոլոր հրեշտակներն ել գովեցին» (Հոք Լ. 7): Իսկ «կրտսեր որդու» ներքո պետք է մարդկանց հասկանալ, որոնք հետո ստեղծվեցին, ուստի ասվում է. «Քո հրեշտակներից փոքր-ինչ ցածր դրեցիր նրան» (Սաղմ. Ը 6): Կրտսեր ենք նաև նրանով, որ նրանք իմացականությամբ բարձր են և ազնիվ, քանի որ, ըստ սուրբ հրեշտակակրոն<sup>1</sup> վարդապետի, երկնավոր Աստծո ազատազարմ պաշտոնյաներն են<sup>2</sup>, ուստի պարզ իմացմամբ են ըմբռնում, իսկ մենք՝ խոնարհ, որովհետև ոչ թե պարզ հայացքով, այլ հավաքական խոսքով քննելով հասնում ենք սկզբից մինչև եղրակացություն:

«Նրանցից կրտսերը հորն ասաց. «Հա՛յր, տո՛ւր ինձ քո ունեցվածքից ինձ ընկնող բաժինը»: Եվ նա ունեցվածքը բաժանեց նրանց» (ԺԵ 12): **Առակիս իմաստն**

<sup>1</sup> Հրեշտակակրոն - հրեշտակների բարբ՝ կենցաղավարություն ունեցող, բարեպաշտ:

<sup>2</sup> ԳՆ, Բան ԶԱ, տ. 59, էջ 575:

այսէ. Աստված իր ողորմությամբ ստեղծեց հրեշտակներին և մարդկանց, որով և «Հայր» կոչվեց՝ ըստ այնմ. «Մի՞թե նա քո հայրը չէ, որ քեզ ստեղծեց, արարեց ու հաստատեց քեզ» (ԲՕր. ԼԲ 6): Եվ ըստ յուրաքանչյուր աստիճանի՝ շնորհներով լցրեց. ահա սա է նրանց ունեցվածքը բաժանելը, որովհետև Աստված կանխում է մեր խնդրելը՝ ըստ այնմ. «Տալիս է ավելի առատապես, քան ինչ խնդրում ենք և մտածուն» (Թմթ. Հակ. Ա. 5): Կարելի է նաև ասել, որ մեղավորի կամքը, երբ հեռանում է Աստծուց, Աստված բնական ձիրքերը վերցնում է նրանից, որ իբրև բաժին էր տվել նրան, ինչպես որ հայտնի է դևերի և Ադամի պարագային, ինչպիսին են՝ բանականությունը, հոգու անմահությունը, անձնիշխանությունը և շնորհների ընդունումը ևն: Այս ամենը, երբ մարդ շնորհի մեջ է, ըստ իր բնության՝ ունի սուր բանականություն, պայծառ հոգի, մաքուր խղճմտանք, ազատ անձնիշխանություն և լուսավոր միտք, բայց երբ երկար ժամանակ մեղքին է տրվում, այս բոլորը խանգարվում են, և մարդ բանականության կարգից ընկնում է և անբան կենդանիների հատկությունները վերցնում՝ ծառայելով իր զգայական մասին: Սա այն է, որ ասում է. «Քիչ օրեր հետո հավաքեց ամեն ինչ, գնաց հեռու աշխարհ» (ԺԵ 13): Արանից իմանում ենք,

որ Աղամը փափկալից դրախտի գրկում երկար օրեր չի վայելել: «Հեռուաշխարհ գնալը» դրախտից այս աշխարհն ընկնելն է [խորհրդանշում]: Հստ տրամաբանության՝ չկա տեղ, որ Աստծուց հեռու լինի, քանզի Աստված ամենուր ներկա է, որովհետեւ, ըստ ծիրանազգյաց մարդարեի, «Ամենուրեք է Նրա տերությունը» (Սաղմ. ԾԲ 22), և թե՝ «Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես Դու» և՛ (Սաղմ. ԾԼԸ 8): Իսկ մեղքը պատնեշ է առաջացնում՝ ըստ այնմ. «Ես մերձավոր Աստված եմ և ոչ թե հեռավոր, բայց ձեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և Աստծո միջև» (Երեմ. ԻԳ 23, Ես. ԾԹ 2), և թե՝ «Փրկությունը հեռու է մեղավոր-ներից», այսինքն՝ Աստված հեռու է մեղավորներից, որովհետև Նրա օրենքները չեն պահում (Բմմտ. Սաղմ. ԾԺԸ 155):

«Եվ այնտեղ վատնեց իր ունեցվածքը, որովհետև անառակ կյանքով էր ապրում»: Անառակություն ասելով՝ բոլոր մեղքերն ի նկատի ունի, բայց հատկապես պոռնկությունը: Մարդու ունեցվածքը հատկապես երկուսն է՝ Աստված և մարդու հոգին: Մեղավորը կորցնում է Աստծուն՝ ըստ այնմ. «Եվ Տիրոջ հոգին վերացավ Սավուդից» (Ա Թագ. ԺԶ 14): Այսպես մարդկային բնությունն անառակության պատճառով կորցրեց հոգին և արդարապես լսեց. «Իմ հոգին թող չմնա նրանց մեջ, որովհետև նրանք մարմնավոր են» (ԾԱՅ. Զ 3): Նաև իր

Հոգին բոլոր հատկություններով ապականվում է մեղքով, այսինքն՝ միտքը՝ կուրությամբ. «Նրա լուսը խավարելու է իր հարկի տակ» (Հոր ԺՀ 6), անձնիշխանությունը՝ ծառա դարձնելով. «Ով մեղք է գործում, մեղքին ծառա է» (Հովհ. Ը 34), բանականությունը՝ բժացնելով. «Մեղքով բռնված հոգիները միտքն էլ են կորցնում», և մեղքերի բծերով ամբողջովին սեացնում են հոգին. «Նրանց տեսքն ածուխի նման սևացավ» (Ողբ Դ 8): **Այսպես մեր մարդկային բնությունն ախտացավ**, իր գերբնական և բնական բարին կորցրեց՝ ըստ այնմ. «Ապականվեցին ու պղծվեցին իրենց անօրենության մեջ» (Սաղմ. ԺԳ 1), ուստի [սաղմոսերգուն] ի դեմս մեր մարդկության ասում էր. «Մոտեցրո՞ւ, Տե՛ր, քո ականջը և լսի՞ր ինձ, քանզի աղքատ ու տնամկ եմ ես» (Սաղմ. ԶԵ 1)՝ **Հիսուսի գալուստը հայցելով, թեպետ ինքը հոգով և մարմնով հարուստ էր:**

«Եվ երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, և նա սկսեց չքավոր դառնալ» (ԺԵ 14): «**Սովը» երկու մասի է բաժանվում՝ հոգեոր և մարմնավոր: Հոգեորը շատ անտանելի է, որովհետև հոգու մահվան պատճառ է դառնում՝ զրկելով շնորհից: Քանզի Աստծո խոսքի պակասությունից է, որ շնորհ չի տրվում՝ ըստ այնմ. «Պիտի տամ ձեզ ոչ թե հացի և ջրի սով, այլ Աստծո խոսքը լսելու սով» (Ամովս Ը 11): **Եվ սա պատահեց մեր անառակ****

բնությանն աշխարհում մինչև Աբրահամ, երբ  
ո՛չ տեսիլք, ո՛չ մարգարեռություն, ո՛չ էլ Աստ-  
ծո խոսք կար, և մեր բնությունը զրկվեց ամ-  
բողջ գիտությունից և բարի գործերից, որոնք  
հոգու սնունդն են: Եթե մեկը սովի ժամանակ  
հարստություն ունի, շատ չի տուժում. բայց  
դժբախտություն է, երբ չքավոր է, ինչպիսին  
մեր բնությունն էր. «Թշվառությունից տկարացավ  
ուժն իմ, ուկորներս ել մաշվեցին» (Սաղմ. I, 11): *Սարմ-*  
*նի հյուծման ժամանակ զգարաններն են թու-*  
*լանում, իսկ հոգու սովի ժամանակ իմացականի*  
*ներքին ոսկորներն են թմրում ընդարձանում:*

«Եվ գնաց դիմեց այդ երկրի քաղաքացիներից մե-  
կին, և [վերջինս] նրան ուղարկեց իր ազարակը՝ խո-  
գեր արածեցնելու» (ԺԵ 15): Ինչպես երբ մեղավորն  
Արարչից երես է թեքում, արարածներին է հա-  
րում, և մեջտեղում ոչինչ չկա, այսպես Աստծո  
արքայությունից ելնելու ժամանակ սատանայի  
իշխանության տակ է մտնում: *Օրինակ՝ Պար-*  
*սից սահմաններից ելնելու ժամանակ իսկույն*  
*այլ թագավորի [տերության] սահմանների մեջ*  
*ենք մտնում: Այսպես պատահեց մեր անառակ*  
*բնության հետ, երբ գթած Հոր հովանավորու-*  
*թյունից անհնազանդությամբ ստիպված ելավ*  
*հարելու դժոխային քաղաքացուն, թեպետ նախ-*  
*քան հարելը տիրվել էր նրանից, բայց այստեղ*

Նրա կամքին ամբողջովին ենթարկվելն է ցույց տալիս: Իսկ նա, ով սկզբեց իսկ մեր պատվի դեմ ոխ էր պահում, Աստծո նկատմամբ վրեժը կամենալով մեզանից առնել, իբրև Աստծո հանդեպ նախատինք՝ ուղարկեց խոզեր արածեցնելու: «Խոզերը» բղջախոչներն են, որով ցույց է տրվում, որ թեպետ բոլոր մեղավորներն էլ [սատանայի] բաժինն են, բայց նրա սեփական ժառանգները բղջախոչներն են: Դարձյալ՝ թեպետ բոլոր մեղքերն են նրան հաճույք պատճառում, բայց բղջախոչությունը՝ է՛լ առավել, դրա համար խոզերի մեջ է ուղարկում, քանզի նրա բնակությունը հենց խոզերի մեջ է՝ ըստ այնմ. «Ուղարկի՞ր մեզ խոզերի մեջ» (Մարկ. Ե 12):

Սրանով ցույց է տրվում, որ մեր մարդկային բնության ծանրագույն մեղքը, որով բոլոր արարածներից անարգ դարձանք, ինչպես խոզը՝ կենդանիների մեջ, առանց խտրության խառնակվելն էր, որով սատանան չարաչար [մեզ] ծառայեցրեց: Սրա վրա Աստված բարկանալով՝ այնքան պատիժներ բերեց [մեզ] վրա. Նկատի ունեմ ջրհեղեղը, հրախառն ծծումբը (տե՛ս ԾԱՅԴ. Է-Հ, ԺԹ 24): Որովհետև ինչքան այս մեղքը սիրելի է դեմքն, այնքան գարշելի է Աստծուն: Սրանից երիտասարդները պիտի սովորեն, թե ինչքան մեծ վնաս է հորը թողնելն ու օտարության

մեջ ինքնագլուխ շրջելը, մանավանդ անառակության հետևելը, որովհետև վերջինս է, որ վատնում է բոլոր բարիքները, հոգու շնորհն ու բարի անունը, ինչպես նաև մարմնի հարստությունը՝ արմատական խոնավությունը բնական ջերմության հետ, որով ծերությունն արագանում է, մահն էլ՝ շուտ գալիս՝ ըստ այնմ. «Կրակ պիտի վառվի ճրա [մարմնի] անդամների մեջ. ո՞ր կողմն էլ հասնի, հիմքից պիտի չնչի» (Հոր Լ.Ա. 12):

«Եվ նա ցանկանում էր իր որովալնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք նրան չէր տալիս» (ԺԵ 16): «Եղջյուրը», որ ծառի տափակ, երկար և նեղ պտուղ է, և որը հավաքելով խոզերին իբրև կերակուր են տալիս, այծեղջյուրի նման է, ինչ պատճառով էլ «Եղջյուր» անվանվեց: Քաղցրահամ է, բայց որովայնի ցավ է պատճառում: Խորհրդանշում է պոռնկությունը, որը նախ հաճելի է մեղքի նման, բայց վախճանն ավելի դառն է, քան օշինդրինը: Անսաւակ որդին, երբ ունեցվածքն ուներ, հեշտությամբ էր ուզածը գտնում, բայց երբ չքավոր դարձավ, չկարողացավ [իր ցանկացածը] ձեռք բերել, որովհետև բողերը սովոր են գումարով իրենց ընծայել: Սատանայի բնավորությունն է մեղքի մեջ հրապուրել՝ մեծ հաճույքներ խոստանալով, բայց երբ ընկղմում է [մարդուն մեղ-

**քի մեջ], լքում է [նրան]: Այդ ժամանակ այդ թշվառականը, առաջին չնորհի հույսը կտրելով, հուսահատությունից մեղքին է հակվում, որպեսզի գոնե նրանով սփոփանք գտնի, բայց չի գտնում, որովհետև կամ նրա բնությունն է անկարող լինում, կամ մեղքերի տեսակները ձեռքը չեն ընկնում: Ուստի ճար չգտնելով սթափվելով՝ լավ է համարում կրկին դառնալ նախկին կյանքին, քան նրա մեջ մնալ: Սա լինում է մասավանդ Աստծո խնամքից, որը փակում է մեղքի ճանապարհը, որպեսզի [մեղավորը] դարձի գա, որովհետև մեղքերով հագեցած որովայնն Աստծո չնորհի մեղքն արհամարհում է, ինչպես կշացած բազեն չի վերադառնում մինչև քաղց զգալը: Այս կարծիքը հայտնապես հաստատում է Տիրոջ խոսքը. «Դրա համար Ես կիակեմ նրանց ճանապարհները պատճեցներով և կգնա իր սիրածների հետևից, բայց չի գտնի նրանց և կասի. «Կգնամ և կվերադառնամ իմ նախկին ամուսնու մոտ, որովհետև այն ժամանակ ինձ համար ավելի լավ էր, քան հիմն» (Ով. Բ 6-7): Այսպես մեր մարդկային բնությունը, կռապաշտությամբ պոռնկանալով սատանայի հետև զանազան պատիժներով նեղվելով, տեսնում էր, որ մեղքերի մեջ հանգիստ չկա, ցանկանում էր հանգստանալ, բայց չէր կարողանում: Սա է ոչ ոքի [կերակուր] չտալը. այս միտքն է ար-**

**տահայտում նաև Շնորհալին՝ ըստ այնմ. «Յանկացողին տաք եղջուրի՝ քաղցր մեղքերի մեջ դառնագույնին»<sup>3</sup>:**

**Բայց սուրբ Իգնատիոսը «Եղջուրի» ներքո հասկանում է բնական առաքինություններն ու անասունների արդարությունը, ինչպես որ արագին արդար է, տատրակը՝ ողջախոհ. ասում է, որ մեր բնությունն այնքան անարդ դարձավ, որ ցանկանում էր գոնե անասունների կարգում մնալ, բայց չկարողացավ<sup>4</sup>: Երկուսն էլ ճիշտ են:**

«Ապա խելքի գալով՝ ասաց. «Քանի՛ վարձու աշխատավորներ կան իմ հոր տանը, որ առատ հաց ունեն, իսկ ես այստեղ սովամահ կորչում եմ» (ԺԵ 17): «Հացը» երկու բան է նշանակում: Մեղքի ցավերի հացը, որ մեղավորները հաճույքով ուտում են՝ ըստ այնմ. «Հացը թաքուն հաճուքով կուտես»,՝ խրատում է պոռնիկ կինը (Առակ. Թ 17): Սրանից սով զգալով՝ շնորհի հացն է փնտրում, որից առատորեն վարձկաններն ունեն, այսինքն՝ հրեշտակները, որոնք սպասավորության համար են ուղարկվում, որովհետեւ առակն ըստ հարմարության այլ մտքի է փոխվում: Այսպես էլ մարդիկ են «մշակներ» կոչվում, ինչպես վերեում [ասացինք]: Այսպես մեր բնու-

<sup>3</sup> Բանք չափաւ, Էջ 10:

<sup>4</sup> Տես ՄՍԱՂ, Էջ 274:

թյան շնորհիվ հայր Աբրահամը, արարածներին քննելով, հասկացավ, որ առաջին Պատճառը, ըստ Պողոսի խոսքի, բոլորի Հայրն է և Նրանից է կախված ամենքի գոյությունները (հմնտ. Եփես. Դ.6): Մտքում գրեթե ասում էր. «Քանի՛ վարձու աշխատավորներ կան իմ հոր տանը՝ երկնայիններն ու երկրայինները՝ ըստ յուրաքանչյուր կարգի, իսկ ես այստեղ կուռքերին պիղծ պաշտամունք մատուցելով՝ սովամահ կորչում եմ: Քանզի ով կուռքերին է ծառայում, չի հագենում նրա միտքը, որին միայն է Աստծուն ծառայելը կարող է հագեցնել: Քանզի այդքան վսեմ միտքն ինչպե՞ս կարող է հանգիստ գտնել արարածներին պաշտամունք մատուցելուց:

«Վեր կենամ կնամ իմ հոր մոտ և ասեմ. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի և քո դեմ» (ԺԵ 18): Սա մեր բնությունն այն ժամանակ ասաց, երբ նահապետի միջոցով վերադարձավ Ստեղծողի Հնագանդությանը: Անառակ [որդին] արդարանալու և անբասիր լինելու համար այլ փաստ չուներ, ուստի սրանից կառչեց. «Մեղանչեցի երկնքի և քո դեմ»: Արդ, այս «երկինքը» մեր սուրբ վարդապետներ իգնատիոսը, Գրիգոր Տաթևացին և մյուսները ևս դրախտն են հասկանում<sup>5</sup>, որովհետեւ [մարդը] նախ այնտեղ մեղանչեց: Երբ

<sup>5</sup> Տես ՄՍԱՂ, Էջ 283, ինչպես նաև՝ Զմեռան, Էջ 371, ԳՏ, Էջ 183, 221:

**սովորական որդու մասին է խոսքը, իր հոր դեմ  
մեղանչելուց առաջ նախ երկնավոր Հոր դեմ է  
մեղանչում:**

«Եվ այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու. Վերց-  
րո՛ւ ինձ իբրև քո աշխատավորներից մեկը» (ԺԵ 19):  
**Մարդը մեղանչելիս երկնավոր Հոր որդեգրու-  
թյունից զրկվում է և սատանայի որդի դառ-  
նում: Ուստի երբ հրեաներն ասացին՝ «Մեկ է մեր  
Հայրը՝ Աստված», Տերը պատասխանեց. «Դուք սատա-  
նա հորից եք» (Հովհ. Ը 41, 44): **Ուստի անառակ որդին  
արդարացիորեն ասաց.** «Այլևս արժանի չեմ քո որ-  
դին կոչվելու»:**

«Եվ վեր կացավ եկավ իր հոր մոտ» (ԺԵ 20): **Զարթ-**  
**նեց մահաբեր քնից և մեղքերի խորքերն ընկ-  
նելուց, և մինչ հեռու էր, հայրը տեսավ նրան  
և գիտաց, որովհետեւ տեսավ [իր որդուն] մերկ,  
աղքատ, ամոթալից գալիս, ուստի հայրական  
ամենագութ բարքի համաձայն՝ գիտաց: Նախ՝  
հայրը որդուն տեսավ, որով ցույց է տրվում,  
թե երբ մեղավորը սրտով վերադառնում է, իս-  
կույն Աստված քաղցրությամբ է սկսում նայել  
նրա վրա: Այսպես երբ մեր բնությունը հան-  
ձին Աբրահամի վերադարձավ [առ Աստված],  
Աստված իսկույն քաղցրությամբ նայեց նրա  
վրա՝ ըստ այնմ. «Փառքի Աստվածը երևաց մեր հայր  
Աբրահամին, մինչ նա դեռ Միջազգետքում էր, և նրան**

Խառանում դեռ չէր բնակեցրել, ու ասաց նրան. «Դո՞ւրս  
ելիր քո երկրից և քո տոհմից և արի՝ այն երկիրը, որ ցուց  
կտամ քեզ» (Դործք է 2-3): **Այսպես էլ անառակ որ-  
դուն աստվածային շնորհը զարթնեցրեց և վե-  
րադառնալու միտք հղացրեց:**

«Վեր կացավ և ընդառաջ գնաց, ընկավ նրա պա-  
րանոցով և համբուրեց նրան»: **Արդարեւ, երբ մենք**  
**զղջումով դառնում ենք Աստծուն, նա էլ շնոր-  
հով է մեզ դիմավորում՝ ըստ այնմ.** «Դարձե՞ք  
դեպի Ինձ, և Ես կդառնամ դեպի ձեզ» (Մադաք. Գ.7): **Ուս-  
տի սուրբ առաքյալ Հակոբոսը խրատում է.** «Մո-  
տեցե՞ք Աստծուն, և Նա կմերձենա ձեզ» (Հակ. Դ.8): **Այս-**  
**պես արյունահոսություն ունեցող կինը, երբ մո-  
տեցավ Հիսուսին, Վերջինս էլ շրջվեց, նայեց  
նրա վրա (տես Մատթ. Թ. 20-22): Ուրեմն շրջվե՞ք դե-  
պի Տերը, մեղավորնե՛ր, և մի՛ հապաղեք նրան  
խոստովանելու, այսինքն՝ ձեր մեղքերը՝ ձեր  
խոստովանահոր առաջ: Ահա՛ ձեր հոգիների  
փրկության և մեղքերի թողության օրը. որով-  
հետեւ ո՞վ դարձավ դեպի Տերը և անտեսվեց  
նրանից, քանզի ինքն իսկ երեմիայի միջոցով  
հորդորում է՝ ասելով. «Դարձե՞ք Ինձ մոտ, որդի-  
նե՛ր, և Ես կընդունեմ ձեզ» (Երեմ. Գ.14): **[Սա] անկաս-  
կած իրականացավ անառակի դարձի ժամանակ,**  
**ինքն էլ քաղցրությամբ մոտեցավ և ողջամտու-  
թյամբ ընդունեց նրան:** **Աստված մարդարեի****

բերանով համբուրեց մեր բնությունը, թեպետ  
սա, արքեցած լինելով սուրբ սիրով, անմիջական  
համբույր էր խնդրում, որ Որդու միջոցով էր լի-  
նելու՝ ասելով. «Թող ինձ համբուրի իր բերանի համ-  
բուրներով» (Երգ Ա.1):

«Եվ որդին ասաց նրան. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի  
և քո դեմ» (ԺԵ 21): Խոնարհամիտ [մարդկանց]  
է հատուկ մեծարվելու ժամանակ խոնարհվել.  
անառակ որդին, այնչափ սիրո նշանը տեսնե-  
լով, չմոռացավ իր առաջարկը, այլ սրտանց  
«մեղա» գոչեց՝ վարձկաններին հավասարեց-  
նելով իրեն, ուստի էլ առավել չնորհ և փառք  
ստացավ, քանզի Աստծո խոսքն է, որ խոնարհ-  
ներին պիտի բարձացնի, այդ պատճառով Սի-  
րաքը խրատում է. «Որդյա՞կ, ինչքան մեծ լինես,  
այնքան խոնարհեցրո՞ւ քո անձը, որպեսզի Տիրոջ առաջ  
շնորհ գտնես» (Սիր. Գ.20, Առակ. Ժ.Զ.3):

«Հայրն իր ծառաներին ասաց. «Անմիջապես հա-  
նե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցե՛ք նրան,  
մատանին նրա մա՛տր դրեք և նրա ոտքերին կոշիկնե՛ր  
[հագցերը]» (ԺԵ 22): «Ծառաները» հրեշտակներն  
են, որովհետև Աստված նրանց միջնորդու-  
թյամբ է չնորհ տալիս, քանզի մեկ որդիներ են  
կոչվում, մեկ՝ աշխատողներ, մեկ էլ՝ ծառաներ՝  
ըստ տեղի պահանջի: Նաև առաքյալներն [են],  
ովքեր զգեստավորվեցին և զգեստավորեցին

**աշխարհը:** Անհապաղ նախկին պատմուճանն  
է պատվիրում հանել, որովհետև երբ Աղամը  
դրախտում մեղանչեց, սկզբնական արդարու-  
թյան պատմուճանից մերկացավ: «Նրանց աչքերը  
բացվեցին և տեսան, որ մերկ էին» (Բմնտ. Ծանդ. Գ.7): **Այս-**  
**պես՝** երբ մարդ մեղանչում է, չնորհը վերանում  
է և Աստծո մոտ մնում: Իսկ ապաշխարելու ժա-  
մանակ իսկույն աննախանձ Բնությունը, որ մե-  
ղավորների դարձն է կամենում, վերադարձնում  
է [Չնորհը], ինչպես անառակ Աղամի պարագա-  
յին արեց, նույնպես էլ մեղավորների դեպքում  
է անում: «Նախկին պատմուճանը» սկզբնա-  
կան արդարությունն էր, իսկ այժմ՝ Ավագանի  
շնորհը, այսինքն՝ Սուրբ Հոգին. «Մի՛ տրտմեցրեք  
Աստծո Սուրբ Հոգին, որով փրկության օրվա համար  
կճպվեցիք» (Եփես. Դ.30): «Մատանին» Հոր սրտի սի-  
րո միությունն է որդու հետ, փեսայինը՝ հարսի  
հետ, եպիսկոպոսինն էլ՝ թեմի, ուստի մատին է  
դրվում: [Մատանին] նաև իշխանության նշան  
է: Հայրը, ըստ իր մեծ սիրո, նրան իր վարձ-  
կանների վրա իշխան է կարգում՝ տալով մա-  
տանին, որ նաև գործնական առաքինությունն  
է նշանակում: «Կոշիկը» ոչ միայն ոտքի պահա-  
պանն է շեղնթաց օձի դեմ՝ կոխոտելու օձերին  
և կարիճներին, այլ նաև նրա գեղեցկությունն  
է. «Գեղեցիկ է քո քայլը կոշիկներով, ո՞վ նադաբի

դուստր» (Երգ Է 1): «Ոտքը» հոգու մտքի մշակն է, որին գեղեցկացրեց երկնավոր Հայրն իր Որդու Ավետարանի պատրաստությամբ. «Ամրացրե՛ք ձեր ոտքերը խաղաղության Ավետարանի պատրաստությամբ» (Եփես. Զ 15): *Սրանից իմանում ենք, որ երկնավոր Հայրը մեր անառակ բնությունը բոլոր մասերով զարդարեց:*

«Եվ բերե՛ք պարարտ եզր և մորթե՛ք, ուտենք և ուրախ լինենք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (ԺԵ 23): *Այլաբանորեն՝ «եզը» մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, ով «ուխտյալ զվարակ» է կոչվում, որը պարփակված էր աստվածությամբ և Հոգու լիակատար չնորհով, որն իմանալի յուղ է, որը պարտացնում է [այն ամենը], ուր հեղվում է: Երկնավոր Հայրն ուրախությունից հրամայում է [այդ եզը] մորթել. «Աստված այնքան սիրեց այս աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց» (Հովհ. Գ 16): *Մեղքը մեռցրել էր մեր բնությունն Աղամի մեջ՝ ըստ այնմ. «Այն օրը, երբ ուտես, մահկանացու կդառնաս» (ԾԱՅ. Բ 17): Արդարեւ, [Աղամը պտուղը] ուտելիս մեռավ հոգով. այս մտքով ասաց իմաստունը. «Մահն աշխարհ նտավ բանարկուի նախանձով» (Իմաստ. Բ 24), Տիրոջ խոսքն էլ սաինկատի ունի, որ ասում է. «Նա ի սկզբանե մարդասպան էր» (Հովհ. Ը 44): Ուստի Պողոսն էլ ասում**

է. «Մահը թագավորեց Արտամից մինչև Մովսես» (Հռոմ. Ե 14), **որովհետեւ դրանից հետո Քրիստոսի գալստյան խորհուրդը զորացավ**. Նրա զենմամբ մահը պարտվեց, Աղամը վերստին կենդանացավ, և կատարվեց մարդարեռությունը. «Որտե՞ղ է քո հաղթանակը, մա՞ն, որտե՞ղ է քո խայթոցը, դժո՞խք» (Ովա. ԺԳ.14): **Ուստի մորթելուց հետո ասաց**. «Իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց», **որովհետեւ Քրիստոսով եղավ փրկությունը**:

Այս ամենն իրապես Քրիստոսով կատարվեց, իսկ խորհրդի համաձայն՝ Աբրահամից սկսած մինչև բոլոր մարդարեներն ու արդարները, այդ պատճառով էլ Տերն ասաց. «Զեր հայր Աբրահամը ցանկացավ Իմ աշխարհ գալու օրը տեսնել, տեսավ և ուրախացավ» (Հռվի. Ղ.56), **այսինքն՝ Իսահակով**: Նաև առաջին նահապետներն [ուրախացան], որովհետեւ բոլորն էլ հավատքով իմացան Քրիստոսի գալուստը և դրանով հագան Քրիստոսին ու Եկեղեցու անդամներ դարձան: Արդ, մտքով պատկերացրո՛ւ մեր անառակ բնությունը, որպեսզի ամբողջ սրտով շնորհակալ լինես Հորից:

Անառակ Աղամը բարի Հոր շնորհիվ դրախտում վայելեց, ապա այնտեղից դուրս [գալուց հետո] մերկության և սովի մեջ, խոզերի եղջյուրների ցանկությամբ մաշվեց, իսկ այժմ կայսերավայել փառքով պսակվեց, երկնավոր Հոր ընթրի-

քի ժամանակ պարարտ եղի և անապակ գինու ճաշակմամբ ուրախանում է՝ լսելով Ավետարանի աստվածային իմաստության երգերը:

Սա այլ իմաստնե՞ր էլ ունի: Մեր այս բնությունը շատ ավելի եղելի գտնվեց, քան անառակ որդին, որովհետև նա հեռացումից հետո հորից սիրո որևէ նշան չստացավ, քանզի նրա վերադարձի համար ո՛չ որդի, ո՛չ էլ վարձկան չուղարկվեց, այլ ի՞նքը սաստիկ սով զգալով՝ վերադարձավ իր հոր մոտ: Բայց մենք այնքան համառեցինք մեր այս անառակության մեջ, որ ծառաներով անգամ չվերադարձանք: Քանզի երբ [Աստված] կամեցավ Մովսեսին ուղարկել, իմանալով իր անբավական լինելը՝ [Մովսեսն] ասաց. «Աղաչում եմ, մեկ ա'լ զորավոր մարդու ընտրիր» (Ելք. Դ 13). Նկատի ուներ Քրիստոսին: Երբ [Աստված] տեսավ, որ Մովսեսի միջոցով հնարավոր չեղավ, տարակուսեց, թե ո՛ւմ ուղարկի. «Ո՞ւմ ուղարկեմ, և կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ» (Ես. Զ 8), Եսային հանձն առավ [կատարել], ինչը չհասկանալով, որ [Աստված] իսկական փրկության մասին էր խոսում, նկատի ուներ իր Որդուն, ում ուղարկեց օրերի վախճանին, որով հազիվ դարձի եկանք, այն էլ՝ մասամբ, բայց նա, ըստ իր մեծ գիտության, այսքան պարզեների արժանացրեց: Եթե զարմանում ես անառակ

*որդու հոր անոխակալության վրա, ապա է՛լ  
առավել զարմացիր երկնավոր Հոր սիրո վրա:*

«Իսկ նրա ավագ որդին ագարակում էր... երգերի  
և պարերի ձայնը լսեց» (ԺԵ 25): *Հայրը ցնծում էր,  
որովհետեւ որդուն գտավ. որդին ցնծում էր,  
որովհետեւ ինքը գտնվեց. իսկ մեր բնությունը  
ցնծում էր գոհանալով, որովհետեւ Սուրբ Հո-  
գով զգեստավորվեց՝ ըստ այնմ. «Կցնծամ Տիրո-  
ջով, որովհետև ինձ փրկության զգեստ և ուրախության  
պատմուման հագցրեց, որպես փեսայի՝ պասկ դրեց իմ  
գլխին, և որպես հարսի՝ զուգեց ինձ զարդով» (Եւ. ԿԱ 10):*

«Ծառաներից մեկին իր մոտ կանչելով՝ հարցրեց,  
թե այդ ի՞նչ է» (ԺԵ 26), *և նա տեղեկացրեց: «Ավագ  
որդին» հրեշտակն [է], որ երկնքի կամ օրենքի  
ագարակից (որովհետեւ [հրեշտակները] աստ-  
վածային կամքի օրենքի ներքո են) որ մեր բնու-  
թյան ուրախանալու մասին լսելով, կատարվա-  
ծը չհասկացավ և ծառային հարցրեց: «Ծառան»  
հրեշտակների ստորին դասերն են, որովհետեւ  
երբեմն ծառա են կոչվում, երբեմն՝ որդիներ: *Որովհետեւ թեև, ըստ Դիոնեսիոսի, Քրիստո-  
սի տնօրինության խորհրդի մասին նախ հրեշ-  
տակներն իմացան<sup>6</sup>, բայց մասնակիորեն, իսկ  
ամբողջը եկեղեցուց սովորեցին, այսինքն՝  
Քրիստոսից, ով եկեղեցու գլուխն է՝ ըստ այնմ.**

<sup>6</sup> Բառացի մեջբերում է ս. Դիոնիսիոսի «Յաղագս երկնային քա-  
հանապատութեան» գործից. տե՛ս Dionysius, p. 15:

«Ասա՛ Եկեղեցուն» (Մատթ. ԺՀ 17), **այսինքն՝ գլխավորին:** **Այս մտքով է ասվում.** «Բո Եկեղեցուց սովորեցին Քո բազմապատիկ իմաստությունը» (Եփես. Գ 10): **Ստորինները, Քրիստոսից սովորելով, վերիններին հայտնեցին, որովհետև ստորինները, Քրիստոսի համբարձվելը տեսնելով, տարակուսած ասում էին. «Իսկ այս ո՞վ է, որ ելել գալիս է», և Քրիստոսը, ներքեից պատասխանելով, ուսուցանում էր. «Ես խոսում եմ արդարության և իրավունքի մասին» (Ես. Կ 9 1), «Ծննեցի հնձանը մենակ» (Ես. Կ 9 3), **որը հրեշտակներն իմանալով՝ հաղորդեցին վերին [դասերին]՝ ասելով՝ «Բարձրացրե՛ք, իշխանե՛ր, ձեր դռները, որովհետև սա է փառքի Թագավորը»** (Մադմ. Ի Գ 9):**

«Բարկացավ և չեր ուզում ներս մտնել, և հայրը դուրս ելնելով՝ աղաչում էր հրան» (ԺԵ 28): **Բարկանալն այստեղ զարմացման փոխարեն է դրված,** ինչպես որ նաև տրտնջացող մշակների մասին ասվեց: **Որովհետև հրեշտակները մեր ապրելու վրա ոչ միայն չեն տիրում նախանձից, այլև, ըստ Քրիստոսի վճռի, ուրախանում են. «Ուրախություն է լինում երկնքում մի մեղավորի համար, ով ապաշխարում է» (Ղոկ. ԺԵ 7): **Որովհետև նրանք նույնպես աշխատում են մեր փրկության համար.** «ԶԵ՞ որ սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկում են սպասավորելու հրանց, ովքեր ժառանգելու են**

փրկությունը» (ԵԲԲ. Ա. 14): **Բայց մի բան կա. այն, որ** նրանք չգիտեին Հոր անչափ անոխակալության, գթության և սիրո մասին, որ ուներ մեր մարդկային բնության հանդեպ, ուստի արդարության դեմ էին համարում, որ անառակ որդին միայն մեղայով այդքան փառքի արժանացավ, և իրենց մտքում դատում էին. «Եթե սա այսպես փառավորվեց, ապա որքա՞ն առավել մեզ է [սա] վայել, որ երբեք Նրա պատվիրանը չխախտեցինք: Բայց այսքան ժամանակ մեր ունեցածից փոքր-ինչ ավելի պատիվ չստացանք»: Սա է ուշը: Սակայն այստեղ իրենց մտածումներում դայթեցին, որովհետեւ չհասկացան իրենց տրված մեծ պատիվը, այսինքն՝ Հոր աստվածային դեմքը միշտ տեսնելը՝ ըստ այնմ. «Նրանց հրեշտակները միշտ տեսնում են իմ Հոր երեսը, որ երկնքում է» (Մատթ. ԺՀ. 10): Դրանով վայելում էին Հոր գրեթե բոլոր բարիքները, ուստի գթած Հայրը հիշեցնում է ուլից գերազանց նրանց մեծ բարիքի մասին՝ նախ ասելով. «Դու միշտ ինձ հետ ես», և երկրորդ՝ «Դնձ որ իմն է, քոնն է» (ԺԵ. 31): **Այնուհետեւ ուրախության պատճառն է հայտնում.**

«Պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (ԺԵ. 32): **Սրանով [ավագ որդու] միտքը բժշկելով՝ նրան ուրախության է մղում:** [Կրտսեր որդին]

կորած էր դրամի նման՝ ընկնելով դրախտից  
երկիր, այնտեղից էլ՝ դժոխք:

Բարոյականապես՝ ամեն ինչ, որ պատահեց  
անառակ որդուն, պատահում է մարդուն, երբ  
անհնազանդությամբ և այլ մահացու մեղքերով  
մեղանչում է: Բայց եթե մեղայականով գառ-  
նում է, կրկին գտնում է կորցրած բարին, որ  
մեղքերով կորցրեց, և ամբողջապես վայելում է  
երկնավոր Հոր նախկին սերը:



## ԳԼՈՒԽ ԻԵ

### ՄԵԾԱՀԱՐՈՒՍԻ ԵՎ ՏՆՏԵՍԻ ՄԱՍԻՆ

«Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ, և նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է նրա ունեցվածքը» (Ղոկ. Ժ.2 1):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

«Մեծահարուստ մարդը» Աստված է, որի տունը բաղկացած է երկնքից և երկրից, ինչի վրա Բարուքը զարմանում է. «Որքա՞ն մեծ է Աստծո տունը» (Բարուք Գ.24), ինքն էլ ասում է. «Դմ՛ն են հարստությունը և փառքը, արծաթն ու ոսկին» (Առակ. Հ. 18-19): Արդ, նա երեք տուն չինեց: Նախ նյութական աշխարհը և նրա մեջ մի տնտես կարգեց՝ հրեշտակների պետին, որի մասին ամբաստանություն եղավ, ուստի հանեց տնտեսությունից և խավարային կապանքներով փակեց տարտարոսի մեջ. «Եվ հրեշտակներին, որոնք չպահեցին իրենց իշխանությունը, հավիտենական կապանքներով

պահեց իսկավարի մեջ մեծ օրվա այս դատաստանի համար» (Հուդա Ա 6): **Երկրորդ՝ [ստեղծեց] Եղեմը և նրա մեջ դրեց առաջին մարդուն՝ [այն] մշակելու և պահելու համար** (տե՛ս ԾԱՅԻ.Բ 15). Նրա մասին ևս ամբաստանություն լսելով, թե պտուղը կերավ՝ հանեց և ուղարկեց այն դրախտից: **Երրորդ՝ [հաստատեց] խորհրդավոր Եկեղեցին,** որ Աստծո տունն է, ում տունը հենց մենք ենք: **Սրա տնտեսներ կարգվեցին՝ նախ մարդարեները.** «Մովսեսը Նրա տանը հավատարիմ եղավ իբրև ծառա» (Երր. Գ.5): **Երկրորդ՝ առաքյալները.** «Տնտեսերի մեջ փնտրվում է նա, ով հավատարիմ կգտնվի» (Ա.Կորճ. Դ 2): **Աստծո խորհուրդների տնտեսներ ենք.** «Կիմանաս, թե ինչպես պետք է Աստծո տանը վարվես, որ Եկեղեցին Է՝ ճշմարտության այուն և հաստատություն» (Ա.Ցիմ. Գ 15): **Երրորդ՝ վարդապետները, որոնք ճշմարտության խոսքը քարոզողներն են, որոնց մասին Տերն ասում է.** «Ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն տնտեսը, որին տերն իր ծառաների վրա կարգեց՝ ժամանակին կերակուր տալու համար» (Ղուկ. ԺԲ 42): **Սրանք հայրապետերն են, հովիվները և առաջնորդները.** Երանի՛ նրանց, ովքեր ժամանակին են կերակուրը տալիս առանց զրկանք պատճառելու: Իսկ եթե ուտում-խմում են և ծեծում ծառաներին՝ կա՛մ լեզվով և կա՛մ վատ վարքով, ապա շատերն են [նրանց] ամ-

**բաստանում, և այն ժամանակ տնտեսությունից զրկվում են:**

Դարձյալ՝ «Աստծո տունը» այս նյութական աշխարհն է, ուր տնտեսներ են կարգված թագավորները, ուստի պետք է սովորեն անսխալ դատաստան անել և զգուշանալ անիրավ զրկանքներից, որպեսզի նրանցից զրկանք կրած որբերն ու այրիները չըռղոքեն, որովհետև բողոքը հասնում է Զորությունների Տիրոջ ականջին՝ ըստ առաքյալի (տես Հակ. Ե 4): Ուստի իմաստունը խրատում է նրանց՝ ասելով. «Լսե՛ք, թագավորնե՛ր, և հասկացե՛ք, որ այդ իշխանությունը ձեզ Տիրոջից է տրվել, իսկ հարատությունը՝ Բարձրյալից, որ հաշիվ է պահանջելու ձեր գործերի համար և քննելու է ձեր նտածումները, ահով ու տագնապով հասնելու է ձեզ վրա, քանի որ իշխանների հանդեպ անաշառ դատաստան է լինելու» (Խմաս. Զ 1-6): **Այս գլխում թագավորների մասին է խոսվում, որպեսզի անարդարություն չգործեն և նրանց մասին ամբաստանություն չլինի:** Ահա թե ինչքա՞ն արքունի գանձերը վատնողներ՝ անհավատարիմ ու անիրավ տնտեսներ կան աշխարհում, թագավորներ, որ աղքատների ունեցվածքը կեղեքելով, ապօրինաբար վատնում են, հայրապետներ, որ տնանկների լումաները հավաքելով, զգեստների և կրոնական անպատշաճ ծախսերի համար

են վատնում, փառամոլ առաջնորդներն ու վարդապետները, որ աղքատ մարդկանց կյանքի Խոսքից զրկելով, շան պես քծնելով ու հաճոյանալով հարուստներին, լծախորտակ իշխանների համար են [այն] վատնում: Այսպիսիների մասին իրավացիորեն են ամբաստանություններ լինում, և երանի՛ թե անիրավ տնտեսին նմանվեին:

«Կանչեց և ասաց նրան. «Այս ի՞՞նչ եմ լսում քո մասին, տո՞ւր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլս տնտես լինել չես կարող» (ԺԶ 2): Այստեղ նախ՝ զարմանում է Տերը՝ «Ի՞նչ է սա», ասես ասում է՝ ինչպե՞ս կարողացար վատնել իմ ունեցվածքը՝ չերկնչելով ինձանից, որ քո տերն եմ:

[Երկրորդ]՝ օտարի ունեցվածքը խնամքով չպահպանելը նաև արդարությանն է հակառակ. քանզի մարդ առավել խնամքով պիտի պահի օտարի ունեցվածքը, քան իրենը՝ երկու պատճառով. նախ՝ զգուշանալով անհավատարմությունից, երկրորդ՝ զրպարտությունից, որովհետև շատերն են մեծացնում կորածի [չափը]: Ուստի պատճնին լալով դիմեց Եղիսեին կացնի համար, որ մաղախից ընկել էր Հորդանան գետը, և ասաց. «Ես այն ժամանակավորապես էի վերցրել» (տե՛ս Դ.Թ.ագ. Զ 5), այսինքն՝ փոխ էի առել. ասես [ասում է]. «Եթե իմը լիներ, խնդիր չէր»:

Ուստի ով ուրիշներինն է վատնում, իրենը բուլորովին չի կարող պահել։ Այս մտքով է ասվում. «Եթե օտարինը եղող բանի մեջ հավատարիմ չեղաք, ձերը ո՞վ կտա ձեզ» (Ղոկ. ԺԶ.12):

**Երրորդ՝ ասում է.** «Տո՛ւր քո տնտեսության հաշիվը»։ Թեպետ Աստված է ամեն ինչի տերը և որքան տալիս է, այնքան հարստանում է, ոչ մի բանի կարիք չունի, սակայն արդարացիորեն պահանջում է իր ունեցվածքի հաշիվը՝ տուկուներով հանդերձ, ուստի քանքարը թաքցրած ծառան, վերցրածը մատուցելով, դատապարտվեց (տե՛ս Մատթ. ԻԵ 24-26)։ Իսկ Տերն ասում էր. «Հավաքե՛ք մնացած կտորները, որպեսզի ոչ մի բան չկորչի» (Հովհ. Զ.12)։ **Ունեցվածքը երկու տեսակ է՝ հոգեոր և մարմնավոր, և բոլորն Աստծուց է՝ ըստ այնմ.** «Փառավորե՛ք Աստծուն ձեր հոգում և մարմնում, որ Աստծուց եք ստացել, և դուք ձեր տերը չեք» (Ա. Կորնժ. Զ. 19-20)։ **Ով օրինավոր կերպով չի բանեցնում սրանք, ունեցվածքը վատնող է:**

**Չորրորդ՝ ասում է.** «Այլևս տնտես լինել չես կարող»։ որովհետև ով Աստծո ունեցվածքը վատնում է, տնտես լինելու արժանի չէ։ Այսպես թագավորներն ու հայրապետերը վատնողներին իշխանությունից, առաջնորդությունից և տնտեսությունից զրկում են։ Տնտեսությունից զրկելը երկու կերպ է՝ [լինում]՝ կամ աստի-

Ճանից, կամ կյանքից. Աստված երկուսում էլ առավել պահանջում է խղճի հաշիվ։ Տնտեսները երեք բան պետք է հոգան. նախ՝ չափավորապես և խնամքով ծախսել տիրոջ ունեցվածքը. երկրորդ՝ հավասար բաշխել ըստ յուրաքանչյուրի արժանիքի, և երրորդ՝ առետրի առքն ու տուրքը [գրանցելու] մատյան ունենալ՝ հաշիվը տալու համար։

«Տնտեսն իր մտքում ասաց. «Ի՞նչ անեմ, որովհետև իմ տերն ինձ տնտեսությունիցս զրկում է... հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ» (ԺԵ 3): Նկարագրապես՝ երբ կառավարիչ մեկը պաշտոնից զրկվում է, արդարև աշխատել չի կարող, մուրալ էլ ամաչում է։ Եթքն է՝ բարեկամներ ունենալ և ձեռք բերել, որպեսզի իրենց տներում իրեն ընդունեն։ Հոգեոր առումով նույնպես, երբ մեկը կյանքից զրկվում է, աշխատել չի կարող, որովհետև գործելու ժամանակն անցել է, ինչի մասին ասվում է. «Ամառն անցավ, և հԱՃի ժամանակը վերջացավ» (Երեմ. Հ 20): Մուրալ էլ ամաչում է, որովհետև բոլորը նախատում են և չեն տալիս՝ ըստ այնմ. «Ծովը ցրտի պատճառով չցանկացավ հերկել, հետո կմուրա, բայց ոչ ոք չի տա նրան» (հնմտ. Առակ. Ի 4), ինչպես պատահեց հարուստի և հիմար կույսերի հետ։ Այդ հարուստը հիմարաբար եզրակացրեց՝ ասելով. «Կքանդեմ իմ շտեմա-

րաները» (Ղուկ. ԺԲ 18): **Իսկ [այս տնտեսը]** իմաստ-նաբար եզրակացնում է՝ ասելով. «Գիտե՞մ, թե ինչ պիտի անեմ, երբ տնտեսությունիցս հեռացվեմ, և [նրանք] իրենց տներն ինձ ընդունեն» (ԺԶ 4). իր տիրոջ ունեցվածքի միջոցով բարեկամներ է ցանկանում ձեռք բերել:

«Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասաց. «Իմ տիրոջն ինքա՞ն պարտք ունես»: Պատասխանեց. «Հարյուր մար<sup>1</sup> ձեթ»: Տնտեսը նրան ասաց. «Ա՛ն քո մուրհակը և նստիր ու անմիշապես գրիր՝ հիսուն»: Դարձյալ մյուսին ասաց. «Դու ինչքա՞ն պարտք ունես»: Եվ նա պատասխանեց. «Հարյուր քող<sup>2</sup> ցորեն»: Տնտեսը նրան ասաց. «Ա՛ն քո մուրհակը և նստիր ու գրիր՝ ութսուն» (ԺԶ 5-7): Նկարագրապես՝ մուրհակ-ները նրանց ձեռքն է տալիս՝ ասելով՝ ա՛ն, այսինքն՝ վերցրո՛ւ քո գրությունը և հրամայում է նվազեցնել պարտքերը, որպեսզի նրանք հասկանան նրա բարերարությունը և իրենց տներն ընդունեն [նրան]: Այսպես պետք է յուրաքանչյուր ոք [անի], անգամ եթե անիրավ տնտես լինի. տնտեսությունից մահվամբ վտարվելու ժամանակ իր անիրավ ունեցվածքից աղքատներին

<sup>1</sup> Մար - (պիլ. māhr-ից) հեղուկաչափ, որ հավասար է 39,29 լիտրի:

<sup>2</sup> Քող - (հուն.) ρεντեղենների կամ արմտիքների չափ =10 արդու, քաշը՝ 293 կգ. 760 գր.:

բաժանի և բարեկամներ ձեռք բերի, որպեսզի  
իրենց տներում ընդունեն, այսինքն՝ արքայու-  
թյան հարկերի մեջ, որ աղքատների սեփական  
տունն են՝ ըստ այնմ. «Երանի՛ հոգով աղքատներին,  
որովհետև նրանցն է երկնքի արքալությունը» (Մատթ. Ե  
Յ): **Այսպես է եզրափակում Տերն առակը՝ ասե-  
լով.**

«Եվ ես ձեզ ասում եմ անիրավ մասոնալից ձեզ  
բարեկամնե՛ր արեք, որպեսզի, երբ այն պակասի,  
հավիտենական հարկերի մեջ ձեզ ընդունեն» (ԺԶ 9):  
«Անիրավ» է կոչում, ոչ թե [որ ունեցվածքը]  
ըստ ինքյան [է այդպիսին], քանի որ բարի է,  
այլ [որ այդպիսին է դառնում] ըստ ձեռք բեր-  
ման, որովհետև մեծ մասամբ անիրավությամբ  
է ձեռք բերվում և անիրավաբար պահվում:  
Նաև՝ եթե մեկն իր տիրոջ ունեցվածքից է բաշ-  
խում աղքատներին, անիրավաբար է տալիս,  
բայց քանի որ աղքատներին է տալիս, ուստի  
անմեղադրելի է և գովասանքի արժանի. դրա  
համար էլ տերը գովեց անիրավ տնտեսին:

Խորհրդանշաբար՝ տնտեսը միտքն է՝ իշ-  
խանական պատվով պերճացած, տիրոջ երկու  
պարտապանները՝ հոգին ու մարմինը: Հոգին,  
ծայրաստիճան մեղավոր լինելով, պարտք է  
հարյուր մար ձեթ, այսինքն՝ ընդդեմ Սուրբ Հո-  
գու, որին ձեթն է խորհրդանշում: Իսկ մարմի-

նը, նույնպես ծայրաստիճան մեղավոր լինելով,  
պարտք է հարյուր քոռ ցորեն՝ ընդգեմ Տիրոջ  
Մարմնի, որ ցորենից է փոխարկվում: Որով-  
հետև ինչպես որ հարյուր [քոռ] ցորենի բերքը  
սրբերի գործերի գագաթնակետն է նշանակում,  
այսպես էլ հարյուր թիվն այստեղ մեղքերի չա-  
փի լրումն է, որ լինում է այս երկուսով մեղան-  
չելուց: Ուստի առաքյալը խստորեն ասում է.  
«Իսկ որչա՞փ ավելի խիստ պատժի արժանի պիտի հա-  
մարեք նրան, ով անմաքուր համարեց նոր ուխտի արյու-  
նը» (Երր. Ժ 29). սա՝ ցորենի վերաբերյալ. «անարգեց  
շնորհի Հոգին» (Երր. Ժ 29). սա էլ՝ ձեթի վերաբերյալ:  
Արդ, թե ինչո՞ւ է ձեթի պարտքն ավելի թո-  
ղություն գտնում, իսկ ցորենինը՝ սակավ, նկա-  
րագրական պատճառն այն է, որ ձեթն ավելի  
թանկ է և դժվարությամբ է վաճառվում, իսկ  
ցորենը՝ էժան, որը հեշտությամբ է վաճառ-  
վում, ուստի նրանը շատ է թողնվում, իսկ սրա-  
նը՝ քիչ: Իսկ խորհրդաբանական պատճառն  
այն է, որ մարմինը տկար լինելով, որքան ջա-  
նում է իրեն ըստ արժանվույն պատրաստել  
Սուրբ Խորհրդին, տակավին չի կարողանում,  
այդ պատճառով այնքան էլ մեղադրելի չէ:  
Ուստի թեպետ սրան թողնվում է, բայց մնացա-  
ծը հեշտությամբ վճարվում է մի մեղայով: Իսկ  
հոգին, լինելով իմացական և իր գործերի տե-

ըր, երբ անձնիշխանաբար մեղանչում է ընդդեմ շնորհի Հոգու, նախանձ՝ ընդդեմ եղբայրական սիրո, և ընդդեմ ճշմարտության ջատագովելով, որոնք հայՀոյություններ են ընդդեմ Սուրբ Հոգու, ավելի ծանր է մեղանչում։ Այդ պատճառով շնորհի Ավազանի հանդեպ ծանր պարտքի տակ է մնում։ Ուստի նրան քաջալերելու համար թողնում է կեսը, որպեսզի հույս ստանալով՝ Աստծո ողորմությանը դիմի։ Այսպես նաև Շնորհալին է գրում՝ «Հոգունը՝ Բիսուն մար ձեթ, մարմնին՝ 20 քոն ցորեն»<sup>3</sup>։ Մարը հեղուկների չափէ, ինչպես օրինակ՝ ձեթի, իսկ քոռը՝ չոր բուսամթերքի, ինչպես օրինակ՝ ցորենի։

«Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև իմաստությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լուսի որդիներն իրենց սերնդի մեջ» (ԺԶ 8): Յուրաքանչյուր տնտես հաշիվ տալիս ճշգրտորեն է պահանջում իր տիրոջ պարտապաններից, որպեսզի թերեւս ազատվի [պատժից]։ Բայց այս մեկը, իրավիճակից հասկանալով, որ անպատճառ տնտեսությունից վտարվելու է, մտածում ու հնար է գտնում։ Տիրոջ այնքան ունեցվածքը վատնելուց հետո էլ դեռ շարունակում է վատնել, բայց իմաստնաբար, որպեսզի բարեկամներ ձեռք բերի, ուստի

<sup>3</sup> Բանք չափաւ, Էջ 113:

արժանի է գովասանքի, որովհետև ավելի իմաստուն գտնվեց. քան լույսի որդիները՝ ապրելու ձև գտնելով և ապաշխարության դիմելով, նրանով, որ հոգուն և մարմնին քաջալերեց՝ Աստծո ողորմությանը հուսալու: Որովհետև եթե ինքը կեսը թողեց, Աստված ամեն ինչ է թողնում, ինչը չկարողացան անել չար հրեշտակները՝ լույսի որդիները տնտեսությունից զրկվելիս: Երանի՛ թե մենք էլ, հիշելով մահվան մասին, երբ զրկվելու ենք տնտեսությունից, մեր Տիրո՞յ՝ անիրավությամբ մեր սեփականացրած ունեցվածքի միջոցով աղքատներից մեզ բարեկամներ անենք, որպեսզի ընդունեն իրենց տները՝ հավիտենական հարկերի մեջ:





## ԳԼՈՒԽ ԻԶ

### ՈՐՊԵՍ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ ԵՎ ՍՓՈՓԱՆՔ՝ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ

«Մի մեծահարուստ մարդ կար» (Ղոկ. Ժ. 219):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Մեծահարուստը մեղադրանքի տակ է ընկած նախ՝ ագահորեն հավաքելու պատճառով. այսպիսին էր առատ բերք ունեցողը, ով ասում էր. «Ո՞ր այսի հավաքեմ իմ բերքը» (Ղոկ. Ժ. 17). Երկրորդ՝ անիրավորեն ձեռք բերելով, ինչպես անիրավ տնտեսը (տե՛ս Ղոկ. Ժ. 1). Երրորդ՝ [հարստությունը] սաստիկ սիրելու, ինչպես այն պատանին, ով տրտմությամբ հեռացավ (տե՛ս Մատթ. Ժ. 21-22). չորրորդ՝ շռայլորեն գործածելու, ինչպես այս մեծահարուստը, ում մասին ասում է.

«Մի մեծահարուստ մարդ կար, որ բերեզ և ծիրանի էր հագնում»:

Սա չորս մեծ մոլություն ուներ: Նախ՝ այս

**սնափառությունը, որ բեհեղ և ծիրանի էր հագնում:** Բեհեղը նրբաթել, կտավից հագուստ է, իսկ ծիրանին ասվյա կամ մետաքսե հագուստ է՝ կարմրի երանգով ներկված, որ պատրաստվում է «ծիրանի» կոչվող ծովային խեցեմորթների արյունից, և սա միայն թագավորներին է վայել. «Ահա նրանք, ովքեր փափուկ բաներ են հագնում, թագավորների պալատներում են» (Մատթ. ԺԱ. 8): **Այսպիսիներին Աստված դատում է՝ լստ այնմ.** «Պիտի այցելեմ բոլոր նրանց, ովքեր թաճկարժեք զգեստներ են հագել»<sup>1</sup>. «Զեր զգեստները՝ ցեցի կեր» (Հակ. Բ 5), **և թե՝ «Պիտի համի Տերը նրանց հանդերձներից օտար զարդը»<sup>2</sup>:** **Արդարեւ թեև մերկ է, զարդարված է վայրի շուշանի նման և չի ամաչում.** «Երկուսն էլ մերկ էին և չէին ամաչում» (Ծառ. Բ 25): **Մեղավորն ուղում է ծածկվել, որպեսզի նրա տգեղությունը չերևա:**

**Երկրորդ՝ որկրամոլ էր, քանզի ուտում էր և խմում, որից օվկիանոսի նման բխում են մոլությունների բոլոր գետերը. «Քո քրոջ՝ Սոդոմի անօրենությունը սա է՝ հացով լիացում և գինու մեջ հղվացածություն» (Եգեկ. ԺԶ. 49): Ուստի [առակը] ասում է. «Եվ ամեն օր առատապես ուրախանում էր»:** **Քանզի ուրախությունը գինու չարաշահումից է բխում, թեպետ հետո տրտմություն է առա-**

<sup>1</sup> Դժվարանում ենք մատնանշել սուրբքրային աղբյուրը:

<sup>2</sup> Սուրբքրային աղբյուրը մեզ անհայտ է:

**ջացնում. այդ պատճառով էլ [Տերը] ասում է.**  
«Վա՛յ ձեզ, որ ալժմ ծիծաղում եք, որովհետև սգալու և  
լալու եք» (Ղոկ. Զ 25):

**Երրորդ՝** այս մեծահարուստի մոլությունն էր  
գինարբուքների ժամանակ ոչ թե երբեմն ու-  
րախանալը, որ անկշտամբելի է, այլ միշտ, ոչ  
թե չափավորապես, ինչպես որ վայել է պարկեշտ-  
ներին, այլ առատապես, այսինքն՝ չափազանցո-  
րեն, որից ավելի մեծ վտանգ կյանքի համար  
չկա: Այսպիսիների մասին էր եսային ասում.  
«Վա՛յ նրանց, ովքեր առավտյան զարթնում են, օդու  
հետևից ընկնում և օրն անցկացնում դրանով» (Ես. Ե 11),  
**Սողոմոնն էլ՝** «Ո՞ւմ համար է վայր նրա, ով տարվում  
է գինով» (Առակ. Ի Գ 29-30):

**Չորրորդ՝** այնքան խիստ անգիտություն ու-  
ներ, որ իր դուռն ընկած թշվառ Ղազարոսին  
էլ չողորմեց: Այսպիսի մեծահարուստներն  
աղբով լցված ուկյա զարթատուփի նման են,  
որ աշխարհի աչքում մեծ են, իսկ մարդկանց  
գաղտնիքները Քննողի աչքում պիղծ լինելով՝  
ընկած են Աստծո աչքից, ուստի նրանց անունը  
հիշատակության արժանի չէ՝ ըստ այնմ. «Թո՛ղ  
չհիշվեն նրանց անուններն իմ շուրթերին» (Սաղմ. ԺԵ 4):  
Երկրորդ՝ որովհետև անունները ցույց են տա-  
լիս գոյացությունը որակով հանդերձ. տվյալ  
գոյացության կորստի դեպքում կորչում է նաև

նրա անունը: Ինչպես օրինակ՝ եթե մեկի անունը Հովհաննես է, այսինքն՝ շնորհ, եթե ինքն ապաշնորհ լինի, այդ անունը նրան վայել չէ, այլ այդ առաջին անունը պետք է փոխվի և ջնջվի: Ուստի Ալեքսանդրն իրեն անվանակից երկշուր պատանուն ասաց. «Ո՞վ պատանի, կամ անունդ, կամ սիրտդ փոխի՛ր»: Ուստի այս մեծահարուստը, անվանը ներհակ գործ ունենալով, հիշատակության չարժանացավ: Երբորդ՝ մեղավորների անունը ջնջվում է Աստծո մտքից, որովհետև դատապարտությունից հետո մեղավորն այլևս չի ընկնում Աստծո միտքը՝ ըստ այնմ. «Նրանք կշնչվեն թու կյանքի գրքից» (Քննութ. Հայութ. Ե3): Իզուր ջանաց չար մեծահարուստը տապանաքարի վրա քանդակել իր անունը, որպեսզի իր հողի վրա կարդացվի:

«Եվ Ղազարոս անունով մի աղքատ մարդ ընկած էր նրա դուան առաջ՝ վերքերով ծածկված: Եվ ցանկանում էր կշտանալ այն փշրանքներով, որոնք թափվում էին մեծահարուստի սեղանից: Եվ դեռ շներն ել գալիս լիզում էին նրա վերքերը» (ԺԶ 20-21):

Աղքատությունը հետին և անտանելի վերջին թշվառությունն է, ուստի հեթանոսներից շատերն ասացին, թե ավելի լավ է վիճն ընկնել, քան վերջին աղքատությամբ ծնկի գալ: Այսպես կարելի է ասել հեթանոս աղքատների մասին, այլ ոչ թե հավատացյալների, ովքեր

անխոտոր մտքով համբերում են արքայության հույսով, որ պատրաստված է նրանց համար՝ ըստ այնմ. «Աստված՝ Քո քաղցրությամբ պատրաստություն տեսար աղքատի համար» (Սաղմ. Կէ 11), դեպի որն ուրախությամբ տարվեց Ղազարոսը: Արդ, այս աղքատի դժբախտությունը շատ ծանր էր, որովհետև բացի աղքատությունից, ծածկված էր վերքերով և խնամող չուներ այն աստիճան, որ չներն էին գալիս ու վերքերը լիզում: Բայց այսքան վտանգ կրում էր Աստծո փառքի համար, ուստի նրա հոգին վերքերով ծածկված մարմնում թաքնված էր ինչպես պայծառ աստղը՝ մառախլապատ ամպերում, ինչպես գոհարը՝ հողի խորքում, ինչպես լուսափայլ մարգարիտը՝ ոստրեի փորում, ինչպես Սոփերի ոսկին՝ երկաթյա տուփում: Ուստի նրա անունը, ցանկալի լինելով Աստծուն, հիշվում է [Նրա կողմից], ինչպես որ Աստծո անունն էլ ցանկալի է սուրբերին՝ ըստ այնմ. «Տե՛ր, Անդության մեջ հոգու [մեծ] ցանկությամբ հիշեցինք Քո անունը, որը տենչաց մեր հոգին» (Ես. ԻԶ 16, 8): Այսպես էլ փոխադարձաբար սուրբերի անունն է Աստծո համար ցանկալի. այն գրված է երկնքի կամարի վրա, որտեղ [Աստված] միշտ ընթերցում է [այն], և կյանքի գրքում, այսինքն՝ Աստծո մտքի մեջ, ուր հավիտյան անեղծանելի է մնում:

«Երբ աղքատը մեռավ, հրեշտակները տարան  
նրան Աքրահամի գոգը» (ԺԶ 22):

*Մարդը գերազանցապես հոգին է, ուստի  
[Ղազարոսի] մասին «տարան» է ասվում: Թե-  
պետ մի հրեշտակ է հոգին տանում, բայց ի  
պատիվ սուրբերի շատերն են ուղեկցում, այդ  
պատճառով «հրեշտակները տարան» է ասվում:  
Ինչպես որ արքայության մեջ շատ օթևան կա,  
այնպես էլ՝ դժոխքում. կամ ինչպես որ քաղա-  
քում կան մարդիկ, որոնք պատիվ ունեն, կան էլ՝  
որ նախատինքի մեջ են, այդպես էլ դժոխքում,  
կան, որ գեերի նախատինքի տակ են, կան էլ՝ որ  
հրեշտակների պահպանության: Որովհետև ի  
պատիվ արդարների հոգիների՝ բարի հրեշտակ-  
ները նույնպես դժոխք ուղարկվեցին, որպեսզի  
[արդարները] այնտեղ չտանջվեն. ուստի Աք-  
րահամը և մյուսները խաղաղ օթևանում էին,  
ուր և Ղազարոսին տարան: Այսպես էլ Երե-  
միան և Եղեկիելը ժողովրդի հետ գերեվարվե-  
ցին, որպեսզի անդառնալի չմոլորվեր: Մահը  
բոլոր թշվառությունների վախճանն է և մար-  
տիրոսների չարչարանքների վերջնասահմանը:  
Երանի՛ նրան, ով մինչև մահ կապրի, որով-  
հետև դրանից հետո մեծ բարություն կդտնի.  
«Հավատարի՞մ եղիր մինչև մահ և քեզ կյանքի պսակը  
կտամ» (Հազ. Բ 10): Այսպես Ղազարոսը տոկաց*

դառն տանջանքներին, և մահը բարի դատաստան արեց նրան, որովհետև ազատեց թշվառ կյանքից, վիրավոր մարմնից, այս բազմակարիք կենցաղից և հավատքով հանգստացրեց Աբրահամի գոգում, որովհետև նրա հավատքի որդին էր, ուստի Սիրաքն ասում է. «Ո՞վ մահ, բարի է քո դատաստան այն մարդու համար, որ կարիքի մեջ է և ուժից ընկած» (Սիր. ԽԱ.3):

«Մեծահարուստն էլ մեռավ և թաղվեց»:

Էշի թաղմամբ թաղվեց, որովհետև ինչպես էշն է քերթվում և գազանների կերակուր դառնում, այսպես մեծահարուստն է իր մահվան ժամանակ [քերթվում] իր [ունեցվածքից]. թանկարժեք ծիրանիներից մերկացվում է և ասես քերթվելով՝ մի պատճենքով դրվում գերեզմանի մեջ, ուր նրան օձերն են տիրանում. գերը՝ հոգուն, որ վերցրին, գազանները՝ մարմինը, եթե դրսում է մեռնում, և որդերը, եթե գերեզմանում է, ինչպես Սիրաքն է ասում. «Քանի որ սա է մեր վախճանը, ինչո՞ւ է հպարտանում մարդը, որ հոդ է և մոխիր» (Սիր. Ժ.13): Եվ քանի որ հպարտ մեծահարուստը մեռնելիս սովորաբար դժոխք է ընկնում, ուստի [Տերը], իբրև ավելորդ բան, նրա անունը չի հիշում:

«Եվ դժոխքում, մինչ սա տանջանքների մեջ էր, բարձրացրեց իր աչքերը և հեռվից տեսավ Աբրահա-

մին, Ղազարոսին Էլ՝ Աբրահամի գոգում» (ԺԶ.23):

Երբ կենդանի էր, փակել էր աչքերը և Ղազարոսին գթալից աչքերով չէր նայում, իսկ այժմ տանջանքը բացում է աչքերը, որոնք հաճույքը փակել էր: Խլուրդի մասին ասվում է, թե կենդանի ժամանակ փակում է աչքերը, իսկ երբ մեռնում է, բացում է, բայց իզուր: Այսպես էլ սա մեռնելուց հետո իզուր է բարձրացնում իր աչքերը, որովհետեւ [դրանք] բացելու ժամանակը կորցրել էր, ուստի Հոբն ասում է. «Ննջեց և չի արթնանա [այդպիսին], աչքերը բացեց և այլս չկա» (Հոր Իէ.19), այսինքն՝ օգնական՝ ո՛չ ունեցվածքից, ո՛չ էլ բարեկամներից: Դժոկքում այնտեղի մեծ կրակից սաստիկ տապ է, որ սաստիկ ծարապ է առաջացնում: [Հարուստը] այն տապի տոչորման մեջ էր, ուստի լեզուն ծարավից պապակում էր: Հեռվից է տեսնում Ղազարոսին, որովհետեւ մեղավորներից հեռու է փրկությունը, արդարին տեսնելուց հետո շատ է սաստկանում մեղավորի ցավը՝ ըստ այնմ. «Նրա արդարությունը բարձր կլինի փառքով: Մեղավորը կտեսնի և կբարկանա, ատամները կկրծտացնի ու հալումաշ կլինի, և մեղավորների ցանկությունը կկորչի» (Սաղմ. ԾԺԱ. 9-10), և թե՝ «Տեսնելով նրան՝ կխոռվվեն սաստիկ երկյուղից» (Ինաստ. Ե.2):

«Եվ նա աղաղակեց ու ասաց. «Հա՛յր Աբրահամ,

ողորմի՞ր ինձ և ուղարկի՞ր Ղազարոսին, որպեսզի իր մատի ծայրը թրջի շրով և զովացնի լեզուս, որովհետև այս տապից պապակում եմ» (ԺԶ 24):

Սաստիկ նեղությունը մարդու միտքն այնպես է գրավում և աղմուկ ստեղծում, որ [մարդը] ցնորվում է և չի հասկանում, թե ի՞նչ է խոսում, և քանի որ դժոխքում անտանելի տանջանք կա, ուստի ցնորքներ են առաջ դալիս, ինչպես երեսում է այստեղից: Նաև՝ որովհետև [մեծահարուստը] հիմարաբար Ղազարոսին է փնտրում. երկրորդ՝ ջրի կաթիլ, որն ի՞նչ է դժոխքի սաստիկ տապի հետ համեմատած, թեպետ Աստծո ողորմության համեմատ՝ նրա գթության մեկ կաթիլը կարող է հանգցնել դժոխքի հնոցի մեծ բոցը, ինչպես ցողաբեր քամին՝ Բաբելոնի կրակը (տե՛ս Դաճ. Գ. 50): Նաև՝ թեպետ լսել ենք, թե դժոխքում սաստիկ ցուրտ է, բայց զովացնող ջուր չկա: Ցավի սաստկությունից լեզուն էր կծոտում՝ ըստ այնմ. «Ցավից լեզուն էին կծոտում» (Հայո. ԺԶ 10): Զովանալ էր խնդրում, մեկ ջրի կաթիլ էր կարոտում նա, ում կոկորդը քաղցրանում էր մեղրի ճաշակմամբ, իսկ լեզուն հաճույք ստանում քաղցր օշարակների ըմպումից, բայց այժմ կարիքը բռնել է նրան ջրի նման, մանավանդ այն անդամը, որով կրակի նման չորացնում էր բազում աղքատնե-

ըի սիրտը հայհոյությամբ և մեծախոսությամբ։ Այժմ իր անզգամության պատիժն է ստանում՝ ըստ այնմ. «Որչափ փառավորեց ինքն իրեն, այդչափ դրան տանջանքներ հատուցեք» (Հայտ. ԺՀ 7): «Հայր» է անվանում Աբրահամին և չի ամաչում՝ սատանայի որդի լինելով, որովհետև սատանայի գործերն էր կատարում։ Հստ իր սովորության՝ այն խորամանկ շողոքորթը, կեղծավորաբար քծնում է նրան՝ «Հայր» անվանելով, որպեսզի նրա գութը շարժի։

«Եվ Աբրահամն ասաց նրան. «Որդյա՞կ, հիշի՞ր, որ դու քո բարիքները ստացար այնտեղ՝ քո կյանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները. այժմ սա այստեղ միսիթարվում է, իսկ դու այդտեղ պապակում ես» (ԺԶ 25):

Այստեղից պարզ է դառնում, որ գժոխքում հոգին գործածում է իր հատկությունները, այսինքն՝ իմացականությունը և հիշողությունը, բայց որպես իրեն պատիժ, քանզի Ղազարոսի փառքն իմանալով և իր նախկինը հիշելով՝ տուչորվում է։

«Որդյա՞կ, հիշի՞ր» ասելով՝ կամենում է ասել. «Ես, ըստ իմ բնավորության, պատրաստ եմ ողորմելու, բայց աստվածային արդարությունը չի թողնում, որովհետև դու այնտեղ մարմինդ պարարտացնելով հղփացար, և միտք

էլ կամենում ես այստեղ հանգստացնել, բայց  
այսպիսի հանգիստը՝ Ղազարոսի նման աշխա-  
տավորներինն է. «Սրանք նրանք են, որ գալիս են մեծ  
Անդություններից» (Հայտ. է: 14): Դու այն պատճառով  
ես աղաղակում լալով, որ քո երկրավոր կյան-  
քի ընթացքում ծիծաղում էիր և ուրախանում,  
իսկ սա այն պատճառով է այստեղ միսիթար-  
վում, որ այնտեղ սգավոր էր: Երբ բագեն կեն-  
դանի է, շատ պատիվ է ստանում, իսկ հավն  
անարգվում է. մահից հետո բազեին աղբանոց  
են գցում, իսկ հավը դրվում է թագավորների  
սեղանին: Այսպես մեծահարուստն այս կյան-  
քում ավարառու բազեի նման պատիվ ուներ,  
իսկ աղքատը հավի նման անարգության մեջ  
էր, բայց այն [կյանքում] հակառակն է լինում:  
Գեղեցիկ Հովսեփն իր հայր Հակոբի հիվանդու-  
թյան ժամանակ անդրանիկ Մանասեին մոտեց-  
րեց աջ կողմից, իսկ Եփրեմին՝ ձախից, որպեսզի  
[Հակոբը] օրհնի, բայց նա փոխեց ձեռքը՝ աջը  
դնելով Եփրեմի վրա, ձախը՝ Մանասեի (տե՛ս ԾԱՅ.՝  
ԽԸ 13-14): Այսպես այս կյանքում թեպետ մեծա-  
հարուստներն աջ կողմում են, իսկ աղքատները՝  
ձախ, բայց հանդերձյալում հակառակն [է լի-  
նելու]. «Սա այստեղ միսիթարվում է, իսկ դու այդտեղ  
պապակում ես»:

«Եվ այս ամենից բացի, մեծ վիր կա մեր և ձեր միջն.

եթե ուզենանա այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա, ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեզ մոտ անցնել» (ԺԶ 26):

**Դժոխքում մեծ վիճեր կան, ուր մեղավորների գանազան դասերն են զետեղվում՝ ըստ Եղեկելի:** «Այնտեղ է Ասուրը, և բոլորը նրա գերեզմանի շուրջ են» (Եղեկ. ԼԲ 22-23): **Վիճը, որ ձգվում էր մեծահարուստից մինչև Աբրահամ, մեծ ձոր էր, որով անհնար էր անցնել:**

**Խորհրդապես՝ Աստծո վճիռն է՝ ըստ այնմ.** «Եթե ծառն ընկնի հարավ կամ հյուսիս, ուր էլ ընկնի, այնտեղ էլ կմնա» (Ժող. ԺԱ 3): **Հարավում ընկած «ծառը» Աստծո շնորհի մեջ մեռած արդարն է,** իսկ հյուստիսում ընկածը՝ մեղավորը: Երկրորդ՝ վիճը մեղավորների և արդարների գործերն են, որոնց միջև մեծ տարբերություն կա: Երրորդ՝ արդարը բարձր է ինչպես արեգակը, որը գեպի երկիր չի կարող խոնարհվել, իսկ մեղավորն ավելի ծանր է, քան արեգակը, որ չի կարող մոտենալ արեգակին. այս երկրորդ պատճառը բերեց Աբրահամը, որպեսզի արդարացնի իրեն և նրա հոռյար կտրի: **Հիրավի Տերն ասաց.** «Ավելի հեշտ է, որ մալուխն ասեղի ծակով անցնի, քան թե հարուստը մտնի Աստծո արքայություն» (Մատթ. ԺԹ 24):

«Եվ մեծահարուստն ասաց. «Արդ, աղաչում եմ քեզ, որ Ղազարոսին ուղարկես իմ հոր տունը, որտեղ ես

հինգ եղբայրներ ունեմ, որպեսզի նրանց վկայություն տա, որ նրանք ել չգան տանջանքների այս վայրը» (ԺԶ 27):

**Անշուշտ** «ինչով որ մարդ մեղանչում է, նույն բանով ել այսի տանջվի» (Խմատ. ԺԱ 17): **Աղքատը, մեծահարուստի դռան մոտ ընկած, միշտ տեսնում էր նրան և տոչորվում, բայց ոչ ոք նրան չէր մխիթարում, իսկ այժմ, հակադարձաբար, արեգակի նման, վերևում կանգնած իր փառքի ճառագայթներով այրում է նրան՝ ըստ այնմ. «Այն ժամանակ արդարը շատ համարձակ կկանգնի իրեն Աեղողմերի հանդեպ, և նրանք, ովքեր արհամարհում էին նրա վաստակը, տեսնելով նրան, պիտի խոռվվեն սաստիկ երկրութից» (Խմատ. Ե 1-2): **Ուստի ինչով որ մեղանչել էր, նույն բանով էլ տանջվում է:** Այդ պատճառով էլ հնար է [այն] փնտրում իրենից հեռացնել՝ դա ասելով. կամ էլ, ունենալով եղբայրներ, թերևս մտահոգվում էր անմտաբար, ուստի [Աքրահամը] ասում է. «Նրանք Մովսեսին ու մարգարեներին ունեն, թող նրանց լսեն» (ԺԶ 29), որովհետև **Սուրբ Գիրքը բավարար է հավատացողների համար:****

«Եվ նա ասաց. «Ո՛չ, հա՛յր Աքրահամ, բայց եթե մեռելներից մեկը կենդանանա, նրան կլսեն» (ԺԶ 30):

**Ինչպես որ շատերն այժմ էլ են այսպես մտածում, բայց խաբվում են, որովհետև եթե կեն-**

դանի մարդու խոսքերին բնավ չեն հավատում,  
ինչպե՞ս մեռելների միջից եղածին կհավատան և  
ցնորված, այսահար ու մոլագար չեն համարի:  
Ուստի [Աբրահամը] իրավամբ ասաց.

«Եթե Մովսեսին և մարգարեներին չեն լսում, մե-  
ռելներից մեկն Էլ եթե հարություն առնի, չեն հավա-  
տա» (ԺԶ.31):

Եվ սա պարզ է Ղազարոսի օրինակով, որով  
փոխանակ հավատային, չարանալով սպանել  
էին նրան ուզում (տե՛ս Հովհ. ԺԱ, ԺԲ.10): Հերովդեսը,  
Հիսուսի մասին լսելով, կարծում էր, թե Հովհան-  
նես [Մկրտիչն] է մեռելներից հարություն առել,  
բայց երբ [Հիսուսին] տարան նրա մոտ, փոխա-  
րեն հավատար ու ազատեր, արհամարհելով ու-  
ղարկեց Պիղատոսի մոտ (տե՛ս Ղոկ. ԻԳ.11):

Իմացի՛ր այստեղ, որ Երկնային իմաստու-  
թյունն է պատմում ճշմարտապատում այս առա-  
կը, որին հակառակվելը մեծ հանդգնություն է:  
Ուստի չհամարձակվեցի ասել, թե պատմում է  
չեղած բաների մասին՝ իբրև եղածների և կամ  
այլ բաներ, այլ խոսքի մտքին հեղաբար մո-  
տենալով ասում եմ, որ արդարների հոգիների  
օթևանները, որոնք նաև «կայաններ» ենք ան-  
փանում, ըստ առակի իմաստի, տարբերվում են  
մեղավորների հոգիների տեղից:

## ԳԼՈՒԽ ԻԵ

### ՀԱՐԱՏԵՎ ԱՂՋԹՔԻ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի առակ էլ նրանց ասաց այն մասին, որ ամեն ժամ պետք է աղոթել և չձանձրանալ» (Ղոկ. ԺՀ 1):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

[Ամեն ժամ աղոթելը] երեք կերպ է մեկնաբանվում: Նախ՝ աղոթքի՝ Եկեղեցու սահմանած բոլոր ժամերին, այն է՝ ինը, պետք է աղոթքի կանգնել և չձանձրանալ: Երկրորդ՝ ամեն ժամ հիշել Աստծուն և միշտ գոհանալ Նրանից: Երրորդ՝ Աստծուց ինչ-որ բան խնդրելիս մինչև ստանալը հարատեել [աղոթքի] մեջ: Առակը հանգեցնում է նրան, որ չթուլանանք աղոթքի մեջ:

«Մի քաղաքում մի դատավոր կար. Աստծուց չեր վախենում և մարդկանցից չէր ամաչում» (ԺՀ 2): Մեր ժամանակների դատավորները մեծ մասամբ այսպիսին են, որոնց եթե զրկվածները չթախանձեն, նրանց դատը երբեք չեն անում, եթե անում են էլ, ապա իրենց օգտի համար:

Բարոյականապես՝ «քաղաքը» մարդն է և հատկապես իմաստունը։ Ինչպես քաղաքում, երբ մեկն ինչոր բան է փնտրում, գտնում է, այսպես բոլոր խրատները, բոլոր տարակարծությունների լուծումը և [ճշմարիտ] քաղաքավարության բոլոր ձևերը իմաստունների մոտ են գտնվում։ Այդ պատճառով էլ Տերն առաքյալներին «քաղաք» է անվանում՝ ըստ այնմ. «Չի կարող թաքնվել այն քաղաքը, որ լեռան վրա է կանգնած» (Մատթ. 6:14), այսինքն՝ Սիոն լեռան վրա։ Ճշմարիտ քաղաքավարությունը, ինչպես ասացի, իմաստունների մոտ կարելի է գտնել, որն Աստծո և ընկերոջ հանդեպ սիրո, ինչպես նաև Աստծո կամքին հնազանդվելու մեջ է, որով, ըստ հոգու և մարմնի, քաղաքը բարձրանում է, որն իմաստունների գործն է։ Բայց այժմ մեր մարդկային բնությունն այնքան է ապականվել և անարգվել, որ քսությամբ զբաղվողների կեղծավորությունը և մարդահաճոնների շողոքորթությունն են քաղաքավարություն անվանում, թեպետ դա քաղաքավարություն է։ Իսկ այս քաղաքում կարգված «դատավորը» միտքն է, որ գատ պիտի անի հոգու և մարմնի միջև, ուստի կշեռքի մետն արդար միտքն է, որը չպետք է հակվի այս կամ այն կողմ։ Բայց մեղավոր մարդկանց միտքը, որ «մանկությունից չարի խնամքի մեջ է հաստատված», բնականաբար, ըստ իր բնա-

վորության, առավել խնամք տածում է մարմնի նկատմամբ, քան հոգու: Թեպետև գիտի աստվածային արդարության սաստի մասին, բայց կապված լինելով մարմնի սիրուն՝ Աստծուց չի երկնչում և մարդկանցից չի ամաչում՝ ոչ միայն խորհուրդների մեղքերի համար, այլև գործերի, որովհետև այդպիսի մարդը պոռնկի նման անամոթ է ամենքի նկատմամբ: Տե՛ս դու այստեղ մեղավորի մտքի համառությունը, ով մարմնավոր դատավորից, ով միայն իշխանություն ունի մարմինը սպանելու, երկնչում է, իսկ Աստծուց, ով մարմնի հետ հոգին էլ է կորցնում գեհենի մեջ, չի երկնչում: Երկյուղն է մտքի սանձը, որով [միտքը] խոտորվում է չարից. «Տիրոջ երկյուղով ամեն ոք խորշում է չարից» (Առակ. ժԵ 27): Իսկ ամոթն այն վարագույրն է, որով թաքցնում է իրեն մեղքերից. երբ սրանք չկան, միտքն անսանձ ընթանում է մեղքերի ասպարեզում, որով հոգին դատարկվում է, իսկ մարմինը՝ պարատանում. այրին տրտմում է, իսկ ոսոխը՝ ուրախանում:

«Եվ նույն քաղաքում մի այրի կար, որ գալիս էր նրա մոտ և ասում. «Իմ ոսոխի դեմ իմ դատը տես» (ԺՀ 3):

«Այրին» այստեղ հոգին է, որի այրիությունը կրկնակի է. նախ՝ որովհետև երբ միտքը մարմնին է հարում, նրա հոգեոր կապակցությունն

իր *Փեսա Հիսուսի* հետ մեղքերի պատճառով  
քանդվում է. երկրորդ՝ որովհետև միտքն ասես  
երկու կանանց միջև գտնվող տղամարդ է, այ-  
սինքն՝ հոգու և մարմնի. մեկի ցանկությունը  
կատարելու ժամանակ մյուսն այրիանում է.  
«Մարմինը հոգու հակառակն է ցանկանում» (Գաղ. Ե  
17): *Այրին դատավորի մոտ է գալիս, երբ հոգին՝*  
*խղճով ներկայացնում է ընդդիմանում է մտքին՝*  
*մեղքերն ու անիրավությունները հիշեցնելով,*  
*իսկ երբ նա չի հավանում, սա մտքի հիշողու-*  
*թյամբ շատացնում է խայթոցները, լուելյայն*  
*տանջում նրան և խածատում:* *Այս փշի մասին*  
*Դավիթն ասում է.* «Թշվառության մեջ ընկա, քանզի  
փշերն ինձ ծակեցին» (Սաղմ. I,Ա 4), *այսինքն՝ մեղքերը*  
*հիշելը:* *Նաև կրակի նման այրում է՝ ըստ այնմ.*  
«Կրակ եմ հանելու քո միջից, որ ճարակելու է քեզ» (Եղեկ.  
Ի՛ 18): *Բայց միտքը, զգայականի ապստամբ հա-*  
*ճույքով ասես քաղցր քնով բռնված, չի կամե-*  
*նում զարթնել, ուստի [առակը] ասում է.*

«Եվ [դատավորը] երկար ժամանակ չէր ուզում»  
(ԺՂ. 4): *Բայց քանի որ բնության Արարչի կողմից*  
*է [մարդու մեջ] դրված խիղճը՝ որպես անա-*  
*շառ դատավոր և անդուլ կշտամբիչ, մեղքերի*  
*խթանով անհանդստացնում է մարդուն ըստ*  
*եսայու խոսքի.* «Մեղավորները կծփան ծովի հման և  
հանգիստ չեն գտնի» (Ես. Ծ՛ 20): *Ուստի երբ տեսնում*  
*է, որ, ըստ եսայու, ցերեկն ու գիշերը կասկած-*

**ների մեջ է** (տես Ես. Ի՛Հ 19) **և մեղքերի հիշատակն** անընդհատ տանջում է իրեն, թեև ոչ թե Աստծո փառքի կամ իր հոգուն գլխալու պատճառով, այլ լոկ խղճից ձերբազատվելու համար, որոշում է հոգու դատը տեսնել: Սրանից մեղավորներից շատերն են ապաշխարության գալիս, ուստի [առակը] ասում է.

«Դրանից հետո իր մտքում ասաց. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այն պատճառով, որ այրի կինն ինձ հոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպեսզի անընդհատ չգա և ինձ չանհանգատացնի»:

Այստեղից երկում է, թե արդարն ինչքա՞ն ուրախ կյանք է վարում, որովհետև ում սիրտը չի դատապարտում իրեն, այսինքն՝ խիղճը չի տանջում, Աստծո առաջ համարձակություն ունի՝ ըստ Հովհաննեսի (տես Ա. Հովհ. Գ. 21), և ում սիրտն ունի այս հույսը, ասես խրախճանքի մեջ է: Ուստի մենք էլ անենք մեր զրկյալի դատը՝ սրբելով մեր սիրտը մեռելոտի պիղծ խորհութներից՝ հանգստացնելու համար խղճմտանքը, որպեսզի գոնե անձնական խաղաղություն կարողանանք վայելենք:

«Եվ Տերն ասաց. «Լսե՛ք, թե ինչ էր ասում անիրավ դատավորը: Իսկ Աստված արդարություն չի՝ անի իր այն ծառաներին, որոնք աղաղակում են» (Ժ՛Հ 6-7):

Տերն այս առակը երկու պատճառով պատմեց: Նախ՝ որ ինչ խնդրում ենք, եթե շատ թախանձենք, կստանանք, որովհետև նկանակ հայցողը և այրին թախանձելով ստացան (տե՛ս Ղոկ. ԺԱ 8): Երկրորդ՝ որպեսզի հասկանանք, որ ոչ մի անիրավություն անդատ չի մնում Աստծո արդար դատավարության ատյանում, որովհետև եթե անիրավ դատավորը վերջում անդատ չթողեց [այրուն], և դա՝ ոչ թե որ խղճաց նրան, այլ իր հանգստության համար, որքա՛ն առավել Աստված, ով արդար է և սիրում է արդարությունը, կգթա բոլորին, որոնց ստեղծել է: Սրանից պետք է զրկյալներն ու աղքատները քաջալերվեն՝ իմանալով, որ Աստված իրենց դատը տեսնելու է թե՛ այստեղ և թե՛ այնտեղ և [անիրավության հանդեպ] իսպառ երկայնամիտ չի լինելու: Սրանից նաև պետք է այս աշխարհի դատավորները սովորեն զրկյալների դատը տեսնել:

Ոմանք աղոթելիս խնդրանքի կատարմանն են սպասում, բայց այրու նման ամեն ժամ է պետք աղոթքի կանգնել և չձանձրանալ, որպեսզի թերևս Փեսա Հիսուսը հաշտվի մեզ հետ և մեր մտքին ուսուցանի իր արդարությունը՝ արդար դատաստան տեսնելու մեր մարմնի ոսոխի հետ:

## ԳԼՈՒԽ ԻԸ

### ԱՂՈԹՔԻ ԶԵՎԻ ՄԱՍԻՆ

«Երկու մարդ տաճար ելան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսն էլ՝ մաքսավոր» (Ղոկ. ԺՀ 10):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Այստեղից երկում է, որ հնում առանձնաբար նույնպես ելնում էին տաճար՝ աղոթքի կանգնելու, ինչպես որ այժմ մահմեղականները ևս անում են, իսկ մեր [ազգի ներկայացուցիչները] անգամ ընդհանրական աղոթքի ժամին եկեղեցում չեն երկում: Փարիսեցիներն իրենց անունը Փարեսից են վերցրել, որ «բաժանում» է թարգմանվում, որովհետև իրենք իրենց զատում էին մեղավորներից և բոլոր աղտեղի բաներից. նրանցից առաջ եկածներն անվանվում էին իրենց նախնիների անունով՝ փարիսեցի, ինչպես էոմերի սերունդն անվանվում է «էմիր»: Բայց ինչպես էմիրները, այնպես էլ փարիսեցի-

**Ներն այդ անունով հպարտանում էին:** Նրանցից մեկը, ամբարտավանությամբ լցված, այսպես է աղոթում:

«Փարիսեցին կանգնած էր մեկուսի և ինքն իրեն ալս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ Քեզանից, նման չեմ ուրիշ մարդկանց՝ հափշտակող-ներին, անիրավներին ու շնացողներին, և կամ ինչպես ալս մաքսավորը, այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ տալիս» (ԺՀ 11):

**Հավատալի է,** որ ինչ նա ասում է, կատարել է. բայց քանի որ աղոթքի մեջ բարեգործություն-ների մասին հիշելը խելագարության և ամբար-տավանության նշան է, ուստի մեղադրվում է և դատապարտվում: Սա իր աղոթքի մեջ երեք հանցանք գործեց: Նախ՝ մեղադրեց մաքսավո-րին, որովհետև աղոթողը պետք է իրեն մեղադ-րի: Երկրորդ՝ իր մասնավոր լավ գործը հիշեց, որը մեծ ամբարտավանություն է, ուստի Հոբն ասում է. «Եթե ձեռքը դրեցի բերանիս վրա ու համբու-րեցի» (Հոր. Լ.Ա. 27). **ասես թե ուզում է ասել.** «Երբեք ձեռքիս արածը չգովեցի»: Երրորդ՝ իր մասին հպարտանում էր մտքում. Նրա առաջ երկինքը նույնպես անարատ չէր, սեփական անձի մասին մեծ բաներ խորհելը մեծ մեղք է, ուստի Հոբն ասում է. «Եթե սիրտս գաղտնաբար խոսեց» (Հոր. Լ.Ա. 27), **այսինքն՝ հպարտացավ:** Միրաքն էլ խրատե-

**լով ասում է.** «Քո հոգու խորհրդի մեջ մի՝ բարձրացրու քեզ ցի նման, գուցե քո զորությունը հիմարությանդ պատճառով թուլանա, քո տերևներն ուտի, քո պտուղները կորցնի և մնաս իբրև չորացած ծառ անապատում» (Սիր. Զ 2-3): **Այս ամենը պատահեց փարիսեցուն,** որովհետև հպարտանալով ունեցած բոլոր բարիքները կորցրեց և դատապարտվեց, քանի որ «Տերը հակառակ է ամբարտավաններին, շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. Գ 34, Հակ. Դ 6):

«Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր իր կուրծքը և ասում. «Աստված, ների՞ր ինձ՝ մեղավորիս» (ԺՀ 13):

**Հնդունելի աղոթքի ձեռ է նկարագրված այս մաքսավորի աղոթքի մեջ, որովհետև ճշմարտապես աղոթողը՝ նախ՝ պետք է գիտակցի մեծությունը նրա, ում աղերսով դիմում է, և դրանով իր անարժանությունը գիտակցել, և դրանով՝ նրա առաջ դողալով կանգնի:** Սա՛ արեց մաքսավորը, քանի որ չհամարձակվեց աչքերը երկինք բարձրացնել, որովհետև հասկացավ, թե ո՛վ է երկնքում, և ո՛վ է ինքը, որ կանգնած է նրա առաջ: Շատերը, աղոթքի ժամանակ երկյուղ չունենալով, իրենց աչքերն այս ու այն կողմ են հածում, և զարմանալի չէ, որովհետև՝ «Անմիտ մարդու աչքերն այս ու այն կողմ են նայում»

(Առակ. ԺԷ 24): **Երկրորդ՝ իրեն պետք է որպես պարտապան ճանաչի՝ մտքում ունենալով կրելը որը պատիժները, եթե Տերը հրամայի: Մաքսավորը սա՛ ևս արեց՝ կուրծքը ծեծելով, որով ցույց էր տալիս, որ ամեն ինչի պարտապան է, որովհետև եթե աղքատներն էլ ցույց չեն տալիս վերքերն ու պարտքերը, ողորմության չեն արժանանում:** Երրորդ<sup>3</sup>՝ հարկավորը խնդրել՝ «Աստվա՛ծ, քավի՛ր ինձ՝ մեղավորիս»: Որովհետև մեղքն է բոլոր բարիքների անջրապետն ու արգելքը. եթե մեջտեղից վերանա, այն ժամանակ ասես դիմակալը կհեռացվի գետից, և Հոգու վտակները կհոսեն դեպի մեզ: Բայց այստեղ մեկ այլ խորհուրդ կա. ո՞րն է դա. փարիսեցին ասում է՝ Աստվա՛ծ իմ, իսկ մաքսավորը՝ Աստվա՛ծ: Նա, հպարտությունից իրեն արգար կարծելով, Աստծուն իրենն է համարում, իսկ սա, ճշմարտապես իրեն մեղավոր գիտակցելով, իրեն Աստծուց բաժանված է համարում. որովհետև երբ մարդ մեղանչում է, Աստված նրանից հեռանում է՝ ըստ Սավուղի՝ «Եվ Տերը հեռացավ նրանից» (Ա.Թագ. ԺԶ 14), և թե՝ «Ձեր մեղքերն են պատճեն դարձել իմ և ձեր միջև» (Ես. ԾԹ 2): Այդ պատճառով է, որ Դավիթն իր մեղայական խոսքում երբեք չի ասում՝ Աստվա՛ծ իմ, այլ՝ Աստվա՛ծ. «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ... և քո Սուրբ

<sup>3</sup> Բնագրում՝ Երկրորդ:

Հոգին մի՛ հանիր իմ միջից» (Սաղմ. Ծ3, 13):

«Ասում եմ ձեզ, սա՛ իր տունն արդարացած իշավ,  
ոչ թե մյուսը, որովհետև ով բարձրացնում է իրեն, կխո-  
նարհվի» (ԺՀ 14):

*Փարիսեցին բարձրացրեց իրեն, խոնարհվեց,  
մաքսավորը խոնարհեցրեց, բարձրացավ: Խո-  
նարհեցնե՛նք ուրեմն մենք էլ մեզ աղոթքի մեջ  
Աստծո հզոր ձեռքի ներքո, որպեսզի երբ գա  
ժամանակը, [Նա] մեզ բարձրացնի:*





## ԳԼՈՒԽ ԻԹ

### ԱՍԾՈ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի մարդ իր այգում մի թզենի էր տնկել, և երբ պտղի ժամանակը հասավ, նա եկավ նրա վրա պտուղ փնտրելու, բայց չգտավ» (Ղոկ. ԺԳ. 6):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդապես՝ «այգին» եկեղեցին է՝ ըստ այնմ. «Զորությունների Տիրոջ այգին Խարայելի տունն է» (Ես. Ե 7): Իսկ նրա միջի բարոյական տունկերը մարդիկ են, ուստի այս [խոսքին] մարդարեն հավելում է. «Իսկ Հուդայի երկրի մարդը՝ Նրա սիրած դալար որթատունկը»: Արդ, այգում բազմազան ծառեր են լինում, այսինքն՝ որթատունկ, նոնենի, բարեխառն խնձորենի և սիրո թզենի, քանի որ թզենին քաղցր պտուղ է տալիս, խորհրդանշում է սերը, որը քաղցր է ամենքի համար, ուստի [Տերը] թզենու օրինակն է բերում, որպեսզի հասկանանք, որ [Աստված]

**ամենքից սեր է պահանջում**, «որից է կախված բոլոր օրենքները» (Մատթ. հԲ 40): **Եկեղեցին դրախտին է նման**, որովհետև ինչպես որ այնտեղ անպտուղ ծառ չկար, որովհետև եթե լիներ, ապա [Աստված] չէր ասի. «Բոլոր ծառերից, որոնք դրախտում են, կուտես» (Բնմտ. ԾԱՆԴ. Բ 16), **այդպես էլ այս նորատունկ դրախտում չպետք է անպտուղ ծառ լինի:** Բայց անիծյալ թզենու հետ գտնվեց մի անպտուղ թզենի, որովհետև նրա վրա Տերը պտուղ չդտավ:

«Այգեգործին ասաց. «Ահա երեք տարի է, որ գալիս եմ այդ թզենու վրա պտուղ փնտրելու, բայց չեմ գտնում. արդ կտրի՛ր դա. ինչո՞ւ է հողը զբաղեցնում» (ԺԳ 7):

**Այսեղ նախ պետք է Աստծո երկայնմտության վրա զարմանալ**, թե ինչպե՞ս մինչև բանական անպտուղ ծառի ծերանալը համբերում է՝ սպասելով, որ թերևս պտուղ գտնի՝ ըստ այնմ. «Մշակն ահա համբերությամբ սպասում է պատվական պտղին, մինչև որ ստանա առաջին և վերջին [անձրւել]» (Հակ. Ե 7): **Առաջին տարին մանկությունն է**, երկրորդը՝ երիտասարդությունը, երրորդն էլ՝ ծերությունը: Որովհետև թեպետ երիտասարդության տված պտուղն ավելի պատվական է, քան ծերությանը, ինչպես որ մեղուների ձագերի մեղրն ավելի լավն է, քան մայրերինը, բայց **Աստված ծերության պտղով նույնպես բավա-**

ըարգում է, եթե տալիս են: Երկրորդ՝ պետք է զարմանալ Աստծո քաղցր ներողամտության վրա, թե ինչպես համբերելով՝ խավարի անպառուղ որդիներիս վրա արժանի պատիժ չի բերում, որովհետև մարդը, հենց որ ճանաչեց ինքնիրեն, [դա արդեն] նրա պտղաբերելու ժամանակն է՝ ըստ այնմ. «Զեր ժամանակը միշտ պատրաստ է» (Հովհ. Է. 6): Աստծուն հատուկ է, որ «ամեն ծառ, որ բարի պտուղ չի տալիս, կտրի և կրակը նետի» (Խնմ. Դուկ. Գ. 9), բայց «արդար, հզոր և համբերատար դատավոր է Աստված, ով իր զայրուցը չի թափում հանապազ» (Սաղմ. Է. 12), որպեսզի թերեւս հասկանանք, որ Աստծո քաղցրությունը և համբերատարությունը մեզ ապաշխարության է մղում: Իսկ եթե անզեղջ սրտով քարանալով՝ նրան չդառնանք, «իր սուրը սրել է» (Սաղմ. Է. 13), որով կհրամայի. «Կտրի՛ր դա», և թե՝ «Կացինը ծառի արմատին է դրվում» (Դուկ. Գ. 9): Երրորդ՝ պետք է զարմանալ աստվածային արդարության գեղեցիկ կարգի վրա, թե ինչո՞ւ ինքը չի կտրում, այլ մշակին է հրամայում կտրել, և սա երկու պատճառով: Նախ՝ քանի որ նրա կտրվելը չի ցանկանում, ուստի հրամայում է, որովհետև Աստծուն սա է հատուկ. ում չի կամենում պատժել, դա հայտնում է: Այսպես եզեկիայի մահը հայտնեց, որպեսզի աղաղակի (տե՛ս Ես. Լ. 1), նինվեացիների

**կործանումը, որպեսզի ապաշխարեն** (տե՛ս Հովհ. Ա 2, գ. 2), **Սովորելին ասաց.** «Թո՞ւ լուր, որ կոտորեամ նրանց և քեզ մեծ ազգ դարձնեմ» (Բ Օր. Թ 14), **որպեսզի [Մովսեսը]** բարեխոսի: **Այստեղ էլ մշակին** է հայտնում, որ աղերսի: Իսկ Սովորի պարագային, քանի որ այն կործանելու էր, պատգամաբեր չուղարկեց, ինչպես նինվեի դեպքում: Երկրորդ՝ տիեզերքի կարգը պահանջում է, որ ամեն մեկն իր գործն անի: Արդ, կտրելը մշակին է վայել, այդ պատճառով էլ նրան է հրամայում կտրել: Այս կարգից թագավորներն ու հայրապետերը պետք է սովորեն անզգամի պատիժը թողնել նրանց իշխանությանը, որոնց հանձնել են թեմը, և եթե հարկը պահանջում է, նրանց ձեռքով պատժեն:

«Կտրի՛ր դա. ինչո՞ւ է հողը զբաղեցնում»:

Արդ, «կտրող մշակը»՝ նախ՝ հրեշտակն է, որ մահվամբ կտրում է անպառող ծառը կյանքից, երկրորդ՝ հայրապետերը, [Հոգևոր] առաջնորդներն ու վարդապետները. «Եթե մեկի մեղքերը մերեք, մերված կլինեն, եթե մեկինը կապեք, կապված կլինեն» (Հովհ. Ի 23, Մատթ. Ժ 18), և **կամ՝** «Եթե հավատացյալների ժողովում չլսի, թող քեզ համար ինչպես հեթանոսը լինի» (Մատթ. Ժ 17): **Այս դատաստանը Հայրը Որդուն տվեց, նա էլ՝ մեզ<sup>1</sup>, որպեսզի բոլորը**

<sup>1</sup> Այսինքն հոգևորականներին:

պատվեն Որդուն և մեզ: Հրամայում է կտրել՝  
նախ՝ որովհետև անպտուղ լինելով՝ պիտանի չէ  
և կրակին է արժանի, երկրորդ՝ որովհետև հողն  
է զբաղեցնում: Երբ մարդ երիտասարդ է, թե-  
կուզ անպտուղ էլ լինի, այդքան չի զբաղեցնում  
հողը կամ գայթակղության պատճառ լինում,  
որովհետև տեսնողներն անտեսում են՝ ասելով.  
«Դեռևս երեխա է և երիտասարդ»: բայց երբ  
ծերանալով ծառ է դառնում, այն ժամանակ մե-  
ծապես խանգարում է հողին, այսինքն՝ եկեղե-  
ցու համար գայթակղություն է դառնում, քանի  
որ ծերերի կյանքը երեխաների համար օրինակ  
է: Ուստի եթե մի ծեր մարդ ապականված վարք  
ունի, ժանտախտից և հին խմորից ավելի է  
ապականում եկեղեցին: Ահա՝ թե ինչպես ծանր  
է այդպիսինի պատիժը. «Լավ կլիներ, եթեն [նրա պա-  
րանոցից] կախված լիներ էշի մի երկանաքար, և ծովը  
գցվեր, քան այս փոքրիկներից մեկին գալթակղեցներ»  
(Մարկ. Թ 41): **Ուստի նման մարդն իրավացիորեն  
պետք է հեռացվի:**

«Այգեգործը պատասխանեց և ասաց. «Տե՛ր, նրան  
մեկ տարի էլ թող, մինչև որ նրա շուրջը փորեմ և աղք  
գցեմ, թերևս պտուղ տա, ապա թե ոչ՝ մեկ տարի հետո  
կկտրես այն» (ԺԳ. 8):

**Այգեգործի համար շատ դժվար է ծառն աշ-  
խատանքով հասունացնել և նրա պտուղը չվա-**

յելել, երբ համբերատարությամբ սպասում է  
պտղին: Ուրեմն ինչքա՞ն առավել դժվար է պա-  
հապան հրեշտակի համար որևէ բերք չստանալը  
նրանից, ում համար ծննդից մինչև ծերություն  
չարչարվեց. ուստի աղերսանքին է դիմում,  
ժամանակ է խնդրում հողը մշակելու համար,  
Տիրոջ միտքը համոզում՝ ասելով «Նրա շուրջը  
փորեմ»: Մեղքերով ծերացածների և չար օրե-  
րով հնացածների խիղճն ընդարմանում և դա-  
դարում է խայթելուց: Պահապան հրեշտակը,  
մեղքերի պատկերներով շարժելով երևակայու-  
թյունը, հանձն է առնում խիղճը զարթնեցնել և  
աղք գցել, այսինքն՝ մեղքերի հիշատակությու-  
նը, որը երիտասարդների կամքի համար մեղքի  
նման է. «Պոռակի շուրջերից մեղը է ծորում, բայց ծերե-  
րի քիմքի համար ավելի դառն է, քան լեղին» (Առակ. Ե.3-4):  
Երկուսն էլ գորավոր շարժառիթներ են, որով-  
հետև մեղքերի հիշատակմամբ սպառազինված  
խղճմտանքը քարացած միտքը կակղացնում է  
և սաստիկ սառած համառ կամքը հալեցնելով՝  
արտասուքով զղման բերում: Ահա՝ այսքան է  
մեր երախտավոր դաստիարակների՝ պահապան  
հրեշտակների հոգսը մեր փրկության համար:

Դարձյալ՝ «այգեգործները» ճշմարտության  
խոսքի՝ եկեղեցու այգում գտնվող քարոզիչ-  
ներն են, որոնք արքայության, դժոխքի և մահ-

վան մասին խոսելով՝ անպտուղ ծառերի խիղճն  
են զարթնեցնում՝ դրանով ասես արմատի շուրջը բրելով, իսկ մեղքերի գարշության և ապաշ-  
խարության մասին խոսելով՝ ասես նրա շուրջ  
աղք են գցում, որով միտքը զվարթանում ու  
զարթնում է պտղաբերության համար։ Երբ  
մշակն ասաց՝ «Նրան մեկ տարի՝ ել թող», աղեր-  
սանքն առանց ընդդիմանալու լսելով՝ Տերը թո-  
ղեց, քանի որ չի կամենում «մեղավորի մահը,  
այլ չար ճանապարհից նրա դառնալն ու ապ-  
րելը»<sup>2</sup>:



---

<sup>2</sup> Տես Ժամագիրը Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ 444:



## ԳԼՈՒԽ Լ

### ՄԵՐ ՏԻՐՈՁ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մի ազնվական մարդ գնաց հեռու աշխարհ՝ իր թագավորությունը ստանալու և վերադառնալու համար» (Ղոկ. ԺԹ 12):

### ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդապես՝ այս առակում մեր Տեր Հիսուս Քրիստոսն իր մասին է խոսում: Իրեն մարդ է անվանում ճշմարիտ մարդեղության պատճառով, և ազնվական՝ թե՛ ըստ իր Աստվածության, որն ինքնաբերաբար ավելի ազնիվ է արարածներից, և սա այնպես, որ է անունը միայն Նրան է վայել՝ ըստ այնմ. «Ես եմ, որ Է» (Ելք Գ. 14), թե՛ ըստ մարդկության, որովհետև հղացվեց Սուրբ Հոգով անարատ Կույսից: Ուստի Սոլոմոնը Նրա մասին ասում է. «Ազնիվ Էի (առաջինի պարագային) և անարատ մարմնով եկա (երկրորդի պարագային)» (Իմաստ. Ը. 20): Քրիստո-

**սի ազնվականությունն այնքան է, որ անձառնելի է մեզ համար.** «Նրա ազգատոհնի մասին ո՞վ կպատմի» (Ես. ԾԳ. 8): **Հոքի մասին ասվում է, որ նա բոլոր արևելաբնակներից ավելի ազնվական էր մեծության, իմաստության և արդարության առումով** (տե՛ս Հոք. Ա. 3): **Ուրեմն ի՞նչ պետք է ասել Քրիստոսի մասին. ուստի Սիրաքն ասում է.** «Իր իմաստության մեջ ազնվությունը կարգավորեց, որ հավիտյաններից առաջ էր» (Սիր. ԽԲ. 21): **Նրա ազնվականությունը մարդիկ չհասկացան.** «Եթե ճանաչված լիներ, արդարն փառքի Տիրոջը չէին խաչի» (Ա. Կորնթ. Բ. 8): **Եվ քանի որ Նրա թագավորությունն այս աշխարհից չէր, ուստի առաջին գալստյան ժամանակ** «չէր եկել ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու և իր անձը շատերի փոխարեն որպես փրկանք տալու» (Մատթ. Ի. 28): **Եվ քանի որ իր ծառայությունը հոժարությամբ կատարեց, այդ պատճառով արդարացիորեն Հայրը Նրան թագավոր կարգեց բոլորի վրա, ուստի առաքյալն ասում է.** «Հնագանդ եղավ մինչև մահ և այն էլ՝ մահվան՝ խաչի վրա: Ուստի Աստված Նրան առավել բարձրացրեց, որպեսզի Հիսուս Քրիստոսի անվամբ խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարամետականների» (Փիլ. Բ. 8-10): **Թեպետ ի սկըանե ուներ այս իշխանությունը, բայց չարչարանքների շնորհիվ է՛լ առավել հաստատ-**

**վեց, ուստի հարության ժամանակ ասաց.** «Ինձ  
է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա»  
(Մատթ. հՀ 18): **Որովհետև եթե ոչ մի բարեգործու-  
թյուն առանց վարձատրության չի մնում, ապա**  
**ինչքա՞ն առավել Քրիստոսի չարչարանքները:**  
**Արդ,** այս իշխանությունը Որդին Հորից երկու  
անգամ ստացավ. նախ՝ հարության ժամանակ,  
ինչպես ասացինք, որով ծածկապես վարում է  
իր իշխանությունն աշխարհում՝ ջրերի հոր-  
ձանքի նման թագավորների և հայրապետերի  
սիրտը գեպի իր կամքը շրջելով, այս մտքով է  
ասում. «Ահա Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախ-  
ճանը» (Մատթ. հՀ 20): **Երկրորդ՝ [իր իշխանությու-  
նը վարելու է]** հայտնապես՝ հաջորդ գալստ-  
յան ժամանակ: **Այս մասին է ասում՝ «Գնաց**  
հեռու աշխարհ՝ իր թագավորությունը ստանալու և  
վերադասարկությանը», այսինքն՝ համբարձմամբ  
մտավ վարագույրից այն կողմ, այսինքն՝ ան-  
ցավ այս հաստատության միջով, որին «վա-  
րագույր» է անվանում, մտավ բուն երկինքը և  
նստեց Հոր աջ կողմում, որն [այստեղ] «հեռու  
աշխարհ» է անվանվում: Նախ՝ մեծ հեռավո-  
րության պատճառով. որովհետև եթե այս երկ-  
րից մինչեւ աստղալից երկինքը 107,958 մղոն է,  
ապա ինչքա՞ն առավել այնտեղից մինչեւ Աստ-  
վածության Աթոռը, որ անհաշվելի է: Երկրորդ՝

«Հեռու աշխարհ» է անվանում իր [երկրորդ] գալստյան ուշացման պատճառով, բայց ինքը համբարձվելիս վերջնակետին հասավ:

«Եվ կանչելով իր ծառաներին՝ նրանց տասը մնաս տվեց և ասաց. «Յահարկե՛ք դրանք, մինչև զամ» (ԺԹ 13):

«Տասը մնասը» տասնաբանյա օրենքն է, ուր ներառված են գրեթե ամբողջ Օրենքը և մարդարեները. սա է ավանդում իր ծառաներին շահարկելու՝ կատարելով և պահելով:

Դարձյալ՝ «տասը» թիվը, քանի որ ընդհանրական է, ինչպես հայտնի է, խորհրդանշում է Ավետարանը, որ ընդհանրապես պարունակում է բոլոր կատարելությունները: Սա է Քրիստոսի գանձն ու մնասը, որն իր համբարձվելու ժամանակ իր Եկեղեցուն թողեց, որպեսզի արդյունավորեն մինչև իր հաջորդ գալուստը: Այն Մատթեոսի մոտ քանքարների տեսքով բաժանում է ըստ յուրաքանչյուրի կարողության՝ մեկին՝ հինգ, մեկին՝ երկու, մեկին էլ՝ մեկ (տե՛ս Մատթ. ԻԵ 15): Որովհետև մարդկային մտքի աստիճանները երեքն են, այսինքն՝ սուր, միջակ և բութ՝ ըստ ծննդականի համապատասխան գորության: Այս պատճառով երեք մասի է բաժանում շնորհի քանքարները՝ ըստ յուրաքանչյուրի արժանիքների, որովհետև նաև բանական հողի

արդյունքն է երեք մասի բաժանվում՝ երեսուն, վաթուն, հարյուր (տե՛ս Մատթ. ԺԳ 23): Արդ, Հինգ քանքարը եպիսկոպոսներին է պատկանում, երկուսը՝ քահանաներին, մեկն էլ՝ աշխարհականներին: Այս առումով նաև վարդապետների միջև տարբերություն կա:

Դարձյալ՝ ինչպես որ քանքարն ըստ արժանիքի բաժանեց, այդպես էլ՝ մնասը, բայց պետք է իմանալ, որ ամեն ոք պարտավոր է շահարկել տասը մնասը, բայց ամեն մեկն իր կարողության չափով, ուստի ոմանք տաս մնասը շահարկեցին, ոմանք՝ Հինգ:

«Բայց նրա համաքաղաքացիներն ատում էին նրան. պատգամավորներ ուղարկեցին նրա հետևից և ասացին. «Մենք չենք կամենում, որ դա մեզ վրա թագավորի» (ԺԹ 14):

Ատեցին Նրան, բայց իզուր՝ նախանձի պատճառով մատնելով. «Յուրաքինների մոտ եկավ, բայց յուրաքինները Նրան չընդունեցին» (Հով. Ա 11): Այն ժամանակ Նրա թագավորությունը չկամեցան, երբ Պիղատոսի առաջ ուրացան. «Կայսրից բացի այլ թագավոր չունենք» (Հով. ԺԹ 15), և թե՝ «Մի՛ գրի՛ր՝ հրեաների թագավոր» (Հով. ԺԹ 21) և Համբարձումից հետո պատմեցին աշակերտներին ու պատվիրեցին Նրա անունով չուսուցանել (տե՛ս Գործք Դ 18, 21): Ատելությունը նրանց այս կետին հասցրեց,

*որովհետև իմացան Նրա հարության մասին,  
բայց նախանձը չթողեց, որ հավատան:*

«Եվ երբ նա վերադարձավ՝ իր թագավորությունը  
ստացած, կանչեց այն ծառաներին, որոնց տվել էր  
դրամը, որպեսզի իմանար, թե ով ի՞նչ էր շահել» (ԺԹ  
15):

*Սա հաջորդ գալստյան ժամանակ է լինելու,  
երբ Հայր Աստծո թագավորությունը Նրա ձեռ-  
քը տրվի. «Այն ժամանակ կտեսնեն Մարդու Որդուն՝  
նստած Աստծո աջ կողմում և եկած երկնքի ամպերի  
վրայով՝ մեծ զորությամբ և բազում փառքով» (Մարկ. ԺԳ  
26): Եվ նա, նստելով իր փառքի աթոռին, քննե-  
լու է ծառաներին:*

«Եկավ առաջինը և ասաց. «Տե՛ր, Քո մնասը տասը  
մնաս քերեց» (ԺԹ 16):

Երկու կերպ է մեկնաբանվում: Նախ՝ ընդ-  
հանուր առմամբ, որպես թե տասը մնասը հա-  
վասարապես բաշխվել է բոլորին, որով ցույց  
են տրվում տասնաբանյա և ավետարանական  
օրենքները, որ բոլորին են բաշխվում, ուս-  
տի [առակը] այստեղ մնասն անորոշաբար է  
գործածում: Սա վերաբերում է նրանց, ովքեր  
Ավետարանի կատարելությանը հասան, դա  
էլ՝ գերարդարությամբ՝ թշնամուն սիրելով,  
ատելիներին բարի հատուցելով. սրանք են, որ  
տասը մնասը շահեցին: Ոմանք էլ կան, որոնք

Հասան տասնաբանյա օրենքներին, բայց չկարողացան հասնել ավետարանական խրատների կատարելությանը։ Սրանք տրամաբաշխական արդարությամբ կենցաղավարեցին յուրաքանչյուրի հանդեպ. թե՛ Աստծուն, թե՛ ընկերոջը, թե՛ հենց իրենց բաշխելով իրենցը՝ հինգ մնաս շահեցին։ Ոմանք էլ կան, որոնք երկուսից էլ անմասն գտնվեցին. աստվածային պատվիրանների մնասն ընդհանրապես չգործածեցին։

Երկրորդ՝ մասնավորաբար, ըստ յուրաքանչյուրի կարողության տրված, ինչպես քանքարը, այդպես էլ մնասը։ Այսպիսի մեկնությամբ՝ [մնասը] Սուրբ Հոգու շնորհն է խորհրդանշում, որ ըստ մարդկանց երեք աստիճանների՝ բաշխվում է ըստ նրանց ընդունելու կարողության։ Որովհետև թե՛ աշխարհականների և թե՛ վարդապետների մեջ երեք տարբերություններ կան՝ թե՛ ըստ մարմնականի, որով ոմանք առավել հարուստ են, ոմանք՝ միջակ, ոմանք էլ՝ նվազ, և թե՛ ըստ Հոգեորի։ Առավել է գիտությունը, որը նմանապես երեք աստիճաններից է բաղկացած։ Հետևաբար, քանի որ ոմանք հինգին արժանացան, ոմանք՝ երկուսին, ոմանք էլ՝ մեկին, ուստի ով տասը մնաս շահեց՝ հինգն էր վերցրել. կրկնապատիկ շահեց, որովհետև ով գիտության մնասը գործածում է, մեկն ինքն

է շահում, մյուսն էլ՝ ընկերը, որովհետև ինչպես կայծն արծարծվում է փուքսով, այդպես էլ գիտությունը՝ ուսուցանելով: Եվ գարճյալ՝ մի մասն աշխատանքի համար է վարձ ստանում, իսկ մյուսը՝ ուսուցանելու համար, ուստի ասում է. «Երեցները կրկնակի պատվի թող արժանի լինեն, մանավանդ նրանք, որ տքնում են խոսքով և ուսուցանելով» (Տիր. Ե 17): **Այսպիսին են [նաև] նրանք,** ովքեր բաժանում են ունեցվածքը և՝ արդարությամբ պայծառանում են, և՝ փառքով փայլում. «Բաժանեց և տվեց աղքատներին. նրա արդարությունը կմնա հավիտյան հավիտենից, և նրա եղջուրը բարձր կլինի փառքով» (Սաղմ. ԾԺԱ. 9):

«Եվ ասաց նրան. «Ապրե՞ս<sup>3</sup>, բարի և հավատարի՞մ ծառա, քանի որ այդ փոքրի մեջ հավատարիմ եղար, իշխանություն ունեցիր տասը քաղաքների վրա» (ԺԹ 17): **Մեր մեջ եղած իշխանները նույնպես սովոր են փոքրի մեջ հավատարիմներին բազում բաների վրա կարգել:** Ով առաքինություն է գործում, ազնիվ և բարի է լինում, որովհետև մեղքը գոեհկացնում է մարդուն, իսկ ով մեղանչում է, նա չարից է: **Այս անուններն Աստծուն են պատկանում, բայց ովքեր հավատարիմ են Աստծո խոսքին, դրանք սեփա-**

<sup>3</sup> Գրաբար բնագրում «ազնիւ», որ թարգմանվում է «ապրեն»: Հեղինակն այս բառը հասկացել է հենց «ազնիվ» իմաստով, ուստի այդպես էլ մեկնել է:

կանացնում են: Ո՞հ, ինչքա՞ն լավ է «ազնիվ» և «բարի» անուններով դրվատանքի արժանանալ Աստծո բերանից: Ուրեմն եկեք մենք էլ [մեղ տրված] մնասը շահարկենք: Այս [ծառան] այն պատճառով ջանք թափեց ազնվական լինելու համար, որ ազնվական բանն էր ցանկանում, այսինքն՝ երկնավոր քաղաքը: Ուստի [Տերը] նրա փափագածն է տալիս՝ ասելով. «Իշխանություն ունեցիր տասը քաղաքների վրա»: Քանի որ տասը կատարյալ թիվ է, երկնային քաղաքն է նշանակում, որի իշխանությունը [երկնային Տերը] տալիս է առաքինիներին: Կամ էլ՝ սրանով հավատարիմների վարձքի մեծությունն է ցույց տալիս: Որոշ մեծավորներ կան, ովքեր շատ փութկոտ են դավաճաններին պատժելիս, բայց շատ դանդաղաշարժ՝ հավատարիմներին վարձատրելու հարցում. ուրեմն թող սովորեն պատժելիս չշտապել, իսկ վարձատրելիս արագաշարժ լինել:

«Եկավ երկրորդը և ասաց. «Քո մեկ մնասը հինգ մնաս բերեց» (ԺԹ 18):

Սա օրենքից բխող հարկավոր բաները գործեց ըստ իր կարողության՝ չլինելով այնքան վսեմամիտ, որ հասնի ավետարանական կատարելությանը: Այլ միայն առաքինացավ՝ հինգ զգայություններն անպատշաճ բաներից զսպե-

լով, ուստի և սա՛ նույն գովեստով դրվատանքի արժանացավ՝ ըստ արժանվույն տեր դառնալով հինգ քաղաքների՝ ըստ շահածի չափի: Ո՛հ, որքան մեծ են վարձն ու փառքը, որ Աստված տալիս է առաքինիներին, ովքեր փոքր-ինչ այս-տեղ չարչարվեցին՝ ըստ այնմ. «Որովհետև այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ» (Հոռմ. Ը 18): «Քաղաքներով» հասկացվում են երկնային քաղաքի փառքի աստիճանները, ուստի [Տերը] քանքարը շահարկողին ասաց. «Մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. հԵ 21), այսինքն՝ երկինք: Այստեղից երկում է, որ սուրբերի փառքերը զանազան են. ոմանց փառքի տասն աստիճանն է տրվում, ոմանց՝ հինգ. «Մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ» (Ա Կորաթ. ԺԵ 41):

«Մյուսն էլ եկավ և ասաց. «Տե՛ր, ահա քո մնասը, որ թաշկինակի մեջ ծրարած պահում էի. վախենում էի քեզանից, որովհետև խիստ մարդ ես. վերցնում ես, ինչ չես դրել, և հնձում ես, ինչ չես սերմանել» (ԺԹ 20-21):

Աստված մարդուն երկու աչք տվեց՝ ցույց տալով, որ մարդու միտքը պետք է տեսնի խոկալով երկու կողմերի մասին՝ այստեղի և հանդերձյալի, հոգու և մարմնի, և ասես գրվածքի երկու կողմերն ընթերցի՝ ներքին և արտաքին, և իրողությունները դատի ըստ յուրաքանչյու-

ըի հատկությունների: Բայց կան ոմանք, որոնց  
աջ աչքը, ըստ դժոխային դիվային ցանկության,  
կուրացած է, և միայն ձախն ունեն բացված՝  
տեսնելու համար այստեղի կյանքն ու մարմինը,  
իսկ հոգու և հանդերձյալ կյանքի մասին չգիտեն: Երանի՛ թե աջ աչքը բաց ունենային, որի  
սիրո ցոլած ճառագայթը ջերմացնում է Փեսա  
Քրիստոսի սիրտը, ուստի ասում է. «Կարոտով  
լցրիր մեզ քո մի հայացքով» (Երգ Դ.9): Բայց քանքարը  
թաքցրած ծառան միայն ձախ աչքն ուներ բաց-  
ված, որովհետև չդիտեց առաքինության երկու  
ծայրերը, որոնցից հեռացել կանգնել էր մեջտե-  
ղում: Արիությունը երկու ծայրը ունի, որոնցով  
ապականվում է՝ երկչոտություն և հանդգնու-  
թյուն. եթե դրամը գործածեր, ապա հանդգնու-  
թյուն չէր լինի. այն դրա համար էր տրված, և  
[ծառան] չպետք է երկնչեր, որովհետև ավելի  
արի տեր ուներ, ուստի [վերջինս] ասաց.

«Պետք է իմ դրամը լումայափոխներին տալիր, ես  
Էլ գալով՝ տոկոսներով հանդերձ կպահանջեի» (ԺԹ. 23):

Բայց [ծառան], միայն դրամի կորստի մասին  
մտածելով, վախեցավ տիրոջից և չկարողացավ  
մյուս կողմի մասին ևս մտածել, թե իմ տերը,  
լինելով բացարձակ թագավոր, գալով տոկոս-  
ներով կպահանջի իր տվածը լումայափոխնե-  
րից: Ուստի հիմարաբար կարծելով, թե իրեն

**կմեղադրի, որպես իր տիրոջ հանդիմանություն  
և պատճառաբանություն՝ ասաց.**

«Գիտեի, որ խիստ մարդ ես» (ԺԹ 22):

Խորհրդապես՝ [այս ծառան] խորհրդանշում  
է ծույլ վարդապետներին, որոնք գիտության  
քանքարը թաքցնում են ծուլության թաշկինա-  
կի մեջ՝ չտալով լումայափոխներին, այսինքն՝  
չուսուցանելով և չքարոզելով, և այսպես ունե-  
նալով երկնքի արքայության բանալիները, այ-  
սինքն՝ գիտությունը՝ իրենք չեն մտնում՝ ըստ  
այդ գիտության գործելով, իսկ ովքեր պատ-  
րաստ են մտնելու, նրանց արգելում են չուսու-  
ցանելով: Սրանք աշակերտներից ոմանց մեղադ-  
րում են՝ բթամիտ համարելով, ժողովրդի [ներ-  
կայացուցիչներից] ոմանց էլ [մեղադրում են]՝  
թերահավատ և հակառակող համարելով: Եվ  
այսպես ո՛չ ուսուցանում են, ո՛չ էլ քարոզում,  
բայց խարվում են. որովհետև թեկուզ [մար-  
դիկ] այդպիսին էլ լինեն, չպետք է դադարենք  
ուսուցանելուց, ինչպես եսային չդադարեց՝  
ըստ այնմ. «Անեն օր ձեռքերս երկարեցի անհնագանդ  
ու թշնամի ժողովրդին» (Ես. ԿԵ 2): **Անշուշտ, մեր Տերն**  
**էլ որոշ վայրերում հրաշքներ չգործեց մարդ-  
կանց թերահավատության պատճառով,** որի  
մասին գիտեր, բայց մենք, քանի որ հավաստի  
կերպով չգիտենք և եթե գիտենայինք էլ, բայց

քանի որ այս պաշտոնին ենք կարգված, պետք  
է քարոզենք՝ ոչ միայն հավատացյալներին, այլ  
նաև անհավատներին. «Ես պարտական եմ և՛ հով-  
ներին ու բարբարոսներին, և՛ իմաստուններին ու ան-  
գետներին: Ալդաես էլ, որչափ իմ ուժերը ներեն» (Հռոմ.  
Ա 14:15), այսինքն՝ ըստ իմ կարողության, [պար-  
տավոր եմ] քարոզել: Եթե սա անենք և նրանք  
դարձի չգան, ապա մեր հոգին կփրկենք՝ ըստ  
եզեկիելի (տե՛ս Եզեկ. Գ 19, 21): Բայց վա՛յ մեզ, եթե  
չավետարանենք, քանզի պարտավորություն  
ունենք, ուստի որևէ փաստարկ մեզ չի կարող  
արդարացնել, եթե ծուլանանք մեր ծառայու-  
թյան մեջ, ուստի [առակը] ասում է.

«Եվ [տերը] ասաց նրան. «Հենց քո բերանով քեզ  
կդատեմ, անհավատարի՞մ ծառա, գիտեիր, որ խիստ  
մարդ եմ»:

«Անհավատարիմ» է անվանում, որովհետև  
նրա ամենակարող զորությանը չի հավատում,  
թե կարող է ճշտորեն պահանջել իրենը բոլոր  
վերցնողներից: Եվ հակառակելով նրան անվա-  
նում էր խիստ և ստամբակ, այսինքն՝ խստա-  
սիրտ և դառնաբարո: «Որովհետև վերցնում ես,  
ինչ չես դրել, և հնձում ես» ևն: Եվ սրանով հենց  
իրեն էր դատապարտում, որովհետև չէր մտա-  
ծում, որ եթե յուրայինների նկատմամբ խիստ  
է, ապա որքա՞ն առավել մյուսների նկատմամբ,

**ուստի ասում** է. «Հենց քո բերանով քեզ կդատեմ, անհավատարի՞ն ծառա»: *Որովհետև եթե հավատում ես, թե խիստ եմ, ինչո՞ւ չես հավատում, որ այդ խստությամբ կպատժեմ իմ մնասը վատնողներին և կարող եմ այն տոկոսներով հանդերձ պահանջել:* Այս հանդիմանությունը նաև ծույլ վարդապետների համար է պահված, նաև նրանց, ովքեր որոշ աղքատների ախտավոր համարելով՝ ողորմության մնասը չեն բաշխում՝ ասելով, թե հարբեցող է, անառակ, հպարտ և այլն: *Որովհետև քանքարը հավասարապես է շահարկվում, երբ պարզապես բաշխվում է, անկախ նրանից՝ վերցնողը կշահի թե ոչ.* որովհետև եթե վերցնողներն արժանի չեն [ողորմությանը], մեզ է վերադառնում վարձը: Հետեւաբար այդ մտքով է ասվում. «Ձեր ողջունը ձեզ կվերադառնա» (Ղոկ. Ժ. 13):

«Եվ սպասավորներին ասաց. «Վերցրե՛ք դրանից մնասը և տվեք նրան, ով տասը մնաս ունի» (ԺԹ. 24):

*Սրանից իմանում ենք, որ որպեսզի բարի շնորհը չկորչի, տրվում է ուրիշի, և սա՝ այն պատճառով, որ [վերջինս] շնորհ ընդունող և շահարկող է, իսկ մյուսը՝ չընդունող և ասես չունեցող, ուստի ասում է.*

«Ով ունի, պիտի տրվի նրան, իսկ ով չունի, պիտի

վերցվի և այն, ինչ ունի» (ԺԹ 26): «Քանքարը շահար-  
կողների փառքն ավելանում է բոլոր կողմերից,  
իսկ ծույլերինն ամբողջովին կտրվում։ Ծույլն  
ունի և չունի։ Ունի, որովհետև Աստծո գթու-  
թյունը չժողեց նրան առանց չափավոր շնոր-  
հի, իսկ չունի, որովհետև չի գործածում այն,  
ինչ ունի։ Այդպիսին են ծույլ վարդապետնե-  
րը, որոնց մասին ասվում է. «Ավելի լավ է թաքց-  
նել սեփական չարությունը, քան ինաստությունը» (Սիր.  
Ի 33): Որովհետև ի՞նչ օգուտ թաքցված գիտու-  
թյունից, ինչպես գերեզմանի շուրջ գետեղված  
առատ խորտիկներից։ Արդ, մնասագողն այս-  
պիսին լինելով, ասես թե չունի, ուստի ինչ ու-  
նի, Արդարադատը վերցնում է նրանից՝ պատ-  
մելով նրան։ Օրինակ՝ եթե մեկը քրեական  
հանցանք է գործում, զնդանն է գցվում, և ինչ  
ունի, առգրավվում է արքունիք և գործածվում  
արքայի տան վայելքի համար։ Այսպես՝ դատա-  
պարտվածներից իբրև ունեցվածք բռնագանձ-  
վում է բնական պարգևը, ինչպես անհավատնե-  
րից, քրիստոնյաներից՝ Ավագանի շնորհը, վար-  
դապետներից էլ՝ գիտության պարգևը, որոնք  
և բաշխվում են արքունականներին, այսինքն՝  
Քրիստոսի հավատարիմ ծառաներին, որպեսզի  
նրանց փառքն ավելանա։ Արդ, եթե վերցված  
մնասն անվնաս վերադարձնելով՝ տակավին

դատապարտվում է դրանով, որովհետեւ չշահարկեց այն, ապա ի՞նչ կլինի այն դեպքում, եթե մայր գումարն էլ կորցրած լինի: Արդ, վարդապետներն են մայր գումարը կորցնում, ովքեր բացի այն, որ չեն շահարկում, նաև մեղանչում են իրենց գիտության դեմ, այսինքն՝ իմանալով բարին՝ այն չեն գործում. «Ով բարին զիտի և չի գործում, մեղանչում է» (Հակ. Դ.17):

«Բայց իմ այն թշնամիներին, որոնք չեին կամենում, որ ես թագավորեի իրենց վրա, բերե՛ք այստեղ և սպանե՛ք իմ առաջ» (ԺԹ.27): Նրա թշնամիներն են՝ նախ՝ իրեն համաքաղացի հրեաները, երկրորդ՝ մահմեղականները, որոնք չեն հավատում նրա աստվածային թագավորությանը, երրորդ՝ չարքրիստոնյաները, որոնք ամբարշտաբար ասում են. «Հեռացիր մեզանից. Քո ճանապարհները չենք կամենում ճանաչել» (Հոր ԻԱ.14): Արանք հավասարապես սպանվում են դժոխքում՝ մնալով կենդանի՝ ըստ այնմ. «Մահն է հովվելու օրանց» (Սաղմ. ԽԸ.15): Առաջին մահը հովվելու է դեպի երկրորդը:

## Վ Ե Ր Զ

## **Օգտագործված գրականության ցանկ**

### **1. Զեռագրեր**

*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան Ճեռ. Նօ  
2, 10, 140, 1174, 1826, 2220, 2718, 3281, 3537, 6610,  
6744  
ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 6, վա-  
վերագիր 6*

### **2. Տպագիրներ**

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհա-  
բար թարգմանությունը և ծանոթագրությունները՝  
Արամ Տեր-Ղեռնդյանի, Երևան, 1983
2. Ալեքսանդր Ջուղանցի, Վկայութիւնք ի պէտս քա-  
րոզութեանց, աշխատասիրութեամբ Հակոբ Քյոսե-  
յանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Տ. Բագրատ  
աբեղա Գալստյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,  
1998
3. Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի Եպիսկոպոսի  
Բերթումեան Աղամալեանց, Ս. Էջմիածին, 1845
4. Աղբիւր բացեալ՝ արարեալ Պետրոսի Եպիսկոպոսի  
Բերթումեան Աղամալեանց, Ս. Էջմիածին, 1857
5. Ալայօլաճեան Արշակ, Պատմութիւն Եւղոկիոյ Հայոց,  
Գահիրէ, 1952
6. Աճայչան Հ., Հայոց անձնանունների բառարան, Հ.  
Գ, Երևան, 1946. Հ. Դ, Երևան, 1948
7. Այվազյան Արգամ, Նախիջևան բնաշխարհիկ պատկե-  
րագարդ Հանրագիտակ, Երևան, 1995
8. Աճայչան Հ. Ս., Հայկական մատենագիտություն, Հ.  
Ա, Երևան, 1959, Հ. Բ, Երևան, 1976

9. Անթափյան Փայլակ, Հայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, «Բանբեր մատենադարանի», № 15, Երևան, 1986
10. Աշապահյան Գևորգ Արկ., Պետրոս Բերդումյան, Կյանքը, գործը և «Մեկնութիւն Յոբայ» աշխատությունը, Էջմիածին, 1988
11. Աշապահյան Միքայել Վրդ., Պետրոս արք. Բերդումյան (Կյանք և մատենադարական վաստակ), «Էջմիածին», № Է-Ը, 1991
12. Առաքել Սյունեցի, Ամբողջ չարք տանջանքի ենթակաէքս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1996
13. Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Հ. Յ, Երևան, 1975
14. Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց, Վէնէտիկ, 1733
15. Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, ՅԱմստերդամ, 1666
16. Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1705
17. Բանք իմաստասիրաց, աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի, Երևան, 2001
18. Բաղումյան Տիգրան սարկավագ, Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցի, Մեկնութիւն Ծննդոց (ուսումնասիրություն և բնագիր), Ս. Էջմիածին, 2002
19. Բաղումյան Տիգրան սարկավագ, Պետրոս արքեպիսկոպոս Բերդումյանի «Մեկնութիւն Ծննդոց» աշխատության աղբյուրները, «Էջմիածին», 2005
20. «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Հ. Բ, Երևան, 1992
21. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985

22. Ա. Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք*, Անթիլիաս, 2003
23. Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Երուսաղէմ, 1993
24. Գրիգոր Տաթեւացի, Զմեռան հատոր, Երուսաղէմ, 1998
25. Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, Երուսաղէմ, 1998
26. Դավիթ Անյառ, Երկասիրութիւնք Գիլիսոփայականք, Համահավաք քննական բնագրերը և առաջարկանը Ս. Ս. Արեշատյանի, Երևան, 1980
27. Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Դ, Թիֆլիս, 1899
28. Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ղ, Սիմէռն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1908
29. Դիւան Հայոց պատմութեան, Գիրք ԺԱ, Սիմէռն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1913
30. Դիւան Հայոց պատմութեան, նոր շարք, Հ, Ա. 1780-1785, աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984
31. Երանյան Մկրտիչ քհն., Պետրոս Բերդումյան (Հոգևորականը, գործիչը, «Յիսուս վեսայ» և «Ողբ» պոեմները), Ս. Էջմիածին, 1990
32. Երգարան աղօթից ի պէտո վաճառականաց եւ ճանապարհորդաց, Ս. Էջմիածին, 1845
33. Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք, Ա, Թիֆլիս, 1894
34. Զարգարյան Ալվանդ սրկ., Պետրոս Բերդումյանի տաղերը, Ս. Էջմիածին, 1990
35. Զարբենապետան Գ., Հայկական Հին դպրութեան պատմութիւն (Դժգութար), Վենետիկ, 1897
36. Զաքարիա Կաթողիկոս Զաքեցի (855-877), Ճառք, աշխատասիրութեամբ Հ. Պողոս Վրդ. ի Անանեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1995

37. Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Հիւ-սեց Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց, Ս. Էջմիածին, 1908
38. «Էջմիածին», 1997
39. Թաղիաղյան Մեսրոպ, Ուղեգրություններ, Հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975
40. Թուղթ ընդհանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալոյ, Ս. Էջմիածին, 1865
41. Ժամագիրք Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004
42. Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973
43. Խաչատրյան Հրայր սրկ., Պետրոս արքեպս. Բերդումյան, Տարեկան քարոզներ. Մեծ Պահքի շրջան, Ս. Էջմիածին, 2000
44. «Համառօտութիւն աստուածաբանութեան երանելւոյն Մեծին Ալբերտի», Վ.Խէտիկ, 1715
45. Հայաստանի և Հարակից չըջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986
46. Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, կազմեց Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան, հ. Ա., Վենետիկ, 1909-1912
47. Զայնքաղ շարական, Վաղարշապատ, 1888
48. Մամուրեան Յ., Մասնական պատմութիւն հայ մեծառուններու, Կ. Պոլիս, 1909
49. Մայիլյան Վարդես սրկ., Պետրոս արքեպս. Բերդումյան-Աղամալեան Նախիջեւանցի, Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու, Ս. Էջմիածին, 2001
50. Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս, յօրինեալ ի բազմարդիւն Պետրոս Արքեպիսկոպոսէ Աղամալեան Բերդումյանց, յԵրուսաղէմ, 1850
51. Մեկնութիւն Յայտնութեան Ս. Յովհաննու առաքելոյ, համառօտեալ ի զանազան մեկնչաց ի Պետրոսէ

*Նախջուանցւոյ Աղամալեան Բերդումեանց, Կալկաթա, 1846*

52. *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու, արարեալ երանելոյն Բարսղի շնորհալի Վարդապետին իգնատիոսի ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, Կ. Պոլիս, 1824*
53. *Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի, արարեալ երանելոյն Բարսղի շնորհալի Վարդապետի ձոն կոչեցելոյ՝ ըստ մակադրական անուանն լուսաւոր մտօք և իմաստալի յորդորակօք, Հատոր Երկրորդ, Կոստանդինուպոլիս, 1826*
54. *Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ մինչ ի համարն 17 հինգերորդ դիմոյն, և անտի աւարտեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացւոյ, որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825*
55. *Մեղայ Աստուծոյ, աշխատասիրությամբ Ս. Ստամբուլյանի, Մոյր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001*
56. *Մինասեան Միհրան, Հայերէն նորայայտ ձեռագիր մը («Քարողգիրք» Պետրոս Արք. Աղամալեան-Բերդումյան Նախիջեւանցիի), «Հասկ» Հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Թատրի, 1997-2001, Անթիլիաս-Լիբանան, 2001*
57. *Մսերեանց Մսեր, Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876*
58. *Ցովհաննու Ոսկերանի Կոստանդիանուպօսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826*
59. *Նազարյան Շուշանիկ, Պետրոս Նախիջեւանցին և XVIII դարի վերանորոգվող Հայ Երգը, ՊԲՀ, № 3, 1981*
60. *Նազարյան Շուշանիկ, Պետրոս Նախիջեւանցու «Աղօթական բանք» պոեմը, ՊԲՀ, № 2, 1982*

61. Նազարյան Շուշանիկ, Ողբի և սթափման բանաստեղծություն, Երևան, 1992
62. Նոր բառգիրք Հայկագեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Միթթարայ աբբահօր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչարոյ Սիւրմէյեան, Հ. Մկրտչի Աւգերեան, Հ. Բ, Վենետիկ, 1837
63. Ներսես Շնորհալի, Հիսուս Որդի, Երևան, 1991
64. Չամչյանց Միքայել, Հայոց Պատմություն, Հ. Գ, Երևան, 1984
65. Պետրոս Նախիչևանցի, Աստուածանմանութիւն, վերստին աշխատութեամբ Մեսրովպայ Դաւթեան Թաղիադեանց Կարբեցւոյ, Կալկաթա, 1827
66. Պողարեան Նորայր Եպս., Հայ գրողներ Ե-ԺԷ դար, Երուսաղէմ, 1971
67. Սարգս Կունդ (ԺԲ դ.), Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատասիրությամբ Եղնիկ Եպիսկոպոս Պետրոսին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005
68. Սարգսեան Մեպուհ ծայրագոյն վարդապետ, Հայոց Եկեղեցւոյ խորհուրդներն ու ծէսերը, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Հ. Ա, Երևան, 1992
69. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան, Հ. Գ, գիրք 1, Երևան, 1990
70. Ս. Գիրքի Հայերեն մեկնությունների մատենագիտություն, պատրաստեցին Եղնիկ Եպս. Պետրոսյան, Արմեն Տեր-Մտեփանյան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2002
71. Վահոնի Վահե սրկ., Պետրոս արքեպս. Բերդումեան-Աղամալեան Նախիջևանցի, «Կշիռ արդարութեան», Ս. Էջմիածին, 2000
72. Տեր-Մինասյան Ե. Գ., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968

73. Տէր Միքելեան Արշակ, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Երուսաղէմ, 1993
74. Տն. Ներսեսի Շնորհալւոյ Հայոց Կաթողիկոսի բանք չափաւ, Վենետիկ, 1928
75. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987
76. Քյունկյան Հակոբ, Եկեղեցու Հայրեր, վարդապետներ, (IV-VII դդ.), Երևան, 2007
77. Օրմանեան Մաղաքիա արքեպիսկոպոս, Համապատում, Անթիլիաս, 1983
78. Օրմանյան Մաղաքիա արք., Ազգապատում, հ. Բ, 1960, Պէյրութ, հ. Գ, Երուսաղէմ, 1927
79. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
  
80. Harper's Bible Commentary, Harper & Row, Publishers, San Francisco, 1988, p. 1024, A. R. C. Leaney, A Commentary on the Gospel according to St. Luke, London, 1976
81. The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite, edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 448, Scriptores Armeniaci, Tomus 17
82. Kelly J. N. D., Early Christian Creeds, Third edition, Longman, 1972
  
83. Аревшатян С. С., К истории философских школ средневековой Армении, Е., 1980



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊՈ. ԲԵՐԴՈՒՄՅԱՆ (Կյանքն ու  
գործունեությունը) ..... 5**

### **ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

<b>Ա. ՄԵԿԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԵՐ</b> .....	<b>25</b>
Բ. Աստվածաբանական-փիլիսոփայական երկեր.....	30
Գ. Քարոզմեր և աղոթքներ .....	33
Դ. Չափածն երկեր .....	34
Ե. Թարգմանություններ .....	36

**ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆԻ  
«ԱՐՅՅՈՒՐ ԲԱՑՅԱԼ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ .....** 37  
Աղյուրները ..... 43 |

Կիրառած մեկնաբանական եղանակները .....	47
Արժարժվող խնդիրները.....	54

### **ԱՐՅՅՈՒՐ ԲԱՑՅԱԼ**

Հեղինակի առաջաբանը .....	57
Յորդորակ յառակաւոր բանսն քրիստոնի.....	73

<b>ԳԼՈՒԽ Ա</b>	
Մասնավոր հավատքի մասին (Ղուկ. Զ 46) .....	77
<b>ԳԼՈՒԽ Բ</b>	
Հաշտության մասին (Մատթ. Ե 23-24).....	85
<b>ԳԼՈՒԽ Գ</b>	
Այն մասին, որքան չար բան է խստասրտությունը (Մատթ. ԺԱ 16): .....	97
<b>ԳԼՈՒԽ Դ</b>	
Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4): .....	103
<b>ԳԼՈՒԽ Ե</b>	
Մարդու սկզբի և վախճանի մասին (Մատթ. ԺԳ 24) .....	113
<b>ԳԼՈՒԽ Զ</b>	
Արքայության խոկման մասին (Մատթ. ԺԳ 31) .....	125
<b>ԳԼՈՒԽ Է</b>	
Ավետարանի աճող գորության մասին (Մատթ. ԺԳ 33) .....	129
<b>ԳԼՈՒԽ Ը</b>	
Երկնքի արքայության մեծության մասին (Մատթ. ԺԳ 44) .....	135

**ԳԼՈՒԽ Թ**  
Երկնքի արքայության գեղեցկության մասին  
(Մատք. ԺԳ 45) ..... 141

**ԳԼՈՒԽ Ժ**  
Երկնքի արքայության՝ ամեն ինչ գրավող  
զորության մասին (Մատք. ԺԳ 47) ..... 147

**ԳԼՈՒԽ ԺԱ**  
Թե որքան հարկավոր է ներել եղբոր  
հանցանքները (Մատք. ԺԸ 23) ..... 151

**ԳԼՈՒԽ ԺԲ**  
Ավելի լավ է բոպեական գործը սիրով, քան  
տարեկանն առանց սիրո (Մատք. Ի 1) ..... 163

**ԳԼՈՒԽ ԺԳ**  
[Այն մասին], որ Աստված բոլոր հասակներից պտուղ  
է պահանջում (Մատք. ԻԱ 19) ..... 175

**ԳԼՈՒԽ ԺԴ**  
[Այն մասին], որ անհավատարիմ մարդը  
կորցնում է այն, ինչ ունի (Մատք. ԻԱ 33-38) ... 179

**ԳԼՈՒԽ ԺԵ**  
[Այն մասին], թե ինչքան չար բան է երկնային  
հարսանիքի հրավերը մերժելը (Մատք. ԻԲ 2). 185

<b>ԳԼՈՒԽ ԺԶ</b>	
Տիրոջ հաջորդ գալստյան մասին	
(Մատթ. ԻԴ 31) .....	193
<b>ԳԼՈՒԽ ԺԷ</b>	
Քրիստոսի գալստյան մասին (Մատթ. ԻԵ 1) .....	197
<b>ԳԼՈՒԽ ԺԸ</b>	
Մարդկային [քնության] անկման չարիքն ու նրա	
վերականգնումը (Ղուկ. Ժ 30) .....	209
<b>ԳԼՈՒԽ ԺԹ</b>	
[Այն մասին], որ հարատև աղոթքն իրականացնում է	
այն, ինչ մարդ խնդրում է (Ղուկ. Ժ 30) .....	225
<b>ԳԼՈՒԽ Ի</b>	
Ազահների մասին (Ղուկ. ԺԲ 16) .....	233
<b>ԳԼՈՒԽ ԻԱ</b>	
Գործի սկզբի մասին պետք է նախապես	
մտածել (Ղուկ. ԺԴ 28-30) .....	241
<b>ԳԼՈՒԽ ԻԲ</b>	
Երկու մարտնչող թագավորների մասին	
(Ղուկ. ԺԴ 31-32) .....	243

<b>ԳԼՈՒԽ ԻԳ</b>	
Ոչխարի և դրամի մասին (Ղուկ. ԺԵ 4-6).....	247
<b>ԳԼՈՒԽ ԻԴ</b>	
Անառակ որդու մասին (Ղուկ. ԺԵ 11).....	253
<b>ԳԼՈՒԽ ԻԵ</b>	
Մեծահարուստի և տնտեսի մասին (Ղուկ. ԺԶ 1)..	275
<b>ԳԼՈՒԽ ԻԶ</b>	
Որպես զգուշացում մեծահարուստներին և սփոփանք աղքատներին (Ղուկ. ԺԶ 19).....	287
<b>ԳԼՈՒԽ ԻԷ</b>	
Յարատևաղոթի զորության մասին (Ղուկ. ԺԸ 1) .....	301
<b>ԳԼՈՒԽ ԻԸ</b>	
Աղոթքի ձևի մասին (Ղուկ. ԺԸ 10).....	307
<b>ԳԼՈՒԽ ԻԹ</b>	
Աստծո համբերության մասին (Ղուկ. ԺԳ 6).....	313
<b>ԳԼՈՒԽ Լ</b>	
Մեր Տիրոջ արքայության մասին (Ղուկ. ԺԹ 12)...	321
Օգտագործված գրականության ցանկ .....	337
<b>Բովանդակություն</b> .....	345

## ՍՈՒՐԲ ԳՐՁԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Դ

ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆ

### ԱՂԲՅՈՒՐ ԲԱՑՅԱԼ (ավետարանական առակների մեկնություն)

Հրատարակչության	
տնօրեն՝	Տ. Եղիշիկ Արք. Պետրոսյան
Գեղ. Խմբագիր՝	Ղևոնդ քահանա Մայիսյան
Եջադրումը՝	Հրատարակչական բաժնի
Շապիկը՝	Ա. Օհանջանյանի

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՇՄԻԱԾԻՆ - 2008

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ





